Ապստամբության ճնշմանը գրեթե անմիջապես հետևեց, ի դեմս Թամար թագուհու, երկրի ավատատիրական ավագանու նկատմամբ վրաց արքունիքի նոր քաղաքական ուղեգծի որդեգրումը: Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այն, եթե ոչ լիովին, ապա մեծապես արդարացրեց իրեն: Նման ուղեգիծը մեծ դեր խաղաց վրաց Բագրատունիների համար հուսալի հենարանի ստեղծմամբ երկրում քաղաքական կայունության հաստատման, պետության ընդլայնմամբ վրացական թագավորության հզորացման և բուն Վրաստանի սահմանների պաշտպանությունն ամրապնդելու գործում:

Այս քաղաքականության սկզբնավորմանն ու իրագործմանը, որը մեծապես աղերսվում է խնդրո առարկա հարցի հետ, վրացական աղբյուրները

² Շահնագարյան 2015, 91-94:

³ Շահնագարյան 2015, 84-102:

մեծ տեղ են հատկացրել, ինչն օրինաչափ է: Թամար թագուհու առաջին պատմիչի համաձայն, վերոհիշյալ ապստամբության ճնշմանը մասնակցածներին նա արժանացրեց պաշտոնեական կամ տիրույթային շնորհումների⁴: Դրանց թվում առաջիններից էին հատկապես աչքի ընկած Զաքարյան ավատատիրական տան ինչպես ավագ, այնպես էլ կրտսեր ճյուղերի ներկայացուցիչները:

Ըստ պատմիչի՝ մասնավորապես «Վահրամի որդի Զաքարիային շնորհեցին Գագը և Քուրդ-Վաճառը մինչև Գանձակ՝ բազմաթիվ քաղաքներով, բերդերով ու բնակավայրերով՝ կամ իբրև լիակատար սեփականություն կամ կիսասեփականություն: Իվանեին՝ Սարգսի որդուն, շնորհեցին մախսութաթուղտի (արքունի սենեկապետի – Ա.Շ.) պատվավոր պաշտոնը, ինչպես նաև Կայանն ու Կայծոնը Գեղարքունիքի հետ միասին և շատ այլ բերդեր ու քաղաքներ»⁵:

Սակայն բանն այն է, որ նախքան 1190-ական թվականների երկրորդ կեսը վրացական թագավորության հարավարևելյան ու հարավային սահմաններն անցնում էին Գագ-Ձորակերտ (Ձորագետ)-Ջավախք-Արտահան գծով: Հետևաբար, Թամար թագուհին Մեծ Սարգիս Զաքարյանի կրտսեր որդի Իվանե Ա-ին և եղբայր Վահրամի որդի Բլուզ Զաքարեին կարող էր շնորհել համապատասխանաբար միայն Կայանն ու Կայծոնը և Գագն ու ամբողջ Քուրդ-Վաճառը: Ընդ որում, նախքան այդ վերոհիշյալ բերդերը, Քուրդ-Վաճառի մեծ մասը և մտութութաթուղտության պաշտոնը պատկանում էին ապստամբության փաստական ղեկավար Վարդան Դադիանիին ու նրա որդի Իվանին: Ինչ վերաբերում է Գագից ու Քուրդ-Վաճառից մինչև Գանձակ ընկած տարածքին ու Գեղարքունիքին, ապա դրանք այդ ժամանակ Գանձակի Ելտկուզյան աթաբեկության ենթակայության տակ էին և միայն հետագայում Բլուզ Զաքարեի, նրա որդի Վահրամ Գագեցու և Իվանե Ա-ի կողմից ազատագրվեցին⁶:

Հետևաբար, իր պատմությունը Գեորգի Լաշայի (1207-1222) թագավորության վերջին շրջանում շարադրած վրաց հեղինակը փաստերը վկայաբերել է հետին թվով: Դա երևում է թեկուզ նրանից, որ նա ներկայացրել է Զաքարյանների կրտսեր ճյուղերից Վահրամյանների իշխանության 1210-ական թվականների վերջի սահմանները: Պատմիչը միաժամանակ կամա թե

⁴ Картлис цховреба. История Грузии 2008, 266.

⁵ Картлис цховреба. История Грузии 2008, 266.

⁶ Շահնագարյան 1990, 62-63:

ակամա ներկայացրել է Ելտկուզյանների դեմ վրաց արքունիքի նախանշած՝ Զաքարյանների ազատամարտերի առաջին փուլի երեք ուղղություններից երկուսը՝ Կայան→Գեղարքունիք, Գագ→Շամքոր⁷:

Թամար թագուհու առաջին պատմիչը, այնուհետև անդրադառնալով Զաքարյան ավատատիրական տան մյուս երկու ներկայացուցիչներին, նշում է, որ Մեծ Սարգսի որդի և Լոռու տեր Զաքարե Բ-ին տրվեց ամիրսպասալարության՝ գլխավոր զորահրամանատարի պաշտոնն ու Ռուսթավին, իսկ Բլուզ Զաքարեի եղբայր Սարգսին՝ Թմոզվին⁸:

Յուրի Բոգոլյուբսկու ապստամբության ճնշմանը մասնակցած հայ և վրաց ավատատերերին, առաջին հերթին՝ Զաքարյաններին, Թամար թագուհու տիրույթային շնորհումները սկիզբը դրեցին սելջուկներից նվաճվելիք տարածքները դրանք գրավողներին հանձնելու վրա Բագրատունիների նոր քաղաքական ուղեգծի: Այն, ինչպես նշվեց, երեք հիմնական նպատակ էր հետապնդում և շարունակվեց Թամար թագուհու որդի Գեորգի Լաշայի ու դուստր Ռուսուդանի օրոք (1222-1245)՝ խախտվելով ընդամենը մեկ անգամ:

Խախտումը կապված է Զաքարյան եղբայրների վճռորոշ մասնակցությամբ 1206/1207 թ. ձմռանն ազատագրված Կարս քաղաքի ու նրա բերդի տնօրինման հետ: Թամար թագուհու երկրորդ պատմիչը, գրելով այդ իրադարձության մասին, շեշտում է, որ «թագուհին իրեն պահեց այդ քաղաքն ու բերդն այն ամենից, որ հաղթելով գրավել էր Ձորակերտից մինչև Արաքս, Գագից մինչև Գանձակ և Ջավախքից մինչև Սպեր»⁹: Չնայած պատմիչը Կարսն ու նրա բերդն արքունապատկան դարձնելը բացատրում է դրանց բնակիչների խնդրանքով¹⁰, իրականում պատճառն այլ էր: Դա բուն Վրաստանի սահմանների պաշտպանության առումով խիստ կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող այդ քաղաքը, իր դժվարամատույց բերդով հանդերձ, արքունիքի անմիջական հսկողության տակ պահելու իրամայականն էր:

Վրացական աղբյուրները չեն մոռանում ու գլանում ընդգծել, որ այս կամ այն գրավումը կատարվում էր վրաց գահակալի գլխավորությամբ կամ էլ առնվազն գիտությամբ ու կամեցողությամբ: Այսպես, օրինակ, Թամար թագուհու երկրորդ պատմիչը Կարս քաղաքի ու նրա բերդի համար մղված

⁷ Շահնագարյան 2005, 138:

⁸ Картлис цховреба. История Грузии 2008, 266.

⁹ Картлис цховреба. История Грузии 2008, 317.

¹⁰ Картлис цховреба. История Грузии 2008, 317.

մարտերին Ջաքարյանների գործուն մասնակցությունը փաստում է, բայց դրանց գրավման պատիվը վերապահում է նրա երկրորդ ամուսին Դավիթ Սոսլանին¹¹: Ինչ վերաբերում է Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց մատենագրին, ապա նա նախ գրում է, որ դրանք, զորք հավաքելով, Դավիթ Սոսլանն է գրավել¹², ապա նշում, որ Թամար թագուհին Ջաքարե Ա-ին ուղարկել է պատերազմ, և նա գրավել է Կարսը¹³: Իրականում Թամար թագուհին տեսնելով, որ Ջաքարե Բ-ի և Իվանե Ա-ի գլխավորած՝ Կարսի պաշարումը երկարում է, Վերին Քարթլիի զորքերով նրանց օգնության էր ուղարկել Դավիթ Սոսլանին¹⁴: Այնուամենայնիվ, Կարսն ու նրա բերդը հանձնվել էին Ջաքարե Բ-ի կողմից ջրագրկվելու պատճառով:

Վերջին հեղինակը Սյունիքի ու Շամքորի գրավումներին անդրադառնալիս լիովին շրջանցել է Ջաքարյաններին և գրել հետևյալը. «Թագավորը (Գեորգի Լաշան – Ա.Շ.) վերցրեց Որոտնը և մինչև Նախճավան ու Գանձակի դռներ նրան ենթակա բոլոր մարզերն ու բերդերը, ապա վերցրեց Շամքորը»¹⁵: Մինչդեռ իրականում Սյունիքն ազատագրել են Ջաքարյան եղբայրները, իսկ Շամքորը ազատագրել է Բլուզ Ջաքարեի որդի Վահրամ Գագեցին:

Վրացական աղբյուրների կողմից հայկական հողերի ազատագրման գործում Ջաքարյան իշխանական տան ներկայացուցիչների վաստակի նմանօրինակ մատուցման հիմքում ընկած է նրանց՝ վրաց Բագրատունիների ստորական լինելու իրողությունը: Այդ հիմամբ Ջաքարյանների կատարածը, այդ թվում՝ վրաց գահակալից առանձին ռազմական գործողություն ձեռնարկելն ու ղեկավարելը, վերագրվել է վերջինիս, քանզի նրանք գործել են իրենց գերակա վրաց Բագրատունիների անունից և կատարել նրանց կամքը: Այս հանգամանքը հստակ երևում է Գեորգի Լաշայի ժամանակակից պատմագրի երկու մատնանշումից: Նախ, ինչպես տեսանք, անդրադառնալով Սյունիքի ու Շամքորի գրավմանը՝ նա նկատել է, որ դրանք ենթակա էին Գեորգի Լաշային: Նախքան այդ էլ փաստելով, որ Ջաքարյան եղբայրները Թամար թագուհու օրոք «գրավեցին Դվինը... Գեղարքունիքը, Բջնին, Ամբերդը, Բարգուշատը, Անիից վերև ընկած հողերը մինչև Խուդա-

¹¹ Картлис цховреба. История Грузии 2008, 317.

¹² Картлис цховреба. История Грузии 2008, 215.

¹³ Картлис цховреба. История Грузии 2008, 216.

¹⁴ Картлис цховреба. История Грузии 2008, 317.

¹⁵ Картлис цховреба. История Грузии 2008, 216.

փիրիդի կամուրջը»¹⁶, նա չի մոռացել հավելել հետևյալը. «չկա մեկը, որ այդպիսի հավատով ու ճշմարտությամբ ծառայեր թագուհուն»¹⁷:

Որ վրաց Բագրատունիները, նորանվաճ տարածքները դրանք գրաված ավատատերերին շնորհելու իրենց որդեգրած քաղաքական կուրսին համապատասխան, Զաքարյանների հակասելջուկյան ձեռնարկումները հովանավորելով և ուղղորդելով, նաև բուն Վրաստանի սահմանների պաշտպանության ամրապնդումն էին հոգում, փաստում է Թամար թագուհու երկրորդ պատմիչը, խոսելով կողմնակալությունների ստեղծման մասին: Նա մասնավորապես նշում է. «կողմնակալները, լինելով ծառայության մեջ, գիշերները հավասարեցնում էին ցերեկների հետ, տքնելով առանց հանգստի...: Առաջին՝ ստորին, սահմանագլխային կետը Գագն էր, որին տիրում էր նույն Զաքարիա Մխարգրծելին (Բլուզ Զաքարեն – Ա.Շ.)՝ Վահրամի (Վահրամ Գագեցու – Ա.Շ.) հայրը. այս երկուսն այնտեղ կուսակալներ էին... պատրոնին նվիրվածությամբ արժանի մեծ գովասանքի:

Վերևում՝ ճանապարհով վեր, սահման էին ծառայում Ձորակերտն ու Տաշիրը, որտեղից Զաքարիան ու Իվանեն սկսեցին մարտնչել իբրև առյուծներ նախ վերին մարզերում ու ստորիններում, ապա նաև բոլոր այլ վայրերում: Վերևում Զավախքն էր, որտեղ կողմնակալներ էին Սարգիս Մխարգրծելի-Թմոզվեցին և Շավկա Թորելին»¹⁸: Պատմիչն այնուհետև թվարկում է մնացած կողմնակալությունները:

Այսպիսով, կողմնակալություններից չորսը ստեղծվել էին մեծ մասամբ սելջուկ նվաճողներից խլված հայկական հողերում և շնորհիվ Զաքարյան իշխանական տան ավագ ու կրտսեր ճյուղերի չորս ներկայացուցիչներին: Սրանից հետևում է, որ վրաց Բագրատունիները Զաքարյան Հայաստանի տարածքն ընդգրկող այդ կողմնակալությունները մեկ միասնական վարչաքաղաքական միավոր չէին համարում, ինչն էլ վրացական աղբյուրները փաստել են: Պատմիչն այնուհետև թվարկում է կողմնակալների պարտականություններն ու իրավունքները՝ նախօրոք չմոռանալով հայտնել, որ՝ «թող ոչ ոք չմտածի, թե հակառակ Թամարի կամքի որևէ մեկն ինչ-որ բան էր կատարում»¹⁹: Պարզվում է, որ կողմնակալները պաշտպանում էին պետական սահմանը, հսկողության տակ պահում թշնամական տարածքը, Թա-

¹⁶ Картлис цховреба. История Грузии 2008, 215.

¹⁷ Картлис цховреба. История Грузии 2008, 215.

¹⁸ Картлис цховреба. История Грузии 2008, 310-311.

¹⁹ Картлис цховреба. История Грузии 2008, 311.

մար թագուհուն զեկուցում այս կամ այն նպատակը հետապնդող ռազմական գործողության անհրաժեշտության մասին: Նա էլ զեկույցները դարբազիում՝ պետական խորհրդում, հետազոտելուց ու քննարկելուց հետո համապատասխան որոշում էր ընդունում: Եթե հարկ էր, Ջաքարե Բ-ին ու Իվանե Ա-ին հրամայվում էր հավաքել զորքը, որը գլխավորում էր Դավիթ Սոսլանը: Գործողությունը նվազ կարևոր լինելու դեպքում գործի էր անցնում մշտապես պալատին կից պահվող հեծյալ զորքը²⁰:

Այս հաղորդումը վրացական արքունիքի ու կողմնակալների, տվյալ դեպքում՝ Ջաքարյանների փոխհարաբերությունների բնույթը հասկանալու և գնահատելու առումով խիստ կարևոր է: Պարզվում է, որ թշնամական տարածքում ցանկացած գործողության (հետախուզություն, ուժի ցուցադրում, ավարառություն, նոր հողերի գրավում) կատարելու համար նրանք պետք է ունենային արքունիքի թույլտվությունը:

Սակայն պատմիչի կողմից վրացական թագավորության ամիրսպասալար Ջաքարե Բ-ին ու այդ ժամանակ դեռ մսախորթութուցես Իվանե Ա-ին միայն միշտ զորքը հավաքելու գործառույթ վերապահելն իրականության հետ աղերս չունի: Այն հերքվում է ոչ միայն հայ-վրացական ուրիշ աղբյուրների, այլև այդ իսկ պատմիչի այլ հաղորդումներով: Նույնը պնդելի է նաև Դավիթ Սոսլանին վերագրված դերի գնահատականի առումով: Բանն այն է, որ նա, ի պաշտոնե վրացական զորքի գերագույն հրամանատար լինելով հանդերձ, վստահաբար, ռազմական բոլոր գործողություններին չէ, որ մասնակցում էր: Բացի այդ, Ջաքարյանները, վրացական աղբյուրների այլ հաղորդումների համաձայն, ավելի շատ կամ գործում էին առանձին, կամ էլ համատեղ՝ Ջաքարե Բ-ի, ապա Իվանե Ա-ի հրամանատարությամբ: Այդուհանդերձ, Ջաքարյանները, չնայած արքունի բարձրաստիճան պաշտոնյաներ լինելով մեծ կշիռ ունենալուն՝ իբրև վրաց Բագրատունիների ստորականեր, միշտ կատարում էին գահակալի կամքը, գործում նրա ուղղորդմամբ:

Թամարի օրոք կատարված նվաճումների մասին իր պատումի վերջում նրա երկրորդ պատմիչը պնդում է, որ թագուհին սեփական բարօրությամբ չէր մտահոգված, այսինքն՝ այդքան քաղաքներն ու բերդերն արքունապատական դարձնելու համար չէ, որ գրավել էր: Դրանք նա տվել էր հենց նրանց, որոնց «ստիպել էր առանց հանգստի աշխատել, այսինքն՝ իր զորքերին»²¹: Ապա իբրև իր հայտնածի ճշմարիտ լինելու ապացույց՝ բերում է Անիի ու

²⁰ Картлис цховреба. История Грузии 2008, 311.

²¹ Картлис цховреба. История Грузии 2008, 311.

Դվինի օրինակները, որոնք Լոռեի ու Կայանի հետ միասին համապատասխանաբար Զաքարե Բ-ի և Իվանե Ա-ի ընդարձակ իշխանությունների կենտրոններն էին²²:

Ուշագրավ է, որ նույն պատմիչը, ներկայացնելով Թամար թագուհու նման քաղաքականության հիմքում ընկած գործոնները, դրանցից կարևորում է նաև հպատակների հավատարմությունը խախտելու ունակ ցանկացած պատճառի վերացումը²³:

XIV դ. վրաց Անանուն ժամանակագիրը, իր հերթին, Զաքարյանների հաջող մարտերի շնորհիվ սելջուկներից խլված հայկական հողերը նույնիսկ 1240-ական թվականների կեսերին, երբ Արևելյան Վրաստանը մոնղոլական ենթակայության տակ էր, Վրաստանի տարածք է համարում՝ նրա հարավային սահմանը գծելով Արաքսի ափամերձ գոտով: Պատմելով այդ ժամանակ ոմն Կարախանի գլխավորած թուրքերի հարձակման մասին՝ նա հայտնում է, որ «նրանք շարժվեցին ավերելու Վրաստանը և հասան Վաղարշակերտի երկրին, որը մոտավորապես այդ ժամանակ էր վերցրել Շանշեն (Զաքարե Բ-ի որդի Շահնշահ Ա-ն – Ա.Շ.), և սկսեցին ավերել Արաքսից այն կողմ՝ մինչև Սուրման (Սուրբ Մարի) ընկած երկրները, որոնք մանդատորությունացես (արքունի արարողապետ – Ա.Շ.) Շահնշահի կողմից գրեթե գրավվել էին»²⁴: Ժամանակագիրն այնուհետև նշում է, որ Շահնշահ Ա-ն, իր ու Իվանե Ա-ի զորքերով Արաքսն անցնելով, Վաղարշակերտի մոտ ջախջախում է Կարախանի ճամբարը²⁵: Հետևաբար, թուրքերը ջախջախվում են սահմանի մոտ՝ դեռ բուն Վրաստան չհասած: Այդուհանդերձ, վրաց հեղինակի համար Վաղարշակերտի ու մերձակա երկրների ավերումը Վրաստանի ավերում է նշանակում: Ուրեմն նա Շահնշահ Ա-ին պատկանող Արաքսի գոտու հողերը, որոնք Զաքարյան Հայաստանի մաս էին, վրացական թագավորության կազմում է տեսնում, ինչպես վերն ասվեց:

Վրացական աղբյուրների բազմաթիվ ու միահամուռ վկայություններից հետևում է, որ Զաքարյանները XII դ. վերջերից մինչև XIV դ. երկրորդ կեսին պատմական ասպարեզից հեռանալը կարճատև ընդմիջումներով վրացական թագավորության ռազմաքաղաքական կյանքում ամենաազդեցիկ, հզոր ու խոշոր ավատատիրական տունն էին: Նույն աղբյուրների համաձայն,

²² Картлис цховреба. История Грузии 2008, 311.

²³ Картлис цховреба. История Грузии 2008, 312.

²⁴ Картлис цховреба. История Грузии 2008, 355.

²⁵ Картлис цховреба. История Грузии 2008, 355.

նրանց էին պատկանում պետական վեց կարևորագույն պաշտոններից (ներառյալ՝ թագավորինը) չորսը: Դրանք էին՝ աթաբեկի՝ թագաժառանգի խնամակալի, ամիրսպասալարի, մանդատուրթուխուցեսի և մսախուրթախուցեսի պաշտոնները:

Երբ պետական շահը պահանջում էր, նրանք չէին հապաղում անգամ թագավորին դարձի բերել: Դա հավաստում է XIV դ. վրաց Անանուն ժամանակագիրը: Ըստ նրա՝ Գեորգի Լաշայի անբարո ու թեթևամիտ վարքը չհանդուրժելով՝ «վրաց մեծատոհմիկները, առավել ևս աթաբեկ Իվանեն ու Զաքարիայի որդի Վահրամ Գագեցին, խիստ տխրած, հրաժարվեցին դարբագիում ներկա գտնվելուց. «Մենք չենք կարող հանդուրժել քո թագավորությունը, եթե չիրաժարվես այդ մոլի մարդկանց հետ շփվելուց և հիմար վարքականոններից, որոնց հետևում ես»: Թագավորը մեղա եկավ և ամուր երդվեց այդուհետև ոչինչ չանել առանց նրանց խորհրդի»²⁶:

Ուշագրավ է, բայց ոչ պատահական, որ վրացական աղբյուրները հետևողականորեն ընդգծում են Զաքարյանների՝ վրաց Բագրատունիների հավատարիմ ստորական ու խորհրդականը լինելու հանգամանքը: Այսպես, օրինակ, Գեորգի Լաշայի ժամանակակից վրաց մատենագիրը նկատում է, որ «նրա ծնողների ժամանակներից նրա բոլոր գործերի կառավարիչներն ու խորհրդականները մանդատուրթուխուցես ու ամիրսպասալար Զաքարիա Մխարգրձելին ու աթաբեկ Իվանեն էին»²⁷: Թամար թագուհու երկրորդ պատմիչն էլ վերջիններիս մեծարելուց հետո, միտքը շարունակելով, ընդգծում է, որ նրանք «տոհմական ավանդությամբ հավատարիմ էին թագավորին, դրա համար էլ շատ սիրված էին դեռ հենց Թամարի պապերի կողմից»²⁸:

Զաքարյան Հայաստանի իրավական կարգավիճակի և դրա հետ սերտորեն կապված որոշ հարցերի մասին վրացական աղբյուրների տեղեկություններն ընդհանուր առմամբ այսպիսին են: Դրանք վկայում են, որ վրացական արքունիքը, սելջուկյան տիրապետությունից ազատագրված հայկական գավառները Զաքարյանների տնօրինությանը հանձնելով հանդերձ, դրանցում մեկ միասնական վարչաքաղաքական միավոր չստեղծեց: Փոխարենը, ելնելով բուն Վրաստանի սահմանների պաշտպանության շահե-

²⁶ Картлис цховреба. История Грузии 2008, 332.

²⁷ Картлис цховреба. История Грузии 2008, 216.

²⁸ Картлис цховреба. История Грузии 2008, 307.

րից՝ ստեղծվեցին Զաքարյանների չորս ճյուղերին ենթակա կողմնակալություններ, որոնք մտնում էին վրացական թագավորության կազմի մեջ:

Ինչ վերաբերում է Զաքարյանների կարգավիճակին, ապա նրանք, ըստ այդ աղբյուրների, զբաղեցրել են վրաց թագավորից հետո կարևորագույն չորս արքունական պաշտոններն ու հանդիսացել նրա հավատարիմ ստորականները: Այդ նույն աղբյուրների համաձայն՝ նրանք խիստ կարևոր դեր են խաղացել վրացական թագավորության ռազմաքաղաքական կյանքում:

Հենց այս վկայություններն են որոշակիորեն տարբերակվող մեկնաբանություններով ընկած խնդրո առարկա հիմնահարցի շուրջ վրացական պատմագիտության մեջ շրջանառվող տեսակետների հիմքում:

Հայկական աղբյուրների վկայությունները

Հայկական աղբյուրները ևս Զաքարյան Հայաստանի իրավական կարգավիճակի և դրա հետ սերտորեն առնչվող մի քանի հարցերի վերաբերյալ արժեքավոր տեղեկություններ են պահպանել: Դա հնարավորություն է տալիս խնդրո առարկա հիմնահարցը համադիր դիտարկելու ու անաչառ եզրահանգումներ կատարելու:

Ժամանակի հայ պատմիչներից Զաքարյաններին ընդհանրապես, իսկ Զաքարե Բ-ին ու Իվանե Ա-ին մասնավորապես, առաջիններից և հաճախ անդրադարձածներից է Կիրակոս Գանձակեցին: Նա վերջիններիս ներկայացրել է հետևյալ կերպ. «Յաւուր ժամանակաց թագաւորութեանն Լևոնի հայոց արքայի էին յԱրևելս երկու եղբարք... անուն առաջնոյն Զաքարէ, և երկրորդին՝ Իւանէ, արք քաջք ու ճոխք իշխանութեամբ, պատուեալք ի թագուհոյն վրաց, որ Թամար կոչէր...: Եւ Զաքարէ էր զօրավար վրաց և հայոց զօրուն, որ ընդ ձեռամբ թագաւորին վրաց, իսկ Իւանէ՝ աթաբեկութեան պատուով»²⁹: Այնուհետև ներկայացնելով նրանց գլխավորած ազատամարտերի արդյունքները՝ հավելել է հետևյալը. «Սոքա բազում մարտս քաջութեան ցուցին, քանզի զբազում աշխարհի հայոց, զոր ունէին պարսիկք և տաճկունք, առին ի նոցանէ յինքեանս՝ զգաւառս, որ զշուրջ զծովովն Գեղարքունոյ, և զՏաշիր, և զԱյրարատ, զԲջնի քաղաք և զԴուին, և զԱնբերդ, և զԱնի քաղաք, և զԿարս, և զՎայոց ձոր, և զաշխարհն Սիւնեաց և որ շուրջ զնովաւ են բերդք և քաղաքք, և գաւառք... ընդարձակեցին զսահմանս իւրեանց յամենայն կողմանց»³⁰:

²⁹ Կիրակոս Գանձակեցի 1961, 162-163:

³⁰ Կիրակոս Գանձակեցի 1961, 163:

Պատմիչը դրանից հետո հավելում է, որ «այսպես և միա իշխանն, Ջաքարէ անուն (Բլուզ Ջաքարեն – Ա.Շ.) և եղբայրն իւր Սարգիս (Սարգիս Թմոզվեցին – Ա.Շ.) և միա Սարգիս, հայրն Շալուէի և Իւանէի, ազգականք մեծ իշխանացն (Ջաքարէ Բ-ի և Իվանէ Ա-ի – Ա.Շ.) առին և նոքա բազում գաւառս ի պարսից և բերդս ամուրս՝ զԳարդման, զՔարհերձ, զԵրզնվանք, զՏաւուշ, զԿաճարէթ, զՏէրունական, և զԳագ, և զՇամքոր քաղաք ի նեղ էարկ, զոր յետոյ էառ որդի նորա Վահրամ»³¹: Կիրակոս Գանձակեցին Ջաքարյանների նվաճումները թվարկելուց հետո չի զլանում հպարտությամբ հայտնել, թե «այսպէս յաջողեցաւ նոցա ի վերուստ յաղթութիւն նոցա, զի համբաւ քաջութեան նոցա ել ընդ գաւառս, և բազում ազգք հարկանէին նոցա՝ որ սիրոյ աղագաւ և որ յերկիւղէ»³²:

Վերջին վկայությունից պարզվում է, որ սելջուկներից հայկական տարածքների ազատագրման հիմնական ծանրությունը կրում էին Ջաքարյանների գլխավորած հայկական զորամասերը, և որ նրանք օգնում էին միմյանց: Ջաքարյանների՝ միմյանց աջակցելու մասին է վկայում նաև Վարդան վարդապետը՝ հայտնելով, որ Իվանէ Ա-ն «ձեռն տուեալ ազգայնոյն իւրոյ՝ Վահրամայ որդւոյ Ջաքարիա առնուն զՇամքոր... և զՈրոտն և զմերձակայ դղեակսն»³³:

Վարդան վարդապետը նշել է, որ Ջաքարյանները «յաւուրս Թամարին առաւել փառաւորեցան, և ետ նոցա Լոռէ. և ինքեանք քաջութեամբ իւրեանց թափեցին ի Թուրքաց յոլով բերդս և գաւառս ի սուղ ժամանակի... առին զերկիրն Շիրակայ... առին զԱնբերդ... առին զԱնի... առին զԲջնի... առին զԴուին... առին զԿարս՝ թագաւորին և ապա զԳետաբակս և զՉարեքն. և ել անուն նոցա ընդ ամենայն երկիր»³⁴: Այսպիսով, պատմիչը նկատել է, որ Կարսը դարձվել է արքունապատկան՝ «առին զԿարս թագաւորին»:

Մխիթար Այրիվանեցին էլ, հայտնելով, որ «Թամար թագուհին մեծացոյց զՋաքարիա և զՅոհաննէս, որ և Իւանէ»³⁵, քիչ անց հավելել է, որ նրանք «առին կարգաւ աշխարհս տաճկաց ի Կայենոյ մինչ ի Բաղաբերդ՝ ի Սամշոյլոյ մինչ ի Վաղարշակերտ աստուծով յաջողեալք»³⁶:

³¹ Կիրակոս Գանձակեցի 1961, 163:

³² Կիրակոս Գանձակեցի 1961, 163-164:

³³ Վարդան վարդապետ 1862, 140-141:

³⁴ Վարդան վարդապետ 1862, 138:

³⁵ Մխիթար Այրիվանեցի 1867, 79:

³⁶ Մխիթար Այրիվանեցի 1867, 80:

Զաքարյաններին առհասարակ, իսկ Զաքարե Բ-ին և Իվանե Ա-ին հատկապես Կիրակոս Գանձակեցուց ավելի հաճախ հիշատակել է Ստեփանոս Օրբելյանը: Նա ևս Թամար թագուհու օրոք Զաքարյան եղբայրների բարձրացումը հավաստելուց հետո անցել է նրանց մղած ազատամարտերին: Պատմիչը մասնավորապես գրել է, որ նրանք «բազում ջանիւ թափեցին զաշխարհս Հայոց ի Պարսից. և առին յԱռանայ մինչև ցՆերքին Բասեն և ի Բարկուշատայ մինչ ի Մժնկերտ: Առին զԿարս, զՎաղարշակերտ, զԿաղզվան, զՍուրբ Մարի, զԱնի, զԱնբերդ, զԲջնի և զԳառնի, զԴուին մայրաքաղաք, զԳարդման, զԳանձակ, զԶարեք, զՀերթ, զՇամքոր, զՇաքի, զՊարտաւ, զԶարաբերդ: Առին ...զՍինիս, զՈրոտն, զԲորոտան, զԲղեն, զԲարկուշատ: Եւ թէպէտ յայլ և յայլ թուականս առան. սակայն զհասարակն սոքա առին և որդիքն իւրեանց և ազատեցին զաշխարհս ի դառն ծառայութենէ Տաճկաց»³⁷:

Ինչպես կարելի է մակաբերել վերոգրյալից, այս չորս պատմիչներն էլ Զաքարյանների հետ կապված իրադարձությունները նույն կերպ են ներկայացնում: Նրանք համամիտ են, որ ավատատիրական այդ տոհմը եղել է վրաց Բագրատունիների ստորական, բարձրացել է Թամար թագուհու օրոք, և օտար տիրապետությունից հայկական հողերի ազատագրման պատիվը պատկանում է նրանց:

Իվանե Ա-ն ևս իր թողած արձանագրություններում հայկական հողերի ազատագրողներ է համարում իրեն ու եղբորը՝ բնավ չհիշատակելով վրաց որևէ գահակալի անուն: Այսպես, Թեժառույթի 1196/1199 թվակիր վրացերեն արձանագրության մեջ նա ներկայանում է իբրև «Նորբերդից մինչև Կեչառեցիների երկրի միջև ամբողջի գրավող»³⁸: Նա նույն կերպ է վարվում նաև 1219 թ. հետո Գեղարդում թողած արձանագրության մեջ՝ հայտնելով, որ գրավել է Կայանից ու Կայծոնից մինչև Բարգուշատ և Ականայից մինչև Նախճավան, իսկ այնտեղից էլ ներառյալ Կարս ընկած տարածքը³⁹: Զաքարեի մահվանից (1212/1213 թ.) անմիջապես հետո էլ Հաղարծնի վանքում իր և նրա անունից թողած վիմագրում, ներկայանալով իբրև Բագրատունիների ժառանգորդ, հայտնում է, որ եղբոր հետ տիրել են իրենց նախնիների «սեփական ժառանգութեանն»⁴⁰ թվարկելով նվաճված վայրերը «իւրեանց

³⁷ Ստեփանոս Օրբելյան 1910, 391-392:

³⁸ Մուրադյան 1977, 119:

³⁹ Յովսեփեան 1969, 299:

⁴⁰ Դիվան հայ վիմագրության 1977, 22:

սահմանափակ»⁴¹: Մորո Ձորո վանքում էլ դարձյալ նաև եղբոր անունից թողած արձանագրության մեջ Իվանեն նշում է, որ «առաք երկիրս Հայոց յանարէնաց»⁴²:

Սակայն, եթե, ըստ Ստեփանոս Օրբելյանի և Իվանե Ա-ի, Ջաքարյաններն են համապատասխանաբար գրավել նաև Ջարեքն ու Ականան, ապա, համաձայն Կիրակոս Գանձակեցու, Բաթու խանը Ներքին Խաչենի իշխան Հասան-Ջալալի խնդրանքով նրան է տվել «զհայրենիս իւր զՋարաբերդ և զԱկանայ և զԿարկառն, զոր հանել էին յառաջագոյն ի նմանէ ազգն թուրքաց և վրաց»⁴³: Ուրեմն, Ջաքարյանների կողմից Ջարաբերդի ու Ականայի գրավումը Կիրակոս Գանձակեցին վերագրել է վրացական կողմին: Նա այդպիսին է համարել նաև Ջաքարյանների մյուս նվաճումները: Այդ են վկայում նրա հետևյալ խոսքերը. «Մինչդեռ հպարտացեալ էին Վիրք յաղթութեամբն, զոր յաղթեցին տաճկաց՝ յինքեանս կորզելով զբազում գաւառս Հայոց ի նոցանէ»⁴⁴:

Ի տարբերություն վրացականների՝ հայկական աղբյուրները Ջաքարյանների չորս ճյուղերին պատկանող տարածքները, որոնք ներառում էին նաև նրանց ստորականների տիրույթները, կոչում էին ոչ թե կողմնակալություններ, այլ՝ իշխանություններ: Ընդ որում, Ջաքարե Բ-ին և Իվանե Ա-ին ենթակա իշխանություններից երեքը միաժամանակ կողմնակալություններ էին և ունեին նաև սահմանապահ գործառույթներ: Դրանցից Վաչուտյանների իշխանությունը ենթակա էր Ջաքարե Բ-ին, իսկ Խաղբակյանների և Օրբելյանների իշխանությունները՝ Իվանե Ա-ին:

Ստեփանոս Օրբելյանի վկայություններից հստակ երևում է, որ նորանվաճ տարածքների ճակատագիրն ու դրանցից կազմված Ջաքարյան Հայաստանի վարչական կառուցվածքը, Ջաքարյաններից բացի, որոշում էր նաև վրաց գահակալը, որին, բնականաբար, պատկանում էր վերջին խոսքի իրավունքը: Այսպես, նա հայտնում է, որ Նորավանքն ու գավառը Լիպարիտ Օրբելյանին էին շնորհվել Իվանե աթաբեկի հայրենագիր հրովարտակով ու «հրամանաւ թագաւորին և Լաշա Գէորգիին. և եղեալ ի վերայ զկնիք թագաւորին անանցական մատանեաւ»⁴⁵: Սյունյաց պատմիչը նաև հայտնում է, որ Գեորգի Լաշան Լիպարիտ Օրբելյանին Օրբելիների

⁴¹ Դիվան հայ վիմագրության 1977, 22:

⁴² Դիվան հայ վիմագրության 1977, 138:

⁴³ Կիրակոս Գանձակեցի 1961, 359:

⁴⁴ Կիրակոս Գանձակեցի 1961, 201:

⁴⁵ Ստեփանոս Օրբելեան 1910, 359:

նախկին տիրույթների փոխարեն «անանցական գրով»⁴⁶ տարածքներ է շնորհում՝ դնելով նրա իշխանության հիմքը: Եվ դա այն դեպքում, երբ այդ տարածքները գրավվել էին Իվանե Ա-ի գլխավորությամբ: Պատմիչը դրանից անմիջապես հետո հաղորդում է հետևյալը. «Եւ կացուցանեն թագաւորն Լաշայ և աթաբէկն Իւանէ զԼիպարիտն կողմնակալ այսմ աշխարհի, նմանապէս և զմիւս իշխանն զամենօրհեալն զՎասակ Խաչենեցի... կացուցանեն կողմնակալ ի Վայոց ձոր գաւառիս»⁴⁷: Ինչպես տեսնում ենք, Իվանե Ա-ի իշխանության մաս կազմող երկու կողմնակալությունների ստեղծման գործում Գեորգի Լաշան վճռորոշ դեր է կատարել:

Ստեփաննոս Օրբելյանը համակարծիք է եղել Նորավանքի սուրբ Նշանի պատկանելության շուրջ առաջացած վեճը հարթելու նպատակով 1216 թ. Դվինում Իվանե Ա-ի հրավիրած ատյանի որոշմանը: Դրա համաձայն, «որպէս աշխարհս այս առմամբ սրոյ և ձեռին սեպհական կոչի ժառանգութիւն Վրաց թագաւորութեան, այնպէս և այն խաչ սեպհական էր Իւանէի»⁴⁸: Նկատենք, որ Դվինում Իվանե Բ-ի մոտ կայացած ատյանին մասնակցում էին վրացական թագավորության քրիստոնյա և մահմեդական հոգևոր հայու վրաց աշխարհիկ բարձրաստիճան գործիչներ⁴⁹:

Զաքարյան Հայաստանը վրացական թագավորության մաս է ներկայացնում նաև 1214 թվակիր մի հիշատակարանի գրիչը: Նա մասնավորապես գրում է. «...ի թագաւորութեան Վրաց Լաշու (Գեորգի Լաշայի – Ա.Շ.), որ տիրէր Տփլիսեաց եւ Անույ եւ այլ բազում քաղաքաց առաջին տանուտերացն Հայոց»⁵⁰: Այս հիշատակարանը «ճիշտ գաղափար է տալիս ոչ միայն վրաց, այլ նաև հարևան երկրների մասին»⁵¹: Կիրակոս Գանձակեցին, իր հերթին, 1240-ական թվականների իրադարձություններին անդրադառնալիս նկատում է, որ «Հաղբատ ի Վրաց թագաւորացն հաշուի էր յայնմ ժամանակի»⁵²: Վարդան վարդապետն էլ հայտնում է, որ մոնղոլները 1235-ին Գանձակը գրավելուց հետո «յայսմանէ ոյժ առեալ մտանեն ի թագաւորութիւնն Վրաց»⁵³: Շարունակության մեջ նա պատմում է Զաքարյան Հայաստանի

⁴⁶ Ստեփաննոս Օրբելեան 1910, 397:

⁴⁷ Ստեփաննոս Օրբելեան 1910, 397:

⁴⁸ Ստեփաննոս Օրբելեան 1910, 356:

⁴⁹ Ստեփաննոս Օրբելեան 1910, 355-356:

⁵⁰ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար 1984, 85:

⁵¹ Յովսէփեան 1969, 343:

⁵² Կիրակոս Գանձակեցի 1961, 99:

⁵³ Վարդան վարդապետ 1862, 144:

գրավման մասին, որից հետևում է, որ պատմիչն այն վրացական թագավորության մաս էր համարում:

Զաքարյաններն իրենք երբեք վրաց Բագրատունիների ստորակաները լինելու հանգամանքը չեն շրջանցել: Այսպես, Զաքարե Ա-ն, Անիի իր անունը կրող եկեղեցու մի անթվակիր արձանագրությունում ներկայանալով պարզապես իբրև «մանդատորությունից ամիրսպասալար», իրեն կոչում է «թագոհեաց թագոհոյն Թամարի ...հաւատարիմ ծառա»⁵⁴: Հառիճավանքի Ս. Աստվածածին եկեղեցու 1201 թ. արձանագրությունում էլ, նա, ի տարբերություն նախորդի, հայտնում է «մանդատորթախուցես, ամիրսպասալար հայոց և վրաց» լինելը՝ նշելով, որ «գանձագին արարի զհոչակաւոր սուրբ ուխտս Հառիճա, ի յիւր բնական հայրենատիրացն, յաղագս կենդանութեան տեառն իմոյ բարեպաշտ Թամար թագուիտ»⁵⁵: Արթիկի Սուրբ Գևորգ եկեղեցում 1222 թ. թողած վիմագրում էլ իբրև «թագոհուց թագոհոյն Թամարին ...հաւատարիմ ծառայ»⁵⁶ է ներկայանում Զաքարե Բ-ի որդի, այդ ժամանակ միայն մանդատորությունից, իսկ հետագայում նաև ամիրսպասալար Շահնշահ Ա-ն:

Ինչպես տեսնում ենք, հայկական գրչագիր ու վիմագիր աղբյուրները ևս վրացականների նման փաստում են Զաքարյանների՝ վրաց Բագրատունիների ստորական լինելը: Դրա հետ մեկտեղ, նրանք ավելի առարկայական են ներկայացնում հայկական հողերի ազատագրման գործում նրանց մեծ դերը և վրացական թագավորության կառավարման բնագավառում գործուն ու հաճախ վճռորոշ մասնակցությունը: Այսպես, Կիրակոս Գանձակեցին հայտնում է, որ Ռուսուդան թագուհին «վարէր զիշխանութին թագաւորութեանն ի ձեռն զօրագլխացն Իւանէի և որդւոյ իւրոյ Աւագին, և Շահնշահի՝ որդւոյ Զաքարէի և Վահրամայ (Վահրամ Գագեցու – Ա.Շ.) և այլոցն»⁵⁷: Կիրակոս Գանձակեցուն կրկնորդում է Գրիգոր Ակներցին՝ նշելով, որ Գեորգի Լաշայից հետո «քոյր նորայ Ուռուզութան ունէր զթագաւորութիւնն վերակացութեամբ Իւանէի՝ որոյ Աթաբակ անուանեցաւ»⁵⁸: Նույն հեղինակը մի այլ առիթով Իվանէի որդի Ավագին կոչում է «զմեծ իշխանն Վրաց»⁵⁹:

⁵⁴ Դիվան հայ վիմագրության 1966, 58:

⁵⁵ Դիվան հայ վիմագրության 2017, 45:

⁵⁶ Դիվան հայ վիմագրության 2017, 66:

⁵⁷ Կիրակոս Գանձակեցի 1961, 238:

⁵⁸ Գրիգոր Ակներցի 1974, 21:

⁵⁹ Գրիգոր Ակներցի 1974, 36:

Զաքարյան Հայաստանի իրավական կարգավիճակի և դրա հետ սերտորեն աղերսվող որոշ խնդիրների շուրջ հայկական աղբյուրների վկայություններն այսպիսին են:

Եզրակացություններ

Այսպիսով, կարող ենք եզրահանգել հետևյալը: Վրացական և հայկական աղբյուրները համակարծիք են, որ Զաքարյան ավատատիրական տան բարձրացումն ու հզորացումը սկսվել են Թամար թագուհու օրոք: Վրացական աղբյուրները դա պայմանավորում են վրաց Բագրատունիներին Զաքարյանների հավատարմությամբ, անձնական բարձր հատկանիշներով և սելջուկներից նորանվաճ տարածքները դրանք գրաված զորավարների շնորհիվ՝ վրաց Բագրատունիների նոր որդեգրած քաղաքականությամբ:

Հայկական աղբյուրներն էլ դա բացատրում են Զաքարյանների քաջությամբ, վրաց Բագրատունիների կողմից հավատարիմ ծառայության դիմաց տարատեսակ շնորհումների արժանանալով և հայկական հողերի ազատագրման բնագավառում ունեցած հաջողություններով:

Ինչպես վրացական, այնպես էլ հայկական աղբյուրները համակարծիք են, որ Զաքարյանները վրաց Բագրատունիների գերազդեցիկ ստորականներն են: Սակայն հայկական աղբյուրները վրացական թագավորության կառավարման ասպարեզում Զաքարյանների հաճախ խիստ կարևոր դերակատարությունն ավելի առարկայական են ներկայացնում, քան վրացականները:

Վրացական աղբյուրները հայկական գավառների գրավման գործում կարևորել են վրաց Բագրատունիների, իսկ հայկականները՝ Զաքարյանների դերը: Այդուհանդերձ, երկուստեք գտնում են, որ գրավումները վրացական կողմից են եղել, և այդ գավառները միացվել են վրացական թագավորությանը: Ընդ որում, վրացական աղբյուրները փաստել են, որ այդ գավառներում վրաց արքունիքի ստեղծած և Զաքարյանների չորս ճյուղերից յուրաքանչյուրին շնորհված վարչաքաղաքական միավորները եղել են բուն Վրաստանի սահմանների պաշտպանության ամրապնդմանը միտված կողմնակալություններ: Հայկական աղբյուրներն իրենց հերթին դրանք համարել են Զաքարյաններին ու նրանց ստորակա ավատատիրական ընտանիքներին պատկանող իշխանություններ: Ընդ որում, նաև արձանագրել են, որ դրանց վարչական կառուցվածքը հարկ եղած դեպքում, Զաքարյաններից բացի, որոշում էր վրաց գահակալը, որին, բնականաբար, պատկանում էր վերջին խոսքի իրավունքը:

Հայկական աղբյուրների բազմաթիվ համերաշխ վկայություններից հետևում է, որ այդ իշխանությունները ոչ թե միմյանցից մեկուսացված էին, այլ տնտեսական, ռազմաքաղաքական ու հոգևոր-մշակութային կապերով շաղկապված, մեկ ամբողջական վարչաքաղաքական միավոր էին: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Ջաքարյան ավատատիրական տունը և հայագիտության մեջ *Ջաքարյան Հայաստան* կոչվող այդ վարչաքաղաքական միավորը հաջորդաբար գլխավորում էին Ջաքարե Բ-ն և Իվանե Ա-ն:

Այսպիսով, վրացական ու հայկական աղբյուրների վկայություններից հետևում է, որ Ջաքարյան Հայաստանը վարչաքաղաքական առումով անկախ միավոր չի եղել և մտել է վրացական թագավորության կազմի մեջ: Այն գլխավորած Ջաքարյան ավատատիրական տան ներկայացուցիչները եղել են ոչ թե ինքնիշխան տիրակալներ, այլ վրաց արքունիքի գերազդեցիկ պաշտոնյաներ:

Գրականություն

- Գրիգոր Ակենցի 1974, Պատմութիւն թաթարաց, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 80 էջ:
- Դիվան հայ վիմագրության 1966, պրակ I, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 138 էջ:
- Դիվան հայ վիմագրության 1977, պրակ VI, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 331 էջ:
- Դիվան հայ վիմագրության 2017, պրակ X, Երևան, «Գիտություն», 211 էջ:
- Կիրակոս Գանձակեցի 1961, Պատմություն հայոց, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 426 էջ:
- Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար 1984, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 987 էջ:
- Հաաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ 1862, Վենետիկ, Սուրբ Ղազար, 184 էջ:
- Մխիթարայ Այրիվանեցոյ 1867, Պատմութիւն ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, ի տպարանի կայսերական ճեմարանի գիտութեանց, 84 էջ:
- Մուրադյան Պ. 1977, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, ԵՊՀ հրատ., 363 էջ:
- Յովսեփեան Գ. 1969, Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մեջ, Անթիլիաս-Լիբանան տպարան կաթողիկոսութեան հայոց Մեծի տանն Կիլիկիոյ, 523 էջ:
- Շահնագարյան Ա. 1990, Վահրամյանների իշխանությունը, Երևան, «Հայաստան», 216 էջ:
- Շահնագարյան Ա. 2005, Ջաքարյանների ազատամարտերի երկրորդ փուլը, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Երևան, էջ 32-51:
- Շահնագարյան Ա. 2005, Ջաքարյանների ազատամարտերի առաջին փուլը, Հայոց պատմության հարցեր, 6, Երևան, էջ 132-147:
- Շահնագարյան Ա. 2015, Ջաքարյան Հայաստանի իրավական կարգավիճակի հարցը հայ և վրաց պատմագիտության մեջ, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3, Երևան, էջ 84-102:
- Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սինեաց 1910, Թիֆլիս, էլեքթրաշարժ տպ. օր. Ն. Աղանեանցի, 618 էջ:
- Картлис цховреба. История Грузии 2008, Тбилиси, изд. Артануджи, 455 с.

ԶԱՔԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ՝ ԸՍՏ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՆՆԵՐԻ

Արտաշես Շահնազարյան

Ամփոփում

Զաքարյան Հայաստանի իրավական կարգավիճակի հարցն ու դրա հետ սերտորեն աղերսվող որոշ խնդիրներ վրաց և հայ պատմագիտության տարակարծությունների առարկա են: Դրա հիմքում ընկած են նաև վրացական ու հայկական աղբյուրներում խնդրո առարկա հարցի շուրջ եղած վկայություններում նկատվող տարընթերցումները:

Վրացական աղբյուրները սելջուկյան տիրապետությունից հյուսիսարևելյան Հայաստանի գավառների ազատագրման գործում վրաց Բագրատունիների դերը գերազնահատում են, իսկ Զաքարյաններին՝ մասամբ ստվերում: Ազատագրված և վրացական թագավորությանը միացված հայկական գավառներում ստեղծված վարչաքաղաքական միավորները վրացական աղբյուրները դիտում են բուն Վրաստանի սահմանները պաշտպանելու համար ստեղծված կողմնակալություններ: Հայկական աղբյուրներն իրենց հերթին դրանք համարում են Զաքարյաններին ու նրանց ստորականներին ենթակա իշխանություններ: Վրացական աղբյուրները, ի տարբերություն հայկականների, իբրև արքունի բարձրաստիճան պաշտոնյաների, վրացական թագավորության կառավարման բնագավառում Զաքարյանների կարևոր դերն առարկայական չեն ներկայացնում:

Այդուհանդերձ, վրացական ու հայկական աղբյուրների տեղեկություններից հետևում է, որ Զաքարյան Հայաստանն անկախ վարչաքաղաքական միավոր չի եղել ու մտել է վրացական թագավորության կազմի մեջ: Այն գլխավորած Զաքարյանները եղել են ոչ թե ինքնիշխան տիրակալներ, այլ վրաց արքունիքի գերագղեցիկ պաշտոնյաներ:

Բանալի բառեր՝ Զաքարյան Հայաստան, Զաքարյաններ, Զաքարե Բ, Իվանե Ա, Թամար թագուհի, Գեորգի Լաշա, Կիրակոս Գանձակեցի:

ПРАВОВОЙ СТАТУС ЗАХАРИДСКОЙ АРМЕНИИ СОГЛАСНО ГРУЗИНО-АРМЯНСКИМ ИСТОЧНИКАМ

Арташес Шахназарян

Резюме

Вопрос правового статуса Захаридской Армении и напрямую связанных с ним проблем является объектом разногласий в армянской историо-

графии. В основе сказанного лежат также разночтения в данных грузинских и армянских источников.

Грузинские источники преувеличивают роль грузинских Багратуни в вопросе освобождения северо-восточных провинций (гаваров) Армении от сельджукского господства и частично умаляют роль Захаридов. Административно-политические единицы, созданные в освобожденных и присоединенных к грузинскому царству армянских гаварах, грузинские источники рассматривают в качестве княжеских административно-территориальных единиц для защиты границ Грузии. Армянские источники же считают их княжествами, подчиненными Захаридам и их вассалам. Грузинские источники, в отличие от армянских, Захаридов как должностных лиц царского двора и их роль в системе правления не выделяют.

Тем не менее из грузинских и армянских источников явствует, что Захаридская Армения не являлась независимой административно-политической единицей и входила в состав Грузинского царства. Возглавлявшие эту единицу Захариды были не суверенными правителями, а архивлятельными должностными лицами грузинского царского двора.

Ключевые слова – Захаридская Армения, Захаре II, Иване I, царица Тамара, Георгий Лаша, Карс, Киракос Гандзакечи.

THE LEGAL STATUS OF ZAKARID ARMENIA, ACCORDING TO GEORGIAN-ARMENIAN SOURCES

Artashes Shahnazaryan

Abstract

The issue of the legal status of Zakarid Armenia and the questions closely related to it are the subject of disagreements between Georgian and Armenian historiography. They are also due to the misinterpretations in the testimonies on the issue under consideration in Georgian and Armenian sources.

Georgian sources overestimate the role of the Georgian Bagratids in the liberation of the cantons of northeastern Armenia from Seljuk dominion whereas they partially overshadow the role of the Zakarids in it. The administrative-political units established in the liberated Armenian cantons joined to the Georgian kingdom are viewed by Georgian sources as prefectures in defending the borders of proper Georgia. Armenian sources, in their turn, consider them principalities subordinate to the Zakarids and their

subordinates. Georgian sources, unlike the Armenian ones, do not present the important role of the Zakarids as high-ranking royal officials in the governing sphere of the Georgian kingdom.

Nevertheless, according to Georgian and Armenian sources, Zakarid Armenia was not an independent administrative-political unit and used to have been incorporated into the Georgian kingdom. Its rulers, the Zakarids, were not sovereign rulers, but most influential officials of the Georgian royal court.

Key words – Zakarid Armenia, the Zakarids, Zakare II, Ivane I, Queen Tamar, Giorgi Lasha, Kirakos Gandzaketsi.

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՊՈՊՈԻԼԻԶՄԻ ՄԱՍԻՆ՝ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Արամ Աբրահամյան

Արվեստագիտության թեկնածու
«Առավոտ» թերթի խմբագիր
ՀՀ, Երևան, Արշակունյաց 2
Էլ. հասցե՝ aramabr333@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 15.02.2022, գրախոսվել է 25.10.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.3-47

Ներածություն

Քաղաքական գործիչների ելույթներում, լրագրության, հրապարակախոսության, մասամբ նաև գիտական գրականության մեջ «պոպուլիզմ» եզրը սովորաբար օգտագործվում է խիստ բացասական իմաստով: Մասնավորապես, այդ բառը քաղաքական ուժերն իրար են ուղղում որպես մեղադրանք, երբեմն նաև փորձում են արդարանալ՝ պնդելով, որ իրենք պոպուլիստ չեն՝ որպես կանոն, նկատի ունենալով, որ իրենք սուտ, անիրագործելի խոստումներ չեն տալիս և քաղաքացիներին չեն մոլորեցնում:

Մինչդեռ գիտության մեջ, մեր կարծիքով, ցանկացած հասկացություն, այդ թվում՝ «պոպուլիզմը», չափտի երանգավորված լինի դրական կամ բացասական իմաստներով. անհրաժեշտ է արձանագրել երևույթի հատկանիշները և տեսնել, թե ինչպիսին կարող է լինել դրա կառուցողական դերը պետականության զարգացման տեսանկյունից: Այդ տեսանկյունից պոպուլիզմը սույն հրապարակման մեջ դիտարկվում է որպես այս կամ այն հասարակության քաղաքական մշակույթի մի մաս և արտացոլում է այդ մշակույթի առանձնահատկությունները:

Քաղաքական մշակույթ ասելով՝ նկատի ունենք «տվյալ քաղաքական համակարգի մասնակիցների անհատական դիրքորոշումների և կողմնորոշումների համակցությունը»¹: Այդ ձևակերպման հեղինակների՝ ամերիկացի քաղաքագետներ Գ. Ալմոնդի և Ս. Վերբայի դասական տեսության համաձայն՝ քաղաքական մշակույթը լինում է երեք տեսակի՝ ծխական, հպատակային և մասնակցային: Չնայած հետազոտողներն իրենց հիմնական աշ-

¹ Almond, Verba 1963, 11.

խատանքը հրապարակել էին 1963 թ., ժամանակակից քաղաքագիտական միտքը, ինչ-ինչ երանգներ, ճշգրտումներ առաջարկելով հանդերձ, լուրջ փոփոխություններ չի մտցրել տվյալ դասակարգման մեջ:

Ծխական (parochial) մշակույթի պարագայում հետաքրքրություն չկա քաղաքականության և պետական ինստիտուտների հանդեպ, չկան բավականաչափ գիտելիքներ քաղաքական համակարգի մասին, բացակայում են նաև էական սպասելիքներն այդ ամենից: Հպատակային (subject) մշակույթը, հակառակը, մեծ տեղ է տալիս թագավորին, «սինյորին», իշխանին՝ գոյություն ունեցող քաղաքական, պետական ինստիտուտներին և հատուկ է այն համակարգերին, որտեղ առկա է պետության առաջին դեմքի կենտրոնացված իշխանություն: Մասնակցային, ակտիվիստական (participant) մշակույթն առավել հատուկ է վերջին դարերի արևմտյան հասարակություններին, երբ տվյալ երկրի բնակիչները սկսում են իրենց քաղաքացի զգալ, գիտակցում են սեփական ուժն ու նշանակությունը և պահանջներ են դնում իշխանությունների առջև: Կարելի է կարծել, որ քաղաքական մշակույթի առաջին երկու տեսակներն այսօր՝ XXI դարում, մերժելի են, «հետադիմական», իսկ ահա երրորդն առաջադեմ է և ցանկալի: Բայց ամեն ինչ այդքան պարզ չէ: Այս պարագայում նույնպես արժե խուսափել գնահատողական դատողություններից: Ավելի ճիշտ կլինի պնդել, որ ժամանակակից հասարակությունների մեծ մասում համագոյակցում են քաղաքական մշակույթի երեք ձևերը: Ավելին՝ անհատական մակարդակով, կախված հանգամանքներից, տարբեր պարագաներում մարդիկ այս կամ այն չափով հակված են երեք մոդելներից մեկին:

Պոպուլիզմն ուղերձը սպառողին հասցնելու ձև է

«Պոպուլիզմ» եզրը սովորաբար կիրառում են այն քաղաքական գործիչների և ուժերի վերաբերյալ, որոնք իրենց ներկայացնում են որպես ժողովրդական լայն զանգվածների շահերի պաշտպան և առաջարկում խնդիրների լուծման պարզ դեղատոմսեր: Այդպիսի հասարակական կամ քաղաքական շարժումները, ըստ տարածված քաղաքագիտական պատկերացումների, «սովորաբար անվստահություն են սերմանում էլիտաների, ներկայացուցչական ինստիտուտների և բարդ պետական մեխանիզմների հանդեպ, առաջարկում են ժողովրդի ուղիղ մասնակցությունը պետության

կառավարմանը, ունեն խարիզմատիկ առաջնորդ, որը «ժողովրդական տրիբունի» դեր է խաղում»²:

Սակայն այս բնորոշումների մեջ դարձյալ պետք է որոշակի զգուշավորություն դրսևորել և խուսափել պարզեցված մոտեցումներից: Առանձնապես դժվար չէ, բովանդակային քննարկումից խուսափելով, ընդդիմախոսին կացնել «պոպուլիստի» պիտակը: «Պոպուլիզմի մեջ մեղադրանքն ինքը կարող է կրել պոպուլիստական բնույթ՝ դառնալով փաստարկման դեմագոգիկ փոխարինում», - զգուշացնում էր Ռալֆ Դարենդորֆը՝ նշելով, որ նույն երևույթը ինչ-որ մեկի կողմից կարող է ընկալվել որպես պոպուլիզմ, քանի որ, ի վերջո, ժողովուրդն է օժտված ինքնիշխանությամբ, նա՛ է լեգիտիմացնում ժողովրդավարությունը³: Պոպուլիզմի և «բնականոն» ժողովրդավարական խոսույթի՝ երբեմն շատ նուրբ տարբերությունը հասկանալու համար պետք է, կարծում եմ, որպես մեկնարկային կետ ընդունել ոչ թե քաղաքական գործիչների նպատակադրումները (որոնք քիչ թե շատ միանման են), այլ հասարակական ընկալումների շարժառիթները, այլ կերպ ասած՝ քաղաքական մշակույթը:

Պոպուլիզմը կարող է լինել «աջ» և «ձախ»: «Աջը» սովորաբար առնչվում է ազգային ինքնությանը, երբեմն հռչակում ազգային բացառիկությունը և այդ դեպքում ուղղվում է, օրինակ, միգրանտների դեմ: «Ձախը» սովորաբար կենտրոնանում է սոցիալական և բնապահպանական խնդիրների վրա: Այդ եզրը, այդպիսով, չի բնութագրում քաղաքական ուղերձի *բովանդակությունը*, գաղափարախոսությունը, այլ նկարագրում է ուղերձը շահառուներին (քաղաքացիներին, ընտրողներին) հասցնելու ձևը: Պոպուլիստական գործիչներ, կուսակցություններ, հոսանքներ կան թե՛ զարգացած ժողովրդավարական երկրներում, թե՛ «երկրորդ» ու «երրորդ» աշխարհի պետություններում: Այնուամենայնիվ, հետազոտողները նշում են պոպուլիզմի և ժողովրդավարության հիմնական տարբերությունը. առաջինի համար կարծիքների բազմազանությունը և կոնսենսուսը էական չեն. հիմնական շեշտը դրվում է մեծամասնության դիրքորոշման վրա⁴:

² St'ui Феномен правого и левого популизма в странах ЕС 2016, 1:

³ Дарендорф 2019, 19.

⁴ Побочий 2014, 82-83.

Պոպուլիզմը հատուկ է մասնակցային մշակույթին, սակայն դրա հիմնական դրսևորումներում առկա են նաև հպատակային մշակույթի տարրերը: Այսինքն՝ մի կողմից, պոպուլիստը դիմում է ժողովրդավարական մեխանիզմներին, բայց, մյուս կողմից, մշակութային առումով, մենք ստանում ենք արդյունք, որը հաճախ հակասում է զուտ «մասնակցայինի» դասական պատկերացումներին: Ժամանակակից պետություններում նախագահին, օրինակ, ընտրում են քաղաքացիները, իսկ միջին դարերում կայսրն «օծվում էր» Աստծո կողմից («անմիջապես» կամ պապի միջնորդությամբ): Մինչդեռ պոպուլիստական առաջնորդը, թեև ընտրված է, այնուամենայնիվ, քաղաքացիների մեջ որոշ չափով ընկալվում է որպես «օծյալ», այդպիսով, պահպանվում են հպատակային ընկալումների տարրերը: Վարչակազմի ընտրված ղեկավարն այդպիսով ձեռք է բերում «հոր» որոշ գործառույթներ:

Երկու տիպի մշակույթների համատեղումը (հիբրիդը) դրսևորվում է նախևառաջ այն երևույթում, որը քաղաքագիտության մեջ նկարագրվում է որպես «պլեբիսցիտար ժողովրդավարություն»⁵. իշխանությունը թեև ձևավորվում է քաղաքացիների մասնակցությամբ, բայց իրականում այդ մասնակցությունը սահմանափակվում է ընտրություններով, հանրաքվեով, որից հետո քաղաքացիների մեծամասնության և առաջին դեմքի միջև ուղիղ կապ հաստատելով: Ինչպես գրում է ռուս քաղաքագետ Գրիգորի Յուդինը, ընտրությունները ոչ թե պայքար են տարբեր թեկնածուների, նրանց ծրագրերի և գաղափարների միջև, այլ հանրաքվե են, «պլեբիսցիտ», որտեղ ժողովուրդը հաստատում է (կամ չի հաստատում) իր հավատարմությունը տվյալ առաջնորդին⁵: Դա կարելի է ցույց տալ հենց մեր երկրի օրինակով: «Հայաստանն իմ Օջախն է, ժողովուրդն իմ Ընտանիքն է»՝ այդպես էր հնչում Հայաստանի վարչապետի կարգախոսը 2019 թ.: Այդ կարգախոսը հատկանշական է մեր տիպի քաղաքական մշակույթի համար: Ընտանիքը, մեծ հաշվով, չեն ընտրում, այստեղ իրականում չկան այլընտրանքային տարբերակներ: Հետևաբար, այդ տեսակի քաղաքական մշակույթի շրջանակում ընտրությունները պարզապես ֆիքսում են արդեն իսկ հասարակության մեջ ձևավորված իրավիճակը:

⁵ Юдин 2021, 32.

Եթե դարձյալ դիտարկենք ժամանակակից Հայաստանը 2022 թ. դրությամբ, ապա կարող ենք ասել՝ քաղաքական կյանքին հատուկ են թե՛ «ծախ», թե՛ «աջ» պոպուլիզմները: Առաջին դեպքում «ընտանիքը» 30 տարում սոցիալական գրկանքներ կրած հայաստանցիներն են, և գլխավոր պատումն է՝ «թալանածը վերադարձնենք ժողովրդին»: Երկրորդ դեպքում «հայ ազգն է», որին պետք է փրկել «թրքացումից»: Թե ինչու է առաջին պատումն այսօր ավելի հնչեղ, քան երկրորդը՝ առանձին և շատ հետաքրքիր թեմա է, որը, սակայն, այս հոդվածի շրջանակից դուրս է:

«Ընտանեկան բաղադրիչը» արտահայտված է ժամանակակից բազմաթիվ հասարակությունների քաղաքական մշակույթի մեջ: Ամերիկացի քաղաքագետ Էդվարդ Բենֆիլդը, օրինակ, կարծիք է հայտնում, որ XX դ. երկրորդ կեսին Իտալիայի հարավի տնտեսական հետամնացությունը մասամբ բացատրվում էր նրանով, որ այդ տարածքի բնակիչները հոգեբանական դժվարություններ ունեին ձեռնարկություններ ստեղծելու ընտանեկան շրջանակից դուրս⁶: Ուշագրավ է, որ Իտալիայի տարբեր հատվածների համեմատության թեման լավ մշակված է ամերիկյան քաղաքագիտական խոսույթում: 1990-ականներին մեկ այլ քաղաքագետ՝ Ռոբերտ Փաթմանը, դարձյալ համեմատելով մի կողմից՝ Իտալիայի հարավի և, մյուս կողմից, կենտրոնի և հյուսիսի տնտեսական ցուցանիշները, եզրակացնում է, որ տարբերությունը մոտ 1000 տարի առաջվա «որոշիչ ժամանակաշրջանից» է, երբ մի մասն ընտրել էր ուժեղ իշխանությամբ միապետությունը, իսկ մյուսը՝ հանրապետությունը⁷:

Պետության՝ որպես ընտանիքի մասին պատկերացումը, մեր կարծիքով, հպատակային մշակույթի դրսևորումներից մեկն է, ինչը և պարարտ հող է ստեղծում պոպուլիզմի համար, որը, իր հերթին, շատ քաղաքագետների համոզմամբ, վերապահումներ ունի ներկայացուցչական ինստիտուտների նկատմամբ: Ինչպես նշում է գերմանացի հետազոտող Հանս-Վերներ Մյուլլերը, «պոպուլիստները պարտադիր կերպով հանդես չեն գալիս ներկայացուցչական գաղափարի դեմ: Փոխարենը՝ նրանք կարող են աջակցել դրա առանձնահատուկ տեսակին: Պոպուլիստները լավ են ներկայացուցչության հետ՝ պայմանով, որ իսկական ժողովրդին ներկայացնում են նրա իսկական ներկայացուցիչները, որոնք ճիշտ դատողություններ և ճիշտ քայլեր են

⁶ Banfield 1967, 53.

⁷ Putnam 1993, 62.

անում»⁸: «Ճիշտ դատողությունները», ըստ ամենայնի, կարող են հղանալ և մարմնավորվել «իսկական ժողովրդի» և նրա «հոր» գլխում՝ դրանք ավելի դժվար կլինի գտնել խորհրդարանում, կուսակցություններում, կառավարությունում, նախարարություններում, հասարակական կազմակերպություններում: Ժողովուրդն այս պարագայում ներկայացված է մեկ միասնական ճշմարտությամբ, որն իր ողջ մանրամասներով հայտնի է առաջնորդին:

Այստեղից էլ գալիս է «առաջնորդ-ժողովուրդ» սակրալիզացված (սրբադասված) կապը: «Պոպուլիստական մարտահրավերը ազատական ժողովրդավարության հենց այդ միջանկյալ ինստիտուտների մերժումն է... Պոպուլիզմը, այդպիսով, ժողովրդի լիակատար վստահությունն է պահանջում իր առաջնորդի նկատմամբ: Դա է պոպուլիզմի էական թերությունը. այն ինստիտուտներին, որոնք ժողովրդին կապշտպանեն առաջնորդի դավաճանությունից, մանիպուլյացիայից և, ի վերջո, ճնշումներից, չեն հանդուրժում՝ դրանք վերանում են՝ փոխարինվելով ժողովրդի անմիջական կամարտահայտությամբ», - արձանագրում է ամերիկացի հետազոտող Քոլին Քրաուչը⁹:

Այդ խնդրին նվիրված ծավալուն հետազոտության մեջ քաղաքագետ Արտյոմ Զեմցովը ցույց է տալիս, որ «ուժեղ ձեռքի» հիմնական սուբյեկտիվ իմաստներն են «ամբողջականությունը», «կարգուկանոնը», «կարծրությունը», «այլընտրանքի բացակայությունը», «հակավերնախավային» բնույթը¹⁰: Հատկապես կարևոր է այդ շարքի վերջին բնութագրիչը. այդ մշակույթում առաջնորդը վեր է որևէ համակարգից կամ անգամ օրենքից. նա իր երկաթաբռունցքով պատժում է անպիտան պաշտոնյաներին, իսկ եթե պետք է՝ «տեղն է դնում» խորհրդարանին, կուսակցություններին, հասարակական շարժումները և էլիտան (վերնախավը) ներկայացնող այլ «միջանկյալ օղակներին»:

Նման քաղաքական մշակույթի պայմաններում, բնականաբար, մեծանում է առաջնորդի անձի դերը, եթե չկան «միջանկյալ օղակներ», և առաջնորդը՝ «հայրը», անմիջապես գործ է ունենում իր «հպատակների» հետ, ապա մեծ նշանակություն ունի, թե ով է այդ առաջնորդը, ինչ առաքինություններ ունի, ինչպես է նրա բարեմասնություններն ընկալում «ժողովուրդը»: Պոպուլիզմով զբաղվելու համար այդ անձը պետք է ընկալվի որպես անբիծ,

⁸ Մյուլլեր 2019, 60:

⁹ Crouch 2019, 125.

¹⁰ Земцов 2020, 96-115.

ցանկալի է՝ հերոսական մի էակ: Եվ դա վերաբերում է ոչ միայն պետության, այլև առանձին կուսակցությունների, կազմակերպությունների, հիմնարկների կառուցվածքներին: «Երկրների ճնշող մեծամասնության մեջ առևտրային, քաղաքական, ոչ առևտրային կազմակերպությունները ստեղծվում են անձերի շուրջ և մեռնում են նրանց հետ կամ, համենայն դեպս, հիվանդանում են այդ իրադարձությունից հետո: Նրանք ստեղծվում են մարդու, կոնկրետ առաջնորդի համար: Իսկ պետք է դրանք դարձնել ապանձնավորված, դրանք պետք է վերապրեն իրենց ստեղծողներին», - գրում է հայտնի ռուսաստանցի տնտեսագետ Ալեքսանդր Աուզանը¹¹:

Քաղաքական մշակույթի անձնավորված բնույթը ցայտուն երևում է Հայաստանի երրորդ հանրապետության օրինակով: Հնարավոր չէ պատկերացնել հայաստանյան որևէ կուսակցություն առանց դրա առաջնորդի. եթե անգամ ակնհայտ է, որ գոնե մարտավարական նպատակներով առաջնորդը պետք է փոխվի, միևնույն է՝ դա չի արվում, կարծում ենք՝ ոչ միայն այն պատճառով, որ նյութական լծակները կենտրոնացած են այդ անձի ձեռքում, այլև կա որոշակի վախ, որ հակառակ դեպքում քաղաքական կառույցը կկազմալուծվի (ի դեպ, այդպես չեն կազմակերպված հայկական ավանդական կուսակցությունները, բայց դա նույնպես առանձին քննարկման թեմա է): Հայաստանում քաղաքական ուժերի հիշյալ առանձնահատկության վրա ուշադրություն է դարձնում նաև քաղաքագետ Էմիլ Օրդուխանյանը. «Քաղաքական դաշտում ակտիվ գործող կուսակցությունների ծրագրերը հիմնականում չեն տարբերվում միմյանցից: Այդ պարագայում քաղաքական ուժերը շեշտը դնում են բացառապես առաջնորդի անձնական որակների վրա»¹²:

Նշված առանձնահատկությունը ավելի մեծ օրինաչափության դրսևորում է: Ամերիկացի հետազոտող Լուսիան Ուիլմոթ Փայը XX դ. երկրորդ կեսին առաջ է քաշել մի տեսություն, որը կոչված էր նկարագրելու «ոչ արևմտյան տիպի» քաղաքական գործընթացի առանձնահատկությունները: Փայն իր տեսությունը շարադրել է 17 կետով, որոնցից մեկը հետևյալն է. «Քաղաքական ծրագրերը փոխարինվում են համընդհանուր էթիկական վարքականոքով, որը ստվերում է սկզբնակետը: Կուսակցությունն ամբողջությամբ կողմնորոշված է իր առաջնորդի և ոչ միայն նրա քաղաքական հայացքներով.

¹¹ Ауган 2021, 135.

¹² Օրդուխանյան 2020, 85-86:

նրա բնավորության բոլոր գծերը լրջորեն ազդում են քաղաքական գործընթացի վրա»¹³։ Փայի ներկայացրած առանձնահատկությունները, որոնք նա նկարագրել է 1950-60-ական թվականներին, կարելի է նկատել նաև այսօրվա քաղաքական մշակույթում, սակայն ժամանակը, կարծում եմ, իր շտկումներն է մտցրել այդ տեսության մեջ. «անձնավորված» քաղաքական գործընթացի դրսևորումները այս կամ այն չափով հատուկ են զուտ արևմտյան տիպի մշակույթին՝ Միացյալ Նահանգներում և Արևմտյան Եվրոպայում։

Պոպուլիզմը «հակաէլիտարիզմի» տեսակ է

«Հասարակ ժողովրդի» և «էլիտայի» հակադրությունը խրախուսում են պոպուլիստական առաջնորդները, քանի որ այդ պարագայում ինքը՝ առաջնորդը, հնարավորություն ունի ներկայանալու որպես առաջին խմբի անբաժանելի մաս և հանդես գալու որպես որոշակի հուզական միասնականության խոսնակ։ Եթե հպատակային մշակույթում կայսրը «օծված է» Աստծո կողմից, ապա այս դեպքում առաջնորդին «օծում է» ժողովուրդը՝ նաև ընտրությունների միջոցով, և դա բացառիկ կապ է ստեղծում «օծյալի» և «հպատակների» միջև։

Ինչպես ցանկացած հասարակական (նաև՝ ֆիզիկական) երևույթ, պոպուլիզմը նույնպես ունի իր հակապատկերը, հակազդեցությունը, որը կարելի է անվանել «հակապոպուլիզմ» կամ «էլիտարիզմ»։ Ուշագրավ է, որ այդ երկու բևեռները, ըստ էության, փորձում են վարկաբեկել ներկայացուցչական ժողովրդավարությունը. մի կողմից՝ ներկայացուցչական մարմինները դիտարկվում են որպես յուրահատուկ խոչընդոտ՝ «ժողովրդի» ու նրա առաջնորդի շփման համար, իսկ մյուս՝ «էլիտար» կողմից մշտապես կասկած են հայտնում, թե պետք է արդյոք այդ նույն «ժողովրդին» անսահմանափակ իրավասություն տալ՝ իշխանություն ձևավորելու։ Ազատական փիլիսոփայության առաջին տեսաբաններից մեկը՝ Ջոն Սթյուարթ Միլը, դեռևս 1861 թ. ուղղակիորեն նշում էր. «Ես դեմ եմ, որ անգրագետ և մաթեմատիկայի կանոնները չիմացող մարդը կարողանա մասնակցել ընտրություններին։ Համընդհանուր կրթությունը պետք է նախորդի համընդհանուր ընտրական իրավունքին։ Կարևոր է նաև, որ տեղական և ընդհանուր հարկերի հարցով

¹³ Паф 2003, 69.

քվեարկողներն ընտրվեն միայն նրանց կողմից, ովքեր վճարում են այդ հարկերի մասը... Գույքային ցենզը՝ որպես ընտրական իրավունքի չափանիշ, մշտապես առաջացրել և առաջացնելու է չարություն: Մեկ անձին մի քանի ձայն տրամադրելու հիմք կարող է ծառայել միայն նրա անձնական մտավոր առավելությունը»¹⁴: Պարզ է, որ եթե Միլի առաջարկը կյանքի կոչվեր, դա դուռ կբացեր լուրջ կամայականությունների համար, որոնք կգերազանցեին համընդհանուր ընտրական իրավունքի թերությունները. դժվար թե գոյություն ունենան «մտավոր առավելությունների» օբյեկտիվ չափանիշներ:

XXI դարում քաղաքական գործիչներն ու փորձագետները վարանում են ուղիղ տեքստով խոսել համընդհանուր ընտրական իրավունքի որևէ սահմանափակման մասին, քանի որ դա կհակասեր ժողովրդավարության վերաբերյալ ձևավորված պատկերացումներին: Այնուամենայնիվ, «տողատակերով» խոսվում է հնարավոր կամ ցանկալի սահմանափակումների վերաբերյալ: Օրինակ, 2016 թ. Դոնալդ Թրամփի նախագահ ընտրվելը ամերիկյան վերնախավի մի մասի մեջ տարակուսանք առաջացրեց, թե ինչու ինչ-որ «անկիրթ» խավերի ներկայացուցիչները, «պարզունակ» մարդիկ պետք է Հիլարի Բլինթոնին խանգարեին գալ իշխանության¹⁵: Հիշենք նաև, թե ինչ էին այդ նույն ժամանակահատվածում գրում և ասում ամերիկյան վերնախավի ներկայացուցիչները, այսպես կոչված, redneck-երի՝ «կարմրավիզների» (պայմանականորեն ասած՝ «հասարակ ժողովրդի») մասին, և ինչպես էին վերջիններս բացատրում իրենց ընտրությունը¹⁶: Ազատական ուղղվածության ժամանակակից հոգեբան և հրապարակախոս Սթիվեն Փինքերն իր վերջին գրքերից մեկում բազմաթիվ էջեր է նվիրել Դոնալդ Թրամփի քննադատությանը: Նա մասնավորապես գրում է. «Նույն տարում (2016 թ. – Ա.Ա.) ԱՄՆ-ի նախագահ էր ընտրվել Դոնալդ Թրամփը՝ ստանալով ընտրիչների կոլեգիայի ձայների մեծամասնությունը, բայց պարտվելով ուղիղ քվեարկության արդյունքներով (Հիլարի Բլինթոնը ստացել էր 48%, Թրամփը՝ 46%): Դժվար է ավելի լավ արտահայտել պոպուլիզմի թրայբալիստական (այսինքն՝ մեկուսացմանն ու արտաքին աշխարհի հանդեպ թշնամանքին միտված – Ա.Ա.)

¹⁴ Милль 2006, 68.

¹⁵ Carpentier 2016.

¹⁶ Barabak, Duara 2016.

և ռեակցիոն ոգին, քան Թրամփի ընտրարշավի կարգախոսը՝ «Վերադարձնենք Ամերիկային իր առաջվա փառքը»¹⁷:

Հավանաբար, հայ ընթերցողը նույնպես կգտնի նման փաստարկներ և հակափաստարկներ հայկական տարբեր հարթակներում՝ 2021 թ. հունիսի 20-ի խորհրդարանական ընտրություններից հետո: Նման խոսույթի առկայությունն այդպիսով հաստատում է, որ տնտեսական և քաղաքական զարգացման տարբեր աստիճաններում գտնվող երկրներում այս կամ այն չափաբաժնով առկա է հպատակային և մասնակցային մշակույթի «հիբրիդը»: Դրա վկայությունն այն է, որ նույնատիպ քննարկումներ են առաջացել Հունգարիայում Վիկտոր Օրբանի, Հունաստանում Ալեքսիս Ցիպրասի, Մեծ Բրիտանիայում Ջերեմի Կորբինի հաջողությունների հետ կապված:

«Ժողովրդի» և «էլիտայի» հակադրությունը, որն առավել ցայտուն է արտահայտվում ժամանակակից պոպուլիզմի մեջ, հարցականի տակ է դնում ազատական արժեքները՝ գոնե այն ձևով, որով ընդունված էր դրանք մեկնաբանել XIX-XX դդ.: Ինքնին այդ արժեքները միշտ չէ, որ ներդաշնակ են ժողովրդավարության հետ, ինչին ուշադրություն էին դարձնում դեռևս XIX դ. մտածողները՝ մասնավորապես Ալեքսիս դը Տոկվիլը և Ֆրանսուա Գիզոն: Վերջինս ձգտում էր «հաշտեցնել» բանականության և կամքի ինքնիշխանությունը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք այդ կամքը ժողովրդի՞նն է, թե՞ միապետին¹⁸: Բայց այդ ներդաշնակման գործիքը, ըստ Գիզոյի, հենց ներկայացուցչական ինստիտուտներն են՝ այն, ինչին պոպուլիստները վերապահումով են վերաբերվում:

Ժամանակակից հետազոտողները դարձյալ նշում են ազատական ժողովրդավարության ներքին հակասությունը: «Քաղաքական մշակույթի որոշ տարրեր կարող են կոնֆլիկտի մեջ մտնել, նույնիսկ՝ հակադրվել միմյանց: Ազատությունը կարող է անմրցունակ լինել հավասարության հետ համեմատ, ժողովրդավարությունը սահմանափակվում է պետությամբ, իսկ պոպուլիզմը՝ մասնավոր սեփականությամբ», - նշում են ամերիկացի քաղաքագետներ Պալեցը և Լիպինսկին¹⁹:

¹⁷ Пинкер 2021, 138.

¹⁸ Таньшина 2015, 69-70.

¹⁹ Paletz. Lipinski 1994, 2.

Վերը նկարագրված հակասությունները սրվել են հատկապես վերջին երեք տասնամյակներում, և դրա հիմնական պատճառներից մեկը ընդհանուր հիասթափությունն է ազատական ժողովրդավարությունից, որը և հիմք ստեղծեց ժամանակակից պոպուլիզմի համար: Այդ հիասթափությունն իր հերթին պայմանավորված է մեծ մասամբ հենց իրենց՝ ազատականների սխալներով: Հետխորհրդային տարածքում և մասամբ նաև Արևելյան Եվրոպայում ազատական բարեփոխումները զուգադրվում են սոցիալական բևեռացման, աղքատության, ամենաթողության և անարժան մարդկանց սրընթաց ու անարդար հարստացման հետ: Կոմունիստական էլիտան (որի նկատմամբ, ի դեպ, նույնպես վստահության չկար 70-80-ական թվականներին) փոխարինվում է «օլիգարխիայով», որը կոռումպացված պետական ծառայողների և գործարարների մի նոր վերնախավ է, այդ վերնախավի համընդհանուր մերժումը պարարտ հող է ստեղծում պոպուլիզմի համար:

Գլոբալ առումով հիասթափության պատճառներից մեկը, հավանաբար, ԱՄՆ-ի և նրա արևմտյան դաշնակիցների քաղաքականությունն է, մասնավորապես Միջին Արևելքում: Այդ քաղաքականությունն ամենևին չի նախատեսում ազատ ընտրության հնարավորություն այնտեղ ապրող ազգերի համար՝ ըստ էության, այդպիսով մերժելով ազատականության հիմքերը: Միջազգային մասշտաբով «էլիտայի» հեղինակազրկումը դարձյալ հանգեցնում է տարբեր աշխարհամասերում պոպուլիստական առաջնորդների ի հայտ գալուն, որոնք, գոնե խոսքի մակարդակով, հակադրվում են նախկին հեղինակություններին և խոստանում են իրենց ժողովուրդներին տանել այլ՝ «յուրահատուկ» ճանապարհով: Հիշենք, օրինակ, որ 2015-2019 թթ. Հունաստանի վարչապետ Ալեքսիս Ցիպրասը խոստանում էր դուրս բերել իր երկիրը եվրոյի գուտուց, ինչը, սակայն, այդպես էլ չարեց:

Լիբերալիզմի հեղինակազրկումը զուգակցվում է բոլոր գաղափարախոսությունների և անգամ գաղափարների մերժմամբ: Նույն գործընթացները տեղի են ունենում նաև Հայաստանում. 1998 թ. Ռոբերտ Քոչարյանի նախընտրական կարգախոսն էր՝ «Իմ կուսակցությունը իմ ժողովուրդն է»: Նրա մրցակից Կարեն Դեմիրճյանը նույն շրջանում հետևյալ միտքն է արտահայտել. «Մենք խորը փոսի մեջ ենք: Ամպամած, մթամած երկինք է: Այստեղից աջ ու ձախ ճանապարհ չկա (հավանաբար, ակնարկ է աջ և ձախ գաղափարախոսությունների վերաբերյալ – Ա.Ա.): Պարան, աստիճան էլ չկա: Մնում

է ինքներս, իրար օգնելով, դուրս գանք այս ճգնաժամային վիճակից»²⁰: Իսկ ահա թե նախընտրական բանավեճերից խուսափելու ինչ արդարացում է գտնում Վիկտոր Օրբանը. նա բերում է ընկած ծառի օրինակը: Մարդկանց մի մասը դրա վերաբերյալ հիասքանչ գաղափարներ է առաջարկում, բայց գտնվում են մարդիկ, որոնք հասկանում են, որ այդ ծառը պետք է պարզապես հեռացնել փողոցից: «Պետք են պինդ, վստահելի տղերք՝ երեսուն հոգի, որոնք կանեն այն, ինչը բոլորս էլ գիտենք, որ պետք է անել»²¹: Հետևաբար, պետք չեն ոչ քաղաքական ինստիտուտները, ոչ էլ «բարձրաճակատ» ինտելեկտուալները՝ ժողովրդին անհրաժեշտ է «պինդ տղա», հոգատար հայր, որը կլուծի նրա խնդիրները:

Պոպուլիզմի ծաղկմանը, խոսույթի պարզունակացմանը նպաստում է նաև թվային տեխնոլոգիաների զարգացումը: Մինչև 1990-ական թվականները գոյություն ուներ հստակ հիերարխիա, հստակ բաժանում՝ մի կողմից՝ քաղաքական գործիչների, փորձագետների, լրագրողների և, մյուս կողմից, նրանց ստեղծած բովանդակությունը սպառողների միջև կար որոշակի սահմանագիծ. հեռուստատեսկանից խոսողները հստակորեն բաժանված էին նրանցից, ովքեր դիտում և լսում էին իրենց: Թվային դարում ցանկացած նման հեղինակությանը վարկաբեկելը, պատվանդանից իջեցնելը ռոպեների գործ է. բավարար է նրա հրապարակման տակ մի քանի «խարազանող» մեկնաբանություն գրել: Այդ իրավիճակը ստիպում է վերոհիշյալ գործիչներին փորձագետներին, մեկնաբաններին լինել ավելի պարզ, մատչելի, «խոսել ժողովրդի սրտից»: «Դրա հիմքում է նաև գաղափարախոսության նշանակության նվազումը, լեզվի միջոցով որոշակի խզումը, բացը, որը կոչված է լցվելու պոպուլիզմով... Ինչպես նաև այն, որ հասարակության աչքում քաղաքական գործիչները, լրատվամիջոցները և վերնախավի այլ ներկայացուցիչները կորցնում են իրենց նշանակությունը», - նշում են բրիտանացի քաղաքագետներ Բլումերը և Քավանան²²:

Պոպուլիզմի աճն աշխարհում արտացոլում է ընդհանրապես գաղափարախոսությունների և, հատկապես, ազատական գաղափարախոսության

²⁰ Տես՝ https://blog.168.am/blog/310161.html?fbclid=IwAR0zZ7e_ZxvD4XfvZxBbC60hyYbp6g6rwLP0kPmYRbUxBaRXyTCGtY4oyEM (17.02.2022):

²¹ Մյուլլեր 2019, 62:

²² Blumer, Kavanagh 2010, 236-237.

նշանակության անկումը: Այդ իրողությունից մասնավորապես բխում է, որ քաղաքական մշակույթի մասին «էվոլյուցիոն» պատկերացումներն այսօր հնացել են, և մասնակցային մշակույթը չի կարելի է որևէ իմաստով համարել «գազաթնակետ»: Միանգամայն «օրինակարգ» բնույթ ունի նաև հպատակային մշակույթը, ընդ որում՝ տարբեր ռեժիմների և պատմական տարբեր ճանապարհ անցած պետությունների պայմաններում: Կոնկրետ Հայաստանի պարագայում դա, մեր կարծիքով, նշանակում է, որ ամեն գնով և ի հեճուկս հասարակության դիմադրության՝ ազատական նախագիծ իրականացնելու փորձերը, եթե անգամ չեն ձախողվում, ապա, համենայն դեպս, չեն հանգեցնում սպասվող արդյունքի: Հավանաբար, բնական կլինի, որ հայ քաղաքական միտքն առավել սկետուն ուշադրություն դարձնի պահպանողական, քրիստոնեական արժեքներին:

Եզրակացություններ

- Պոպուլիզմը՝ որպես քաղաքական երևույթ, բնորոշ է բոլոր ժամանակաշրջաններին, սակայն XXI դարում այն ձեռք է բերել լայն տարածում՝ ստանալով յուրահատուկ գծեր:
- Ժամանակակից պոպուլիզմի հաջողությունները պայմանավորված են գաղափարախոսություններից և, առաջին հերթին՝ ազատական գաղափարախոսությունից հիասթափությամբ:
- Ներկայումս պոպուլիզմի տարածումը ստիպում է նորովի նայել ժողովրդավարության և ազատականության, իսկ ավելի լայն իմաստով՝ կամքի և բանականության ինքնիշխանության փոխհարաբերության խնդրին:
- Քաղաքական մշակույթի տեսանկյունից պոպուլիզմը համատեղում է մասնակցային և հպատակային մշակույթների տարրերը:
- Պոպուլիստական առաջնորդը, մի կողմից, ընտրվում է կամ հավանության է արժանանում քաղաքացիների մասնակցության շնորհիվ, սակայն, մյուս կողմից, իրեն դիրքավորում է, ընկալվում և լեգիտիմացվում է որպես «օձյալ», «հայր» կամ «թագավոր»:
- Պոպուլիզմին հատուկ է «հասարակ ժողովուրդ – էլիտա» հակադրությունը, պետական, քաղաքական, հասարակական ինստիտուտների հանդեպ վերապահ վերաբերմունքը, «առաջնորդ – ժողովուրդ» անմիջական շփման նախապատվությունը XXI դարում առաջին հերթին դրսևորվում է որպես

ծրագրային, գաղափարական պայքարի նսեմացում, անձնավորված մոտեցումների գերակայություն:

- Ժամանակակից Հայաստանում առկա է թե՛ «աջ» (ազգայնական) և թե՛ «ձախ» (սոցիալական) պոպուլիզմը՝ վերջինիս հստակ գերակշռությամբ:

Գրականություն

Մյուլլեր Հանս-Վերներ 2019, Ինչ է պոպուլիզմը, Երևան, Newmag, 200 էջ:

Օրդուխանյան Էմիլ 2020, Քաղաքական մշակույթը Հայաստանում, Երևան, «Երևանյան էսքիզ», 392 էջ:

Аузан А.А. 2021, Социокультурная экономика: как культура влияет на экономику, а экономика-на культуру: курс лекций /А.А. Аузан, Е.Н. Никишина, Москва, Экономический факультет МГУ имени М.В. Ломоносова, 200 с.

Дарендорф Ральф 2019, Восемь заметок о популизме, Москва, «Сектор», 32 с.

Земцов А.О. 2020, Конец «сильной руки»? Критический дискурс-анализ нормативного взгляда в политической культуре россиян, Социологический журнал, т. 26, N 4, с. 96-115.

Миль Джон Стюарт 2006, Рассуждения о представительном правлении. Челябинск, Социум, 384 с.

Пай Л. 2003, Незападный политический процесс, Политическая наука, N 2, с. 66-85.

Пинкер Стивен 2021, Просвещение продолжается: В защиту разума, науки, гуманизма и прогресса, Москва, «Альпина нон-фикшн», 626 с.

Побочий Иван 2014, Соотношение политического популизма и ненасильственной борьбы – European political and law discourse, vol. 1, Issue 4, с. 81-90,

Таньшина Н.П. 2015, Франсуа Гизо: политическая биография, Москва, МПГУ, 364 с.

Феномен правого и левого популизма в странах ЕС 2016, Аналитический доклад ОЕПИ, https://www.imemo.ru/files/File/ru/materials/Fenomen_doklad1.pdf, с. 1-21 (впервые опубликовано 13.06.2020).

Юдин Григорий 2021, Россия как плебисцитарная демократия. – Социологическое обозрение, т. 20, N 2, с. 9-47.

Almond G., Verba S. 1963, The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton University Press, 562 p.

Banfield E.C. 1967, Moral Basis of a Backward Society. The Free Press, N-Y, 105 p.

Barabak M.Z., Duara Nigel 2016, Nov. 13, 'We're called redneck, ignorant, racist. That's not true': Trump supporters explain why they voted for him – LA Times.

Blumer J.G. Kavanagh D., 2010, The Third Age of Political Communication: Influences and Features, p. 236-237, <https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/105846099198596> (27.03.2022).

Carpentier M. 2016, Why do People dislike Hillary Clinton? The Story goes far Back, Guardian, 18 October.

Crouch C. 2019, Post-Democracy and Populism // The Political Quarterly 90 (S 1), p. 124-137, https://pure.mpg.de/rest/items/item_3049474/component/file_3049475/content (first published: 03 December 2018).

Patetz D. L., Lipinski D. 1994, Political Culture and Political Communication, Duke University Working Papers, n. 92, p. 19-27.

Putnam R. D., Leonardi R., Y.R. Nonetti 1993, Making Democracy Work. Civic Traditions in Modern Italy, Princeton University Press, 280 p.

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՊՈՊՈՒԼԻԶՄԻ ՄԱՍԻՆ՝ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Արամ Աբրահամյան

Ամփոփում

Պոպուլիզմը՝ որպես քաղաքական երևույթ, ի հայտ է գալիս մարդկության պատմության ողջ ընթացքում՝ այն հասարակություններում, որտեղ անհրաժեշտություն կա ստանալու քաղաքացիների աջակցությունը: Սովորաբար այդ երևույթը ներկայացվում է բացասական երանգավորմամբ, սակայն քաղաքագիտության տեսանկյունից դա ուսումնասիրության օբյեկտ է, որն ինքնին չափտի առաջացնի գնահատողական դատողություններ: Պոպուլիզմն իր տարատեսակներով հատուկ է բազմաթիվ պետությունների քաղաքական կյանքին՝ անկախ այդ պետությունների զարգացածության աստիճանից: Քաղաքական ուղերձը քաղաքացիներին հասցնելու այս ձևը ենթադրում է մասնակցային և հպատակային քաղաքական մշակույթների համատեղում. մի կողմից, այն պահանջում է քաղաքացիների մասնակցություն (քվեարկության, քաղաքական միջոցառումներին ներկայանալու տեսքով), մյուս կողմից՝ քաղաքական առաջնորդի «սրբադասման» տարրեր: Այստեղից էլ բխում է պոպուլիզմի հիմնական առանձնահատկությունը՝ «հակաէլիտիզմը», որն իր հերթին ենթադրում է առաջնորդի ու քաղաքացիների անմիջական կապ, որը միջնորդավորված չէ քաղաքական, քաղաքացիական և պետական ինստիտուտներով:

Բանալի բառեր՝ պոպուլիզմ, քաղաքական մշակույթ, վերնախավ, անմիջական ժողովրդավարություն, ազատականություն, պահպանողականություն, լեգիտիմություն:

ЗАМЕТКИ О ПОПУЛИЗМЕ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОЙ ПОЛИТИЧЕСКОЙ КУЛЬТУРЫ

Арам Абрамян

Резюме

Популизм как политическое явление наблюдается на протяжении всей истории человечества, в тех случаях, когда возникает необходимость получить поддержку граждан. Обычно данное явление представляется в отрицательном свете, однако с точки зрения политологии это объект исследования, ко-

торый сам по себе не должен вызывать оценочных суждений. Популизм с его разновидностями характерен для политической культуры многих стран, вне зависимости от степени их развития. Этот способ донесения политического послания до граждан предполагает совмещение активистской и подданнической политических культур: с одной стороны, он требует участия граждан (в виде голосования, присутствия на политических мероприятиях), с другой – определенных элементов «сакрализации» лидера. Отсюда вытекает основная особенность популизма – «антиэлитизм», который в свою очередь предполагает прямую связь между лидером и гражданами – связь, не опосредованную политическими, гражданскими и государственными институтами.

Ключевые слова – популизм, политическая культура, элита, непосредственная демократия, либерализм, консерватизм, легитимность.

NOTES ON POPULISM IN THE CONTEXT OF CONTEMPORARY POLITICAL CULTURE

Aram Abrahamyn

Abstract

Populism as a political phenomenon appears throughout human history in those societies where there is a need to receive the support of citizens. This phenomenon, usually, is presented negatively, but from the point of view of political science, it is an object of study that shouldn't cause evaluative judgments. Populism with its variety is specific to the political life of many states regardless of the degree of development of those states. This way of delivering the political message to the citizens implies the combination of participant and subject political cultures: on one hand, it requires the participation of citizens (voting, attending political events), on the other hand, it also requires elements of "sanctification" of the political leader. "Anti-elitism", the main feature of populism, comes from here. It implies a direct connection between the leader and the citizens, which is not mediated by political, civil, and state institutions.

Key words – populism, political culture, elite, direct democracy, liberalism, conservatism, legitimacy.

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԱՐՏԱԳԱՂԹԸ ԿԱՆԱԴԱ (2013-2016 ԹԹ.)

Քնարիկ Ավագյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4

Էլ. հասցե՝ lira777@yahoo.com

Հոդվածը ներկայացվել է 05.02.2022, գրախոսվել է 09.12.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.3-63

Ներածություն

Միջազգային ահաբեկչական ուժերի կողմից 2011 թ. մարտից Սիրիայում սանձազերծված տևական պատերազմի հետևանքով բազմահազար սիրիահայեր ներգաղթել են Հայաստան: Բայց և այնպես, շատերը նախընտրել են ժամանակավոր կամ մշտական կարգավիճակով մեկնել այլ երկրներ (Լիբանան, Հորդանան, Միացյալ Արաբական Էմիրություններ, ԱՄՆ, Կանադա, Շվեդիա և այլուր): Աշխարհի տարբեր երկրներ ցրվելու գործում նրանց, ինչպես նախկինում, այս անգամ ևս, մեծապես աջակցել են Արևմուտքի առանձին երկրներ:

Այսպես, Միացյալ Նահանգները, ՆԱՏՕ-ի անդամ (ներառյալ՝ Եվրոպայի երկրների մեծ մասը, այդ թվում՝ Թուրքիան և Կանադան) մյուս երկրների հետ ռազմական գործողություններ սանձազերծելով Մերձավոր Արևելքում, մասնավորապես՝ Սիրիայում, միաժամանակ ձեռնամուխ է եղել «մարդասիրական նպատակներով» փախստականներին տարբեր, առավելապես՝ հեռավոր, երկրներ տեղափոխմանը¹: Շուտով Կանադան ևս ներգրավվել է հատկապես քրիստոնյա փախստականներ ընդունելու գործընթացին: Ճիշտ նույն կերպ Արևմտյան երկրները միջազգային կազմակերպությունների միջոցով ժամանակին՝ Հայոց ցեղասպանությունից հետո, իսկ ԱՆՉԱ-ն²՝ Երկրորդ աշխար-

¹ ԱՄՆ-ի կառավարությունը 2012 թ. նոյեմբերի 11-ին, արձագանքելով չորս երևելի ամերիկահայ իրավաբանների դիմումին, վերանայել է նախկինում «Հայրենիքի անվտանգության» ("Homeland Security") բաժանմունքի Միացյալ Նահանգների Քաղաքացիության և ներգաղթի ծառայության (US Citizenship and Immigration Services - USCIS) որոշումը սիրիահայերին սոսկ «Ժամանակավոր պաշտպանվածության կարգավիճակ» ("Temporary Protected Status" - TPS) տրամադրելու մասին և արտոնել է սիրիահայերին «Ազատ վիզա» ("Visa Waivers") շնորհել:

² 1947 թ. ԱՄՆ-ում հիմնվել է Հայրենազուրկ հայերի օգնության ամերիկյան ազգային կոմիտեն՝ ԱՆՉԱ-ն [American National Committee to Aid Homeless Armenians - ANCHA], որը Երկրորդ աշխարհամարտի հետևանքով տարագրված ավելի քան 4 500, իսկ 1960-70-ական թթ. ԱՆՉԱ-ի գործունեության վերականգնումով Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից, ինչպես նաև Խորհրդային

համարտից հետո ու սառը պատերազմի ընթացքում նախ՝ Արևմտյան Հայաստանից, Կիլիկիայից և Անատոլիայի հայաբնակ շրջաններից, ապա՝ Արևմտյան Եվրոպայից և Նոյնիսկ Խորհրդային Հայաստանից հայերին (որբեր, գերիներ, հայրենադարձներ և այլք) ցրել են աշխարհի տարբեր հեռավոր երկրներ:

Կանադայի կառավարության ձեռնարկած միջոցները Սիրիայի հայ փախստականների ընդունման գործում և սիրիահայերի արձագանքները

Սիրիայում ծավալված պատերազմի ընթացքում ՆԱՏՕ-ի ռազմական կառույցի անդամ Կանադայի կառավարությունը ևս իր մտահոգությունն է հայտնել սիրիացի փախստականների ճակատագրով: 2015 թ. նոյեմբերի 4-ին, Կանադայում լիբերալների կուսակցության իշխանության գալով, ազատականացվել են նաև գաղթականական կանոնները, և երկրի վարչապետ Ջաստին Տրյուդոն (2015 թ. – մինչև օրս) հայտարարել է, որ իր երկիրը պատրաստ է ընդունելու մինչև 60000 սիրիացի փախստականի³: Այնպես որ, միայն մեկ ամսվա ընթացքում մասնավոր թռիչքներով ավելի քան 400 փախստական է ժամանել երկիր⁴:

Արդեն 2015 թ. դեկտեմբերի 10-ին նորընտիր վարչապետը Տորոնտոյի Փիրսոն միջազգային օդանավակայանում անձամբ է դիմավորել կառավարական առաջին օդանավով Սիրիայից ժամանած փախստականներին, այդ թվում՝ սիրիահայերին (ընդհանուր առմամբ՝ 163 հոգի)՝ նրանց բաժանելով ձմեռային վերարկու, տաք հագուստ, սննդամթերք, երեխաներին՝ խաղալիք և այլն: Կանադայի վարչապետի հետ օդանավակայանում փախստականներին դիմավորելու էին եկել նաև Օնտարիո նահանգի վարչապետ Քեթլին Ուայնը և Գաղթականության նախարար Ջոն Մակ Քալումը⁵:

Ջ. Տրյուդոն իր աշխատակազմին հանձնարարել էր ամեն ինչ անել, որ օդանավից դուրս եկող փախստականները կանադական հող ոտք դնեն արդեն որպես մնայուն բնակիչներ՝ Կանադայի քաղաքացու լիարժեք իրավունքներով: Եվ այդպես էլ եղել է: Նորեկներին անմիջապես տրամադրել են սոցիալական ապահովագրության վկայական, բժշկական ապահովագրությո-

Հայաստանից 18 500 հայերի փոխադրել ու բնակեցրել է ԱՄՆ-ում և այլն: St'yan Zadoian 2012, 10, Barsumian 1961, 151, Փիրումյան, Ավագյան 2003, 37:

³ Elliott, Raffi. Syrian Armenian Refugees in Armenia and Canada 2016, March 2, <http://repatarmenia.org>

⁴ The Canadian Press, News Staff. Syrian refugees arrive in Canada, which one family calls 'paradise.' 2015, December 11, <http://www.680news.com>

⁵ Յակոբեան Սեւակ, Փրկույթին Թ՛է... Սպիտակ Ջարդ, 2015, 14 Դեկտեմբերի, <<http://www.ragmamoul.net>>: Slaughter, Graham. Ready to Live and Work: Armenian-Syrians Arrive With Strong Roots in Canada 2015, December 12, <http://www.ctvnews.ca>.

յան փաստաթուղթ, ինչպես նաև հանգստանալու համար նրանց ժամանակավորապես տեղավորել են օդանավակայանի հյուրանոցում և տրամադրել այլ արտոնություններ⁶:

Որոշված էր, որ սիրիահայ այդ 163 փախստականների գերակշիռ մասը պետք է մնար Օնտարիո նահանգում և հաստատվեր Տորոնտո, Ուիլոուդեյլ, Ուինդզոր, Համիլտոն, Քելվինա, Քոքսվիլամ, Նյու Ուեսթմինսթեր, Քալգարի, Էդմոնթոն և այլ քաղաքներում, իսկ շուրջ 40 փախստական պետք է փոխադրվեր Բրիտանական Կոլումբիա և Ալբերտա նահանգներ⁷:

Նախատեսված էր, որ մեկ շաբաթ անց ևս 160 սիրիացի փախստական պետք է ժամաներ արդեն Մոնրեալ: Ընդհանուր առմամբ, մինչև 2015 թ. վերջ Կանադան պետք է ընդուներ 10 000 փախստական⁸: Արդեն մինչև դեկտեմբեր երկիրն ընդունել է շուրջ 1300 սիրիահայ փախստականի և մինչև տարեվերջ ընդունելու էր ևս 300 հոգու⁹: Կանադայի ազգային երկաթուղային [Canadian National Railway] ընկերության տրամադրած 5 մլն դոլար նվիրատվության միջոցով կառավարությունը ծածկելու էր գաղթականների բնակեցման ծախսերը: Երկրի ղեկավարությունը կոչ է արել նաև անհատ ձեռներեցներին «նմանատիպ առատաձեռնություն դրսևորել»¹⁰:

«Թորոնթո սթար» [“Toronto Star”] թերթի հաշվարկներով՝ հովանավորների՝ մեկ տարվա ընթացքում մեկ անձին տրամադրած առաջին անհրաժեշտության օգնության ընդհանուր ծախսը կազմել է 12 000 դոլար, ընդ որում՝ փախստականը պարտավոր էր այդ ընթացքում չհեռանալ Տորոնտոյից¹¹:

Վարչապետի իսկ գնահատմամբ՝ փախստականներին աջակցելու իրենց այդ քայլը կարևոր նշանակություն ուներ ոչ միայն Կանադայի, այլև ամբողջ աշխարհի համար և վկայում էր այն մասին, որ իրենք երկրի քաղաքացի են ընդունում անկախ մարդու մաշկի գույնից, լեզվից կամ առանց

⁶ The Canadian Press, News Staff. Syrian refugees arrive in Canada, which one family calls 'paradise' 2015, December 11, <http://www.680news.com>

⁷ The Canadian Press, News Staff. Syrian refugees arrive in Canada, which one family calls 'paradise.' 2015, December 11, <http://www.680news.com>. Slaughter, Graham. Ready to Live and Work: Armenian-Syrians Arrive With Strong Roots in Canada. 2015, December 12, <http://www.ctvnews.ca>

⁸ Slaughter, Graham. Ready to Live and Work: Armenian-Syrians Arrive With Strong Roots in Canada. 2015, December 12, <http://www.ctvnews.ca>

⁹ Family of Syrian refugees reunited in Toronto. Canada, 2015, December 12, <http://www.thestar.com>

¹⁰ Slaughter, Graham. Ready to Live and Work: Armenian-Syrians Arrive With Strong Roots in Canada. 2015, December 12, <http://www.ctvnews.ca>

¹¹ The Canadian Press, News Staff. Syrian refugees arrive in Canada, which one family calls 'paradise.' 2015, December 11, <http://www.680news.com>

կրոնի խտրականության՝ հիմք ընդունելով համամարդկային արժեքները¹²։ Կանադայի վարչապետի՝ սիրիահայ փախստականներին օգնականակայանում անձամբ դիմավորելու փաստը գաղափարաքաղաքական քարոզչության առումով լայն արձագանք է ստացել միջազգային լրատվության մեջ ("New York Times"-ից մինչև "BBC"), ինչպես նաև սփյուռքահայ մամուլում¹³։

Դիմավորելով Սիրիայից Կանադա ժամանող հայերին՝ վարչապետ Ջ. Տրյուդոն առաջինը ողջունել է մանկահասակ երեխան գիրկը սիրիահայ փախստական Գևորգ Ժամկոչյանի ընտանիքին՝ «Բարի գալուստ ձեր նոր տունը» ասելով։ Գ. Ժամկոչյանն էլ իր հերթին երախտագիտություն է հայտնել վարչապետին՝ ասելով. «Մենք իսկապես շնորհակալ ենք այս ջերմ հիւրընկալութեան եւ ողջոյնին համար։ Մենք մեզի կը զգանք ինչպէս մեր տունը։ Մենք շատ տառապած ենք։ Կարծէք դժոխքէն դրախտ¹⁴ եկած ըլլանք»¹⁵։

Կանադայի հայերը ևս շնորհակալ էին իրենց երկրի իշխանություններին և համայնքին, որոնք գործուն դեր ունեցան Սիրիայից իրենց հարազատների հետ վերամիավորման գործում։ Հարկ է նշել, որ թեպետ Կանադա մեկնող սիրիահայերից ոչ բոլորն այնտեղ հարազատներ ունեին, այդուհանդերձ, նրանց արտագաղթն այդ երկիր ընթացել է սառը պատերազմի տարիներին լայնորեն կիրառվող՝ «Ընտանիքների վերամիավորում» ծրագրի շրջանակում։

Կանադայի հայ համայնքի օժանդակությունը սիրիահայերին

Ըստ կանադական «Դը գլոբ Էնդ մեյլ» ["The Glob and Mail"] պարբերականի 2015 թ. դեկտեմբերին հաղորդած տվյալների՝ երկրի պարզեցված ծրագրով Մոնրեալ, Տորոնտո և այլ քաղաքներ ժամանած փախստականների մոտավորապես $\frac{2}{3}$ -ը Սիրիայի հայեր էին, որոնց շատ փոքր տոկոսին միայն ֆինանսավորել էր կառավարությունը։ Փախստականների ֆինանսական աջակցությունն հիմնականում իր վրա էր վերցրել տեղի հայ համայնքը։

¹² The Canadian Press, News Staff. Syrian refugees arrive in Canada, which one family calls 'paradise.' 2015, December 11, <http://www.680news.com>

¹³ Slaughter, Graham. Ready to Live and Work: Armenian-Syrians Arrive With Strong Roots in Canada. 2015, December 12, <http://www.ctvnews.ca>

¹⁴ Ինչպես տեսնում ենք, դեպի Հայաստան չկողմնորոշված սփյուռքահայ հայապահպանված սերունդների որոշակի հատվածի շրջանում այլևս մոռացության կամ ձևափոխման (տրանսֆորմացիայի) է ենթարկվել նաև նրանց հայ մնալու իմաստն ու արժեքը ներկայացնող երբեմնի՝ «Հայաստան, երկիր դրախտավայր» նվիրական գաղափարն իսկ՝ տեղը զիջելով օտար երկրներում «դրախտավայրերի» փնտրտուքներին։

¹⁵ Յակոբեան Սեակ, Փրկութիւն Թէ՛... Սպիտակ Ջարդ 2015, 14 Դեկտեմբերի, <http://www.ragmamoul.net>

Գաղթականության հարցերով զբաղվող կանադացի պաշտոնյայի խոսքերով՝ «Փախստականներին շատերուն մենք նոյնիսկ չենք հանդիպիր: Անոնց ժամանումէն անմիջապէս ետք ֆինանսատրող խումբերը կը դիմատրեն զանոնք օդակայանին մէջ եւ անկէ ետք կ'անհետանան մեր տեսադաշտէն»¹⁶:

Փախստականները, որոնք բոլորն էլ անհատ հովանավորների շնորհիվ էին ժամանել Կանադա, մասնագիտությունների տեր մարդիկ էին՝ երաժշտության դասատու, ջութակահար, դեղագործ, տաքսու վարորդ, ինչպես նաև անգլերենով ոգևորված երիտասարդություն: Նրանք բոլորն էլ պատրաստ էին «նոր կյանք սկսել» նոր երկրում՝ աշխատանք գտնել, ապա ուսանել իրենց նախասիրությունների համեմատ, ինչպես նաև երեխաներին տեղավորել դպրոցներում¹⁷:

Կանադական կառավարության կարգադրությամբ առաջին օդանավով ժամանած սիրիահայ 163 փախստականների գրեթե կեսի թոփչքի ծախսերը հոգացել էին կանադահայ խմբերը: Տրոնտոյում գործող Հայկական ընտանիքի օգնության ծառայությունների [Armenian Family Support Services] պատասխանատու Ռիտա Օղջադյանը իրենց գործունեությունը պատմական նշանակության քայլ է գնահատել՝ ասելով. «Մենք իրավամբ պատմական պահ ենք ապրում: Դա այն չէ, ինչ դու կարդում ես գրքերում: Մենք պատմության հետ գործ ունենք, մենք ականատես ենք լինում պատմությանը»¹⁸:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Տրոնտոյի Սբ Մարիամ Հայ առաքելական եկեղեցու և տեղի Հայ օգնության միության ամենօրյա դպրոցին կից գործող Հայկական համայնքային կենտրոնը զբաղված էր սիրիական պատերազմի հետևանքով տեղահանված հայերին (ծանոթ, բարեկամ, անծանոթ) Կանադա փոխադրվելուն աջակցելով, նաև նրանց համար հովանավոր [sponsor] փնտրելով: Հարկ է նշել, որ հովանավոր գտնելու և Կանադա տեղափոխվելուն աջակցելու խնդրանքով համայնքային հիշյալ կառույցներին էին դիմում նաև Սիրիայից Լիբանան ապաստանածներից շատերը¹⁹:

Կանադայի կառավարության որոշմամբ 2011 թ. ստեղծվել է Հովանավորության պայմանագրի իրավասուներ (ՀՊԻ)՝ [Sponsorship Agreement Hol-

¹⁶ Գանատա ապաստանած սուրիացի փախստականներուն երկու երրորդը սուրիահայեր են, 2015, 2 դեկտեմբեր, <http://www.ragmamoul.net>

¹⁷ Slaughter, Graham. Ready to Live and Work: Armenian-Syrians Arrive With Strong Roots in Canada. 2015, December 12, <http://www.ctvnews.ca>

¹⁸ White, Patrick and Chowdhry, Affan. Syrian Refugees Exhausted But Happy After Long Journey. 2015, December 15, <http://www.theglobeandmail.com>

¹⁹ Halajian, Daron. Toronto Armenian Community Resettles Syrian Refugees. 2015, December 25, <http://armenianweekly.com>

ders – SAH²⁰] կազմակերպությունը, որը գործակցել է հովանավորող հայկական կառույցի՝ Տորոնտոյի Հայկական համայնքային կենտրոնի հետ: ՀՊԻ-ն կոչված էր պատերազմում տուժածներին կապել հովանավորների հետ՝ խթանելու համար նրանց արտագաղթը դեպի Կանադա: Կազմակերպությունը սկզբում օգնել է իրաքահայերին (նախ՝ 5 հոգի, ապա չորս տարվա մեջ օգնություն ստացողների թիվը հասել է 350-ի), իսկ Սիրիայի պատերազմական 2013-2014 թթ. ընթացքում Կանադայի հայ համայնքի անդամները հովանավորություն ապահովելու նպատակով լրացրել են շուրջ 2 500 սիրիահայի դիմումի ձև²¹:

Արդեն 2015 թ.՝ միայն մեկ տարվա մեջ, ՀՊԻ էր դիմել ավելի քան 2000 հայ²²: Համաձայն հովանավորների կողմից հաստատված Քաղաքացիության և գաղթականության քարտեզի [Citizenship and Immigration's Map]՝ 2015 թ. նոյեմբերի 24-ի տվյալներով շուրջ 2600 սիրիացի հայ փախստական տակավին սպասում էր Կանադա մուտք գործելուն: Ընդ որում՝ հայկական համայնքում ունեցող Ուիլյամսթիլ քաղաք պետք է փոխադրվեր 1 079, Տորոնտո՝ 1 326, Միսիսոգա՝ 68, Թորոնտո՝ 33, Նյու Յորք՝ 23, Էտոբիկո՝ 18, Օքվիլ՝ 7, Օշավա՝ 5 մարդ: 2015 թ. վերջին ընթացք է տրվել ևս 4 511 դիմումի²³:

Գաղթականների ընդունման այդ գործընթացը համահունչ էր Կանադայի վարչապետ Ջ. Տրյուդոյի ծրագրին, որով նախատեսվում էր մինչև 2016 թ. փետրվարի վերջ երկրում վերաբնակեցրել 25 000, իսկ տարեվերջին՝ 50 000 փախստական²⁴:

Վիզայի համար դիմորդները, կանադաբնակ անհատների կամ ընտանիքների կողմից դիմումի ձև ստանալով, այն լրացնելով կամ լրացնել տա-

²⁰ Ավելի մանրամասն տե՛ս Apply: Sponsorship Agreement Holders, <https://www.canada.ca>

²¹ Black, Debra. Armenian Community Gives a Wide Welcome to Refugees. More Than 1000 of the First Wave of Syrian Refugees are Being Settled by Sponsorships Through Toronto's Armenian More Than 1000 of the First Wave of Syrian Refugees are Being Settled by Sponsorships Through Toronto's Armenian Community. 2015, December 5, <https://www.thestar.com>

²² Halajian, Daron. Toronto Armenian Community Resettles Syrian Refugees. 2015, December 25, <http://armenianweekly.com>

²³ Black, Debra. Armenian Community Gives a Wide Welcome to Refugees. More Than 1000 of the First Wave of Syrian Refugees are Being Settled by Sponsorships Through Toronto's Armenian More Than 1000 of the First Wave of Syrian Refugees are Being Settled by Sponsorships Through Toronto's Armenian Community. 2015, December 5, <https://www.thestar.com>

²⁴ Halajian, Daron. Toronto Armenian Community Resettles Syrian Refugees. 2015, December 25, <<http://armenianweekly.com>>. Black, Debra. Armenian Community Gives a Wide Welcome to Refugees. More Than 1000 of the First Wave of Syrian Refugees are Being Settled by Sponsorships Through Toronto's Armenian Community. 2015, December 5, <https://www.thestar.com>. Յակոբեան Սեւակ, Փրկութիւն Թէ՛... Սպիտակ Ջարդ, 2015, 14 դեկտեմբերի, <http://www.ragmamoul.net>

լով, ուղարկում էին համապատասխան գրասենյակ: Պատասխանի համար նրանք սպասում էին 8-10 ամիս, իսկ խնդիրների դեպքում այն կարող էր ձգձգվել մինչև 18-24 ամիս: Տեղահանվածների գտնվելու վայրն էական չէր. նրանք կարող էին լինել Հորդանանում, Թուրքիայում, Լիբանանում²⁵, Հայաստանում և այլուր:

Բացի դիմումի ձև լրացնելուց, համայնքային կենտրոնն ստեղծել էր նաև կոմիտե, որը կոչված էր օգնելու հովանավորներին նորեկների համար բնակարան, հագուստ, կահույք և այլ անհրաժեշտ պարագաներ հայթայթելու գործում²⁶:

Համայնքային գրասենյակներն աջակցել են, որ նորեկները Կանադա ժամանելու հենց առաջին շաբաթվա ընթացքում ապահովվեն նաև աշխատանքով: Արաբերենից և հայերենից բացի, այլ լեզուների չտիրապետող հայերը տեղավորվել են նվազագույն վճարվող աշխատանքների, ինչպես նաև՝ հայկական խանութներում, ճաշարաններում և այլուր: Իսկ Հայ օգնության միության (ՀՕՄ) հայկական դպրոցն առաջին տարվա համար գաղթական երեխաներին ազատել է ուսման վարձից²⁷:

Այսպիսով, Տորոնտոյի և Մոնրեալի հայ համայնքները, անհատ խնամակալների աջակցությամբ, դյուրին կերպով ապահովել են սիրիահայերի գաղթը Կանադա²⁸:

Թեպետ կանադահայ շատ գործարարներ ջանացել են իրենց անձնական բիզնեսներում ընդգրկել սիրիահայերի, այդուհանդերձ, «գործ գտնելը սուրիահայության դիմագրաւած մեծագոյն տագնապն է, գոնէ սկզբնական շրջանին համար, մանաւանդ նկատի առած որ գաղթողներէն մեծ տոկոս մը միջին տարիքի հասած ընտանիքի տէր մարդիկ են, որոնք երբեմն ստիպուած պիտի ըլլան իրենց մասնագիտութիւնը փոխել եւ բոլորովին նոր գործի ձեռնարկել»²⁹: Այդուհանդերձ, իրեն հակասելով և հավատարիմ սփյուռքյան կու-

²⁵ Halajian, Daron. Toronto Armenian Community Resettles Syrian Refugees. 2015, December 25, <http://armenianweekly.com>

²⁶ Black, Debra. Armenian Community Gives a Wide Welcome to Refugees. More Than 1000 of the First Wave of Syrian Refugees are Being Settled by Sponsorships Through Toronto's Armenian Community. 2015, December 5, <https://www.thestar.com>

²⁷ Halajian, Daron. Toronto Armenian Community Resettles Syrian Refugees. 2015, December 25, <http://armenianweekly.com>

²⁸ Փանոսեան-Մուրատեան Անի, Ո'չ... «Ճերմակ Զարդ» Չի' Սպասեր Սուրիահայության, 2016, 22 Յունուար, <https://hairenikweekly.com>

²⁹ Փանոսեան-Մուրատեան Անի, Ո'չ... «Ճերմակ Զարդ» Չի' Սպասեր Սուրիահայության, 2016, 22 Յունուար, <https://hairenikweekly.com>

սակցական մտածելաոճին ու գրելաոճին, հողվածագիրը խրախուսել է սիրիահայերի գաղթը Կանադա՝ վստահ, որ նրանք «մեծ ներդրում» պիտի ունենան Կանադայի «ինքնին արդեն զօրաւոր ու կազմակերպուած» հայ համայնքի «որակի եւ թիւի բարգաւաճման մէջ»: Պայմանով, որ «այս վերահաստատուած հայերը մնան իրարու մօտ, եկեղեցւոյ եւ այլ ազգային կառոյցներու շուրջ համախմբուած, հաւաքական կեանքի մէջ ներգրաւուած: Այս ձեւով աւելի դիւրին պիտի ըլլայ իրենց ազգային ու ընտանեկան արժէքները պահպանելը ու «զաւակները չկորսնցելը»»: Գիտակցելով հանդերձ երիտասարդ սերնդին սպասվող անխուսափելի ծուլումը՝ հողվածագիրը, այնուամենայնիվ, ինքն իրեն մխիթարել է՝ ասելով. «Ո՛չ... «Ճերմակ Զարդ» Չի՛ Սպասեր Սուրիահայութեան»: Հետևաբար, կարևորվել է նորաստեղծ համայնքի ղեկավարների ճիշտ ընտրությունը, «որպէսզի օգնեն իրենց [սիրիահայերին] կազմակերպուելու եւ միաձուլուելու տեղական գաղութին հետ՝ գոյատեւելու համար նախ որպէս մարդ, ապա՝ որպէս հայ»³⁰:

Բայց և այնպէս, ԱՄՆ-ում լույս տեսնող անգլիալեզու «Արմենիան Ուիքլի» ["Armenian Weekly"] պարբերականի հաղորդմամբ, պատերազմի սարսափներից հազիվ ազատագրված սիրիահայերն ու նրանց մանկահասակ երեխաները նոր երկրում՝ Կանադայում, բախվել են կյանքի ու կենցաղի թանկության, արևելքի բարքերի համար անսովոր ու խորթ այլասերող երևույթների, արևմտյան զանգվածային միջոցների անվերահսկելիության և այլ հոգի երևույթների հետ³¹:

Մեծի Տանն Կիլիկիո հովանավորության ներքո գործող Կանադայի Հայ ազգային եկեղեցին (առաջնորդ տեր Մեղրիկ եպս. Փարիկյան), Տորոնտոյի Հայկական համայնքային կենտրոնի հովանավորման գրասենյակն ու ՀՕՄ-ը, ինչպես նաև Մոնրեալի «Հայ Տունը» որոշիչ դեր են ունեցել փախստականներին ու նրանց ընտանիքներին դեպի Կանադա փոխադրելու գործում³²:

«Հայ Տուն»

Տակավին 2005 թ. Կանադայի Քվեբեկ քաղաքի հայ համայնքի որոշ անդամներ (Նաիրի Թավլյան, Անա Աֆեյան, Սիրա Գասպարյան, Գաբրիել

³⁰ Փանոսեան-Մուրատեան Անի, Ո՛չ... «Ճերմակ Զարդ» Չի՛ Սպասեր Սուրիահայութեան, 2016, 22 Յունուար, <https://hairenikweekly.com>

³¹ Halajian, Daron. Toronto Armenian Community Resettles Syrian Refugees. 2015, December 25, <http://armenianweekly.com>

³² Halajian, Daron. Toronto Armenian Community Resettles Syrian Refugees. 2015, December 25, <http://armenianweekly.com>

Ջերահյան, Ազատ Դեմիսճյան) մտադրվել էին հիմնել կազմակերպություն, որը կաջակցեր լեզվական խնդիրներ, մշակութային տարբերություններ կամ առկա սոցիալական ծառայություններից օգտվելու գիտելիքների պակաս ունեցող անձանց³³:

Եվ արդեն 2007 թ. ապրիլի 1-ին Քվեբեկ նահանգի Մոնրեալ քաղաքում Հայ առաքելական եկեղեցու թեմի առաջնորդ Բագրատ Եպիսկոպոս Գալստանյանը հիմնել էր շահույթ չհետապնդող ոչ կառավարական համայնքային այդ հաստատությունը՝ Ընտանիքի աջակցության ծառայությունների «Հայ Տուն» [Family Support Services "Hay Doun"]։ Այն կոչված էր սոցիալական ծառայություններ մատուցելու և քաղաքացիական գիտելիքներ հաղորդելու ինչպես Քվեբեկի հայերին, այնպես և աջակցություն փնտրող տարբեր ծագում ունեցող տեղի խոցելի անձանց ընդհանրապես, մասնավորապես գաղթականներին, փախստականներին, դժվարության մեջ հայտնված անհատներին, զույգերին, ընտանիքներին, անկարողություն ունեցողներին և այլն։ Կազմակերպությանը, որի կարգախոսն էր՝ «Առանց սահմանների» ["Without Borders!"], աջակցել են տարբեր տարիքի կամավորներ³⁴:

Կանադա փոխադրված սիրիահայ գաղթականները տեղավորվել են հիմնականում նաև «Հայ Տան» միջոցով (նախագահ՝ Սևակ Կոստանյան, փոխնախագահ՝ Մայք Կիրակոսյան)։ Ընտանիքի աջակցության ծառայությունների «Հայ Տունը» կոչված էր անվճար ծառայելու համայնքին՝ տրամադրելով համարկման, սոցիալական ուսուցման և տարբեր ասպարեզներում (այդ թվում՝ առողջապահական և այլն) աջակցության արդյունավետ միջոցներ³⁵:

Մի շարք ծրագրերի միջոցով («Ընդհանուր հովանավորություն», «Նորեկների և փախստականների դիմավորում ու համարկում», «Աջակցություն ընտանիքներին, երիտասարդությանը և մեծահասակներին», «Թարգմանություն և ուղեկցում», «Համակարգման և ուղղորդման ծառայություններ», «Աշխատող-գործատու տվյալների շտեմարան», «Կրթական» և այլն) «Հայ Տունը» տարիներ շարունակ մարդասիրական օժանդակություն է ցույց տվել Քվեբեկում հաստատված Իրաքի և Սիրիայի փախստական ընտանիքներին։ Այսպես, «Ընդհանուր հովանավորություն» ["Collective Sponsorship"] ծրագրով «Հայ Տունը» Քվեբեկի կառավարության Ներգաղթի, բազմազանության և ներառման նախարարության [Immigration, Diversity and Inclusion Mi-

³³ Hay Doun. About Us, <https://www.haydoun.ca>. Hay Doun, <https://armenianchurch.ca>

³⁴ Hay Doun. About Us, <https://www.haydoun.ca>. Hay Doun, <https://armenianchurch.ca>

³⁵ Hay Doun. About Us, <https://www.haydoun.ca>

nistry of the Government of Quebec] հետ ստորագրել է գործակցության համաձայնագիր, որը թույլ է տվել հովանավորել Քվեբեկում հաստատվել ցանկացողներին, ընդ որում՝ հիմնականում հայերին³⁶:

Տակավին 2008 թ. ի վեր «Հայ Տունը» ապահովել է Իրաքից շուրջ 45 փախստական ընտանիքի. շատերն էլ դեռ սպասել են իրենց հերթին, իսկ արդեն 2014-ից «Հայ Տունը» ընդունել է նաև 2 500 սիրիացի փախստական: Կազմակերպությունը, համայնքի կարողությունները համախմբելով, իր վրա է վերցրել յուրաքանչյուր փախստական ընտանիքի սոցիալական խնդիրների լուծման պատասխանատվությունը՝ ներառյալ տնով, աշխատանքով, դպրոց-ուսումնառությամբ ապահովումը՝ դրանով իսկ նպաստելով նոր՝ կանադական հասարակությանը նրանց ընտելացմանն ու ինտեգրմանը³⁷:

Ի դեպ, «Հայ Տունը» Կանադայում ճանաչվել է որպես առաջին և միակ «օրինակելի կազմակերպությունը» ["model organization"], որը կարճ ժամանակահատվածում հովանավորել է այդքան մեծ թվով փախստականների³⁸:

Ինչպես ԱՆՁԱ-ի պարագայում, այս դեպքում ևս արևմուտք արտագաղթելու համար օգտագործվել է Բեյրութի ճանապարհը: «Հայ Տունը» նույնպես սիրիահայերին նախ ուղարկել է Բեյրութ, ապա այնտեղից՝ Կանադա, որպեսզի նրանք դիտարկվեն որպես Սիրիայից փախստականներ և օգտվեն տրամադրվող արտոնություններից³⁹:

Ցավալի է, որ սփյուռքյան առանձին կազմակերպություններ, որոնք ՀՀ անկախության տարիներին իրենց ներկայացուցչություններն են հիմնել Հայաստանում և աղերսներ ունեն արևմտյան տարբեր կառույցների հետ (ինչպես, օրինակ՝ Հայ օգնության միությունը, Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունը և այլն), Հայաստանում հաստատված սիրիահայերին աջակցելու հետ մեկտեղ ներգրավվել են նաև Հայաստանից սիրիահայերի դեպի Կանադա փոխադրելու «Հայ Տան» ծրագրին: Այդ կազմակերպությունների պատասխանատուները ոչ միայն բացահայտ դրական են արձագանքել դեպի արտերկիր սիրիահայերի տեղափոխման «Հայ Տան» ձեռնարկին, այլև համոզմունք են հայտնել, որ համայնքային այդ կառույցը պետք է շարունակի դեպի օտար երկրներ հայերի տեղափոխումը: Այսպես,

³⁶ Hay Doun. Programs, <https://www.haydoun.ca>. Hay Doun. About Us, <https://www.haydoun.ca>. Collective Sponsorship, <https://www.haydoun.ca/>

³⁷ Collective Sponsorship, <https://www.haydoun.ca>

³⁸ Collective Sponsorship, <https://www.haydoun.ca>

³⁹ «Հայ Տուն», Թէ՛ Օտարի Տուն, 2 Ապրիլ, <https://www.arevelk.am>

Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի ներկայացուցիչ Հարութ Ներսեսյանը, գործելով Հայաստանում, ոգևորված էր այն փաստով, որ Կանադան «դրական տրամադրությամբ է սուրիահայեր ընդունելու» հարցում: Նա ասել է. «Վերջերս, սուրիահայերու Գանատա տեղափոխման համար հսկայական աշխատանք տարած է «Հայ Տուն» միութիւնը: ...Թէպէտ ստոյգ տեղեկութիւն չունիմ, բայց «Հայ Տուն»-ի միջոցաւ [դեպի Կանադա] երթը պիտի շարունակուի», քանի որ ««Հայ Տունը» փրկութիւն եղաւ շատ մը սուրիահայերու համար»⁴⁰:

Այնպէս որ, «Հայ Տունը» տարբեր երկրներում ապաստանած և մասնավորապէս Հայաստան հանգրվանած սիրիահայերին Կանադա փոխադրելու գործում ճիշտ նույն կերպ է վարվել, ինչպէս ժամանակին ԱՆՉԱ-ն էր դեպի ԱՄՆ, Կանադա, Լատինական Ամերիկա, Ավստրալիա և այլուր արտագաղթի հորձանուտի մեջ, արտերկրի հայերից բացի, ներգրավել նաև Հայաստանում արդեն իսկ հաստատված հայրենադարձներին:

Եվ միայն 2016 թ. փետրվարին Մոնրեալի «Հայ Տուն» սոցիալական ծառայությունը դադարեցրել է հետագա դիմումների ընդունումը և այդ մասին հատուկ հայտարարություն տեղադրել ֆեյսբուքյան իր էջի վրա՝ առանց նշելու պատճառները. «Ուրբաթ, 19 Փետրուար 2016-էն սկսեալ, «Հայ Տուն»-ի գրասենեակը «Սուրիահայ հովանաւորութեան ծրագիր»-ով նոր դիմումներ պիտի չստանձնէ»⁴¹:

Տեղին է նշել, որ «Հայ Տան» միջոցով դեպի Կանադա մեկնելու դիմումների ընդունումը դադարեցնելու փաստը, քաղաքական դրդապատճառներից բացի, կապված էր նաև այն հանգամանքի հետ, որ Հայաստանում հաստատված ու տեղի սոցիալ-տնտեսական, կրթական, առողջապահական և այլ ասպարեզներում առավելություններից օգտված շատ սիրիահայերի համար այլևս դժվար, առանձին դեպքերում՝ անընդունելի են եղել արևմտյան այդ օտար երկրի կենցաղն ու բարքերը, ուստի և իրենց ու իրենց երեխաներին անդառնալի ուժացումից փրկելու համար շատերը վերադարձել են հայրենիք:

Կանադա մեկնելու դեմ այլ կարծիքներ

Բնութագրական է կանադահայ ձեռնարկատեր Րաֆֆի Էլիոթի գնահատականը հայրենիքի նկատմամբ սփյուռքի որոշ հատվածի անպատշաճ ու

⁴⁰ «Հայ Տուն»-ը փրկութիւն եղաւ շատ մը սուրիահայերու համար. Յարութ Ներսէսեան, 2016, 5 դեկտեմբեր, <https://www.amaa.am>

⁴¹ «Հայ Տուն»ը Կը Դադրեցնէ Ներգաղթի Նոր Դիմումագիրերու Ստանձնումը 2016, 24 Փետրուար, <http://www.ragmamoul.net>: «Հայ Տուն», Թէ՛ Օտարի Տուն, 2016, 2 Ապրիլ, <https://www.arevelk.am>

հակոտնյա գործողությունների մասին. «Ցավալի հեգնանքով հայ սփյուռքը հերթական անգամ անուղակիորեն նպաստեց Հայաստանի հայաթափմանը»⁴²:

Նա նաև անկեղծացել է սիրիահայերի՝ հայրենիք գալու բուն մտադրությունների մասին՝ նշելով, որ նրանց բուն նպատակը այդտեղից այլ երկիր փոխադրվելն էր. «Բազմաթիվ [սիրիահայ] նորեկներ Հայաստանում մշտապես մնալու մտադրություն երբեք չեն ունեցել: Շատերը Հայաստանը դիտարկել են որպես ցատկահարթակ [springboard] վերջ ի վերջո Արևմտյան Եվրոպայում և Կանադայում գտնվող ազգականների հետ վերամիավորվելու համար, որտեղ հյուրընկալվել են մեծ թվով սիրիահայեր»⁴³:

Իսկ Տորոնտոյում երկրի վարչապետի կողմից սիրիահայ ժամկոչյան ընտանիքին ցուցադրաբար օդանավակայանում անձամբ դիմավորելու և նվերներ բաշխելու հանգամանքը խթանել է «Հայ Տուն» նորանոր դիմումներ ներկայացնելը: Կանադահայ վերլուծաբանն արձանագրել է, որ Մոնրեալի «Հայ Տունը» և Տորոնտոյի Հայ օգնության միությունը խթանել են Հայաստանից սիրիահայերի արտագաղթը⁴⁴:

Հարկ է նշել, որ Կանադա մեկնելու՝ արևմուտքից եկող հրապուրիչ թվացող հնարավորությամբ գայթակղվել է ինչպես Հայաստանում սոցիալ-տնտեսական դժվարություններ ունեցող, նույնպես և հայաստանյան կյանքին հաջողությամբ ինտեգրված Սիրիայի հայերի մի որոշ մասը:

Այսպես, «Ազատություն» ռադիոկայանի տարածած քարոզչական տեսանյութի համաձայն, 2016 թ. փետրվարին Հայաստանը լքել և Կանադա է տեղափոխվել շուրջ երկու տասնյակ սիրիահայ, որոնք Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում «դժգոհում էին Հայաստանի կյանքից և հայտնում երկրում [Հայաստանում] մնալու անկարելիության մասին»՝ իրենց հեռանալը պատճառաբանելով հետևյալ կերպ. «Գնանք Կանադա, ավելի լավ ապագա ապահովենք մեզ ու մեր զավակների համար»⁴⁵: Ոմանք իրենց հեռանալը պատճառաբանել են մանր ձեռնարկատիրությամբ զբաղվել չկարողանալով, ինչում, իրենց ասելով, նրանց խանգարել են կառավարության հետ կապված օլիգարխները⁴⁶:

⁴² Elliott, Raffi. Syrian Armenian Refugees in Armenia and Canada 2016, March 2, <http://repatarmenia.org>

⁴³ Elliott, Raffi. Syrian Armenian Refugees in Armenia and Canada 2016, March 2, <http://repatarmenia.org>

⁴⁴ Elliott, Raffi. Syrian Armenian Refugees in Armenia and Canada 2016, March 2, <http://repatarmenia.org>

⁴⁵ Կանադա գնալով սիրիահայերը շատ վտանգավոր քայլ են կատարում 2016, 26 Փետրուար, <http://www.arevelk.am>

⁴⁶ Elliott, Raffi. Syrian Armenian Refugees in Armenia and Canada. 2016, March 2, <http://repatarmenia.org>

Մինչդեռ Հալեպում ծնված Թամարը, որը Երևանում աշխատել է տեխնոլոգիական խոշոր ֆիրմայում և աշխույժ գործունեություն է ծավալել տեղական մի շարք ընկերությունների հետ, ևս հրապուրվել է Կանադա մեկնելու գաղափարով: Նա կանադահայ Ռաֆֆի Էլիոթի հետ հարցազրույցի ժամանակ, «Հայաստանում իր կյանքը քննարկելիս անվերջ օգտագործել է՝ «Եթե ես մնամ այստեղ» պայմանական խոսելաձևը», ինչը վկայում է այն մասին, որ նա Կանադա մեկնելու մտադրություն ունեցել է: Առավել ևս, խոստովանել է. «Ես սիրում եմ իմ կյանքը Հայաստանում, սակայն ինչ կարող եմ անել հայկական անձնագրով, [մինչդեռ] մյուս կողմից կանադական անձնագրով [հնարավորությունները շատ են]...»⁴⁷:

Եվ կամ՝ պատերազմի սկզբին Հալեպից հեռացած, Հայաստանում ապաստանած և ամերիկյան հեղինակավոր տեխնիկական ընկերությունում աշխատանքի անցած համակարգչային ծրագրավորող Շանթը, լսելով «Հայ Տան» միջոցով կանադական փախստականի վիզա ձեռք բերելու հնարավորության մասին, դիմել ու մեկնել է Մոնրեալ՝ իր քայլը բացատրելով հետևյալ կերպ. «Ես որոշեցի, որ Կանադան լավագույն վայրը կլինի կարիերաս շարունակելու համար, ահա և վերջ»: Ապա, ջերմությամբ հիշելով Երևանում անցկացրած ժամանակը, ՀՀ անկախացումից հետո որոշ սփյուռքահայերի շրջանում տարածված անորոշ արտահայտությամբ ավելացրել է. «Հայաստանն իմ հայրենիքն է. ես ամեն ինչ կանեմ այնտեղ վերադառնալու համար»⁴⁸:

Հարկ է նշել, որ Սիրիայի պատերազմից առաջ Հայաստանում հաստատված որոշ նախկին սիրիահայեր նույնպես գայթակղվել են Կանադա մեկնելու հնարավորությամբ և, առիթը բաց չթողնելով, փորձել են օգտվել կանադական գաղթականական ծառայություններից⁴⁹:

Թեպետ «Հայ Տան» կազմակերպած հայերի տեղափոխմանը ներգրավված էին Կանադայի հայ համայնքում ազդեցություն ունեցող կառույցները, այդ թվում՝ ՀՕՄ-ը, այդուհանդերձ, Հայաստանում գործող դրանց առանձին ներկայացուցիչներ (ի տարբերություն Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության հայաստանյան ներկայացուցչի) բացահայտ չեն արտահայտվել ու խրախուսել այդ արտահոսքը, բայց և ջանքեր չեն գործադրել այն կանխելու համար: Այսպես, ՀՅԴ «Օգնի՛ր եղբորդ» բարեգործական ծրագրի պատասխանատու Խաչիկ Զոգիկյանը մամուլին տված

⁴⁷ Elliott, Raffi. Syrian Armenian Refugees in Armenia and Canada. 2016, March 2, <http://repatarmenia.org>

⁴⁸ Elliott, Raffi. Syrian Armenian Refugees in Armenia and Canada. 2016, March 2, <http://repatarmenia.org>

⁴⁹ Elliott, Raffi. Syrian Armenian Refugees in Armenia and Canada. 2016, March 2, <http://repatarmenia.org>

հարցազրույցի ժամանակ Հայաստանից սիրիահայերի հեռանալը «վտանգավոր քայլ» է համարել⁵⁰:

Խոսելով Հայաստանում հաստատված և այստեղ արդեն իսկ հարմարված սիրիահայերի մասին՝ Խ. Ջոզիկյանը նշել է, որ այն արտոնությունները, որոնք Հայաստանում ստեղծված են նրանց համար, այլևս անիմաստ պետք է դարձնեն նորից տարագիր դառնալու նրանց ցանկությունը. «...Եթե մարդը կարողանում է այստեղ իր տարրական պայմանները ապահովել, իմաստ չունի այլ երկրներ գնալ, կրկնակի տարագիր դառնալ»⁵¹: Մինչդեռ Կանադան, որն իր «դռներն է բացել սիրիացի փախստականների առջև», այդուհանդերձ, մասնագետներին, առանց հատուկ քննությունների և տեղական արտոնագրի, նաև բժիշկներին, աշխատանքի չի ընդունում⁵²:

Հայաստանում հաստատված սիրիահայերին ևս «զոհելու» և դեպի Կանադա տեղափոխելու «ցանցի մեջ նետելու» դեմ, ի շարս հասարակության որոշ շերտերի, իր արդարացի վրդովմունքն է արտահայտել նաև «Արեւելք լրատուականը»՝ գրելով. «...Կ'ափսոսանք, որ նոյն «Հայ Տունը» իր ցանցը նետեց դեպի Հայաստան, ու հոնկէ եւս քաղեց բազմաթիւ «զոհեր», զանոնք նախ Պէյրուֆ ուղարկելով ու ապա «Երազային Գանատա»⁵³: Մինչդեռ, իրականում «այսօրուան Գանատան դրախտ դառնալու ոչ մէկ լուրջ յենարան ունի», քանի որ «հոն հաստատուած հայորդիներէն շատեր կը կամենան ետ դառնալ, եթէ ոչ դէպի Հալէպ, ապա դէպի Երեւան»: Ապա եզրակացրել է. «...«Հայ Տուն»-ը մեր տուն չի տանիր, այլ օտարի տուն, ուր հասնող հայորդիները անպայման պիտի կորսնցնեն իրենց ինքնութիւնը: ...«Հայ Տուն»-ը Հայաստանն է, գոնէ անաղարտ պահենք մեր դարաւոր սրբութիւնները»⁵³:

Եզրակացություններ

Ամփոփելով, նշենք, որ թեպետ հետխորհրդային որոշ արևմտյան նաև հայաստանյան գիտնականների կողմից ժամանակին ԱՆՉԱ-ի և հայկական սփյուռքի առանձին կառույցների (ՀՅԴ, ՀՕՄ, Հայ առաքելական եկեղեցու անթիլիասական թեմ, Հայ ավետարանական ու Կաթողիկե եկեղեցիներ և այլն) գործուն մասնակցությամբ սիրիահայ տարագիրներին դեպի օտար

⁵⁰ Կանադա գնալով սիրիահայերը շատ վտանգավոր քայլ են կատարում, 2016, 26 Փետրուար, <http://www.arevelk.am>:

⁵¹ Կանադա գնալով սիրիահայերը շատ վտանգավոր քայլ են կատարում, 2016, 26 Փետրուար, <http://www.arevelk.am>:

⁵² Կանադա գնալով սիրիահայերը շատ վտանգավոր քայլ են կատարում, 2016, 26 Փետրուար, <http://www.arevelk.am>:

⁵³ «Հայ Տուն», Թէ՛ Օտարի Տուն, 2016, 2 Ապրիլ, <https://www.arevelk.am>

երկրներ փոխադրելու հանգամանքը դիտարկվել է սառը պատերազմի համատեքստում, բայց և այնպես, միևնույն ընթացքը շարունակվել է նաև անկախ Հայաստանի Հանրապետության առկայության պայմաններում՝ բուն Հայաստանից՝ միևնույն համայնքային հաստատությունների կողմից:

Այդ ամենը հիմք է տալիս եզրակացնելու, որ միջազգային կառույցների հետ գործակցող սփյուռքյան հիշյալ հաստատությունները հետամտել են իրական քաղաքական նպատակներ. այն է՝ խոչընդոտել դեպի Հայաստան ներգաղթը, դրանով իսկ կանխելով Ռուսաստանին հավատարիմ հարավ-կովկասյան այդ տարածաշրջանում քրիստոնյա հայկական տարրի ստվարացումը, ինչպես նաև «հայապահպանված» սիրիահայերի ներհոսքի հաշվին երկարաձգել աշխարհի տարբեր երկրներում արագ ձուլվող սփյուռքի հայ համայնքների, տվյալ դեպքում՝ Կանադայի հայ համայնքի գոյատևումը:

Գրականություն

- Գանատա ապաստանած սուրիացի փախստականներին երկու երրորդը սուրիահայեր են 2015, 2 Դեկտեմբեր, <http://www.ragmamoul.net> (ներբեռնման օրը՝ 24.02.2022):
- Կանադա գնալով սիրիահայերը շատ վտանգավոր քայլ են կատարում 2016, 26 Փետրուար, <http://www.arevelk.am> (ներբեռնման օրը՝ 24.02.2022):
- «Հայ Տուն», Թէ՛ Օտարի Տուն, 2016, 2 Ապրիլ, <https://www.arevelk.am> (ներբեռնման օրը՝ 24.02.2022):
- «Հայ Տուն»ը Կը Դադրեցնէ Ներգաղթի Նոր Դիմումնագիրերու Ստանձնումը 2016, 24 Փետրուար, <http://www.ragmamoul.net> (ներբեռնման օրը՝ 24.02.2022):
- «Հայ Տուն»ը փրկութիւն եղաւ շատ մը սուրիահայերու համար. Յարութ Ներսէսեան 2016, 5 Դեկտեմբեր, <https://www.amaa.am> (ներբեռնման օրը՝ 24.02.2022):
- Յակոբեան Սեակ, Փրկութիւն Թ"է... Սպիտակ Ջարդ 2015, 14 դեկտեմբերի, <<http://www.ragmamoul.net>> (ներբեռնման օրը՝ 24.02.2022):
- Փանոսեան-Մուրատեան Անի 2016, Ո՛չ... «Ճերմակ Ջարդ» Զի՛ Սպասեր Սուրիահայութեան, 22 Յունուար, <https://hairenikweekly.com> (ներբեռնման օրը՝ 24.02.2022):
- Փիրումյան Ռ., Ավագյան Ք. 2003, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, «Հայ սփյուռք հանրագիտարան», Երևան, 732 էջ:
- Apply: Sponsorship Agreement Holders, <https://www.canada.ca> (ներբեռնման օրը՝ 24.02.2022):
- Barsumian N. 1961, Stowaway to Heaven. Ohio, 165 p.
- Black, Debra. Armenian Community Gives a Wide Welcome to Refugees. More Than 1000 of the First Wave of Syrian Refugees are Being Settled by Sponsorships Through Toronto's Armenian More Than 1000 of the First Wave of Syrian Refugees are Being Settled by Sponsorships Through Toronto's Armenian Community. 2015, December 5, <https://www.thestar.com> (ներբեռնման օրը՝ 24.02.2022):
- The Canadian Press, News Staff. Syrian refugees arrive in Canada, which one family calls 'paradise.' 2015, December 11, <http://www.680news.com> (ներբեռնման օրը՝ 24.02.2022)
- Collective Sponsorship, <https://www.haydoun.ca/> (ներբեռնման օրը՝ 24.02.2022):
- Elliott, Raffi. Syrian Armenian Refugees in Armenia and Canada. 2016, March 2, <http://repatamenia.org> (ներբեռնման օրը՝ 24.02.2022):

- Family of Syrian refugees reunited in Toronto. Canada 2015, December 12, <http://www.thestar.com> (ներբեռնման օրը՝ 24.02.2022).
- Halajian, Daron. Toronto Armenian Community Resettles Syrian Refugees. 2015, December 25, <http://armenianweekly.com> (ներբեռնման օրը՝ 24.02.2022).
- Hay Doun. About Us, <https://www.haydoun.ca> (ներբեռնման օրը՝ 24.02.2022).
- Hay Doun. Programs, <https://www.haydoun.ca> (ներբեռնման օրը՝ 24.02.2022).
- Slaughter, Graham. Ready to Live and Work: Armenian-Syrians Arrive With Strong Roots in Canada 2015, December 12, <http://www.ctvnews.ca> (ներբեռնման օրը՝ 24.02.2022).
- White, Patrick and Chowdhry, Affan. Syrian Refugees Exhausted But Happy After Long Journey 2015, December 15, <http://www.theglobeandmail.com> (ներբեռնման օրը՝ 24.02.2022).
- Zadoian Hratch 2012, Our Brothers' Keepers: The Armenian National Committee to Aid Homeless Armenians (ANCHA). A Partial History, New York: SIS Publications, 144 p.

ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԱՐՏԱԳԱԴԹԸ ԿԱՆԱԴԱ (2013-2016 թթ.)

Քնարիկ Ավագյան

Ամփոփում

ՆԱՏՕ-ի անդամ երկրները, այդ թվում՝ Կանադան, ռազմական գործողություններ սանձազերծելով Մերձավոր Արևելքում, մասնավորապես՝ Սիրիայում, միաժամանակ ձեռնամուխ են եղել «մարդասիրական նպատակներով» փախստականներին դեպի տարբեր երկրներ տեղափոխելու աշխատանքներին:

Ինչպես սառը պատերազմի տարիներին, նույնպես և անկախ Հայաստանի Հանրապետության առկայության պայմաններում հայկական սփյուռքի առանձին կառույցներ (ՀՅԴ, ՀՕՄ, Հայ առաքելական եկեղեցու անթիվասական թեմ, Հայ ավետարանական ու Կաթողիկե եկեղեցիներ և այլն), ինչպես նաև Տորոնտոյի Հայկական համայնքային կենտրոնն ու Մոնրեալի «Հայ Տուն» սոցիալական ծառայությունը լծվել են սիրիահայ տարագիրներին դեպի օտար երկրներ, մասնավորապես Կանադա փոխադրելու ծրագրին:

Այդ ամենը հիմք է տալիս եզրակացնելու, որ միջազգային կառույցների հետ գործակցող սփյուռքյան հիշյալ հաստատությունները հետամտել են իրական քաղաքական նպատակներ. այն է՝ խոչընդոտել դեպի Հայաստան ներգաղթը՝ դրանով իսկ կանխելով Ռուսաստանին հավատարիմ հարավկովկասյան այդ տարածաշրջանում քրիստոնյա հայկական տարրի սովորացումը, ինչպես նաև «հայապահպանված» սիրիահայերի ներհոսքի հաշվին երկարաձգել աշխարհի տարբեր երկրներում արագ ծուլվող սփյուռքի, տվյալ դեպքում՝ Կանադայի հայ համայնքի գոյատևումը:

Բանալի բառեր՝ Սիրիայի պատերազմ, սիրիահայ, արտագաղթ, Կանադա, սփյուռքյան կառույցներ, «Հայ Տուն», միջազգային կառույցներ:

ЭМИГРАЦИЯ СИРИЙСКИХ АРМЯН В КАНАДУ (2013-2016 ГГ.)**Кнарик Авакян****Резюме**

Государства-члены НАТО, в том числе Канада, развернув военные операции на Ближнем Востоке, в частности в Сирии, одновременно занимались переправкой беженцев, «в гуманитарных целях», в различные страны.

Как в годы холодной войны, так и в условиях существования независимой Республики Армения отдельные структуры армянской диаспоры (АРФ, АОП, Армянская апостольская церковь Антилиасской епархии, Армянская евангелистская и католическая церкви), в том числе социальная служба «Ай Тун», занимались перевозкой армянских беженцев из Сирии в зарубежные страны, в частности, в Канаду.

Эти диаспоральные структуры, сотрудничая с международными организациями, преследовали реальные политические цели: препятствовать иммиграции в Армению, тем самым предотвратить увеличение лояльного к России армянского населения в южно-кавказском регионе, а также способствовать сохранению ассимилирующейся диаспоры, в данном случае армянской общины Канады, за счет «сохранивших свою идентичность сирийских армян».

Ключевые слова – война в Сирии, сирийский армянин, эмиграция, Канада, диаспоральные организации, «Ай Тун», международные структуры.

EMIGRATION OF SYRIAN-ARMENIANS TO CANADA (2013-2016)**Knarik Avagyan****Abstract**

The NATO-member states, including Canada, along with launching military operations in the Middle East, particularly in Syria, at the same time, "for humanitarian purposes" have relocated the refugees to various countries. As during the Cold War, as well as in the presence of the independent Republic of Armenia, certain structures of the Armenian Diaspora (ARF, ARS, Armenian Apostolic Church of the Antelias Prelacy, Armenian Evangelical and Catholic churches, etc.), including the social service "Hay

Doun", were engaged in the program to relocate the Syrian-Armenian refugees to different countries, particularly to Canada.

All this gives ground to conclude that the above mentioned Diaspora structures, collaborating with international organizations, pursued real political goals, that is: to hinder the immigration to Armenia, thereby to prevent the increase of the Cristian-Armenian population in that South-Caucasian region, loyal to Russia, as well as to prolong the existence of the rapidly assimilating Diaspora, in this case – the Canadian-Armenian community, through the influx of "Armenian-preserved" Syrian-Armenians.

Key words – war in Syria, Syrian-Armenian emigration, Canada, Diasporan organizations, "Hay Doun", international structures.

ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ՄԵԾ ՀԱՅՔՈՒՄ

Արգիշտի Վարդանյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդասարյան 24/4

Էլ. հասցե՝ geghamavan@schools.am

Հոդվածը ներկայացվել է 15.01.2022, գրախոսվել է 22.06.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.3-81

Ներածություն

Թե՛ Արշակունյաց թագավորության, թե՛ հայ նախարարական տների պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Մամիկոնյան իշխանական ընտանիքի գործունեությունը, որը միահյուսված է օտար տիրապետության դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարի հետ: Մամիկոնյանները, Մեծ Հայքում իրենց պատմության արշալույսից սկսած, կարևոր տեղ են գրավել պետական կառավարման համակարգում՝ թագավորությունում զբաղեցնելով կարևորագույն պաշտոններ՝ իրականացնելով այնպիսի առանցքային գործունեություն, որն էր հայոց բանակի սպարապետությունը: Մամիկոնյաններն էին գլխավորում գրեթե օրհասական ճակատամարտերը թե՛ թագավորության, թե՛ մարզպանության շրջանում՝ պայքարելով Մեծ Հայքի անկախության, իսկ ավելի ուշ՝ ներքին ինքնավարության համար: Միանգամայն բնական է, որ պատմիչների աշխատանքներում արտացոլվել են Մամիկոնյան ընտանիքի մեծ ու փոքր գործերը: Սույն հանգամանքներից ելնելով՝ կարևորում ենք նաև Մամիկոնյանների գործունեության սկզբնական շրջանի ուսումնասիրությունը:

Մամիկոնյանների մուտքը Մեծ Հայք

Մամիկոնյանների նախնիները՝ Մամիկը և Կոնակը¹, որ Ճենաստանում ապստամբություն էին բարձրացրել թագավորի դեմ, պարտություն կրեցին

¹ Մովսես Խորենացու տեղեկություններով, Մամիկոնյան նախահայրը մեկն է՝ Մամգունը. տե՛ս Մովսես Խորենացի 1991, 221-222: Սակայն, ուսումնասիրելով սկզբնաղբյուրներում առկա տեղեկությունները, հակված ենք նախապատվությունը տալու Անանունի հաղորդմանը: Այդ առումով Մամիկոնյանների գաղթի, Ճենաստանի սահմանների և նրանց նախահոր վերաբերյալ հեղինակների տեսակետների և այլ հարակից հարցերի քննությունը տե՛ս Վարդանյան 2022, 13-30:

այդ պայքարում² և փախուստով փրկվելով սպասվող պատժից՝ ապաստան գտան Քուշանաց թագավորությունում³ Բահլ Շահաստանում Վասուդևա Արշակունու մոտ⁴։ Թեմայի կարևորությունը նկատի առնելով՝ ներկայացնում ենք Սեբեոսի աշխատությանը կից Անանունի հաղորդումը. «զՄամիկն և զԿոնակն, արս երկուս լեալ քաջս և գլխաւոր եղբարս հարազատս, որդիք Կառնամայ նախարարին, որ էր երկրորդ ի թագաւորութեանն Ճենաստանի։ Որոյ յետ մահուանն առնս այսորիկ, առ զկին սորին թագաւորն նոցին ի կնութիւն։ Եւ եղև ի նմանէ որդի, որ զկնի մահուան հաւր իւրոյ յաջորդեալ նստաւ յաթոռ հայրենի թագաւորութեանն։ Եւ նոքա, երկու եղբարք նորա ի մարէ և ոչ ի հաւրէ, ապստամբեալ ի բաց կացին ի նմանէ. և միաբանեալ ընդ ինքեանս զմասն մի ի նախարարացն և ի զաւրացն՝ առնեն ուխտ միաբանութեան։ Որոց խորհեալ խորհուրդ չարութեան՝ սպանանել զեղբայրն իւրեանց, զթագաւորն աշխարհին Ճենբակուր, և առնուլ զթագաւորութիւն նորա։ Եւ զաւրածողով լինէին Մամիկն և Կոնակն ի վերայ նորա ի միում տեղուջ աշխարհին իւրեանց. և բաժանի զաւր աշխարհին յերկուս։ Ազգ լինի Ճենբակուրի. գումարէ և նա զգաւրս իւրոյ կողմանն, և գնայ ի վերայ նոցա ի պատերազմ։ Եւ յարձակին ի վերայ միմեանց, հարկանեն սրով սուսերի, և սպառեն զգաւրն ապստամբական»⁵։

Քուշանաց արքայի օժանդակությամբ նրանք կարողացան ազատվել Ճենաց արքայի վրեժխնդրությունից, քանի որ Ճենբակուրի խնդրանքին, այն է՝ հանձնել եղբայրներին, ըստ պատմիչի՝ Քուշանաց արքան պատասխանում է. «Անդրէն ուխտ խաղաղութեան մերոյ, ասէ, հաստատու՛ն կացցէ ի միջի մերում, զի երդուեալ եմ առ նոսա, զի նոքա մի՛ մեռցին. այլ ետու տանել զնոսա ի մուտս արևու և յեզր երկրի, ի տեղին յայն, ուր արեգակն ի մայրն մտանէ»⁶։ Խուսափելով ապագայում հարևանի հետ հարաբերությունների վատթարացումից՝ Քուշանաց արքան, զորաբաժնի ուղեկցությամբ, Մամիկոնյան գաղթականներին ուղարկում է իր ազգակից և դաշնակից

² Մովսես Խորենացու հաղորդմամբ, Մամգունը ոչ թե ապստամբում է, այլ նրան չարախոսում են Ճենաց արքայի առաջ, հմմտ. Մովսես Խորենացի 1991, 222։

³ Քուշանաց թագավորության սահմանների, ինչպես նաև պարսկա-քուշանական հարաբերությունների մասին տե՛ս Ртвeладзe 2019, 32-88։

⁴ Վասուդևան հայկական սկզբնաղբյուրներում հիշատակվում է Վեհսաճան անվամբ՝ Կարենյան Պահլավ տոհմից, որը հայ-պարսկական պատերազմում Հայոց արքայի դաշնակիցն էր. տե՛ս Մովսես Խորենացի 1991, 209-210։ Կարենյան Պահլավներից էր սերում Կամսարական տոհմի նախահայր Պերոզամատն, հմմտ. Մովսես Խորենացի 1991, 209-210։ Հմմտ. նաև Կոզեան 1926, 172։

⁵ Պատմութիւն Սեբեոսի 1979, 56-57։

⁶ Պատմութիւն Սեբեոսի 1979, 57։

Տրդատ Բ-ի (216-256) մոտ, որն այդ ժամանակ անհավասար պայքար էր մղում Սասանյան աշխարհակալության դեմ: Նշենք, որ 240-ական թվականների կեսերին պայքարը Պարսկաստանի ու Հռոմի և նրա դաշնակիցների՝ Մեծ Հայքի, Քուշանաց թագավորությունների միջև մտել էր վերջնական փուլ: Քանի որ III դ. առաջին քառորդից սկսած՝ Արևելքում կատարվել էին միջազգային նշանակություն ունեցող փոփոխություններ: 226 թ. Տիգրանում տապալվել էր Մեծ Հայքի ավանդական դաշնակից Պարթևական հարստությունը⁷, և ասպարեզ էր իջել Սասանյան դինաստիան: Վերջիններս հենց սկզբից սկսեցին հարձակողական պատերազմներ վարել բոլոր հարևանների դեմ: Հատկապես Շապուհ I-ի (241-272) աշխարհակալական հակումները՝ վերականգնելու Աքեմենյանների ժառանգությունը, ինչպես նաև հարևան պետություններում, մասնավորապես Մեծ Հայքում Պարթև Արշակունիներին ոչնչացնելու ձգտումը, ինչպես նշում է Ա. Կրիմսկին, դրանք «Սասանյան շահերի հետ սերտ կապով կապելը»⁸ կամա թե ականա միավորել էր Մեծ Հայքի և Քուշանաց Արշակունի թագավորություններին ընդդեմ Պարսկաստանի՝ այդ ճանապարհին դաշնակցելով Հռոմի հետ:

Հերթական պատերազմի ժամանակ Մամիկոնյանները գաղթեցին Մեծ Հայք: Այդ ժամանակահատվածը, հավանաբար, պետք է լիներ ոչ ուշ, քան 245 թ. հռոմ-պարսկական հերթական հաշտության դաշնագրի կնքումը, 244 թ., երբ կայսրությունը՝ որպես պարտված կողմ, համաձայնեց պարսիկների պահանջներին⁹: Դրա վառ ապացույցն է այն հանգամանքը, որ, ըստ Մովսես Խորենացու հաղորդման, Շապուհ I-ը նոր էր գահ բարձրացել Արտաշիրի մահից հետո, երբ սկսվեցին բանակցությունները ճենաց արքայի հետ Մամիկոնյան գաղթականներին հանձնելու վերաբերյալ¹⁰: Եվ այդ հանգամանքից ելնելով՝ Մամիկոնյանների գաղթը Մեծ Հայք պետք է դիտարկել Շապուհ I-ի կառավարման առաջին տարիների իրադրությամբ, ամենաուշը՝ մինչև 245 թ.¹¹, երբ պարսիկները սկսեցին հերթական պատերազմը քու-

⁷ Պարսքում արքա հռչակված Արտաշիրին հաջողվում է հաղթանակ տանել պարթևաց վերջին արքա Արտավան V-ի նկատմամբ: Վերջինիս սպանությունից հետո նրա որդիները և արքայատոհմի ուժերը ապավինել էին Հայոց արքայի օգնությանը. տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1976, 226:

⁸ Крымский 1905, 399:

⁹ Honigmann Maricq 1953, 122, Մանանյան 1978, 86:

¹⁰ Մովսես Խորենացի 1991, 222:

¹¹ Մամիկոնյանների Մեծ Հայք գաղթի թվականի վերաբերյալ ուսումնասիրողները հայտնել են տարբեր կարծիքներ, հմմտ. Մանանյան 1978, 93, Դավթյան 2015, 110-112 և ուրիշներ:

շանների դեմ, որը տևել է 245-248 թթ.¹²: Ի տարբերություն Անանունի, Մովսես Խորենացին հանգամանորեն նկարագրում է Մամիկոնյանների գործունեության սկիզբը Մեծ Հայքում՝ նշելով. «...յոչ կամաց եկեալ յաշխարհս մեր՝ հանդիպեցաւ գալստեանն Տրդատայ. և ոչ դարձաւ ընդ զօրս Պարսից, այլ ամենայն աղիսին իւրով ընդ առաջ գնաց նմա մեծաւ պատարագաւ. և Տրդատ ընկալաւ զնա, բայց ընդ իւր ի պատերազմ ոչ էառ յերկիրն Պարսից. այլ ետ տեղի աղիսի նորա և ռոճիկ ի կերակուր, փոփոխելով տեղի ի տեղուջէ զբովանդակ ամս»¹³: Այս հաղորդումից կարելի է եզրակացնել, որ Հայոց արքան կասկածանքով էր վերաբերվում Ասիայի խորքերից եկած փախստականներին. դեռևս չգիտենալով նրանց գալու իրական հանգամանքները՝ նրանց հեռու էր պահում թե՛ բանակից և թե՛ արքունիքից: Կարծում ենք, որ նրանք ընդունելություն գտան այն պարզ պատճառով, որ շարունակվող հայպարսկական պատերազմում Տրդատ Բ-ին հարկավոր էին դաշնակիցներ: Մովսես Խորենացու՝ վերը նշված հաղորդումից կարող ենք եզրակացնել, որ արքունիքը որևէ կալվածք չշնորհեց Մամիկոնյաններին, այլ նրանց տվեց բնակության որոշակի վայր, բայց դա Տարոնը կամ Տայքը չէին: Առաջին խոշոր տիրույթները նրանք ստացան ավելի ուշ, մասնավորապես IV դ. սկզբին¹⁴: Եվ արքան իր պետության ու տարածաշրջանի համար այս բախտորոշ շրջանում վստահություն չներշնչող օտար ազնվականներով զբաղվելու հնարավորություն չուներ, քանի որ Շապուհ I-ը, օգտվելով կայսրության խառնակ վիճակից, 249 թ. հարձակողական գործողություններ էր ձեռնարկել Մեծ Հայքի դեմ, և Տրդատ Բ-ն փորձում էր հռոմեացիների օգնությամբ դիմագրավել պարսկական հարձակմանը¹⁵: Սակայն ինչպես հայտնի է, Շապուհին հաջողվեց 252-253 թթ. հաղթարշավի երկրորդ շրջանում¹⁶ գրավել Մեծ Հայքի մեծագույն մասը, և, ըստ բյուզանդական մատենագիր Զոնարասի՝ Տրդատ Բ-ն ստիպված էր լքել երկիրը¹⁷ մոտ 25 տարի հաջողությամբ պաշտպանելով Մեծ Հայքը պարսկական հարձակումներից¹⁸, փորձելով երբեմնի Պարթևստանի մայրաքաղաքում վերականգնել Արշակունիների դինաստիան, սակայն վերջում կորցնելով սեփական գահը: Ար-

¹² Տե՛ս Луконин 1969, 34: Շապուհ I-ի քուշանական արշավանքների մասին տե՛ս Дьяконов, Мандельштам 1958, 331-336:

¹³ Մովսես Խորենացի 1991, 223:

¹⁴ Մամիկոնյանների տիրույթների ամբողջական քննությունը տե՛ս Վարդանյան 2019, 18-33:

¹⁵ Մովսես Խորենացի 1991, 208-209:

¹⁶ Луконин 1969, 33.

¹⁷ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա 1981, 411:

¹⁸ Մանանդյան 1978, 88:

քան ապաստան գտավ հռոմեացիների մոտ, իսկ ընտանիքի որոշ անդամներ անցան պարսիկների կողմը¹⁹:

Հետագա տարիներին Մամիկոնյանների վերաբերյալ սկզբնաղբյուրներում տեղեկություններ չկան: III դ. երկրորդ կեսին Մերձավոր Արևելքում գերիշխող դիրք ուներ Սասանյան Պարսկաստանը, և Մեծ Հայքի համար այս քաղաքական անկայուն վիճակը Մովսես Խորենացին բնորոշել է որպես «ժամանակա անիշխանութեանն»²⁰: Այդ շրջանում էլ Վաղարշապատի արքունիքում գահ է բարձրանում Արտավազդ V-ը (252/3-261)²¹, իսկ վերջինիս հաջորդում են պարսից թագաժառանգները: Արտավազդի տոհմային պատկանելության վերաբերյալ զանազան հակասական տեսակետներ են արտահայտվել²²: Ուսումնասիրողներից Ն. Շահնազարյանը նրան նույնիսկ թագավոր չի համարում, այլ լոկ կառավարիչ՝ նշանակված պարսից արքայի կողմից²³: Քանի որ այն մեր աշխատանքի շրջանակից դուրս է, նշենք միայն, որ ուսումնասիրողներից Հ. Աստուրյանը նրան նույնացրել է Արտավազդ Մամիկոնյանի²⁴՝ Վաչե սպարապետի հոր հետ: Արտավազդ Մամիկոնյանի և համանուն արքայի՝ նույն անձը լինելը որևէ աղբյուրագիտական հենք չունի, միայն անվան նմանությունը հիմք չէ Մամիկոնյան իշխանին Հայոց արքա կարգելու համար:

Արտավազդ Մամիկոնյանը, որին Մովսես Խորենացին հիշատակում է որպես Մանդակունի, Տրդատ Գ-ի (298-330) մանուկ հասակում կարողացավ նրան ազատել պարսկական սպանդից՝ փրկելով Արշակունյաց գահը կործանումից, հետագայում՝ անիշխանության շրջանում, մինչև Տրդատի գահ բարձրանալը, Մեծ Հայքի թագավորության խնամակալն էր, ապա՝ սպարապետը²⁵, և Հ. Աստուրյանի բնորոշմամբ՝ Արտավազդը Խոսրով ար-

¹⁹ Момзен 1997, 332:

²⁰ Մովսես Խորենացի 1991, 214:

²¹ Երեմյան 1975, 13:

²² Մանանդյան 1978, 97, Մարտիրոսյան 1977, 204-205, ծան. 34: Արտավազդի կառավարման տարիների վերաբերյալ ևս ուսումնասիրողները միակարծիք չեն և հայտնել են տարբեր տեսակետներ, հմմտ. Մարտիրոսյան 1975, 152, ծան. 15:

²³ Շահնազարյան 1990, 202:

²⁴ Աստուրյան 1912, 245:

²⁵ XX դ. սկզբից մի շարք հետազոտողներ հանդես եկան Մամիկոնյան տոհմի պատմության մի շարք առանցքային հարցերի ուսումնասիրությամբ: Դրա շնորհիվ պարզվեց, որ Արտավազդ Մանդակունի նախարարը համանուն Մամիկոնյանն է: III դ. վերջին և IV դ. առաջին քառորդին գործունեություն ծավալած Արտավազդ Մամիկոնյանի վերաբերյալ վերջին ուսումնասիրությունները տե՛ս Արզարյան 1964, 247-249, Արզարյան 1965, 87-90, Քեշիշյան 1997, 9-10, Քեշիշյան 2002, 97-98, Վարդանյան 2019, 24-27:

քայի սպանության՝ 259 թ. հաջորդող անիշխանության տարիներին երկրի ղեկավարությունն իր ձեռքն էր վերցրել²⁶:

Սկյունիների կոտորածը և Տարոնի անցումը Մամիկոնյաններին

Վերադառնալով Մամիկոնյանների գործունեության սկզբնական փուլին՝ նշենք, որ սկզբնաղբյուրներում նրանց վերաբերյալ հետազա տեղեկությունները կցկտուր են և իրարամերժ: 240-ական թվականներին հաջորդող տասնամյակների ընթացքում, մինչև III դ. վերջին քառորդը, սպարապետ Արտավազդ Մամիկոնյանի գործունեությունը, որին ինչպես վերը նշեցինք, Մովսես Խորենացին համարել է Մանգակունի, նրանց վերաբերյալ տեղեկություններ չկան: Ն. Ադոնցի դիպուկ բնորոշմամբ՝ Մամիկոնյանները Խորենացու գրչի տակ մնացել են անհիշատակ, այդ թվում նաև Արտավազդ սպարապետը՝ Տրդատի ժամանակ²⁷: Մամիկոնյանների մասին Մովսես Խորենացու հաջորդ հաղորդումը վերաբերում է 320-ական թվականներին՝ կապված Սկյունի նախարարների ապստամբության հետ: Խնդիրն այն է, որ 298 թ. Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագիրը չէր բավարարում Շապուհ II-ի (309-379) ծավալապաշտական ձգտումները, և նա փորձում էր ամեն պատեհ առիթով թուլացնել Հռոմի դաշնակից Մեծ Հայքին: Սակայն, քանի որ պայմանագրի ժամկետը չէր լրացել, պարսիկները չէին կարող բացահայտ հանդես գալ Հռոմի հովանավորությունը վայելող հայոց թագավորության դեմ, ուստի խրախուսում էին ներքին ընդվզումները կենտրոնական իշխանության դեմ: Դրան ավելացել էր նաև արտաքին միջամտությունը, և ինչպես նշում է Վ. Թորոսյանը, Մծբինի պայմանագիրը Շապուհին չէր կաշկանդում զինաբախում հրահրելու, մի կողմից, հյուսիսային լեռնականների և հետազայում, ինչպես կտեսնենք, Մասքթաց թագավորության, մյուս կողմից՝ Մեծ Հայքի միջև²⁸: Ըստ Մովսես Խորենացու, օգտվելով այն հանգամանքից, որ Տրդատը մեկնել է Կոստանդիանոս Մեծ կայսեր (306-337) հետ հանդիպման, Շապուհը կարողացավ սին խոստումներով «հրապուրեալ

²⁶ Աստուրեան 1912, 193: Խոսքով արքայի սպանության և արքայազն Տրդատին Հռոմ տանելու տարեթվի վերաբերյալ ուսումնասիրողները տարակարծիք են: Վերջին ուսումնասիրությունում Ս. Խաչատրյանն անդառնալով III դ. տեղի ունեցող դեպքերի ժամանակագրությանը՝ նշում է, որ Տրդատը Հռոմ է տեղափոխվել 268 թ. տե՛ս Խաչատրյան 2016, 201: Վ. Թորոսյանը Խոսքով արքայի սպանությունը և թագաժառանգի՝ Հռոմ տեղափոխվելը տեսնում է 260 թ. Թորոսյան 2018, 17, 18:

²⁷ Ադոնց 2005, 19:

²⁸ Թորոսյան 2018, 35:

Սղուկ նահապետ ազգին Սլկունեաց, զինքեանն սպանանէ զփեսայ, զծերացեալն Օտայ, որ էր ի տոհմէն Ամատունեաց և սնուցող Խոսրովիդիստոյ քեռ թագաւորին: ...Իսկ նահապետ ազգին Սլկունեաց ամրանայր յամրոցին, որ անուանեալ կոչի Ողական, ապաւէն առնելով իւրեանց զբնակիչս Սիմն կոչեցեալ լերինն. և ընդդիմացեալ թագաւորին՝ աղմկէր զերկիրն»²⁹: Հայոց արքան, զբաղված լինելով հյուսիսկովկասյան լեռնականների դեմ պատերազմական գործողություններով³⁰, հրաման արձակեց. «Որ ոք ածցէ առ իս զնահապետն ազգին Սլկունեաց՝ տաց նմա յաւիտենական իշխանութեամբ զգեօղս և զդաստակերտս, և զամենայն իշխանութիւն ազգին Սլկունեաց»: Զոր յանձն առնոյր ճենազնեայն Մամգուն»³¹: Վերջ ի վերջո շահելով ապստամբ նախարարի վստահությունը՝ Մամգունին հաջողվում է որսի ժամանակ սպանել Սլկունյաց Սղուկ նահապետին և գրավել Ողական ամրոցը³²: Պատմիչի հիշատակած Մամգունը IV դ. առաջին քառորդին չէր կարող գնալ Տարոն և բնաջնջել Սլկունիներին այն պատճառով, որ Տրդատ Բ-ին հանդիպելու ժամանակ՝ 240 թ. առաջին կեսին, նա պետք է առնվազն լինէր 30 և ավել տարեկան, քանի որ նրանք Ճենաստանից փախսան ընտանիքով, իսկ Սլկունիներին հնազանդեցնելու ժամանակ Մամիկոնյան նահապետը առնվազն 120 տարեկան կլինէր: Ասվածի վառ վկայությունն է այն հանգամանքը, որ, ըստ Մովսես Խորենացու՝ Սլկունյաց նահապետը հրապուրված էր պարսից արքայի խոստումներով, իսկ Շապուհ II-ը, ինչպես գիտենք,

²⁹ Մովսէս Խորենացի 1991, 227-228:

³⁰ Նշենք, որ հյուսիսային լեռնականների զորաբանակը, այդպես էլ չստանալով Շապուհի օգնությունը, քանի որ վերջինս, հաշվի առնելով հայ-հռոմեական վերանորոգված բարեկամությունը, իր դաշնակցին միայնակ թողեց և Մեծ Հայքից նահանջում էր դեպի Աղվանք: Հետապնդելով հակառակորդին՝ հայոց բանակը Գարգարացիների դաշտում (վերջինիս տեղադրության մասին տե՛ս Հակոբյան 1982, 129) ջախջախեց ավարառու լեռնականների զորաբանակը, որտեղ սպանվեց նաև նրանց թագավորը, տե՛ս Մովսէս Խորենացի 1991, 230-231:

³¹ Մովսէս Խորենացի 1991, 228:

³² Մովսես Խորենացի 1991, 229: Գր. Խալաթյանը Սլկունիների կոտորածը չի համարում իրականություն՝ գտնելով, որ այն կազմված է Խորենացու ձեռքով, քանի որ Մամիկոնյան տոհմային պատմիչներ Փավստոս Բուզանդը և Ղազար Փարպեցին որևէ անդրադարձ չունեն դրա վերաբերյալ: Եվ եզրակացնում է, որ Տարոնը չէր կարող պատկանել Սլկունիներին, նրանք դասվում էին երկրորդական նախարարների շարքը և «Գահնամակում» 48-րդ տեղում էին հիշատակվում, հմմտ. Խալաթյանը 1906, 92-93: Սլկունիները «Գահնամակում» հիշատակվում են այն պարզ պատճառով, որ, ըստ Մովսես Խորենացու, երբ Մամգունը կոտորեց Սլկունիների նախարարական տոհմը, «երկուք ոմանք փախստական անկան յաշխարհն Ծոփաց», տե՛ս Մովսէս Խորենացի 1991, 229: Հետագայում Տրդատ Գ-ն հրամայեց չվնասել նրանց հետնորդներին, Մովսէս Խորենացի 1991, 229: Եվ այդ է պատճառը, որ նրանք՝ որպես նախարարական տոհմ, հիշատակվում են «Գահնամակում», քանի որ վերջինս ստեղծվել էր 388 թ. Խոսրով արքայի կողմից՝ վավերացնելու կարճ ժամանակով վերամիավորված Հայաստանի նախարարական համակարգի քաղաքական կացությունը, տե՛ս Հակոբյան 1976, 62, 64:

գահ է բարձրացել 309 թ.³³ մանուկ հասակում և Սլկունյաց նահապետին Տրդատ Գ-ի դեմ կարող էր ապստամբության դրդել գոնե չափահաս տարիքում: Պարզ հաշվարկներով դա կատարվել է 320-ական թվականների կեսին: Մասնավորապես, Վ. Թորոսյանը, համադրելով սկզբնաղբյուրների տեղեկությունները, նշում է. «Հյուսիսային լեռնականների և պարսից դեմ Տրդատ Գ-ի արշավանքները, ամենայն հավանականությամբ, կայացել են 324-325 թթ.»³⁴, իսկ Սլկունիների հպատակեցումը, ինչպես գիտենք պատմիչի հաղորդումներից, կատարվել է այդ պատերազմներին զուգահեռ ժամանակահատվածում, երբ Տրդատ Գ-ն արշավանքի գնաց դեպի Աղվանք, իսկ Մամիկոնյան նահապետը՝ Տարոն: Այս դեպքում Մամգունը չէր կարող սպանել Սլկունյաց նահապետին, քանի որ այդ ժամանակ կենդանի չէր կարող լինել, առավել ևս որսի գնալ, և Պատմահայրը շփոթել է ժամանակագրությունը՝ այն վերագրելով Մամգունին: Եթե հավատալու լինենք Մովսես Խորենացու տեղեկությանը, որ Սլկունիների կոտորածը տեղի է ունեցել Մամգունի ձեռքով, ապա այն միմիայն հնարավոր է տեղի ունեցած լինի ոչ թե IV դ. առաջին քառորդին՝ Տրդատ Գ-ի կառավարման վերջին շրջանում, այլ Տրդատ Բ-ի օրոք: Այս դեպքում իրադարձությունները ժամանակագրորեն համապատասխանում են այդ գործիչների ապրած ժամանակաշրջանին, և այդ դեպքում պետք է նշել, որ Մամիկոնյանները Տարոնը ստացել են ոչ թե 324-325 թթ., այլ մինչև 253 թ. Մեծ Հայքի արևելյան հատվածում Տրդատ Բ-ի կառավարումը: Վերջին տեսակետը քիչ հավանական է այն պարզ պատճառով, որ հենց Մովսես Խորենացու հաղորդմամբ, նրանք երկար տարիներ տեղից տեղ էին գնում՝ չունենալով սեփական կալվածք: Ինչպես արդեն նշել ենք՝ Տրդատ Բ-ն սկզբնական շրջանում չէր վստահում Մամիկոնյան գաղթականներին և նրանցով զբաղվելու հնարավորություն չունեցավ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սլկունյաց իշխանական տոհմը բնաջնջել է Մամիկոնյան տոհմի մեկ այլ ներկայացուցիչ, հավանաբար, Վաչե Մամիկոնյանը³⁴, քանի որ սպարապետ Արտավազդ Մամիկոնյանը նույն ժամանակահատվածում զոհվել է Գարգարացվոց դաշտում: Եվ պատահական չէ, որ այդ դեպքերից կարճ ժամանակ անց Վաչե Մամի-

³³ Թորոսյան 2018, 40: Ղ. Այվազյանը կարծում է, որ Սլկունիների կոտորածը և Տարոնի անցումը Մամիկոնյաններին տեղի է ունեցել 316-317 թթ. (Айвазян 1976, 208, 211-212):

³⁴ Ռ. Մաթևոսյանը, անդրադառնալով Սլկունիների կոտորածին, նշում է, որ «Խորենացու «Մամգունը» նույն սպարապետ Արտավազդ Մամիկոնյանն է. տե՛ս Մաթետոսեան 1999, 102:

կոնյանը դառնում է պետական կառավարման համակարգի կարևորագույն դերակատարներից մեկը:

Տրդատ Գ-ն, ինչպես խոստացել էր, Տարոնի արևելյան՝ Սլկունիներին պատկանող կալվածքները նվիրում է Մամիկոնյաններին. «Գրե՛ հրովարտակ՝ իշխել նմա ամենայնի գոր խոստացան, և կարգե՛ գնա նախարար ի տեղի ապստամբին, անուանելով յանուն իւր Մամգոնեան»³⁵: Նշենք, որ Տարոն գավառի մի մասը³⁶, Ողական ամրոցով հանդերձ, առաջին խոշոր կալվածքն էր, որ ձեռք բերեցին Մամիկոնյանները 320-ական թվականների առաջին կեսին, և այն հետագայում դարձավ տոհմի հզորացման հիմքը:

Եզրակացություններ

Այսպիսով՝ Մամիկոնյանների նախնիները, III դ. առաջին կեսին ներքին ընդվզումների հետևանքով թողնելով իրենց հայրենիքը՝ Ճենաստանը, և միջազգային խոշոր քաղաքական փոփոխությունների պայմաններում, երբ մեկը մյուսի հետևից կործանվում էին պարթևական թագավորությունները, ապաստան գտան Մեծ Հայքում: Իրենց նոր հայրենիքում մի քանի տասնամյակի ընթացքում, Մամիկոնյան իշխանները ոչ միայն առաջնակարգ տեղ զբաղեցրին ավագ նախարարների շարքում և ստացան առաջին կալվածքները, այլև դարի վերջին քառորդին գլխավորեցին այնպիսի առանցքային գործակալություն, ինչպիսին էր հայոց բանակի սպարապետությունը, որը, բացի մեկ-երկու աննշան դեպքերից, նրանց տոհմում մի քանի հարյուրամյակ դարձավ ժառանգական: Մամիկոնյան սպարապետներն էին հետքրիստոնեական շրջանի Արշակունյաց թագավորությունում ու մարգպանության ժամանակահատվածում գլխավորում գրեթե բոլոր օրհասական ճակատամարտերը՝ պաշտպանելով Մեծ Հայքի անկախությունը և ապա ավելի ուշ՝ ներքին ինքնավարությունը:

³⁵ Մովսես Խորենացի 1991, 229: Նշենք, որ Տարոնում կալվածքներ ունեին կաթողիկոսական տունը և Արշակունի թագավորները. տե՛ս Փավստոս Բուզանդ 1987, 178, 180: Հմմտ. Վարդանյան 2019, 19-20:

³⁶ Ն. Արոնցը Պատմահոր հաղորդման առնչությամբ Մամիկոնյանների՝ Տարոնում հաստատվելու ժամանակի վերաբերյալ նշում է, որ վերջիններս գավառը ձեռք են բերել Խոսրով Կոտակի (330-338) օրոք, ի թիվս այլ կալվածքների, որ թագավորը շնորհեց Վաչե Մամիկոնյանին՝ Սանեսանին հաղթելու համար. Адоиц 1971, 310-311: Սակայն մեծանուն հայագետի տեսակետը քննություն չի բռնում այն պատճառով, որ Փավստոս Բուզանդը մանրամասն նկարագրում է Վաչե սպարապետին տրված կալվածքները, այն է՝ Զանջանակի ակունքները, Զրաբաշխը և Յլու գլուխը՝ բոլոր փոքր գավառներով, հմմտ. Փավստոս Բուզանդ 1987, 32: Տարոնն այդ շարքում չկա, նրանք այն ստացել են ավելի վաղ:

Գրականություն

- Աբգարյան Գ. 1964, Մամիկոնյանների զրույցի հնագույն աղբյուրը հայ մատենագրության մեջ (Բուզանդարանի կորած դպրությունների կապակցությամբ), Բանբեր Մատենադարանի, N 7, էջ 237-269:
- Աբգարյան Գ. 1965, «Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 251 էջ:
- Ադոնց Ն. 2005, Քննություն Մովսես Կաղանկատվացու, աշխատասիրել, ծանոթագրել և ներածությունը գրել է Պետրոս Հ. Հովհաննիսյանը, Էջմիածին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի տպարան, 174 էջ:
- Աստուրեան Հ. 1912, Քաղաքական վերաբերություններ ընդ մէջ Հայաստանի և Հռովմայ 190- էն ն. Ք մինչև 428 յ.Ք., Վենետիկ, «տպ. Ս. Ղազար», 391 էջ:
- Դավթյան Հ. 2015, Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Երևան, «ԴԱԼԼ», 794 էջ:
- Երեմյան Ս. 1975, Հայաստանի քաղաքական վիճակը Արտավազդ V-ի ժամանակ (252/3-261), Լրաբեր հասարակական գիտությունների, N 1, էջ 13-22:
- Թորոսյան Վ. 2018, Տրդատ Բ-ի գործունեությունը, Հայոց պատմություն, հ. II, Միջին դարեր (IV դար-XVII դարի առաջին կես), գիրք առաջին (IV դարի սկիզբ - IX դարի կես), Երևան, «Ձանգակ», էջ 33-44:
- Խալաթեանց Գր. 1906, Հայ Արշակունիքը ըստ Մովս. Խորենացույ կամ նոր ուսումնասիրություններ Մովս. Խորենացույ մասին, Վիեննա, «Մխթարեան տպարան», 132 էջ:
- Խաչատրյան Ս. 2016, Խոսրով Երրորդ Մեծ Արշակունի արքայի թագավորելու և զոհվելու ժամանակի հարցը, Պատմաբանասիրական հանդես, N 1, էջ 183-203:
- Կոզեան Ս. 1926, Կամսարականները «տեարք Շիրակայ եւ Արշարունեաց». պատմական ուսումնասիրություն, Վիեննա, «Մխթարեան տպարան», 179 էջ:
- Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա 1981, հնագույն ժամանակներից մինչև IX դարի կեսերը, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 944 էջ:
- Հակոբյան Ա. 1982, Գարգարացիները ըստ անտիկ և հայկական սկզբնաղբյուրների, Պատմա-բանասիրական հանդես, N 4, էջ 116-130:
- Հարությունյան Բ. 1976, «Գահնամակի» թվագրման հարցի շուրջ, Պատմա-բանասիրական հանդես, N 2, էջ 57-74:
- Մաթեոսեան Ռ. 1999, Մովսէս Խորենացու վկայութիւնները Մամիկոնեան-Խաղբակեան տոհմի ծագման մասին, Հայկազեան հայագիտական հանդես, հ. ԺԹ, Պէյրութ, էջ 91-105:
- Մանանդյան Հ. 1978, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երկեր, հ. Բ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 646 էջ:
- Մարտիրոսյան Ա. 1975, Հայաստանը և առաջին Սասանյանները, Պատմա-բանասիրական հանդես, N 3, էջ 149-172:
- Մարտիրոսյան Ա. 1977, Սասանյանների արևմտյան նվաճումները և Հայաստանը, Պատմա-բանասիրական հանդես, N 1, էջ 195-206:
- Մովսէս Խորենացի 1991, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 485 էջ:
- Շահնագարյան Ն. 1990, Հայ-իրանական և հայ հռոմեական հարաբերությունները հայ մատենագիրների լուսաբանությամբ (մ.թ.ա. VI դ. - մ.թ. V դ.), Երևան, ԵՊՀ հրատ., 296 էջ:

- Պատմություն Սեբեոսի 1979, աշխատասիրությամբ Գ.Վ. Աբգարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 446 էջ:
- Ստեփանոս Տարանեցի Ասողիկ 2011 Պատմություն Տիեզերական, Մատենագիրք Հայոց, ԺԵ հատոր, Ժ դար, Երեւան, «Նաիրի», էջ 617-829:
- Վարդանյան Ա. 2019, Մամիկոնյան նախարարական տան տիրույթները, Հայագիտության հարցեր, N 1, էջ 18-33:
- Վարդանյան Ա. 2019, Մամիկոնյան տոհմը Տրդատ Մեծ և Խոսրով Կոտակ Արշակունիների օրոք, Պատմություն և մշակույթ, հայագիտական հանդես, N 2, էջ 24-32:
- Վարդանյան Ա. 2022, Մամիկոնյանների ծագման խնդիրը պատմագիտության մեջ և նրանց նախահայրենիքի տեղորոշման հարցը, Հայագիտական հարցեր, N 2, էջ 13-30:
- Փաստոսի Բիզանդացոյ Պատմություն Հայոց 1987, բնագիրը Բ. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մախասյանցի, Երևան, ԵՊՀ հրատ., 456 էջ:
- Քեշիշյան Ա. 1997, Մամիկոնյանների ծագման ավանդությունը և պատմական իրականությունը, Հայոց պատմության հարցեր, «Գիտություն», էջ 7-20:
- Քեշիշյան Ա. 2002, Մամիկոնեանների ծագումը Խաղբակեաններին առնչող տեսակետի վերլուծություն, Հայկազեան հայագիտական հանդես, հ. ԻԲ, Պեյրուֆ, էջ 81-114:
- Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1976, 9, Հին հունական աղբյուրներ, Ա, Հովսեփոս Փլավիոս, Դիոն Կասսիոս, թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Ս. Կրկյաշարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 265 էջ:
- Адонц Н. 1971, Армения в эпоху Юстиниана, Ереван, изд. Ереванского университета, 526 с.
- Айвазян К. 1976, «История Тарона» и армянская литература IV-VII веков, Ереван, изд. Ереванского университета, 407 с.
- Дьяконов М., Мандельштам А. 1958, Средняя Азия в III-VII вв., Очерки истории СССР, Москва, изд. Академии наук СССР, с. 331-348.
- Крымский А. 1905, История Сасанидов и завоевание Ирана арабами (Труды по востоковедению, вып. 21), Москва, изд. Лазаревского инст.-та вост. яз., 416 с.
- Луконин В. 1969, Завоевания Сасанидов на востоке и проблема Кушанской абсолютной хронологии, Вестник древней истории, т. 2, Москва, «Наука», с. 20-44.
- Момзен Т. 1997, История Рима, Ростов-на-Дону, т. 4, «Феникс», 640 с.
- Ртвеладзе Э. 2019, Кушанское царство, династии, государство, народ, язык, письменность, религии, Ташкент, «Историческая библиотека», 133 с.
- Honigsmann E. Maricq A. 1953, Recherches sur les Res Gestae divi Saporis, Bruxelles, «Palais des Académies», 204 p.

ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ՄԵԾ ՀԱՅՔՈՒՄ

Արգիշտի Վարդանյան

Ամփոփում

Թե՛ Արշակունյաց թագավորության, թե՛ մարզպանության շրջանում հայ նախարարական տների պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Մամիկոնյան իշխա-

նական ընտանիքի գործունեությունը: 240-ական թվականների կեսերին ներքին խռովությունների հետևանքով և աշխարհաքաղաքական բարդ պայմաններում նրանք լքեցին իրենց հայրենիքը՝ Ճենաստանը: Դուրս գալով այնտեղից՝ Մամիկոնյանները նախ ապաստան գտան Քուշանաց աշխարհում՝ Բահլում, Վասուդևա Արշակունու մոտ: Վերջինիս ջանքերի շնորհիվ ազատվելով սպասվող պատժից՝ նրանք հանգրվանեցին Մեծ Հայքում՝ Տրդատ Բ-ի (216-256) մոտ, որն այդ ժամանակ անհավասար պայքար էր մղում Սասանյան աշխարհակալության դեմ՝ փորձելով պաշտպանել երկրի գոյությունը և անկախությունը: Հետագա տասնամյակներում Մամիկոնյանները ոչ միայն դասվեցին առաջնակարգ նախարարների շարքում, այլև օգտագործելով նպաստավոր իրադրությունը՝ Տրդատ Գ-ից (298-330) ստացան առաջին խոշոր կալվածքը՝ Տարոնը, բնաջնջեցին Սյլկունի նախարարական տոհմը և զլխավորեցին այնպիսի առանցքային գործակալություն, ինչպիսին էր հայոց բանակի սպարապետությունը:

Բանալի բառեր՝ Մամիկոնյաններ, Մեծ Հայք, Մովսես Խորենացի, Տրդատ Բ, Սասանյան Պարսկաստան, Ճենաստան, Քուշանաց աշխարհ:

НАЧАЛО ДЕЯТЕЛЬНОСТИ МАМИКОНЯНОВ В ВЕЛИКОМ АЙКЕ

Аргишти Варданян

Резюме

Как при царстве Аршакидов, так и в период марзпанства в истории армянских княжеских домов особое место занимает деятельность княжеской семьи Мамиконянов. В результате внутренних смут в середине 240-х годов и в сложных геополитических условиях Мамиконяны покинули свою родину – Ченастан, вначале найдя пристанище в Кушанском мире, в Багле, у Васудевы Аршакуни. Избежав ожидаемого наказания благодаря усилиям последнего, они обосновались в Великом Айке, у Трдата II (216-256), который в этот период вступил в неравную борьбу с Сасанидской империей, пытаясь сохранить страну и ее независимость. В последующие десятилетия Мамиконяны не только были причислены к лучшим нахарарам, но и воспользовались благоприятной ситуацией, получили от Трдата III (298-330) первое крупное поместье – Тарон. Уничтожив княжеский род Слкуни, они возглавили такой ключевой государственный институт, каковым являлось спарпетство армянской армии.

Ключевые слова – Мамиконяны, Великий Айк, Мовсес Хоренаци, Трдат III, Сасанидская Персия, Ченастан, Кушанский мир.

THE BEGINNING OF THE MAMIKONYANS' ACTIVITIES IN GREATER ARMENIA

Argishti Vardanyan

Abstract

Both under the Arshakid kingdom and during the period of marzpanutyun, the activities of the Mamikonyan princely family occupies a special place in the history of the Armenian princely houses. As a result of an internal unrest in the mid-240s and in difficult geopolitical conditions, the Mamikonyans left their homeland – Chenastan, first finding refuge in the Kushan world, in Bahl, where Vasudev Arshakuni gave them shelter. Having escaped the expected punishment owing to the efforts of the latter, they settled in Greater Armenia, where Trdat II (216-256) reigned, who during this period entered into an unequal struggle with the Sasanian Empire, making attempts to preserve the country and its independence. In subsequent decades, the Mamikonyans were not only ranked among the best nakharars, but also took the advantage of the favorable situation, received from Trdat III (298-330) the first large estate – Taron. Having destroyed the princely family of Silkuni, they headed such a key state institution as the Sparapet Office (supreme commander) of the Armenian army.

Key words – Mamikonyans, Greater Armenia, Movses Khorenatsi, Trdat III, Sasanian Persia, Chenastan, Kushan world.

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՀՈՎՎԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ (XVIII Դ. ՎԵՐՋ)

Հասմիկ Ամիրջանյան

Պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ՀՀ, Երևան, Բաղրամյան 24/4

Էլ. հասցե՝ amirjanyan.hasmik@rambler.ru

Հոդվածը ներկայացվել է 15.03.2020, գրախոսվել է 20.03.2020, ընդունվել է տպագրության 12.12.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.3-94

Ներածություն

Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու (1780-1799) հովվապետության շրջանում շարունակվեց նախորդ՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի (1763-1780) օրոք ամրապնդված հայ-վրացական հարաբերությունների ավանդույթը: Դրա անհրաժեշտությունը բխում էր մի շարք հիմնապատճառներից: Ինչպես գիտենք, XVIII դարում Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Հայաստանում տիրում էր քաղաքական ու սոցիալ-տնտեսական անկայուն և դժվարին կացություն: Նման իրավիճակում հայ ազատագրական շարժման կարևոր միտումներից մեկը Ռուսաստանի օգնությամբ հայ ժողովրդի ազատագրությունն էր պարսկական, իսկ հնարավորության դեպքում՝ նաև օսմանյան տիրապետությունից: Վրաստանը արտաքին քաղաքական բնագավառում հակված էր ընդունելու ռուսական հպատակություն, որը հայ-վրացական համագործակցության հեռանկարի դեպքում հնարավորություն կստեղծեր իրագործելու ռուսական պետության օգնությամբ Հայաստանն ազատագրելու հայ գործիչների գաղափարը: Այդ գաղափարն ավելի գործնական դարձավ դարավերջի երեսնամյակում՝ կապված Անդրկովկասում Ռուսաստանի քաղաքական ծրագրերի իրագործման հետ:

Հայ-վրացական քաղաքական հարաբերությունները Ղուկաս Կարնեցու օրոք

Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը բարիդրացիական հարաբերությունների ու գործնական կապերի մեջ էր Հերակլ Երկրորդ (1744-1798) թագավորի և վրացական արքայական տան ներկայացուցիչների, ինչպես նաև վրացահայ հասարակական-քաղաքական գործիչների հետ: Դա արտահայտվում էր աշխույժ նամակագրությամբ: Այդ հարաբերությունները որակվել են «բարե-

կամական, մտերմիկ»¹: Ի դեմս վրացական թագավորի՝ կաթողիկոսը տեսնում էր հայերի նկատմամբ բարյացակամորեն տրամադրված պետական գործչի, որը կողմնորոշվել էր դեպի Ռուսաստան և ընդունել ռուսական հպատակություն: Նա հույս ուներ, որ ռուսական զորքի անդրկովկասյան արշավանքները հաղթանակով կպսակվեն և, ըստ այդմ, չէր կարող հաշվի չառնել Վրաստանի ռուսամետ կողմնորոշման հանգամանքը: Բացի այդ, վրացական բնակավայրերում մեծաթիվ էին հայերը, որոնց հետ բնականոն կապեր պահպանելը կախված էր նաև վրաց թագավորի հետ ունեցած հարաբերություններից²:

Ահա ինչու կաթողիկոս ընտրվելուց հետո՝ 1780 թ. օգոստոսին, Ղուկաս Կարնեցին մի քանի նամակ է ուղարկում Վրաստան՝ տեղեկացնելով իր ընտրության մասին, Հերակլ արքային շնորհակալություն է հայտնում ընծաների համար և հույս հայտնում, որ վրաց թագավորը կշարունակի նախկին բարեկամական վերաբերմունքը Ս. Աթոռի նկատմամբ: Հավանաբար արքան շտապել էր կաթողիկոսի ընտրվելու առիթով շնորհավորել և նվերներ ուղարկել նրան: Նմանօրինակ բովանդակությամբ նամակներ են հղվում նաև թագաժառանգներ Գեորգիին և Լևանին, Անտոն կաթողիկոսին և այլոց³:

Վրաց թագավորը, իր հերթին, հանձին հայոց կաթողիկոսի, մահմեդական շրջապատում ուներ քաղաքական հարցերում վստահելի դաշնակից: Կաթողիկոսի դերն անփոխարինելի էր Երևանի խաների և այլ մեծամեծների հետ վրացիների ունեցած փոխհարաբերությունների ժամանակ: Երևանի խանը ենթակա էր Վրաստանի կառավարությանը և երբեմն ապստամբում էր վրացական տիրապետության դեմ:

Պետականության բացակայության պայմաններում քաղաքական գործառույթներ ստանձնած կաթողիկոսը, ինչպես կտեսնենք, իր դերն ու կշիռն օգտագործում էր՝ փորձելով հարթել Երևանի խաների ու վրացական արքունիքի տարաձայնությունները: Քիչ դեր չէին խաղում հայոց կաթողիկոսի անունն ու հեղինակությունը, որի միջնորդությունների միջոցով տարբեր վայրերի իշխողներն էլ լուծում էին իրենց խնդիրները. դրա համար երբեմն անհրաժեշտ էին լինում կաթողիկոսի հաշտարար միջամտությունները՝ գրությունների տեսքով: Հերակլի խնդրանքով կաթողիկոսը բազմիցս միջնորդի դեր էր կատարում պարսից տարբեր երևելիների մոտ, բարեխոսում արքայի

¹ Գրիգորյան 1984, 65:

² Գրիգորյան 1984, 165:

³ Գրիգորյան 1984, 94-96, 139:

համար, որ վերջինս կարողանա պահպանել իր քաղաքական կշիռն ու ներգործությունը հատկապես Երևանի խանությունում:

Պարսկական տիրապետության պայմաններում քայքայման ճամփան բռնած երկրի տնտեսությունը մեծապես տուժում էր նաև վրաց-պարսկական թշնամական հարաբերությունների հետևանքով: Երևանի խանի դեմ կազմակերպված վրացական զորքի արշավանքների ժամանակ մեծ վնասներ էին կրում Արարատյան դաշտի բնակավայրերը, վանքերն ու եկեղեցիները:

Հայտնի է, որ դեռևս 1779 թ., Երևանի Հուսեյն Ալի խանից (1762-1783) տարեկան 3000 թուման⁴ հարկը ժամանակին չստանալով, Հերակլ արքան 12000 զորքով արշավել էր Երևան⁵: Վրացական զորքերը մեծ ավերածություններ էին կատարել հայկական բնակավայրերում: Արքան բազմաթիվ հայկական գյուղերի բնակիչների գաղթեցրեց, ավերեց ու կրակի մատնեց 30 հայկական եկեղեցի, հայերից շատերին գերի տարավ Թիֆլիս: Այդ ամենի պատճառով դեպի հյուսիս ճանապարհը փակվել էր, կտրվել էր Էջմիածնի կապը Վրաստանի հետ, անհնար էր դարձել նամակներ ուղարկելը: Երկուստեք հաշտություն չի կայանում, և պատերազմը շարունակվում է նաև հետագա տարիներին: «...Տակալին չեղաւ հնար հաշտութեան և ...մնացեալքն երկրիս ևս իսպառ աւերեցան և աղքատացան»⁶, - գրում է Կարնեցին: Կարնեցու նամակներից տեղեկանում ենք, թե ինչ հետևանքներ է ունեցել վրացական զորքերի արշավանքը հայոց երկրի համար: Կաթողիկոսը նկարագրում է Էջմիածնի տնտեսական անմխիթար վիճակը, սննդի պակասը. մոտ երկու ամիս դրամ չէր մտել Էջմիածին: Նա գրում է, որ վրացական զորքի ասպատակությունից ի վեր մոտ մեկ տարի է, ինչ «...բացի վնասատուութեանց զօրացն, քաղցեալքն երկրիս ի մէնջ լցին և լնուն զպակասութիւնս իւրեանց»⁷:

Խանը ձգտում էր հաշտվել Հերակլի հետ և վերադարձնել նրա կողմից Հայաստանից Վրաստան բռնագաղթած հայ գյուղացիներին: 1781 թ. մարտի նամակում կաթողիկոսն ափսոսանքով արձանագրում է, որ վրաց արքայի տարհանած ժողովուրդը դեռ չի վերադարձել՝ չնայած վերջինիս և Երևանի խանի միջև առերես հաշտություն է կնքվել⁸: Այդ հարցում միջնորդի դեր էր ստանձնել Ախալցխայի Սուլեյման փաշան: Կարնեցին ևս ձգտում էր նպաստել հաշտության կնքմանը՝ հույս ունենալով, որ հայերին կվերա-

⁴ Թուման - պարսկական դրամական միավոր:

⁵ Աղանեանց 1899, 759:

⁶ Աղանեանց 1899, 759-760:

⁷ Գրիգորյան 1984, 161:

⁸ Գրիգորյան 1984, 206:

դարձնեն: «Եւ որովհետև սա (Սուլեյմանը - Հ.Ա.) զհաշտութիւն արկանէր ի մէջ Վրաց արքային և մեր խանին, վասն այն և սրբազան Վեհն զիրիճայս»⁹ գրեց առ ի փութով ի գլուխ բերել»¹⁰: Սակայն Հուսեյն-Ալի խանի և Հերակլի միջև ընթացող հաշտության բանակցությունները, ինչպես երևում է Կարնեցու գրագրություններից, մինչև 1780 թ. հոկտեմբերն արդյունք չեն տալիս, և երկրի վիճակն ավելի է վատթարանում:

Հուսեյնը Հերակլի մոտ հերթական անգամ բանագնացներ է ուղարկում: Թիֆլիսից հաղորդում են, որ հաշտություն կնքելու համար անհրաժեշտ է հայոց կաթողիկոսի միջնորդությունը: Խանի խնդրանքով Կարնեցին 1780 թ. նոյեմբերի 14-ին Գալուստ վարդապետի հետ նամակ և նվերներ է ուղարկում թագավորին, խնդրում հաշտվել և վերադարձնել Վրաստան տեղափոխված գյուղացիներին. «Ահա երկրիս որպիսութիւն յայտնի է քեզ, որոյ շինութիւնն ըստ մեծի մասին սպառեալ է և անմարդաբնակ է եղեալ: Արդ, խնդրեմ ի մեծութենէդ, զի զխղճալի ժողովուրդսն երիրիս, զորս վարեալ ես աստի, արծակեսցես ի գալ»¹¹: Այս բանակցությունները ևս հաշտությամբ չեն պսակվում, բայց որոշակիորեն թուլացնում են թշնամական հարաբերությունները Հերակլի ու խանի միջև¹²:

Երևանի խանը 1781 թ. նոյեմբերին Վրաստան է ուղարկում չորրորդ պատվիրակությունը. հաշտությունը կնքվում է, խանությունից տարված բնակչության մեծ մասը վերադարձվում է: Հերակլը, ի ամրապնդումն հաշտության, ինչպես նաև վերականգնելու համար իր անունն ու ազդեցությունը, 1782 թ. մայիսին գումար է ուղարկում տուժած հայկական բնակավայրեր¹³:

Երևանի նոր՝ Մահմեդ խանի (1785-1903) գահակալմամբ երկրում սկիզբ են առնում նոր խժոժություններ: Հանգուցյալ խանի կողմնակիցները, դժգոհ նոր խանից, ապստամբում են նրա դեմ, հարձակումներ գործում խանության գյուղերի վրա: Այրմալու ցեղի ահից Էջմիածնի շրջակա հայ և մահմեդական գյուղերի բնակիչները թողնում են բնակավայրերն ու հավաքվում Էջմիածնի վանքում: Ապստամբաձների մի խումբ հարձակվում և հափշտակում է վանքի և Վաղարշապատ գյուղի բնակիչներին պատկանող անասունները: Կար-

⁹ Իրիճայ, Երիճայ (արբ.) - դիմում, աղերս, խնդրագիր:

¹⁰ Գրիգորյան 1984, 136:

¹¹ Գրիգորյան 1984, 153:

¹² Գրիգորյան 1958, 71:

¹³ Տե՛ս Գրիգորյան 1984, 295:

նեցին նամակ է գրում Հերակլ Երկրորդի որդի Գեորգի թագաժառանգին, որի միջնորդությամբ ավարը վերադարձվում է¹⁴:

Երկրում ստեղծված անկայուն վիճակը շարունակվում է երկար: Իրավիճակին միջամտում է Հերակլը՝ սպառնալով օգնական զորք ուղարկել Մահմեդ խանին՝ ապստամբությունը ճնշելու, որն անհանգստացնում է կաթողիկոսին: Կարնեցին, չկամենալով, որ կռիվները շարունակվեն, կրկին միջնորդում է հաշտություն կնքելու համար, որը կայանում է¹⁵:

Սակայն երկրում կայունություն չի հաստատվում: Կաթողիկոսն իր նամակներում ու գրագրություններում նկարագրում է Խոյի, Նախիջևանի և Երևանի խանությունների միջև տեղի ունեցած զինված ընդհարումները: Մյուս կողմից մուղանլու թուրքերն են ասպատակում երկիրը, սեփականացնում Օշական գյուղը, գրավում վանքի հողերը: Այդ ամենին գումարվում է 1785 թ. հյուսիսկովկասյան Ումմա խանի արշավանքից առաջացած իրարանցումը: Այդ իրադարձությունների, ինչպես նաև Պարսկաստանում տիրող անկայուն քաղաքական իրավիճակի մասին պատմում է Կարնեցին¹⁶:

Երբ 1796 թ. ռուսական զորքը հեռանում է Անդրկովկասից, թուլանում են Քարթլի-Կախեթի դիրքերը: Առիթից օգտվելով՝ Երևանի խանը գործում էր Հերակլից անկախ. այդ մասին Կարնեցին Շ. Շահամիրյանին գրում է. «...Արքայն Վրաց միայն իրեանց մնացորդ երկրացն իշխե, այն ևս հայթայթանօք և այլ երկրաց՝ ոչ բնաւ և թէպէտ յերևանցոց զհարկ ինչ առնու վասն ոմանց պատճառաց...»¹⁷:

Փաստորեն, կաթողիկոսը ձգտում էր ամեն գնով հարթել Երևանի խանի ու վրացական կառավարության միջև տարաձայնությունները, քանի որ դրանով, մի կողմից, կապահովվեր վրացական պետության և Երևանի խանության միջև բարիդրացիական հարաբերությունները, մյուս կողմից, երաշխիք կլիներ, որ օտար հարձակումների ժամանակ վրացական կողմն օգնություն կցուցաբերի խանին: Ահա թե ինչու Թավրիզի սարդար Սուլեյմանի և Խոյի խանի անդրկովկասյան արշավանքի ժամանակ Կարնեցին գնում է Երևան, բանակցում Երևանի խանի հետ՝ արքային կրկին հնազանդվելու ու ծառայելու համար, որպեսզի Հերակլ արքան ռազմական աջակցություն ցույց տա

¹⁴ Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (այսուհետև՝ ՄՄ), ձեռագիր Հ^մ 2803, թ. 316բ, տե՛ս նաև Գրիգորյան 1958, 91:

¹⁵ Գրիգորյան 1984, 58-59, Գրիգորյան 1958, 92-93:

¹⁶ Գրիգորյան 1958, 122-123, 125, 127:

¹⁷ Գրիգորյան 1958, 138:

խանին: Վերջինս հավանություն է տալիս կաթողիկոսի առաջարկին, պատրաստակամություն հայտնում կրկին հարկատու լինել Վրաստանին¹⁸:

Վրացական կողմը երբեմն հրաժարվում էր ռազմական օգնություն ցուցաբերել իրեն ենթակա Երևանի խանին: Այդ հանգամանքը կաթողիկոսին խիստ անհանգստություն էր պատճառում: Ծանոթներին գրած նամակներում կաթողիկոսն ակնարկում է վրացական կողմի դիրքորոշման վերաբերյալ. «Եւ վրացին ևս միշտ զոտն ի գետին հարկանէ զխուժադուժ գումարս զօրաց ցուցանելով և զհարկս պահանջելով»¹⁹, - գրում է Կ. Պոլսի Զաքարիա պատրիարքին:

Հայ-վրացական հարաբերությունները Աղա Մուհամմադ խանի անդրկովկասյան արշավանքների շրջանում

Շուտով սկսվեց Պարսկաստանում Ղաջարների հարստության հիմնադիր Աղա Մուհամմադ խանի (1743-1797) անդրկովկասյան արշավանքը: Կարնեցու նամակների փոքր ակնարկները վկայում են, որ անհանգստացած կաթողիկոսը համակ ուշադրությամբ հետևում էր Աղա Մուհամմադի զորքերի շարժին: 1791 թ. սեպտեմբերի 22-ին նա ներկայացնում է, որ խանը եկել, բանակ է դրել Թավրիզի մոտ և հպատակեցրել շատերին: Նկարագրում է խանի կողմից Խոյի և Արարատյան երկրի բնակիչներին, որոնց մեծ մասը հայեր էին, պատճառած վնասների մասին²⁰:

Երևանի Մահմեդ խանը կրկին օգնություն է խնդրում Հերակլից, որի երկյուղից Աղա Մուհամմադ խանի համակիցներ Խոյի և Նախիջևանի խաները 1790 թ. օգոստոսի 29-ին Երևանի բերդի մոտից հեռանում են դեպի Էջմիածին՝ ճանապարհին հրկիզելով ու ավիրելով բնակավայրերը, քշել-տանելով շրջակայքի բնակիչների և Էջմիածնի Մ. Աթոռին պատկանող ընտանի կենդանիների նախիրը: Կաթողիկոսը նկարագրում է հետդարձի ճանապարհին նրանց ավերածությունները: Հերակլը ասպատակողների դեմ միայն 130 զինվորից բաղկացած զորաջոկատ է ուղարկում: Կարնեցու հույսերը, կապված վրացական օգնության հետ, դարձյալ չեն արդարանում: Ավելին, վրացական ջոկատի պարենային ապահովման պարտականությունը դրվում է Էջմիածնի վրա²¹:

¹⁸ Աղանեանց 1899, 641:

¹⁹ ՄՄ, ձեռ. Հ⁶ր 4538, 27ա:

²⁰ Գրիգորյան 1958, 141:

²¹ Գրիգորյան 1958, 146-147:

1794 թ. Աղա Մուհամադ խանը շահ է հռչակվում և մտածում է վերահաստատել պարսկական տիրապետությունը Արևելյան Հայաստանի, Քարթլի-Կախեթի և պարսկահպատակ մյուս տարածաշրջանների նկատմամբ:

Կաթողիկոսը, որը մշտապես խրախուսում ու հովանավորում էր արքային՝ ընդդեմ պարսկական արշավանքների, հույսով, որ Վրաստանը գնեքի ուժով կարող է հնազանդեցնել նրանց, միջնորդի դեր է ստանձնում, իմանալով, որ Հերակլը բանակցությունների մեջ է մտել Երևանի Մահմեդ խանի հետ՝ ընդդեմ շահի²²: Հերակլին աջակցելու նպատակով Կարնեցին նաև կարգադրում է վանքի միջոցներից 100 թուման ուղարկել նրան, իսկ Հերակլի՝ դեպի Ղազախ շարժման լուրն առնելուց հետո կաթողիկոսը կարգադրում է զինվորական ծախսերի համար նրան տալ 1000 ալլամուշլուխ (թուրքական ոսկեդրամ)²³:

Կարնեցին, 1794 թ. հունիսին Էդիրնեի (Ադրիանուպոլիս) մահտեսի պարոն Գևորգին նկարագրելով նշված իրադարձությունները, գրում է, որ վրաց արքան զորքեր է նախապատրաստում՝ հնարավոր հարձակման առաջն առնելու: Նա ակնարկում է, որ Երևանի խանը սկսել է չենթարկվել վրաց թագավորին: Դրա հետևանքով փոխադարձ անվստահություն է առաջացել, և խանը ամրացել է բերդում՝ շրջակայքի բնակչությանը ևս իր մոտ ժողովելով: Երևանի խանը կաթողիկոսին հրավիրում է ստեղծված իրավիճակի վերաբերյալ խորհրդակցության, իսկ օգնության խնդրանքով մարդ է ուղարկում Հերակլ արքայի մոտ: Բայց «Վրացին հանդիմանել էր զնոսա վասն դատարկ գնալոյն, ոչ հավատալով խոստման վասն բազմիցս ստելոյն»²⁴: Վրացիները բանագնացի միջոցով պահանջում են վճարել իրենց հասանելիք տուրքը՝ դրա դիմաց խոստանալով դուրս գալ թշնամիների դեմ: Խանը որոշ քանակի դրամ է ուղարկում, իսկ հարկի մնացած մասը խոստանում հետագայում վճարել, բայց այդպես էլ չի կատարում հարկատուի իր պարտականությունները:

Շուտով Սուլեյման սարդարը Խոյի խանի հետ գալիս է Նախիջևան: Կրկին խուճապ է սկսվում: Սարդարը մարդ է ուղարկում Երևանի խանի մոտ և պատանդներ պահանջում: Խանը պատասխան չի տալիս և կրկին բանագնաց է ուղարկում Վրաստան: Այս անգամ՝ որոշակի ու խիստ պահանջով՝ «...կամ մեզ օգնիր և զորք ուղարկիր, և մենք մեր խոստացածը կտանք, կամ

²² Գրիգորյան 1958, 29:

²³ Գրիգորյան 1984, 28, Գրիգորյան 1958, 156:

²⁴ ՄՄ, ձեռ. Հ^մ 4538, թ. 26բ:

մի պատասխան տուր»²⁵: Ուշագրավ է վրացական գրաբերի բերած պատասխանը, որը մեջբերում է Կարնեցին. «Իսկ նա (Հերակլ Երկրորդը - Հ.Ա.) ումն ղրկեց թղթով, թէ՛ նա իմ խորհրդեամբն է եկել անդ, և ես ոչ ունեմ պատերազմել ընդ նմա, այլ դուք զհարկն իմ լրի տա՛ք...»²⁶: Հետագայում դարձյալ որքան բանագնացներ են ուղարկում Թիֆլիս՝ Հերակլն անդրդվելի է մնում:

Փաստորեն, վրացական կողմը, առիթն օգտագործելով, փորձում է պարսկական արշավանքի դեմ օգնություն ուղարկելու դիմաց ստանալ իրեն հասանելիք հարկը: Ավելին, Թիֆլիսի հայ երևելի մելիք Ավետիքի գրած նամակից տեղեկանում ենք, որ վրաց արքան փորձել է կաթողիկոսի միջոցով ներգործել Երևանի խանի վրա՝ ստանալու տարեկան հարկը: Ի պատասխան՝ կաթողիկոսը գրում է, որ խանն անգամ իր հավատարիմների խոսքը հաշվի չի առնում, իրեն ինչպե՞ս կլսի. «Ի ձեռս նոցայ է թողուլն և վարելն, պահելն և չարչարելն: Ուրեմն օգուտ չկա խոսել այդ մասին»²⁷:

Խանը, օգնություն չստանալով, նվերներ ու բանագնաց ուղարկեց սարդարի մոտ: Կաթողիկոսն իր հերթին Երևանում գտնվելու ընթացքում մի վարդապետի միջոցով նամակ է գրում՝ փորձելով մեղմել շահի բարկությունը և համոզել չհարձակվել երկրի վրա²⁸: Կարելի է ենթադրել, որ, ամենայն հավանականությամբ, կաթողիկոսը նամակը գրել է Երևանի խանի առաջարկով և ցանկությամբ: Այս իրադարձությունների մասին կաթողիկոսը 1794 հունիսին Կ. Պոլսի մահտեսի Նիկողայոս Եղիազարյանին գրում է. «...իսկ մեր որպիսության մասին իմացիր, որ...այժմոյս կարի վրդովեալ գոյ երկիրս մեր և մեզ ոչ գոյ հանգստութիւն: Զի թերահաս տիրողն երկրիս ոչ օգտագիտաբար վարեցեալ, նարդենիս թէ ի վրաց պետէն, և թէ ի շահ կոչեցեալ ներքինոյն կողմանէ զգարհուրելի կասկածանս կրելով, զբնակիչսն երկրիս ժողովէ ի բերդն և ամրանալոյ պատրաստութիւն տեսանէ ընդդէմ յառնելոյ նոցայ: Որ զմեզ ևս հրաւիրեալ տարաւ յԵրևան քաղաք և անդանօր զխաղաղութիւն խորհուրդ խորհեալ մարդիկ յղեացաք և թուղթ գրեցաք առ վրաց պետն և յետ ի յաւուր մնալոյ մեր անդ, դարձաք ի Սուրբ Աթոռս»²⁹:

Աղա Մուհամադ շահը 1795 թ. հունիսի վերջին 50000 զորքով անցնում է Արաքսը և ներխուժում Անդրկովկաս: Նման իրավիճակում Երևանի խանը

²⁵ ՄՄ, ձեռ. ՀՊՐ 4538, թ. 27ա:

²⁶ ՄՄ, ձեռ. ՀՊՐ 4538, թ. 27ա:

²⁷ ՄՄ ձեռ. ՀՊՐ 4538, թ. 33ա:

²⁸ ՄՄ ձեռ. ՀՊՐ 4538, թ. 22բ:

²⁹ ՄՄ ձեռ. ՀՊՐ 4538, թ. 17ա:

շտապում է շտկել հարաբերությունները Հերակլի հետ: Որպես միջնորդ՝ հերթական անգամ հանդես է գալիս Ղուկաս Կարնեցին, որը ևս գրավոր կերպով վրաց արքային խնդրում է հաշտվել խանի հետ³⁰: Սակայն, երբ շահի զորավարներ Ալիդուլի և Ջաֆարդուլի խաները հուլիսի վերջին 20000 զորքով մոտեցան Երևանին և բանակ դրին Չարբախում, Հերակլն ի վիճակի չեղավ օգնության հասնել Երևանի խանին:

Ալիդուլին պաշարում է Երևանի բերդը, որտեղ փակվել էին Երևանի խանն ու նրա կողմից տեղահան արված՝ շրջակա հայկական գյուղերի և Երևան քաղաքի բնակչությունը: Ավելի քան մեկ ամիս (35 օր) տևած Երևանի պաշարման ընթացքում Երևանն ու ամբողջ երկիրը ենթարկվում են մեծ ավերածությունների:

Ղուկաս Կարնեցին 1795 թ. հուլիսի 27-ին բանագնաց է ուղարկում Ալիդուլի խանի մոտ, իսկ հաջորդ օրն ինքն է գնում խանի բանակը՝ բանակցություններ վարելու փրկագնի վերաբերյալ: «Գնաց Ղուկաս կաթողիկոս բազում ընծայիք ի տեսութին նմա և մեծարի ի նմանէ առ երեսս ըստ խորամանկութեան Պարսից...»³¹: Կարնեցին, 4000 թուման վճարելով խանին, փրկագնում է էջմիածնի Մայր Աթոռը՝ այն ազատելով թալանվելուց, իսկ նրա պարիսպների ներսում հավաքվածներին՝ կոտորածից ու գերեվարումից³²:

Կաթողիկոսի նմանօրինակ քայլը վկայում է, որ նա այլևս հույսեր չէր կապում վրացական կողմի օգնության հետ, քանի որ Հերակլ արքան չկարողացավ օգնության հասնել Երևանի խանին:

Հայ-վրացական տնտեսական հարաբերությունները Ղուկաս Կարնեցու օրոք

Կաթողիկոսի օրոք հայ-վրացական կապերն արտահայտվում էին նաև տնտեսական հարաբերություններով: Նամակներից տեղեկանում ենք, որ Հերակլն ու արքայական ընտանիքի մյուս անդամները հաճախ դիմում են Ղուկասին՝ հեռավոր վայրեր մեկնող կամ էլ փորձանքի հանդիպած անձանց ժողովարարական թղթեր տալու խնդրանքով³³: Այսպես, Գեորգի արքայորդու

³⁰ Գրիգորյան 1958, 158-159:

³¹ Կռունկ հայոց աշխարհին 1862, Թիֆլիս, թիւ Դ, 284:

³² Լեո 1973, 387:

³³ 1793 թ. Հերակլն անգամ Ս. Հակոբի բուժիչ ջրից է խնդրել կաթողիկոսից, որն ուղարկել է այն: Տե՛ս Աղանեսեց 1899, 607: 1798 թ. ժանտախտի ժամանակ Գեորգի արքայի խնդրանքով Կարնեցին Թիֆլիս է ուղարկում Սուրբ Գեղարդը՝ պայքարելու տարածված մահտարածամի դեմ: Կաթողիկոսի

խնդրանքով 1782 թ. նա ժողովարարության թուղթ է տալիս վրաց քահանա Ջաքարիային³⁴:

Կաթողիկոսը, հիմնականում ընդառաջելով նրանց խնդրանքներին, երբեմն էլ ստիպված էր լինում մերժել: 1782 թ. մայիսին Գետրգի արքայորդուն նա հայտնում է, որ նրա խնդրանքով ինքը սոցիալ-տնտեսական ծանր վիճակում հայտնված հոգևոր և աշխարհական անձանց տվել է ժողովարարական թղթեր, բայց անհրաժեշտ է դրանց թիվը սահմանափակել, որովհետև «ի յաճախութենէն լիցի զգուումն ժողովրդեանն և թուղթն մեր ամենևին ընդունայն լինելոց է»³⁵:

Կարնեցին 1794 թ. նոյեմբերի 23-ին Հերակլի թոռ Դավիթ Միրզային գրում է, որ ինքը չի կարող ժողովարարական թուղթ տալ նրա ուղարկած Պետրոս քահանային, որ վերջինս ուխտի գնա Երուսաղեմ, որովհետև ծայրահեղ աղքատության մեջ գտնվող ժողովուրդը դժգոհել է³⁶: Պատճառն այն էր, որ վերջերս էր նման թուղթ տրվել երկու վրացի քահանայի: «...Մերայինքն ամենայն ի յաղքատութենէ և ի դառնութեանց ժամանակիս նեղեալ գոլով՝ գրեթէ յերես են ելեալ, որոց աւելորդ հրաման հրամայելն վնաս բերէ, քան թէ օգուտ»³⁷, - գրում է Կարնեցին Դավթին՝ փորձելով հակասություն չսերմանել հայ բնակչության ու վրացական պետության միջև: Կաթողիկոսի նմանօրինակ քայլը Վ. Գրիգորյանը մեկնաբանում է այն բանով, որ Ղուկասը վախենում էր ժողովրդական զայրույթից:

Ղուկաս Կարնեցու խնդրանքով Հերակլ թագավորը հաճախ միջամտում էր վրացահպատակ հայկական տարածքներում ծայր առած եկեղեցական վեճերին, այդ թվում՝ Մայր Աթոռի հասանելիք տուրքի շուրջ, հալածում էր վրացահայերի մեջ կաթոլիկություն տարածողներին³⁸ (հայտնի է, որ կաթողիկոսն արքային խնդրել է լուծում տալ Հաղարծնի վանքի և հաղպատցիների միջև ծագած թեմական պատկանելության վեճին³⁹):

ջանքերը՝ վերադարձնելու Գեղարդը, որն ութ ամիս այնտեղ էր, իզուր են անցնում: Կաթողիկոսը 1799 թ. օգոստոսին գրում է արքային, որ հարյուրավոր ուխտավորներ, գալով Էջմիածին, ցանկություն են հայտնում տեսնել հրաշագործ Գեղարդը և խնդրում է Թիֆլիսում գտնվող Հովհաննես վարդապետի միջոցով այն վերադարձնել: Տե՛ս Աղանեանց 1899, 679, Լեո 1973, 424:

³⁴ Աղանեանց 1899, 344:

³⁵ Աղանեանց 1899, 642-643, Գրիգորյան 1958, 62, Գրիգորյան 1984, 302:

³⁶ Աղանեանց 1899, 642-643, Գրիգորյան 1958, 62:

³⁷ Աղանեանց 1899, 643:

³⁸ Գրիգորյան 1984, 66:

³⁹ Աղանեանց 1899, 389:

Վրացական արքունիքն իր հերթին հաճախ դիմում էր կաթողիկոսին՝ իր երկրում հայկական եկեղեցիների առաջնորդների նշանակման հարցով: Կաթողիկոսը քաջ գիտակցում էր, որ այդ խնդրանքները բխում էին վրացական կողմի շահերից՝ հայկական եկեղեցիներում իրենց ձեռնտու և ենթակա գործիչներ նշանակելու տեսանկյունից:

Կարնեցին 1792 թ. հուլիսին գրությամբ փորձում է մերժել Գեորգի արքայորդու խնդրանքը՝ Հաղպատի միաբան Դավթին եպիսկոպոս ձեռնադրելու և վանքի հոգևոր առաջնորդ նշանակելու վերաբերյալ, պատճառաբանելով, որ վերջինս չունի թեմ և վիճակ: Սակայն խնդրանքը կրկնվելու պատճառով ստիպված է լինում ձեռնադրել՝ Դավթին պատվիրելով համեստությամբ և խաղաղությամբ կառավարել թեմը և վանքի շինության համար հոգ տանել: Սակայն լեզգիների արշավանքներից հետո Դավիթը, վանքը լքելով, գնում է Թիֆլիս: Վանքը մնում է ամայի ու անբարեկարգ: Կաթողիկոսը, տեղի հայ բնակչությանից Դավթի վերաբերյալ բազմաթիվ գանգատաթղթեր ստանալով, Թիֆլիսի հոգևոր առաջնորդ Պետրոս վարդապետին և տեղի հայ երևելիներին ուղղած պատասխան-նամակում գրում է, որ Դավթին չընդունելու դեպքում նրանք պետք է այդ մասին գրեն արքայորդի Գեորգիին⁴⁰: Կաթողիկոսը Դավթի արարքների մասին ցավով արձանագրում է. «Բազում ամայացածներն նորից շինեցին, իսկ նա վանքի այլոց շինած փայտակերտսն ևս քանդել բերել է այդտեղ որջ հաստատել իր համար և վանքն ամայի թողել»⁴¹: Սակայն, անսալով արքայի միջնորդությանը, կաթողիկոսն ստիպված է լինում Դավթին վերահաստատել վանքի առաջնորդի պաշտոնում, իսկ Հերակլին խնդրում է հրամայել Հաղպատի գյուղացիներին վերադառնալ գյուղ և վերանորոգել վանքը⁴²: Հետագայում՝ 1799 թ., Գեորգի արքան (1798-1801) ինքն է կաթողիկոսին խնդրում Գանձասարի Սարգիս եպիսկոպոսին կարգել Հաղպատի վանքի առաջնորդ:

Կաթողիկոսը հաճախակի էր դիմում վրաց արքաներին՝ վրացահպատակ հայկական տարածքների՝ Ս. Աթոռին պատկանող գույքի վերաբերյալ հարցերով: 1799 թ. սեպտեմբերի 17-ին նա Գեորգի արքային խնդրում է անժառանգ մահացած էջմիածնապատկան ճորտ Դավթի տունը, որը այլոց

⁴⁰ ՄՄ, ձեռ. ՀՊր 4449, թ. 31ա, 31բ-32ա:

⁴¹ Աղանեանց 1899, 581:

⁴² Աղանեանց 1899, 589-590:

ձեռքն էր ընկել, հանձնել Ս. Աթոռին, ինչպես վրացական երկրի օրենքն է սահմանում⁴³:

Եզրակացություններ

Այսպիսով, Ղուկաս Կարնեցին ձգտում էր բարիդրացիական հարաբերություններ պահպանել վրացական պետության հետ՝ հաշվի առնելով, որ Հերակլ Երկրորդը, որպես պետականություն ունեցող երկրի ղեկավար, ի զորու էր պայքարելու պարսկական արշավանքների դեմ: Հայ ժողովրդի նկատմամբ կեղեքումները, երկրի ավերածությունն ու կողոպուտը կանխելու համար կաթողիկոսը ստիպված էր միջնորդի ու հաշտարարի դեր կատարել, մի կողմից, Երևանի խանի ու վրացական արքունիքի, մյուս կողմից, վերջինիս ու մահմեդական տարբեր տիրողների միջև: Ինչպես տեսանք, Երևանի խանի և Վրաստանի միջև հաշտության կայացման գործում իր դերը կատարել է նաև հայոց կաթողիկոսը: Բացի այդ, հայ-վրացական քաղաքական և տնտեսական ամուր հարաբերությունները հնարավորություն էին տալիս վերահսկելու Վրաստանում և վրացահպատակ հայկական տարածքներում գտնվող եկեղեցիների և տեղի հայերի հոգևոր կյանքը:

Մյուս կողմից, հայոց կաթողիկոսը հնարավորություն ուներ օգնելու վրացիներին տնտեսական, հոգևոր և այլ կարևոր հարցերում: Ուստի վրացական պետության ղեկավարներն իրենց հերթին ձգտում էին բարեկամական հարաբերություններ պահպանել հայերի հոգևոր առաջնորդի հետ: Վրաց արքունիքի ու հայոց կաթողիկոսի բարեկամությունն արտահայտվում էր նաև նվերների, տարբեր ապրանքների փոխանակմամբ⁴⁴:

Գրականություն

Կռունկ հայոց աշխարհին 1862, Թիֆլիս, թիւ Դ, էջ 284:

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, ձեռագիր Հ^մ 2803, Հ^մ 4449, Հ^մ 4538:

Գրիգորյան Վ. 1984, Դիվան հայոց պատմության, հ. Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 596 էջ:

Գրիգորյան Վ. 1958, Երևանի խանությունը XVIII դարի վերջում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 226 էջ:

Աղանեանց Գ. 1899, Դիւան հայոց պատմութեան, Դ, Թիֆլիս, տպ. Տ. Ռօտինեանցի, 683 էջ:

Լեո 1973, Հայոց պատմություն, հ. 3, Երևան, «Հայաստան», 638 էջ:

⁴³ Աղանեանց 1899, 683-684:

⁴⁴ Աղանեանց 1899, 391, Գրիգորյան 1984, 66, 132, 139, 250:

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՀՈՎՎԱԴԴԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ (XVIII Դ. ՎԵՐՋ)

Հասմիկ Ամիրջանյան

Ամփոփում

Մեծ է Ամենայն Հայոց կաթողիկոս Ղուկաս Կարնեցու (1780-1799) դերն ու ներդրումը հայ-վրացական քաղաքական հարաբերություններում, ինչպես նաև Թիֆլիսում և Վրաստանի այլ տարածքներում XVIII դ. վերջին բնակվող հայերի հոգևոր կյանքում: Քաղաքական ու հոգևոր գործիչը թուրք-պարսկական տիրապետության դեմ հայ ազգային-ազատագրական պայքարում վրաց թագավոր Հերակլ Երկրորդի կառավարման շրջանում մեծ նշանակություն էր տալիս վրացական թագավորության դերին: Ուստի, պահպանելով բարեկամական հարաբերություններ վրաց թագավորի, քաղաքական ու հոգևոր բարձրաստիճանավորների հետ, վերջիններին հղում էր բազմաթիվ նամակներ ու զեկույցներ: Կամենալով պահպանել իր ազդեցությունը պարսիկ խաների նկատմամբ՝ Հերակլն իր հերթին հաճախ էր օգնության դիմում կաթողիկոսին: Կարնեցին, վրացական թագավորի հետ քննարկելով պարսկական տիրապետությունից Հայաստանի և Վրաստանի ազատագրության վերաբերյալ հարցերը, ինքնըստինքյան նպաստում էր հայ-վրացական քաղաքական հարաբերությունների զարգացմանը: Նա նաև կանոնակարգում էր վրացահայերի վարչական ու հոգևոր գործերը՝ դրանով իսկ նպաստելով ոչ միայն վիրահայոց թեմի բարեկարգմանը, այլև հայ-վրացական հոգևոր հարաբերությունների զարգացմանը:

Բանալի բառեր՝ քաղաքական հարաբերություններ, Հաղպատ, կրոնական, եկեղեցի, հոգևոր-վարչական, Ամենայն Հայոց կաթողիկոս, էջմիածին:

АРМЯНО-ГРУЗИНСКИЕ ОТНОШЕНИЯ ПРИ КАТОЛИКОСЕ ГУКАСЕ КАРНЕЦИ (КОНЕЦ XVIII В.)

Асмик Амирджанян

Резюме

Велика роль армянского католикоса Гукаса Карнеци (1780-1799) в становлении армяно-грузинских политических отношений, а также в духовной жизни армян Грузии в конце XVIII в. Армянский духовный лидер придавал огромное значение роли грузинского царя Иераклия Второго в национально-освободительной борьбе армян, направленной против турецко-персидского господства. Поддерживая дружественные отношения с грузинским

царем, с высокопоставленными грузинскими политическими и духовными деятелями, он обращался к ним за помощью. В свою очередь Иераклий Второй, стремясь сохранить свое влияние в отношении персидских ханов, в то же время часто оказывал содействие католикосу Карнеци. Обсуждая с Иераклием Вторым вопросы освобождения Армении и Грузии от персидского господства, Гукас Карнеци способствовал тем самым развитию армяно-грузинских политических отношений. Он также занимался упорядочиванием административных и религиозно-духовных вопросов грузинских армян, что в целом способствовало развитию армяно-грузинских отношений.

Ключевые слова – политические отношения, Ахпат, религиозный, церковь, духовно-административный, Католикос Всех Армян, Эчмиадзин.

ARMENIAN-GEORGIAN RELATIONS DURING THE REIGN OF CATHOLICOS GHUKAS KARNECI (THE END OF THE 18TH CENTURY)

Hasmik Amirjanyan

Abstract

One of the main activities of Ghukas Karneci (1780-1799) was the including in the Armenian-Georgian politic relations and in improving the spiritual life of Armenian people in Tiflis and other settlements of Georgia.

The article describes activities of Ghukas Karneci, his important role and contribution in the Armenian-Georgian political relations. He also organized the spiritual life of Armenian people in Tiflis and other settlements of Georgia.

The Catholicos, during the national liberation struggle of Armenia from the Persian yoke at the time of the King Herakli, gave also a great importance to the Georgian Kingdom. For this purpose, maintaining friendly relations with the Georgian Kings and the guides of the military and spiritual department, Karneci sent a lot of reports and letters to them. Gh. Karneci discussed the question of the liberation of Armenia and Georgia from the Turkish-Persian yoke, contributed comprehensively to the Armenian-Georgia political relations. One of the main activities of Karneci was the administrative regulations of Georgian eparchy of Armenian Church, increasing and strengthening the Armenian-Georgian spiritual relations.

Key words – political relations, Haghpata, religions, Church, religious-administrative connections, Catholicos of All Armenians, Echmiadzin.

ՄԱՎԱԶԻ ԽԱԹՈՒՆԻ 1590 Թ. ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿԸ

Գեորգի Միրզաբեկյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող
ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդամյան 24/4
Էլ. հասցե՝ georgmirzabekyan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 09.02.2022, գրախոսվել է 16.11.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.3-108

Ներածություն

Մավազի Խաթուն վարչաքաղաքական միավորը¹ 1590 թ. Երևանի վիլայեթի ընդարձակ հարկամատյանի² (աշխարհագիր մատյան) մաս է կազմել: Այն օսմանյան տիրապետության տակ է անցել XVI դ. վերջերին Սեֆյան Իրանի դեմ մղած պատերազմում (1579-1590 թթ.) Օսմանյան կայսրության տարած հաղթանակի հետևանքով³, որից հետո Բարձր Դուռը գրավյալ նոր տարածքում ավարտին է հասցրել աշխարհագիր մատյանի գրանցման աշխատանքները:

1590 թ. Երևանի վիլայեթի օսմանյան հարկամատյանի քննության շնորհիվ կարելի է նշել, որ Մավազի Խաթունը պատկանել է Նախիջևան վարչաքաղաքական միավորին⁴, որն էլ իր հերթին, բացի վերջինից, ընդգրկել է համանուն Նախիջևան քաղաքն ու նրան պատկանող գյուղերը, ինչպես նաև Մելիք Արսլանլուի, Ղարաբաղի, Դարաշամբի, Դարաշահբուզի և Բազարչայի շրջանները⁵: Օսմանյան իշխանությունները դրանք բոլորն էլ դիտարկել են որպես *նահիեներ*⁶ գյուղախմբեր: Հարկ է նշել, որ արդեն լույս է տեսել Դարաշամբի 1590 թ. օսմանյան հարկացուցակի ուսումնասիրությունը⁶:

Ուշագրավ է, որ Ղևոնդ Ալիշանը «Սիսական» աշխատության մեջ Մավազի Խաթունը նույնպես Նախիջևան գավառի մաս է դիտարկել⁷ տեղանքին տալով հետևյալ բնորոշումը. «Գեղեցիկ և լեռնաձոր մասն բուն գաւառին

¹ Գտնվել է պատմական Ճահուկ գավառում, համանուն գետի ավազանում: Համապատասխանում է Հին Սյունիք աշխարհի Ճահուկ գավառի կենտրոնական շրջանին, հմմտ. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 1991, 710:

² COA, 1-394.

³ Զուլպյան 1980, 52:

⁴ COA, 96.

⁵ COA, 96:

⁶ Միրզաբեկյան 2021:

⁷ Ալիշան 1893, 480:

Ճահկոյ, որ արդ ՄԱԻԱԶԻ ԽԱԹՈՒՆ կոչի, սակաւ երեւեցուցանէ շէնս, աւերածու ձեռաց և ոտից հանդիպեալ, որպէս թուի, ի յետին դարս»⁸:

Նա, Մավազի Խաթունի նկարագրության մեջ կողմնորոշիչ համարելով Ճահուկ գետը, ավելացնում է. «Միջին կամ բուն առաջք գետոյն Ճահկոյ զուգի ի բազում՝ աղբերաց և վտակաց իջելոց ի գոգաձև լեռնոտանց Վայոց ձորոյ»⁹: Իսկ պատմաբան Արգամ Այվազյանը Մավազի Խաթունը (Մավազի անվամբ) տեղորոշում է Ճահուկ գավառի¹⁰ հյուսիսարևմտյան մասում¹¹:

Ինչ վերաբերում է Մավազի Խաթունի՝ խնդրո առարկա օսմանյան հարկացուցակին¹², ապա դրա քննությանը ցայսօր չեն անդրադարձել ոչ միայն Հայաստանում, այլև նրա սահմաններից դուրս: Մավազի Խաթունի 1590 թ. օսմանյան հարկացուցակը (նկ.) տվյալ *նահիեի* ուսումնասիրության տեսանկյունից կարևոր սկզբնաղբյուր է, որի միջոցով կարելի է մեծ ճշգրտությամբ լուծել մի քանի խնդիր: Նախ և առաջ՝ նպատակ ունենք պարզել վերոնշյալ *նահիեի* բնակավայրերը, դրանց տեղադրությունը: Մեծ կարևորություն ունի *նահիեի* ժողովրդագրական պատկերի, էթնիկ կազմի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրությունը:

Գյուղերն ու դրանց տեղադրության հարցը

1590 թ. օսմանյան հարկացուցակում Մավազի Խաթունը բաղկացած է եղել ութ գյուղից. դրանք էին Լուվբինը, Սուլթանբեկը, Աղխաչը, Օղբինը, Գորադիզը, Դիգինը, Իթղուանն ու Ալմալըքը: Ի հավելումն այդ բնակավայրերի՝ հիշյալ *նահիեում* արձանագրվել է երկու մագրա¹³ Այդաշն ու Ղըզըլջան: Ըստ հարկացուցակի քննության՝ դրանցից առաջինը պատկանել է Դիգինին, իսկ մյուսը՝ Օղբինին¹⁴:

Գյուղանունների վերհանման շնորհիվ կարելի է պարզել դրանց տեղադրությունն ու աշխարհագրական դիրքը: Այսպես, օրինակ՝ Սուլթանբեկը, որը հայտնի է Սուլթանբեզ, Սուլթանբեզ, Սուլթանբեյ, Սուլթանբայ, Սուլթան-

⁸ Ալիշան 1893, 488:

⁹ Ալիշան 1893, 488:

¹⁰ Գավառի տարածքն ընդգրկում է այժմյան Շահբուզի շրջանը, հմմտ. Այվազյան 2017, 23:

¹¹ Այվազյան 1995, 42:

¹² COA, 132-133.

¹³ Գյուղատնտեսական աշխատանքի ընդարձակ հողատարածք, որտեղ մարդիկ բնակություն չէին հաստատում: Ünal 1989, 92.

¹⁴ COA, 132-133.

բեգլո և այլ նույնանման անվանումներով, համապատասխանում է ներկայիս Բարձրունի գյուղին¹⁵, Աղխաչը՝ ներկայիս Արտավանին¹⁶:

Օղբինը, որը հանդիպում է Հողբին, Ողբեն, Ողբին, Օգբուն, Օղբի, Օղբուն, Օղպին, Օղպուն և համանման այլ տարբերակներով, գտնվել է ներկայիս Վայք քաղաքից 16 կմ հարավ-արևմուտք, այն է՝ Խնձորուտ գյուղից հյուսիս-արևմուտք, Նախիջևան գետի աջակողմյան Ճահուկ վտակի վերնագավառում: Այն ունեցել է բարձրադիր տեղանք¹⁷:

Գորադիզը հայտնի է նաև Հորադիս, Հորադիզ, Գերադիզ, Խոռադիզ, Ղորադիս, Քյոռադիս, Օրադիս և այլ անվանումներով, գտնվում էր Վայքից 12 կմ դեպի հարավ-արևելք, բարձրադիր տեղանքում: Գյուղը նույնացնում են պատմական Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառի Կորոտյունք, ոմանք՝ Ճահուկ գավառի Խոռատունիք¹⁸, իսկ մյուսներն էլ՝ Հողոցիմ գյուղերի հետ: 1970-ականներին ապաքնակեցվել է և միացվել՝ Զադիթափի անասնապահական և ծխախոտագործական պետական տնտեսությանը¹⁹: Ամենայն հավանականությամբ, գյուղը գտնվում էր ներկայիս Մարտիրոս բնակավայրից հյուսիս՝ Նախիջևանի սահմանի ուղղությամբ:

Դիգին գյուղը, որը շատ հաճախ հանդիպում է Դիգին-Ալմալու, Դիգին-Էլմասը անվանումներով, Նախիջևան գետի աջակողմյան վտակ Ճահուկի վերին հոսանքի աջ կողմում էր, Օղբին գյուղից շուրջ 4 կմ դեպի հարավ-արևելք: Գյուղը հաճախ հանդես է եկել որպես «Դիգին-Ալմալու» անվանումով, քանի որ մոտ էր Խնձորուտ՝ Ալմալու գյուղին²⁰:

Իթղռանը, որը մեծավ մասամբ հայտնի է Ամարաթ, Գյուլիստան, Իթղռան-Լեվիս անվանումներով, գտնվել է Վայքից 17 կմ հարավ-արևմուտքում՝ Ճահուկ գետի վերին հոսանքի ձախակողմյան վտակի ափին՝ Վայոց ձորի լեռների բարձրադիր լանջին: Խորհրդային Միության տարիներին գյուղի մոտով է անցել Վայք-Նախիջևան ճանապարհը: Իթղռանը, 1935 թ. վերանվանվելով Գյուլիստան, միավորվել է Խնձորուտի կոլտնտեսությանը²¹:

¹⁵ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 1998, 701-702:

¹⁶ Ղևոնդ Ալիշանը ենթադրաբար նույնացրել է պատմական Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառի Աղբերխաչ գյուղի հետ, հմմտ. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 1986, 179:

¹⁷ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 2001, 476:

¹⁸ Ալիշան 1893, 488:

¹⁹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 1991, 449:

²⁰ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 1988, 103:

²¹ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 1986, 910:

Ալմալըք կամ Ալմալու, Էլմալըք բնակավայրը համապատասխանում է ներկայիս Խնձորուտ գյուղին²²:

Վերոնշյալ հարկամատյանում, ըստ հերթականության, առաջինը արձանագրված Լուվբինի մասին տեղեկությունները խիստ սակավ են: Գյուղանունը հիշատակվում է «Սիսական» աշխատությունում, որտեղ հեղինակը գյուղը նույնացրել է Ճանիքենդի հետ: Նա, այդ բնակավայրը համարելով Մավազի Խաթունի շրջանի գյուղերից²³, գրում է. «զՃանիքենտ, որ և Լիւպին»²⁴: Կարծում ենք՝ Ալիշանի նշած այդ գյուղանունները նույնական են օսմանյան հարկացուցակում առկա Լուվբին բնակավայրի հետ: Այդ մասին է վկայում նաև Ճանիքենդի տեղադրությունը:

Ճանիքենդը, որը հայտնի է Ջանիքենդ, Ջանի, Ճանի, Ճանիքենտ, Ճանի, Լյուբին անվանումներով, գտնվել է Նախիջևան գետի ձախակողմյան ճահուկ վտակի ստորին հոսանքի ձախ կողմում, բարձրադիր վայրում²⁵: Բացի այդ, Ալիշանը, նկարագրելով Ճահուկը, նշում է նաև Ազնաբերդ լեռը²⁶, որի ձախ մասում և արևելքում ընկած էր ավերակ Ճան կամ Ճանի²⁷ գյուղը²⁸: Այդպիսով, Լուվբինը նույնպես գտնվել է ներկայիս Վայոց ձորի սահմանագլխին՝ Մավազի Խաթունի մյուս գյուղերի հարևանությամբ, սակայն, ամենայն հավանականությամբ, ներկայիս Նախիջևանի սահմաններում՝ Շահբուզի հյուսիսարևմտյան մասում:

Ժողովրդագրական պատկերն ու սոցիալ-տնտեսական վիճակը

1590 թ. դրությամբ՝ Մավազի Խաթունի ութ գյուղերից միայն Լուվբինն ու Սուլթանբեկն էին բնակեցված. մյուսները զուրկ էին բնակչությունից: Լուվբինում ապրել է 14, իսկ Սուլթանբեկում՝ 10 հարկատու: Հատկանշական է, որ դրանցից ոչ մեկում ամուրիներ չկային, և այդ փաստը վկայում է այն մասին, որ *նահիեում* բնակվել է ընդամենը 24 ընտանիք: Դատելով հարկատուների անձնանունների քննությունից՝ նրանք բոլորն էլ եղել են հայազգի²⁹:

²² Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 1986, 910:

²³ Ալիշան 1893, 480:

²⁴ Ալիշան 1893, 488:

²⁵ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 1998, 386:

²⁶ Կա նաև համանուն գյուղ: Այն հին հայկական գյուղերից է՝ փոխված Վայքի լեռնաշղթայի հարավային ստորոտում, Նախիջևան քաղաքից 32 կմ հյուսիս-արևմուտք, հմմտ. Այվազյան 2017, 266: Բնականաբար, Ազնաբերդ լեռը պետք է գտնվեր համանուն գյուղի շրջակայքում:

²⁷ Ճանիքենդ գյուղը, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 1998, 386-387:

²⁸ Ալիշան 1893, 889:

²⁹ Օսմանյան ընդարձակ հարկամատյաններում տեղի բնակչությունը բաժանվում էր մահմեդականների և ոչ մահմեդականների՝ անհավատների միջև: Սկզբում գրանցում էին մահմեդական,

Մավազի Խաթունի օսմանյան հարկացուցակի ուսումնասիրության շնորհիվ կարելի է ճշգրիտ պատկերացում կազմել տվյալ ժամանակահատվածում *նահիեի* սոցիալ-տնտեսական վիճակի մասին: Կարևոր է ոչ միայն հարկերի և դրանց անվանումների լուսաբանումը, այլև դրանց դիմաց սահմանված հարկադրույքների վերհանումը:

Օսմանյան իշխանությունները Լուվբին և Սուլթանբեկ գյուղերում տուրքեր են սահմանել իսփենջի³⁰, դյոնումի³¹, ցորենի, գարու, կորեկի, սիսեռի, ոսպի, քավերսի (")³², բամբակի, փեթակի, բանջարանոցի, խոտի, յաթաքի³³, ձմեռակացի, ոչխարների, դաշթիբանիի³⁴ և հողի թափուի³⁵, խարիջինի³⁶, բադիավայի³⁷ և հարսնության³⁸ հարկերի դիմաց³⁹: Նշենք, որ ընթացիկ հարկերի ճնշող մեծամասնությունը երկու գյուղում էլ եղել է:

Բացի դրանից, Մավազի Խաթունում ընդհանուր առմամբ արձանագրվել է նաև 5 ջրաղաց, որոնցից միայն մեկն է եղել բնակեցված գյուղերից մեկում. այն արձանագրվել է Սուլթանբեկում՝ պատկանելով տեղի բնակիչ-

այնուհետև այլ դավանանքի ներկայացուցիչներին: Վերջիններիս համար օսմանյան իշխանություններն օգտագործում էին «کیران» - «գյաբուան» եզրույթը:

³⁰ Օսմանյան իշխանությունները «իսփենջ» - «اسپنج»-ը գանձում էին քրիստոնյա արական սեռի հարկատուներից՝ հիմնականում անկախ սոցիալական կարգավիճակից: Այդ հարկը հանդիպում է օսմանյան ամենահին հարկամատյաններում: Իսփենջը որոշ տեղերում համարժեք էր մահմեդականներից գանձվող հողային հարկերից չիֆթին և բեննաքին, հմմտ. Ünal 1989, 132:

³¹ «Դյոնումը» - «رسم دونه»-ը հողային հարկերից է, որը վճարվում էր ըստ օսմանյան չափման միավորի՝ դյոնումի: 1 դյոնումը լայնությամբ և երկարությամբ 40 քայլ է կազմել, հմմտ. Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում 1964, 131:

³² Դեռևս չենք պարզել այդ հարկի նշանակությունը:

³³ «Յաթաքի հարկը» - «رسم ياقاق» գանձվել է այն դեպքում, երբ անասունների հոտը կարող էր արածել մեկ այլ սեփականատիրոջ տարածքում: Այն կգանձվեր, եթե հոտը մնար օտար տարածքում երեք օրից ավելի, հմմտ. Çağatay 1947, 510:

³⁴ Այն ենթադրել է դաշտապահության հարկ: Որպես տուգանք, գանձվում էր այն ժամանակ, երբ գյուղացու անասունը մտնում էր որևէ այլ տարածք և վնաս պատճառում, հմմտ. Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում 1964, 130, Ünal 1999, 129:

³⁵ Հողային հարկի տեսակներից էր, որը ֆեոդալին վճարվում էր մեկ անգամ: Սովորաբար օսմանյան հարկամատյաններում այն արձանագրել են դաշտապահության հարկի հետ միասին, հմմտ. Turan 2012, 105-106:

³⁶ «Խարիջինի տուրքը» - «رسم خراجین»-ը բնորոշել է հարկացուցակների գրանցման ժամանակ պաշտոնյաների աչքից վրիպած կամ ի հայտ եկող ավելացումները, որոնք չեն արձանագրվել հարկամատյաններում: Այս հարկը կիրառվել է ինչպես հողատարածքների, այնպես էլ բնակիչների պարագայում, հմմտ. İncalcik 1987, 25:

³⁷ Ֆեոդալի օգտին գանձվող տուգանքների և հարկի ընդհանուր անվանումն է, հմմտ. Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում, 129:

³⁸ Երիտասարդ աղջկա կամ այրի կնոջ ամուսնության հարկ, որը տրվում էր ֆեոդալին: Երիտասարդ աղջկա ամուսնության պարագայում սովորաբար վճարվում էր 60 արքե այն ֆեոդալին, որի իրավասության տակ էր գտնվում: Իսկ այրի կնոջ դեպքում վճարվում էր 30 արքե այն ֆեոդալին, որին պատկանող տիրույթ էր հարս գնում նա, հմմտ. Ünal 1989, 150:

³⁹ COA, 132.

ներից Ղազարի որդի Թարխանին⁴⁰: Չորս ջրաղացներից երկուսը գտնվել են Իթռղան գյուղում, իսկ մյուսը երկուսը՝ Էլմալըքում: Ընդ որում՝ Էլմալըքի ջրացաղներից մեկը չի գործել: Հատկանշական է, որ օսմանյան հարկացուցակում առկա հիշատակությունների համաձայն՝ չբնակեցված գյուղերի բոլոր ջրաղացները պատկանել են ոմն Քավադ Չավուշի⁴¹:

Մավազի Խաթունի հարկերի ուսումնասիրությունից երևում է, որ բնակեցված գյուղերի տնտեսության զարգացման համար առանցքային դեր է ունեցել ցորենի մշակությունը: Երկու գյուղում էլ ցորենի մշակության դիմաց արձանագրվել է ամենաբարձր դրույքաչափը: Այսպես, օրինակ՝ Լուվբինում օսմանյան իշխանությունները 600 *քիլե*⁴² ցորեն բերքի դիմաց սահմանել են 4800 *աքչե*⁴³, իսկ Սուլթանբեկում ցորենի մշակությունը կազմել է փոքր-ինչ պակաս՝ 500 *քիլե*, և դրա դիմաց արձանագրվել է 4000 *աքչե*: Հիմք ընդունելով օսմանյան կշռի միավորը և կարևորելով քիլե-կիլոգրամ համադրությունը՝ կարող ենք նշել, որ Լուվբինում 1590 թ. տարեկան մշակվել է շուրջ 15,394 կգ ցորեն, իսկ Սուլթանբեկում՝ 12,830 կգ:

Սուլթանբեկում ցորենի տարածվածությանը մի փոքր զիջում էր գարու մշակությանը: Այնտեղ 400 *քիլե*ի դիմաց 2400 *աքչե* էր սահմանված, իսկ Լուվբինում գյուղացիները մշակում էին ընդամենը 100 *քիլե*, որից պետք է գանձվեր 600 *աքչե*: Այսինքն, Սուլթանբեկում մշակվել է շուրջ 10,262, իսկ Լուվբինում՝ մոտավորապես 2,565 կգ ցորեն: Մյուս բոլոր մշակաբույսերը՝ հատկապես ոսպը, սիսեռը, կորեկը, աչքի չեն ընկել մեծ տարածվածությամբ, հետևաբար նրանց դիմաց սահմանված դրույքաչափերն էլ բարձր չէին: Այսպես, օրինակ, Լուվբինում 5 *քիլե* ոսպից գանձել են 40 *աքչե*, 20 *քիլե* կորեկից՝ 120 *աքչե*, իսկ երկու գյուղերում 10 *քիլե* սիսեռից՝ 80 *աքչե*⁴⁴: Ենթադրաբար՝ դրանց դեպքում նույնպես կիրառվել է կշռի չափման տրամաբանությունը, ինչպես, օրինակ, ցորենի պարագայում:

Լուվբին և Սուլթանբեկ գյուղերում որոշ հարկեր, ըստ մեկական *քիլե*ի, ունեցել են հստակ սահմանված արժեքներ: Հարկացուցակի քննությունից պարզ է դառնում, որ ցորենի, ոսպի, սիսեռի յուրաքանչյուր *քիլե* հավասար

⁴⁰ COA, 132.

⁴¹ COA, 133.

⁴² Կշռի չափման միավոր, Օսմանյան կայսրությունում այն հիմնականում հաշվվել է ըստ «Ստամբուլի քիլե»-ի: Յուրանքանչյուր քիլե հավասար է եղել 25,656 կգ-ի, հմմտ. Ünal 1989, 101, 102, Hinz 1990, 51:

⁴³ Օսմանյան դրամական միավոր: Աքչեն հավասար էր մեկ քառորդ դիրհեմ արծաթի, իսկ դիրհեմը կազմում էր 3,06 գրամ, հմմտ. Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում 1964, 128:

⁴⁴ COA, 132.

է եղել 8, այնինչ գարու, կորեկի մեկական *քիլեն*՝ 6 *աքչեի*: Այդ տվյալները համեմատելով 1590 թ. Նախիջևան վարչաքաղաքական միավորին պատկանող Դարաշամբի օսմանյան հարկացուցակի հետ՝ ականատես կլինենք օսմանյան իշխանությունների սահմանած հարկային նույն օրինաչափությանը⁴⁵:

Ուշագրավ է, որ Լուվբին գյուղի տնտեսության մեջ, ցորենի մշակությունից զատ, առանցքային նշանակություն է ունեցել նաև ոչխարաբուծությունը: Կենտրոնական իշխանությունները ոչխարների հարկից գանձել են 1200, այնինչ Սուլթանբեկում՝ 150 *աքչե* հարկաչափ: Ըստ Երևանի վիլայեթի քանոնամեի (օրինամատյան)՝ Բարձր Դուռը ամեն երկու ոչխարի դիմաց, ներառյալ գառները, սահմանել էր մեկական *աքչե*⁴⁶: Նշանակում է՝ հիշյալ ժամանաշրջանում Լուվբինում շուրջ 2400 ոչխար ու գառ կար, իսկ Սուլթանբեկում՝ ընդամենը՝ 300:

Հարկացուցակի ուսումնասիրության համատեքստում ուշագրավ է նաև ընդհանուր հարկադրույքների քննությունը: Չնայած այն փաստին, որ 1590 թ. Մավազի Խաթունում միայն Լուվբինն ու Սուլթանբեկն էին բնակեցված, սակայն այդ գյուղերից սահմանված տուրքերի գումարը այնքան էլ բարձր չէր. այն երկու բնակավայրերի դեպքում էլ կազմել է 10,000-ական *աքչե*: Մավազի Խաթունում, բացի Աղխաչից, մյուս բոլոր գյուղերի դիմաց արձանագրված հարկաչափերը էականորեն բարձր էին՝ տատանվելով 20,000-ից 39,666 *աքչեի* սահմաններում: Ամենաբարձր դրույքաչափը արձանագրվել է Էլմալըք՝ Խնձորուտ գյուղի դիմաց, իսկ ամենաքիչը՝ Աղխաչում՝ կազմելով ընդամենը 6,000 *աքչե*⁴⁷:

Գյուղերի համար նախատեսված բարձր հարկադրույքի գոյությունն ու մինչև նույն ժամանակ դրանցում բնակչության բացակայությունը թերևս տվյալ բնակավայրի սոցիալ-տնտեսական ներուժի արտահայտումն էին: Ամենայն հավանականությամբ, գյուղերը ունեցել են կենսագործունեության համար անհրաժեշտ սոցիալական պայմաններ, սակայն զուրկ են եղել բնակչությունից:

Նույն ժամանակահատվածում Դարաշամբի երեք գյուղերի ընդհանուր հարկաչափերը տատանվել են 20,000-ից 25,000-ի սահմաններում⁴⁸. չնա-

⁴⁵ Միրզաբեկյան 2021, 30:

⁴⁶ COA, 7.

⁴⁷ COA, 132-133.

⁴⁸ Միրզաբեկյան 2021, 31-35:

յաճ դրանք ունեցել են ավելի զարգացած սոցիալական վիճակ, քան Լուվբինն ու Սուլթանբեկը, սակայն իրենց ներուժով էապես զիջել են Մավազի Խաթունի մյուս գյուղերին:

Խնդրո առարկա *նահիե*ում հանդիպում ենք ևս մի ուշագրավ իրողության: Չնայած Լուվբինի ընդհանուր հարկաչափը արձանագրվել է 10,000 *աչքե*, սակայն հարկերի առանձին դրույքաչափերի ուսումնասիրությունը հուշում է անճշտության մասին: Այսպես, օրինակ, Լուվբինի հարկաչափերի գումարը իրականում կազմում է ոչ թե 10,000, այլ 10530 *աչքե*: Այդպիսով, կենտրոնական իշխանությունները շուրջ 530 *աչքե* ավել գումար են արձանագրել: Ուշագրավ է, որ նույնը չի կարելի ասել Սուլթանբեկի մասին, որտեղ հարկադրույքի ընդհանուր չափն ու առանձին հարկաչափերի գումարը նույնական են⁴⁹:

Եզրակացություններ

1590 թ. Երևանի վիլայեթի օսմանյան հարկամատյանում Մավազի Խաթունը Նախիջևան վարչաքաղաքական միավորի մաս է կազմել: Այն, ունենալով գյուղախմբի՝ *նահիե*ի կարգավիճակ, աչքի չի ընկել մեծ թվով գյուղերով և հոժ բնակչությամբ: Ութ գյուղերից միայն երկուսում էին ընտանիքներ բնակվում, որոնք Մավազի Խաթունում 24-ն էին: Անձնանունների քննությունից երևում է, որ նրանք հայազգի էին:

Օսմանյան հարկացուցակում Մավազի Խաթունի գյուղանունների և դրանց տեղադրության ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ պատմական Ճահուկ գավառի գյուղերի ճնշող մեծամասնությունը գտնվել է ներկայիս Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի հարավային մասում՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը սահմանակից շրջաններում:

Մավազի Խաթունի տնտեսության շարժիչ ուժը ցորենի մշակությունն էր, որի դիմաց օսմանյան իշխանությունները արձանագրել էին ամենաբարձր դրույքաչափը. մյուս բոլոր հացահատիկային տեսակների մշակությունը էապես զիջում էր դրան: Ուշագրավ է, որ գյուղախմբի չբնակեցված գյուղերի մեծ մասը տնտեսական ներուժով էապես գերազանցում էր Լուվբինին և Սուլթանբեկին. այդ մասին են սահմանված հարկադրույքները:

Կարծում ենք՝ Մավազի Խաթունի 1590 թ. օսմանյան հարկացուցակի քննությունը ոչ միայն կնպաստի Նախիջևան գավառի, այլև ամբողջ Արևելյան Հայաստանի պատմության սակավ հետազոտված էջերի լուսաբան-

⁴⁹ COA, 132.

մանը: Ստորև ներկայացնում ենք Մավազի Խաթուն նահիեի օսմաներեն ընագրի հայերեն թարգմանությունը՝ հնարավորին չափ ճշգրիտ ներկայացնելով օսմաներենի հնչյունական պատկերը:

1590 թ. Մավազի Խաթունի օսմանյան հարկացուցակը

Մավազի Խաթուն նահիե, Գյուլ Լուվրին, պատկանում է հիշյալին⁵⁰

1. Բաբաջան՝ որդի Ավաքի
2. Մարգարե՝ որդի Օնիքի
3. Միրզա՝ որդի Ոսքանի
4. Շահնազար՝ որդի՝ Խաչադուրի
5. Բարքար (՝)⁵¹
6. Սարքիս՝ որդի Ավանեսի
7. Քարափեթ⁵²
8. Մարքոս՝ որդի Ավանեսի
9. Սարքիս՝ որդի Մարդիրոսի
10. Սարքիս՝ որդի Խաչադուրի
11. Ջանարմիր՝ որդի Մանուքի
12. Ավան՝ որդի Բաբայի
13. Քեշիշ՝ որդի Գիրաքոսի
14. Աղազար քեշիշ⁵³՝ որդի Սամվելի

Հասույթ՝ 10,000

Իսփենջ 14 տնից՝ 350

Դյունումի հարկը՝ 500

Յորեն 600 քիլե՝ 4800

Գարի 100 քիլե՝ 600

Կորեկ 20 քիլե՝ 120

Սիսեռ 10 քիլե՝ 80

Ոսպ 5 քիլե՝ 40

Բամբակ՝ 10 մանն՝ 960

Փեթակի հարկը՝ 30

Բանջարանցի հարկը՝ 40

Խոտի հարկը՝ 150

Յաթաքի հարկը՝ 150

Ձմեռակացի հարկը՝ 100

Ոչխարների հարկը՝ 1200

Դաշտպահության և հողի հարկը՝ 1160

Տվյալ գյուղում խարեջինի հարկը՝ 160

Բադիավայիև հարսնության հարկը՝ 90

⁵⁰ Նկատի է առնվում Մավազի Խաթուն նահիեն:

⁵¹ Միայն անունն է հիշատակված:

⁵² Միայն անունն է հիշատակված:

⁵³ «Քեշիշ» թարգմանաբար նշանակում է քահանա: Այն օգտագործվել է նաև որպես հատուկ անուն: Այս դեպքում գործ ունենք հենց «քահանա» եզրույթի հետ: COA, 132.

Գյուղ Սուլթանբեկ, պատկանում է Մավազի Խաթունին

1. Աղամիրի՝ որդի Թաթուի (")
2. Ստեփանոս՝ նրա եղբայրը
3. Նադիր(")՝ որդի Աղայի
4. Խոջիք՝ նրա որդին
5. Միրբուդադ՝ որդի Սուլթանբեկի
6. Մարդիրոս՝ նրա եղբայրը
7. Թարխան՝ որդի Ղազարի
8. Քուրջիք (")՝ նրա որդին
9. Դիբգար՝ որդի Սուլթանբեկի
10. Ուլի՝ որդի Ղարաջայի

Հասույթ՝ 10,000

Իսփենջ 10 տնից՝ 250

Ցորեն 500 քիլե՝ 4000

Գարի 400 քիլե՝ 2400

Քավերս՝ 300 քիլե՝ 1800

Սիսեռ 10 քիլե՝ 80

Բամբակ՝ 5 մանն՝ 480

Փեթակի հարկը՝ 80

Բանջարանոցի հարկը՝ 90

Խոտի հարկը՝ 150

Յաթաքի հարկը՝ 100

Ձմեռակացի հարկը՝ 100

Ոչխարների հարկը՝ 150

Դաշտպահության և հողի հարկը՝ 100

Խարեջինի հարկը՝ 100

Բադիավայի և հարսնության հարկերը՝ 100

Թարխանի ջրաղացը, մեկ հատ՝ 20

Գյուղ Աղխաչ, պատկանում է Մավազի Խաթունին, հասույթ՝ 6000

Գյուղ Օղբին, պատկանում է Մավազի Խաթունին, հասույթ՝ 28,000

Գյուղ Գորարդիզ, պատկանում է Մավազի Խաթունին, հասույթ՝ 36,900

Գյուղ Դիգին, պատկանում է Մավազի Խաթունին, մազրա Այթաշ պատկանում է հիշյալ գյուղին, հասույթ՝ 20,000

Գյուղ Իթղոան, պատկանում է Մավազի Խաթունին, հասույթ՝ 35,000

Գյուղ Էլմալըք, պատկանում է Մավազի Խաթունին

1 չգործող ջրաղաց, որը պատկանում է Քավադ Չավուշին

1 ջրաղաց, որը պատկանում է Քավադ Չավուշին

Հասույթ՝ 39,666

Ղզըլջա մազրա, պատկանում է Օղբին գյուղին հասույթ

Գրականություն

- Ալիշան Հ. Ղետնդեաց Մ. 1893, Սիսական, Տեղագրութիին Սիինեաց Աշխարհի, Մ. Մխիթարեան, Վենետիկ, Ի Մխիթարայ Վանս, Ի.Ս. Ղազար, 562 էջ:
- Այվազյան Ա. 1995, Նախիջևան պատկերազարդ բնաշխարհիկ հանրագիտակ, Երևան, «Հուշարձան», «Գիտություն», 367 էջ:
- Այվազյան Ա. 2017, Նախիջևան պատկերազարդ բնաշխարհիկ հանրագիտակ, երկրորդ բարեփոխված և լրամշակված հրատարակություն, Երևան, հեղինակային հրատ., 471 էջ:
- Զուլպյան Մ.Կ. 1980, Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 425:
- Հակոբյան Թ.Խ, Մելիք-Բախշյան Ս.Ս., Բարսեղյան Հ.Խ. 1986, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ:
- Հակոբյան Թ.Խ, Մելիք-Բախշյան Ս.Ս., Բարսեղյան Հ.Խ. 1988, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ:
- Հակոբյան Թ.Խ, Մելիք-Բախշյան Ս.Ս., Բարսեղյան Հ.Խ. 1991, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ:
- Հակոբյան Թ.Խ, Մելիք-Բախշյան Ս.Ս., Բարսեղյան Հ.Խ. 1998, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, ԵՊՀ հրատ., 804 էջ:
- Հակոբյան Թ.Խ, Մելիք-Բախշյան Ս.Ս., Բարսեղյան Հ.Խ. 2001, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 5, Երևան, ԵՊՀ հրատ., 916 էջ:
- Միրզաբեկյան Գ. 2021, Դարաշամբի 1590 թ. օսմանյան հարկացուցակը, Բանբեր Մատենադարանի, N 32, Երևան, էջ 27-37:
- Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (XVI-XVII դդ. կանոննամեներ) 1964, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Խ. Սաֆրաստյանի և Մ.Կ. Զուլպյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 138 էջ:
- T.C. Cumhurbaşkanlığı Devlet Arşivleri Başkanlığı Osmanlı Arşivi Külliyesi (այսուհետև՝ COA) 1590, TT, 0633, s. 394.
- Çağatay N. 1947, Osmanlı İmparatorluğunda Reayadan Alınan Vergi ve Resimler, cilt 5, sayı 5, Ankara, Ankara Dil Tarih Coğrafya Fakültesi Dergisi, s. 483-511.
- İnalçık H. 1987, Hicrî 835 tarihli sûret-i defter-i sancak-i Arvanid, 2. Baskı, Ankara, Türk Tarih Kurumu Basımevi, s. 158.
- Hinz W. 1990, İslam'da Ölçü Sistemleri, çeviren: Sevim A., İstanbul, Edebiyet Fakültesi Basımevi, s. 82.
- Ünal M.A. 1989, XVI. Yüzyılda Harput Sancağı (1518-1566), Ankara, Türk Tarih Kurumu Basımevi, 158 s.
- Ünal M.A. 1999, XVI. Yüzyılda Çemişgezek Sancağı, Ankara, Türk Tarih Kurumu Basımevi, 276 319 s.
- Turan A.N. 2012, XVI. Yüzyılda Ruha (Urfa) Sancağı, Ankara, Türk Tarih Kurumu Basımevi, 309 s.

ՄԱՎԱԶԻ ԽԱԹՈՒՆԻ 1590 Թ. ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿԸ

Գեորգի Միրզաբեկյան

Ամփոփում

Մավազի Խաթունը 1590 թ. Երևանի վիլայեթի օսմանյան ընդարձակ հարկամատյանում Նախիջևան վարչաքաղաքական միավորի մաս է կազմել և ունեցել է

նահիեի կարգավիճակ: Նրա մեջ են մտել ընդհանուր 8 գյուղ, որոնց տեղադրություններն ու աշխարհագրական դիրքը համապատասխանում է ներկայիս Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի հարավային մասին՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը սահմանակից շրջաններին: Հարկամատյանում բնակչությանը աչքի է ընկել միայն երկու գյուղ՝ Լուվբինն ու Սուլթանբեկը (Բարձրունի), որի բնակիչները բացառապես հայեր էին՝ կազմելով 24 ընտանիք:

Մավազի Խաթունի օսմանյան հարկացուցակի ուսումնասիրության շնորհիվ կարելի է պատկերացում կազմել գյուղերի սոցիալ-տնտեսական վիճակի մասին: Սկզբնաղբյուրի համաձայն՝ Մավազի Խաթունի գյուղերում բնակչությունը մեծ մասամբ զբաղվում էր գյուղատնտեսությամբ, որի գործում նշանակալի էր ցորենի մշակության դերը: Լուվբինն ու Սուլթանբեկն ունեին տնտեսական նույն ներուժը: Այն գրեթե նույնական էր 1590 թ. Դարաշամբին, որն իր հերթին Նախիջևանի մաս էր կազմում:

Բանալի բառեր՝ Օսմանյան հարկամատյան, Օսմանյան կայսրություն, Արևելյան Հայաստան, Երևանի վիլայեթ, Մավազի Խաթուն, Նախիջևան, ցորեն:

ОСМАНСКИЙ ПОДАТНЫЙ РЕЕСТР МАВАЗИ ХАТУНА 1590 Г.

Георгий Мирзабекян

Резюме

В Османском подробном податном реестре Ереванского вилайета 1590 г. Мавази Хатун входил в состав административно-политической единицы Нахиджевана и выступал в качестве *Нахие*. В составе Мавази Хатуна было 8 сел, географическое расположение которых соответствует нынешней южной части Вайоц Дзора, граничащей с Нахиджеванской автономной республикой. В подробном реестре по своему населению выделяются только два села: Лувбин и Султанбек (Бардзруни), где жили только армяне - всего 24 семьи.

Благодаря османскому податному реестру Мавази Хатуна можно составить представление о социально-экономическом положении сел. Согласно первоисточнику, в 1590 г. население этих сел в основном занималось сельским хозяйством. Лувбин и Султанбек обладали одинаковым экономическим потенциалом, идентичным с Дарашамбским регионом в 1590 г., который в свою очередь входил в состав Нахиджевана.

Ключевые слова – Османский налоговый реестр, Османская империя, Восточная Армения, Ереванский вилайет, Мавази Хатун, Нахиджеван, пшеница.

THE OTTOMAN TAX REGISTER OF MAVAZI KHATUN 1590

Georgi Mirzabekyan

Abstract

Mavazi Khatun was a part of administrative unit of Nakhijevan in the Extended Ottoman Tax Register of Yerevan Vilayet 1590 and had the status of Nahiye. In 1590 Mavazi Khatun consisted of eight villages, the location and geographical areas of which corresponds to the current southern part of Vayots Dzor, which borders to the Nakhichevan Autonomous Republic. According to the Ottoman Tax Register, only two villages were inhabited: Luvbin and Sultanbek (Bardzruni), population of which was exclusively Armenian and it consisted of 24 families.

Owing to the study of the Extanted Ottoman Tax Registerit is possible to find out the socio-economic condition of the villages. According to the primary source, in 1590 the inhabitants were mainly engaged in agriculture, mostly producing wheat. Luvbin and Sultanbek had the same economic potential. It was almost identical to Darashamb region of 1590, which was also a part of Nakhijevan.

Key words – Ottoman tax register, the Ottoman Empire, Eastern Armenia, Yerevan Vilayet, Mavazi Khatun, Nakhijevan, wheat.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԻՏՂՈՍԱԿԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ «ԱԴՐԲԵՋԱՆՅԻ» ԱՆՎԱՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Անուշ Հարությունյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ

ՀՀ, Երևան, Մարշալ Բաղդամյան 24/4

Էլ. հասցե՝ anushharutyunyan97@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 06.01.2022, գրախոսվել է 07.01.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.3-122

Ներածություն

ԽՍՀՄ փլուզումն ակտիվացրեց միջէթնիկ հակամարտությունների մի ողջ համախումբ, որը տարիներ շարունակ լռեցրել կամ փորձել էր լռեցնել խորհրդային կենտրոնական իշխանությունը: Գաղտնիք չէ, որ խորհրդային իշխանության ազգային քաղաքականությունը երկակի ազդեցություն ունեցավ ԽՍՀՄ-ի մաս կազմող ժողովուրդների ինքնության որոշարկման վրա՝ այն առումով, որ, մի կողմից, դատապարտվում էին ազգայինի դրսևորումները՝ «ազգայնականության» պիտակավորմամբ, հիմնականում այն ժողովուրդների շրջանում, որոնք ունեին վաղուց ի վեր ձևավորված հստակ ազգային ինքնություն, մյուս կողմից՝ քայլեր էին արվում ձևավորելու, արագացնելու կամ առհասարակ ստեղծելու ազգային ինքնություն այն հանրույթների շրջանում, որոնց էթնիկ գիտակցումը թերի էր, անհստակ կամ չէր համապատասխանում ԽՍՀՄ-ի ներքին և արտաքին առաջնահերթություններին: Այս համատեքստում քննարկման ուշագրավ առարկա է Ադրբեջանական ԽՍՀ բնակչության տեսակարար հատվածը կազմող թյուրքալեզու մահմեդականների ինքնության և էթնանվան հարցի շուրջ տեղի ունեցած զարգացումների խնդիրը 1920-1930-ական թթ.:

Էթնանվան գոյությունը սերտորեն կապված է տվյալ հանրույթի կամ ժողովրդի էթնոհամախմբման աստիճանի արտահայտման հետ: Ոլորտի հետազոտողները գրեթե միակարծիք են էթնոնիմի՝ էթնոհամախմբման գործընթացում մեծ դեր ունենալու հարցում: Ակադ. Յու. Բրոմլեյը գրում է, որ «էթնոսի անդամների սեփական խմբային միասնության գիտակցումն ընդունված է անվանել էթնիկ ինքնագիտակցություն, որն արտաքնապես արտահայտվում է էթնոնիմի միջոցով»¹: Իսկ ամերիկացի հետազոտող Է. Սմիթի մեկնաբանմամբ՝ «...առանձին էթնիկ ինքնության ընկալումը սկսվում է

¹ Бромлей 1983, 56.

այն ժամանակ, երբ բնակչությանը տրվում է կոլեկտիվ սեփական անուն (ինքնանուն), որն ընդգծում է նրա առանձին հատվածների միասնականությունը, և այն ժամանակ միայն, երբ այդ անունն ընդունվում է հանրային բոլոր անդամների կողմից, որոնք գիտակցում են իրենց յուրահատկությունը»²: Սեփական յուրահատկության գիտակցման գործընթացն Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու մահմեդականների շրջանում սկսվել էր քննարկվող ժամանակահատվածից մի փոքր վաղ, սակայն վերջնական էթնանվան հաստատումը տեղի ունեցավ ոչ այնքան որպես էթնոհամախմբման բնականոն գործընթացի ավարտ, որքան իբրև խորհրդային ազգային քաղաքականության, արտաքին և ներքին առաջնահերթությունների համադրման հետևանք:

Նախախորհրդային շրջանի էթնիկ խմորումները

Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու մահմեդական բնակչությունը մինչև խորհրդային իշխանության հաստատումն անցել էր ինքնության խմորումների որոշակի փուլերով, որոնց հետևանքով թեև տեղի էր ունեցել որոշակի էթնոհամախմբում, սակայն գործընթացը դեռ անավարտ էր, որը հստակ արտահայտվում է և՛ ընդհանրական ինքնանվան (էնդոէթնոնիմի) բացակայության, և՛ մյուս ժողովուրդների կողմից տրված անվան (էքզոէթնոնիմի) անհստակության մեջ:

XIX դարում երկրամասի թյուրքախոսների մեջ, որպես ընդհանրական ինքնանվանում, տարածված էր «մահմեդական» եզրույթը, որը դեռ նոր ընթացող էթնոհամախմբման և միասնական էթնանվան բացակայության պայմաններում առաջնային դիրք էր մղում կրոնական ինքնությունը³: XIX դ. երկրորդ կեսին աստիճանաբար ձևավորվեց մահմեդական մտավորականությունը, որն արմատավորեց գրավոր թյուրքալեզվությունը՝ շնորհիվ թյուրքալեզու գրականության և մամուլի: Թյուրքականության արմատավորումը խրախուսում էր նաև ցարական Ռուսաստանը, որպեսզի խզի երկրամասի պատմական, մշակութային կապն Իրանի հետ: Հենց թյուրքալեզու մամուլի էջերում են առաջին անգամ շոշափվում էթնիկ ինքնության գիտակցման թուլության և ինքնանվան բացակայության հարցերը⁴: Օսմանյան կայսրությունում տարածված պանթյուրքիզմի գաղափարը և դրա իրա-

² Smith 2009, 46.

³ Գալստյան 2017, 42:

⁴ Aşirli 2009, 37-38. Հմմտ. Swietochowski 1985, 32:

գործմանն ուղղված քայլերն էլ ավելի լայն թափ հաղորդեցին թյուրքականությանը: Նման զարգացումները պարարտ հող նախապատրաստեցին Առաջին աշխարհամարտի հայտնի պայմաններում թյուրքական զորքի անմիջական մասնակցությամբ 1918 թ. ադրբեջանական պետության ստեղծման համար: Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության գոյության կարճատև շրջանում թյուրքալեզու բնակչությունն անվանվեց «թուրք», մերժվեց «թաթար» անվանումը: Այս մասին թուրք պատմաբան Ն. Նեսիբլին գրում է. ««Թուրք» բառը որպես էթնանուն առաջին անգամ (նույնիսկ Թուրքիայից առաջ) դարձավ պաշտոնական: Ազգային կրթական համակարգ ներդնելու փորձ կատարվեց, նախաձեռնվեց ազգային մշակույթի զարգացումը, այսինքն՝ ազգային գաղափարախոսությունն իրագործելու ուղղությամբ պատմական քայլեր ձեռնարկվեցին: Ցավոք, այս ընթացքը տևեց 23 ամիս, և «ավանդաբար թրքության ու իսլամի թշնամի Ռուսաստանը» 1920 թ. ապրիլին՝ այս անգամ կոմունիստ անունով, նվաճեց Հյուսիսային Ադրբեջանը»⁵: Սակայն բնակչության էթնիկ նույնականացումը դեռևս մեծ մասամբ կրոնական աստիճանի վրա էր: XIX դ. ռուսական բոլոր պետական վավերագրերում Արևելյան Այսրկովկասի թյուրքալեզու մահմեդականներն անվանվում են «թաթար», «կովկասյան թաթար», «ադրբեջանական թաթար»⁶՝ վերջիններիս Ղրիմի թաթարներից տարոտոշելու համար⁷: Սա ռուսերենում մահմեդական թյուրքալեզուներին տրվող «թաթար» բառի ընդհանրական կիրառման արտահայտությունն էր⁸: Խորհրդային առաջին տարիների վավերագրերում շարունակում էր կիրառվել «թուրք» անվանումը: «Ադրբեջանցի» էթնանունը բացակայում էր նաև 1926 թ. դեկտեմբերին տեղի ունեցած առաջին համամիութենական մարդահամարի ժամանակ⁹:

Ադրբեջանի խորհրդայնացմամբ, ապա ԽՍՀՄ-ի ստեղծմամբ սկսվեց Արևելյան Այսրկովկասի մահմեդականների ինքնության տատանումների մի ողջ շրջափուլ, որն այդուհետև ուղեկցվելու էր ԽՍՀՄ-ի արտաքին և ներքին քաղաքականության ուղեգծին համահունչ: Հենց խորհրդային իշխանության շրջանում էր, որ Ադրբեջանական Խորհրդային Հանրապետության տիտղո-

⁵ Nesibli 2001, 143.

⁶ Նման պարագայում, «ադրբեջանական» ասելով, նկատի է առնվում աշխարհագրական միավորը, այն էլ սխալմամբ, բայց ոչ Ադրբեջան պետությունը:

⁷ Вейденбаумъ 1888, 120.

⁸ Yilmaz 2013, 513.

⁹ Համամիութենական մարդահամար 1926 թ. 1930, 3:

սակիր ժողովրդի¹⁰ նկատմամբ պետականորեն կիրառվեց «ադրբեջանցի» անվանումը՝ իր ողջ անհատականությամբ և հետագա հիմնավորման անհրաժեշտությամբ: Այդ ժողովրդի էթնոնիմի խնդիրը «լուծվեց» խորհրդային իշխանության հաստատումից ավելի քան մեկուկես տասնամյակ անց: Այդպիսի հանգուցալուծումը պետք է դիտարկել որպես ԽՍՀՄ-ի ներքին՝ գաղափարախոսական և արտաքին աշխարհում, մասնավորապես Թուրքիայում և Իրանում ընթացող զարգացումների համադրման արդյունք¹¹:

ԽՍՀՄ ազգային քաղաքականությունը 1920-1930-ական թթ.

Թեև ազգայնականությունը խստորեն դատապարտվում էր ԽՍՀՄ-ում, սակայն որոշ դեպքերում պետական քաղաքականությունն ուղղված էր «հանրապետության ներսում տիտղոսակիր էթնոսի համախմբմանը և նրա դիրքերի ամրապնդմանը»¹²: ԽՍՀՄ ազգային քաղաքականության սկզբունքը էթնոտարածքային էր, այսինքն՝ յուրաքանչյուր վարչական միավորի սահմանները պետք է համապատասխանեին տվյալ էթնոսի տարածման սահմաններին: Թեև գործնականում բազմաթիվ են օրինակները, երբ վերոնշյալ սկզբունքը խախտվել է տարածքային վեճերը «լուծելիս»: Յուրաքանչյուր միութենական հանրապետություն կապվում էր մի որոշակի էթնիկ հանրության՝ այսպես կոչված, «տիտղոսային» էթնոսի հետ: Սա ուղիղ ձևով նպաստեց որոշ շրջաններում, հատկապես Խորհրդային Ադրբեջանում, էթնիկ ինքնության զարգացմանը, քանի որ խորհրդային կենտրոնական իշխանություններն Այսրկովկասի երեք խորհրդային պետություններից կարևորություն էին վերագրում առանձնապես Ադրբեջանին¹³, որտեղից սոցիալիստական հեղափոխությունն իբրև թե պետք է տարածվեր Արևելքում՝ Իրանում և Թուրքիայում: Ադրբեջանն Արևելքում կատարում էր նույն դերը, ինչն Արևմուտքում վերապահված էր Ուկրաինային: Սա հստակ տեսանելի է 1923 թ. ՌԿ(բ)Կ XII համագումարում ազգությունների վերաբերյալ Ստալինի զեկուցման մեջ. «Մեր Միությանը ողջ Արևելքը նայում է որպես փորձադաշտի: Մենք այս միության շրջանակում ճիշտ կլուծենք ազգային հարցը դրա գործնական

¹⁰ «Տիտղոսակիր ժողովուրդ» եզրույթը գիտական շրջանառության մեջ է մտել XIX դ.՝ փոխարինելով «բնիկ ժողովուրդ» եզրույթին պետության կամ պետական միավորի բնակչության գերիշխող մասին բնութագրելու համար: Սովորաբար ընդունված է «տիտղոսակիր» համարել պետության բնակչության այն մասը, որը կազմում է մեծամասնություն, և որից ծագում է պետության անվանումը:

¹¹ Yilmaz 2013, 513.

¹² Հոլյան 2007, 26:

¹³ Smith 1999, 63.

ներդրմամբ, մենք այստեղ, այս Միության շրջանակում իրական եղբայրական հարաբերություններ կկառուցենք ազգերի միջև»¹⁴: Կոմունիստական կուսակցության առջև խնդիր էր դրված կարճ ժամկետներում Ադրբեջանը վերածել «իմպերիալիզմի ճիրաններից ազատագրման դրոշակակրի» և որպես դրական մոդել ծառայեցնել արևելյան ժողովուրդների համար¹⁵: Բացի այդ, Խորհրդային Ադրբեջանի նման կարգավիճակը խորհրդային կենտրոնական իշխանության կողմից օգտագործվում էր ընդդեմ Արևմուտքի՝ մասնավորապես Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի, որոնք ունեին Միջին Արևելքից մինչև Հնդկաստան ձգվող՝ մահմեդականներով բնակեցված գաղութներ¹⁶:

ՌԿ(Բ)Կ XII համագումարը որոշում կայացրեց իրականացնել բնիկացման (коренизация) քաղաքականություն: Լայն իմաստով, այդ քաղաքականությունը նպատակ ուներ թուլացնել և կանխել ազգայնականության զարգացումը նախկին ոչ ռուս գաղութացված ժողովուրդների շրջանում¹⁷: Բուն իմաստով, միութենական հանրապետություններում կամ ազգային շրջաններում «կորենիզացիան» նշանակում էր ոչ ռուս, բնիկ ազգությունների ներկայացուցիչների ընդգրկում իշխանության մարմիններում և հասարակական կյանքի համար այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք էին կրթությունը, գիտությունը, արվեստը և այլն¹⁸: Նախատեսվում էր դրանով իսկ հաղթահարել մշակութային հետամնացությունը որոշ շրջաններում: «Համաձայն կուսակցության նոր քաղաքական գծի, պաշտոնապես ճանաչված խորհրդային բոլոր ազգությունները պետք է ունենային իրենց հաստատած «մեծ ավանդները», որոնք պետք է պահպանվեին, կատարելագործվեին և անհրաժեշտության դեպքում *ստեղծվեին* [ընդգծումը մերն է – Ա.Հ.] հատուկ մասնագիտացված անձանց կողմից հատուկ նշանակված հաստատություններում, որովհետև կոլեկտիվ գիտակցությունը, քաղաքական հավատարմությունը, պատմության վերակառուցումը և վերաիմաստավորումը, անհրաժեշտ պատմական ավանդների «հայտնագործումը» պետության ստեղծումն արդարացնելու միջոց են: Սրանք մարդկանց միավորելու, հանրոյթն ուժեղացնելու կամ երբեմն ինքնության զգացում և քաղաքական

¹⁴ Ստալին 1948, 265:

¹⁵ Վարդանյան-Այվազյան 2015, 93:

¹⁶ Бабаян 2012, 34.

¹⁷ Martin 2001, 127.

¹⁸ Չոլյան 2007, 31:

համերաշխություն ձևավորելու հիմնական գործոններն են»¹⁹: Իսկ այդ քաղաքականության առավել խորացված գործադրման անհրաժեշտություն կար այսրկովկասյան երեք երկրներից Ադրբեջանում, քանի որ անգամ կուսակցական շարքերում շարունակում էին տիրապետել օտարազգիները՝ տեղական կադրերի բացակայության պատճառով: 1925 թ. դրությամբ Կովկասում գտնվող ռուս 10.245 բուլճակներից 7795-ն Ադրբեջանում էին: Ադրբեջանական կոմկուսի շարքերում թուրքերը փոքրամասնություն էին²⁰, և կուսակցական ղեկավար պաշտոնները տրված էին ռուսներին ու հայերին: 1927 թ. դրությամբ ԽՄԿԿ-ի շարքերում միութենական հանրապետությունների և ազգային շրջանների տիտղոսակիր ժողովուրդների ներկայացուցիչների ներգրավվածության տոկոսային հարաբերակցությունն Այսրկովկասում հետևյալն էր. Հայաստան՝ 90,5%, Վրաստան՝ 55,4%, Ադրբեջան՝ 35,7%²¹: Ադրբեջանի կոմկուսի քարտուղար Ն. Նարիմանովը, ի պատասխան իրեն ազգայնական համարելու պնդման, նշում էր, որ «Սերգոն [Օրջոնիկիձեն] և Ստալինը չեն վստահում մեզ՝ *թուրքերիս*»²²: Այժմ անհրաժեշտ էր տեղական կադրերով ապահովել Ադրբեջանական ԽՍՀ-ին: Սա ազգային խնդրի լուծման հավանական միջոց կարող էր լինել ըստ Խորհրդային գաղափարախոսների, այսինքն՝ միութենական որևէ հանրապետության, ինքնավար հանրապետության կամ մարզի կամ ազգային շրջանի բնակչությունը կծանոթանար սոցիալիզմի գաղափարախոսությանը իր իսկ հայրենակցի միջոցով, որին ընկալում էր որպես յուրային: Սրանով պետք է որ բացառվեր ազգայնականության դրսևորումը: Սակայն որոշ դեպքերում դա ծաղկում ապրեց²³: Այլ կերպ ասած՝ եթե սկզբում Խորհրդային Ադրբեջանն իր բազմատարր բնակչությամբ կարող էր ծառայել որպես ինտերնացիոնալիզմի մոդել, ապա այժմ ինտերնացիոնալիզմից անցում կատարվեց նացիոնալիզմի²⁴: Բնիկացման կարևոր հիմքերից մեկն արաբատառ այբուբենի փոխարինումն էր լատինատառով, որի ջատագովը Խորհրդային Ադրբեջանում Աղամալի-օղլին էր: Արդեն 1923 թ. լատինատառ այբուբենը ստացավ արաբատառին հավասար կարգավիճակ, իսկ հաջորդ

¹⁹ Atabaki 2001, 80.

²⁰ Altstadt 1992, 123.

²¹ Национальная политика. ВКП(б) в цифрах 1930, 138.

²² Սա ևս մեկ փաստ է ժամանակի կուսակցական ղեկավարի կողմից «թուրքը» որպես էթնոնիմ օգտագործելու վերաբերյալ: Հմմտ. Altstadt 1992, 124:

²³ Баберовский 2003, 71.

²⁴ Бабаян 2012, 35.

տարի ամբողջությամբ անցում կատարվեց լատինատառ գրության, ինչն Ադրբեջանում շատ ավելի հեշտ եղավ նախկինում գրագիտության ցածր մակարդակի պատճառով: Սակայն միայն ներքին բազմաբնույթ զարգացումները չէին, որ կարող էին ազդակ դառնալ այնպիսի արմատական փոփոխության համար, ինչպիսին տիտղոսակիր ժողովրդի էթնանվան փոփոխությունն էր: Այս առումով անհրաժեշտ է ուսումնասիրել նույն ժամանակաշրջանում Թուրքիայում և Իրանում ընթացող ներքին զարգացումները, ինչպես նաև այդ երկրների և ԽՍՀՄ-ի հարաբերությունները:

Ազգային քաղաքականությունը Թուրքիայի Հանրապետությունում

Առաջին աշխարհամարտում կրած պարտությունը, Օսմանյան կայսրության անկումն ու Հանրապետության հռչակումն ինքնության որոշարկման նոր խնդիրներ առաջացրին նաև Թուրքիայում: Քեմալականները ժառանգեցին մի հասարակություն, որում «թուրքական ինքնություն» հասկացությունը գրեթե ամբողջությամբ բացակայում էր²⁵: Նախկինում կիրառված «օսմանցի»-ն չէր կարող համապատասխանել ներկա դրությանն այն պարզ պատճառով, որ Օսմանյան պետություն գոյություն չուներ: Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալը հրաժարվեց պանթուրքիզմի գաղափարախոսությունից, անջատեց թյուրքիզմը (türklük - էթնիկ թուրքականություն) պանթուրքիզմից (türkcülük - քաղաքական համաթուրքականություն)²⁶ և թուրքական ազգայնականությունը սահմանափակեց Թուրքիայի՝ տվյալ պահին գոյություն ունեցող տարածքով, ինչը բխում էր պատմական-քաղաքական կոնկրետ իրավիճակից, որը Քեմալի առջև դրել էր միասնական երկիր, միասնական թուրք ժողովուրդ և միասնական թուրքական ազգային պետություն ձևավորելու խնդիրը²⁷: 1927 թ. դեկտեմբերի 15-20-ը Թուրքիայում տեղի ունեցած՝ իշխող Հանրապետական ժողովրդական կուսակցության երկրորդ համագումարի ժամանակ Մուստաֆա Քեմալն իր ճառում նշեց. «Թուրք ազգի արժանապատվությունն ու պատիվը որպես մեկ ազգ ապրելն է: Այս սկզբունքին կարելի է հասնել միայն լիակատար անկախություն ունենալով»²⁸: Նրանք ընդունեցին ազգի և պետության համահունչ կառուցման բանաձև, որն իր արտացոլումը գտավ «Թուրքիան»՝

²⁵ Ahmad 1993, 77.

²⁶ Բաղդասարյան 2001, 61:

²⁷ Բաղդասարյան 2001, 62:

²⁸ Atatürk 1970, 6.

որպես պետության և «թուրքը»՝ որպես էթնոսի անուն հաստատելու մեջ: 1923 թ. Թուրքիայի Հանրապետության հռչակմամբ պատմության մեջ առաջին անգամ հայտնվեց պետություն՝ հենված թուրք էթնանվան վրա²⁹: Ըստ ուսումնասիրողների՝ «Նախկինում «թուրք» (թյուրք) բառը, օսմանական կառավարող դասի ըմբռնմամբ, երկար ժամանակ եղել է «գեղջուկ» բառի հոմանիշ³⁰, այժմ «թուրք» ցեղանունը եկավ փոխարինելու «օսմանցի» կամ «մահմեդական» անվանը, իսկ իսլամիզմի և օսմանիզմի սկզբունքներին, սուլթան-խալիֆային նվիրված լինելու գաղափարին՝ թուրք ազգին պատկանելու գիտակցության՝ «ազգության» սկզբունքը»:

ԽՍՀՄ-ում շուտով պարզ դարձավ հեղափոխության արտահանման անհնարինությունը, իսկ 1930-ական թթ. միջազգային հարաբերությունների որոշակի զարգացումներ խորհրդային ղեկավարության համար հիմքեր ստեղծեցին նոր որոնումներ սկսելու Ադրբեջանական Խորհրդային Հանրապետության տիտղոսակիր հանրույթի էթնանվան շուրջ: Մասնավորապես, 1930-ական թթ. կեսերից վատթարացան խորհրդա-թուրքական հարաբերությունները: 1932 թ. Թուրքիան անդամակցեց Ազգերի Լիգային, և Թուրքիայի արևմտամետ կողմնորոշումն այլևս ակնհայտ էր. ի պատասխան՝ 1934 թ. Լևոն Կարախանը նշանակվեց Թուրքիայում ԽՍՀՄ դեսպան: Նրան թուրքերը ճանաչում էին դեռևս Բրեստի պայմանագրի կնքումից և ակնհայտ ատելություն էին տածում նրա նկատմամբ: Ստալինի այս քայլը նշանավորեց երկու երկրների միջև հարաբերությունների սառեցումը³¹, սակայն դրա մասին կողմերից և ոչ մեկը հայտարարությամբ բացեիքաց երբևէ հանդես չեկավ, մինչդեռ մոտալուտ պատերազմի նախապատրաստությունների ընթացքում նրանց միջև տեղի ունեցավ արտաքին առևտրի և հյուպատոսությունների կրճատում: Այսպես «Իզմիրի և Կարսի սովետական հյուպատոսությունները, Օդեսայի, Բաքվի, Երևանի և Լենինականի թուրքական հյուպատոսությունները փակվեցին: Ստամբուլում ԽՍՀՄ-ի, Բաթումում Թուրքիայի հյուպատոսությունները շարունակեցին կատարել իրենց պարտականությունները»³²: Փաստորեն՝ Թուրքիայում և Խորհրդային Ադրբեջանում ապրող տիտղոսակիր հանրույթները խոսում էին թուրքերեն, իրենց ծագման մասին ունեին համանման պատկերացումներ, ուստի

²⁹ Karpat 2001, 349.

³⁰ Երեմեն 1975, 177.

³¹ Гасанлы 2008, 20.

³² Oran 2002, 323.

անհրաժեշտ էր նրանց բաժանել, մանավանդ որ հեղափոխության արտահանումը Թուրքիայի միջոցով ակնհայտորեն անհնարին էր, խորհրդաթուրքական հարաբերությունները վատթարանում էին, և որպեսզի Ադրբեջանն իր թուրքականությամբ չդառնար թուրքական «5-րդ շարասյուն» ԽՍՀՄ-ի ներսում, անհրաժեշտ էր վերաձևել «ադրբեջանական» ինքնությունը:

Ազգային քաղաքականությունը Իրանում

XX դարում Իրանի բնակչությունը բաղկացած էր բազմաթիվ ժողովուրդներից, ցեղերից ու ցեղային միավորումներից: Իրանի շահ Ռեզա Փահլավին ևս հասկանում էր ազգային պետության ստեղծման անհրաժեշտությունը: Հենց այդ շրջանում էլ ձևավորվել էր իրանական ազգայնական գաղափարախոսությունը՝ պանիրանիզմը, որի հիմքում ընկած էին իրանալեզու ժողովուրդների արիական ծագման, միասնական իրանական ազգի և հինավուրց իրանական պետության վերականգնման գաղափարները³³: Այս նպատակի իրականացմանն էին միտված երկրի ներքին կյանքում կատարված փոփոխությունները, որոնք վերաբերում էին գրեթե բոլոր ոլորտներին: Ռեզա շահը խնդիր էր դրել ստեղծել կենտրոնացված պետություն, խաղաղեցնել անկառավարելի ցեղերին, սաստել սնահավատ հոգևորականներին, տարածել պարսկերենը և արաբերեն բառերը փոխարինել պարսկերենով, բացել նոր դպրոցներ, բարելավել կանանց կարգավիճակը, վերացնել տիտղոսները, խարխլել ավատական կարգը և ամենակարևորը՝ ձգտել երկիրը միավորել մեկ լեզվով, մեկ մշակույթով և մեկ ազգային ինքնությամբ³⁴: Մեծ նշանակություն էր տրվում պատմական և հատկապես նախաիսլամական անցյալին՝ որպես բնակչության միավորման հզոր միջոց, և շեշտադրվում էր արիականությունը: Ավելին, 1934 թ. շահի որոշմամբ «Պարսկաստան» անվանումը փոխարինվեց «Իրան»-ով: Կառավարությունը մեկնաբանեց, որ նախկին անվանումը կապվում է Ղաջար դինաստիայի հետ և իրականում վերաբերում է միայն Ֆարս նահանգին, մինչդեռ Իրանը ոգեկոչում է նախկին փառքը և նշանակում է արիական ռասայի ծննդավայրը³⁵: Նման գործընթացներն Իրանում իրենց ազդեցությունն էին թողնում նաև Ադրբեջանի նկատմամբ ԽՍՀՄ ազգային քաղաքականության վրա, քանի որ պատմական Ատրպատական-Ադրբեջանը և դրա բնակչությունը նույնպես այդ գործ-

³³ Ստեփանյան 2006, 41:

³⁴ Abrahamian 2008, 96. Հմմտ. նաև Sheffer 2002, 54.

³⁵ Abrahamian 1983, 143.

ընթացի մաս էին կազմում: Շահի բացառիկ քաղաքականությունը փոխեց իրանական Ադրբեջանի բնակչության քաղաքական և տնտեսական կարգավիճակը՝ նրան վերածելով անտեսված ազգային փոքրամասնության³⁶: Այդ կարգավիճակից դուրս գալը և համաիրանականությանն ինտեգրվելը թվում էր խնդրի լուծման միակ միջոց: Պարսկերենի տարածումը թուրքերենի փոխարեն դարձավ ամենակարևոր միջոցառումներից մեկն Իրանական Ադրբեջանի թյուրքախոսներին ազգային նոր միջավայրին ինտեգրելու համար: Գաղափարախոսական առումով նրանք համարվեցին «թուրքացված արիացիներ»՝ իրանական ծագմամբ, և իշխանությունը խթանում էր թուրքերի՝ որպես քոչվոր բարբարոսների ժառանգների մշակույթի և ռասայի նկատմամբ թերարժեքության զգացումը՝ հակադրելով պարսկական քաղաքակրթությանը³⁷: Ընդամին, Իրանական Ատրպատականի բնակչությունը, թեև թյուրքալեզու, սակայն էթնիկ առումով իրեն համարում էր կապված իրանական աշխարհի հետ, քանի որ կազմավորվել էր իրանական ամուր ենթաշերտի վրա, որն ուներ մշակութային խոր ավանդույթներ և պատմական արմատներ³⁸՝ ի տարբերություն Խորհրդային Ադրբեջանի տիտղոսակիր ժողովրդի: Գերմանա-իրանական հարաբերությունների ջերմացումը և՛ գաղափարախոսական, և՛ տնտեսական առումով ևս անհանգստացնում էր Խորհրդային Միությանը: Ոչ պակաս կարևոր էր խորհրդա-իրանական հարաբերությունների բնույթը: Ինչպես Ռուսական կայսրությունը, այնպես էլ Խորհրդային պետությունը հավակնություն ունեին Հյուսիսային Իրանի նկատմամբ: Այս առումով տեղին է նշել ակադեմիկոս Վ. Բարտոլդի՝ 1924 թ. Ադրբեջանի պետական համալսարանում կարդացած դասախոսության մի հատվածը. ուսանողի հարցին, թե արդյո՞ք իրենք իրավունք ունեն իրենց երկիրը կոչելու Ադրբեջան, նա պատասխանում է. «...եթե անհրաժեշտ էր ընտրել եզրույթ, որը կընդգրկեր ներկայիս Ադրբեջանի ողջ տարածքը, ապա կարելի էր ընտրել Առան անվանումը, իսկ Ադրբեջան եզրույթն ընտրվեց, որովհետև, երբ ստեղծվեց Ադրբեջանի հանրապետությունը, նախատեսվել էր, որ պարսկական և այս Ադրբեջանները կմիանան»³⁹: Թերևս սրանով է բացատրվում նաև Երկրորդ աշխարհամարտի ժամանակ խորհրդային բանակի մուտքն Իրան: Ակադեմիկոսն իր դասախոսություններում, խոսելով Իրա-

³⁶ Ahmadoghlu 2019, 9.

³⁷ Souleimanov 2011, 78.

³⁸ Ասատրյան, Գևորգյան 1990, 10:

³⁹ Бартольд 1963, 703.

նական Ատրպատականի և Ադրբեջանի Հանրապետության էթնիկ դիմագծի մասին, գերազանցապես շեշտում է թյուրքական ներթափանցմամբ առաջացած էթնոլեզվական արմատները:

Այսպիսով՝ ազգաստեղծման քաղաքականությունը Թուրքիայում ու Իրանում, որը, մի կողմից, ուներ էթնոլեզվական և կրոնական գիծ և մշակութային առնչություն Ադրբեջանի հետ, մյուս կողմից՝ Խորհրդային Միության ու նրա մերձավորարևելյան հարևանների միջև խորացող տարածայնությունները հանգեցրին ադրբեջանական ինքնության հարցում «պաշտպանողական» վերափոխումների:

Թուրքականության հեռացումն ազգային ինքնության ընկալումներից կարող էր Խորհրդային Ադրբեջանի տիտղոսակիր բնակչության ինքնության որոշարկումը դարձնել խոցելի և դյուրաթեք դեպի իրանական ազգայնականությունը: Բանն այն է, որ եթե Իրանական Ադրբեջանի թյուրքախոսները բանավոր թյուրքերենը վերցրած իրանական-արիական ծագում ունեին, և եթե իրապես ռուսական նվաճմամբ պատմական Ատրպատական-Ադրբեջանը բաժանվել էր երկու մասի (ինչը, իհարկե, չէր համապատասխանում իրականությանը, սակայն շուտով քաղաքական նպատակներով ձևակերպվեց և ընդունվեց Խորհրդային Միությունում որպես երկու Ադրբեջանների տեսություն), ապա «Հյուսիսային Ադրբեջանի» (Խորհրդային Ադրբեջան) բնակչությունը ևս ունի որոշ չափով համանման իրանա-արիական ծագում, ինչը չէր կարող համապատասխանել տվյալ պահին ԽՍՀՄ-ի արտաքին և ներքին մոտեցումներին: Փաստորեն, անհրաժեշտ էր գտնել այնպիսի էթնանուն և հետևապես ազգային ինքնության այնպիսի բանաձև, որը Խորհրդային Ադրբեջանի թյուրքալեզու մահմեդական բնակչությանը կտարանջատեր ժամանակի և՛ թուրքական, և՛ իրանական ազգաշինության գործընթացներից՝ համապատասխանելով ԽՍՀՄ-ի ներքին ազգային քաղաքականության բնույթին ու բովանդակությանը: Իսկ այդ բանաձևը, ըստ Ստալինի, Խորհրդային Ադրբեջանի մահմեդական թյուրքալեզու բնակչությանը՝ համապատասխան պետության անվանը, «ադրբեջանցի» կոչելն էր՝ նրանց վերագրելով մարական ծագում: Ձևական (ֆորմալ) առումով այս փոփոխության համար առիթ դարձավ Ստալինի հետևյալ միտքը, թե «Ադրբեջանի հիմնական ազգությունը ադրբեջանցիներն են»⁴⁰:

Փաստագրական առումով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել 1936 թ. ընդունված ստալինյան սահմանադրության բնորոշ գծերին:

⁴⁰ Сталин 1934, 110.

ԽՍՀՄ-ի ամենաազատական սահմանադրությունը լինելով հանդերձ՝ դրանում առաջնային տեղը հատկացվեց «հայրենիք» հասկացությանը, սոցիալիստական հայրենիքին, սոցիալիստական պետությանը, և նախկին հեղափոխական, ինտերնացիոնալ արժեքներին փոխարինելու եկան պետական, հայրենասիրական արժեքները (որոնք, իհարկե, ունեին սոցիալիստական բովանդակություն)⁴¹: Համեմատենք 1921, 1927 և 1937 թթ. Խորհրդային Ադրբեջանի սահմանադրությունները: Այսպես՝ 1921 թ. սահմանադրության I բաժնի I գլխի II հոդվածով՝ «Ադրբեջանական Հանրապետությունը Ադրբեջանի բոլոր աշխատավորների [ընդգծումը մերն է - Ա.Հ.] ազատ սոցիալիստական հասարակություն է»⁴²: 1927 թ. սահմանադրության I բաժնի I գլխի II հոդվածով՝ «Ադրբեջանական հանրապետությունը Ադրբեջանի բոլոր աշխատավորների [ընդգծումը մերն է - Ա.Հ.] սոցիալիստական պետությունն է»⁴³: 1937 թ. սահմանադրության I բաժնի I գլխի երկրորդ հոդվածով. «Ադրբեջանական ԽՍՀ քաղաքական հիմքը կազմում են աշխատավորների պատգամավորական խորհուրդները, որոնք ստեղծվել և ամրացել են կալվածատերերի և կապիտալիստների իշխանության տապալման հետևանքով, պրոլետարիատի դիկտատուրայի նվաճման, *ադրբեջանցի ժողովրդի* [ընդգծումը մերն է - Ա.Հ.]՝ ցարիզմի ազգային լծից և ռուսական իմպերիալիստական բուրժուազիայից ազատագրվելու և ազգայնական հակահեղափոխության ջարդի շնորհիվ»⁴⁴: Դժվար չէ նկատել, որ առաջին երկու սահմանադրություններում որևէ էթնիկ շեշտադրում՝ որպես պետության հիմք, չկա, մինչդեռ ստալինյան սահմանադրության մեջ շեշտվում է «ադրբեջանցի ժողովուրդ» արտահայտությունը, որը դարձյալ բացակայում է 1978 թ. խորհրդային վերջին սահմանադրության մեջ: Նույնանման իրողություն են պարունակում մարդահամարների տվյալները. դեռևս 1921 թ. Ադրբեջանում անցկացված գյուղատնտեսական մարդահամարի աղյուսակներում դարձյալ որպես Ադրբեջանի տիտղոսակիր հանրության ընդհանրական անվանում՝ հիշատակվում են «ադրբեջանական թյուրքերը» (тюрки азербайджанские)⁴⁵: 1926 թ. առաջին համամիութենական մարդահամարի

⁴¹ Левашко 2013, 16.

⁴² Конституция (Основной закон) Азербайджанской Социалистической Советской Республики 1921, 25.

⁴³ Конституция (Основной закон) Азербайджанской Социалистической Советской Республики 1927, 22.

⁴⁴ Конституция (Основной закон) Азербайджанской Социалистической Советской Республики 1961, 3.

⁴⁵ Карапетян 1991, 9.

Ժամանակ նշվում են ուղղակի «թուրքեր»՝ առանց հստակ տարրորոշման⁴⁶։ Մինչդեռ 1939 թ. մարդահամարի՝ «ԽՍՀՄ բնակչությունը ըստ ազգությունների և մայրենի լեզվի» բաժնում առաջին անգամ հիշատակվում են «ադրբեջանցիները»⁴⁷։ Սակայն դեռևս անորոշ է՝ այդ անվանումը քաղաքացիակա՞ն բնույթ ունի, թե՞ էթնիկ։ Ազգագրագետ Հրանուշ Խառատյանի իրավացի դիտարկմամբ՝ «Արտածուած լինելով «Ադրբեջան» երկրի անունից՝ այս տերմինը բնակչության մեջ երկար ժամանակ չէր յստականում՝ Ադրբեջանի ողջ բնակչությանն է վերաբերում, թե՞ միայն «թրքալեզու մահմեդականներին։ Ադրբեջանի ոչ մի էթնոսոցիոլեզուա-մշակութային միավոր իրեն չէր նոյնականացնում «ադրբեջանցի» տերմինի հետ»⁴⁸։ Ուստի անհրաժեշտ էր կառուցարկել նախ ադրբեջանականության գաղափարը, այնուհետև այն արտածել բնակչության ընկալումների մեջ կյանքի ամենատարբեր ոլորտներում՝ սկսած պատմաշինությունից, լատինականացված այբուբենը կիրիլյանով փոխարինումից մինչև առօրյա դրսևորումներ, որի առաջնային նպատակը թյուրքականության արտահայտումը սահմանափակելն էր։ Նման զարգացումները համընկան ստալինյան բռնաճնշումների տարիներին, և արքորվածների կամ բռնադատվածների հիմնական մեղադրանքներից մեկը հակումն էր պանթյուրքիզմին։

Եզրակացություններ

Այսպիսով, կարող ենք նշել, որ, եթե XX դարասկզբին պանթյուրքիզմի տարածումն իր անուղղակի ներդրումն ունեցավ Արևելյան Այսրկովկասի մահմեդականների թուրքական ինքնության արտահայտման և Ադրբեջան պետության ստեղծման հարցում, ապա 1930-ական թթ. վերջին պանթյուրքիզմի դեմ պայքարը՝ որպես ԽՍՀՄ-ում ընդհանուր հակաազգայնական քաղաքականության արտահայտություն, դարձավ «ադրբեջանականացման» խթաններից մեկը։ «Ադրբեջանցի» անվանումը տրվեց Խորհրդային Ադրբեջանի թյուրքալեզու բնակչությանը՝ հղելով Ադրբեջան անունով պետության գոյության հանգամանքին, այսինքն՝ «ադրբեջանցի» էթնանունը ծագեց «Ադրբեջան» պոլիտոնիմից, որն էլ, իր հերթին, վերցվել էր մեկ այլ տարածքի նկատմամբ կիրառված անվանումից։ Այսինքն՝ տվյալ դեպքում ոչ թե պոլիտոնիմն է ծագում էթնոնիմից, այլ ընդհակառակը։ Եվ դա հստակ

⁴⁶ Всесоюзная перепись населения 17 декабря 1926 1928, 16.

⁴⁷ Всесоюзная перепись населения 1939 года 1992, 80.

⁴⁸ Խառատյան 2012, 303:

բացատրում է եղելությունը շրջելու խորհրդային իշխանության և ադրբեջանցի պատմաբանների ցանկությանը համապատասխան հետազա պատմաշինության տրամաբանությունը:

Գրականություն

- Ասատրյան Գ., Գևորգյան Ն. 1990, Ադրբեջան. Յուրացման սկզբունքը և իրանական աշխարհը, Երևան, «Գիտելիք», 25 էջ:
- Բաղդասարյան Ս., 2001, Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1930-ական թթ., Երևան, «Հանգակ-97», 160 էջ:
- Գալստյան Վ.Ա. 2017, ԺԹ դարի երկրորդ կեսին թյուրքալեզու գրավոր մշակույթի ձևավորման դերը Արևելյան Այսրկովկասի մահմեդական բնակչության էթնո-համախմբման գործընթացում, պատմ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 178 էջ:
- Երեմեն Դ.Ե. 1975, Թուրքերի ծագումը, Երևան, «Հայաստան», 356 էջ:
- Ջոլյան Մ. 2007, Ազգային քաղաքականությունը Խորհրդային Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղի խնդիրը, 21-րդ դար, N 4(18), «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան, էջ 25-42:
- Խառատեան Հ. 2012, «Ադրբեջանցիները», «կովկասալեզուները» և «իրանալեզուները». Ինքնության զարգացումներն Ադրբեջանում, «Հանդես ամսօրեայ», ՃԻՀ տարի, Վիեննա-Երևան, «Մխիթարեան հրատարակչութիւն», էջ 271-335:
- Համամիութենական մարդահամար 1926 թ., Հայաստանի Սոցիալիստական Հանրապետություն, բաժին II, Ջբաղմունքները, 1930 թ., «ԱՍՖԻՍ Հենտվիճվար», Թիֆլիս, 79 էջ:
- Ստալին Ի.Վ. 1948, Երկեր, Երևան, «Հայպետհրատ», 491 էջ:
- Ստեփանյան Լ. 2006, Ռեզա շահ Փաիլավիի կառավարության ներքին քաղաքականությունն Իրանում (1925-1941 թթ.), պատմ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան:
- Վարդանյան-Այվազյան Թ. 2015, Ազգային քաղաքականությունն Անդրկովկասում 1902-1930-ական թթ.: «Արմատավորման» առանձնահատկությունները, «21-րդ դար», N 2 (60), «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, էջ 91-106:
- Бабаян Д. 2012, Азербайджано-Карабахский конфликт: этнополитика и безопасность, Конфликты и проблемы безопасности, Россия и новые государства Евразии, N 4, Москва, с. 32-42.
- Баберовский Й. 2003, Красный террор, история сталинизма, Москва, «Российская политическая энциклопедия», 278 с.
- Бартольд В.В. 1963, Сочинения, т. II, часть 1, Москва, «Наука», 1024 с.
- Бромлей Ю.В. 1983, Очерки теории этноса, Москва, «Наука», 411 с.
- Вейденбаум Е. 1888, Путеводитель по Кавказу, составленный по поручению командующего войсками округа, Тифлис, «Канцелярия главноначальствующего Гражданской частью на Кавказе», 434 с.
- Всесоюзная перепись населения 17 декабря 1926 г., вып. 4: Народность и родной язык населения СССР, 1928, Москва, «ЦСУ Союза ССР», 138 с.
- Всесоюзная перепись населения 1939 года, основные итоги, 1992, Москва, «Наука», 256 с.

- Гасанлы Д. 2008, СССР – Турция: от нейтралитета к холодной войне (1939-1953), Москва, «Центр пропаганды», 663 с.
- История Азербайджана, в трех томах, т. I, 1958, Баку, Академия наук Азерб. ССР, Институт истории, 423 с.
- Карапетян М. 1991, Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г. (по сельскохозяйственной переписи Азербайджана 1921 г.), Ереван, Армянское общенациональное движение, 20 с.
- Конституция (Основной закон) Азербайджанской Социалистической Советской Республики 1921, Утверждена 1-ым Всеазербайджанским съездом Советов 19 мая 1921 г., Баку.
- Конституция (Основной закон) Азербайджанской Социалистической Советской Республики 1927, Утверждена Всеазербайджанским съездом Советов V созыва 26-го марта 1927 г., Баку.
- Конституция (Основной закон) Азербайджанской Социалистической Советской Республики. С изм. и доп., принятыми на I, II, III и IV сессиях Верховного Совета Азерб. ССР пятого созыва, 1961, Баку, «Азернешр», 32 с.
- Левашко В.О. 2013, Конституция 1936 года, тенденция гражданственности, патриотизма и тоталитаризма, «Царскосельские чтения», NXVII, с. 12-20.
- Национальная политика. ВКП(б) в цифрах 1930, Москва, «Коммунистическая академия», 328 с.
- Сталин И.В. 1934, Марксизм и национально-колониальный вопрос, Москва, «Партиздат ЦК ВКП(б)», 232 с.
- Abrahamian E. 1983, *Iran Between Two Revolutions*, New Jersey, Princeton University Press, 561 p.
- Abrahamian E. 2008, *The History of Modern Iran*, New York, Cambridge University Press, 264 p.
- Ahmad F. 1993, *The Making of Modern Turkey*, London, Routledge, 252 p.
- Ahmadoghlu R. 2019, Azerbaijani National Identity in Iran, 1921-1946: Roots, Developments and Limits, – *The Journal of the Middle East and Africa* 10(3), p. 1-26.
- Altstadt A. 1992, *The Azerbaijani Turks: Power and Identity under Russian Rule*, Stanford, Hoover Institution Press, 331 p.
- Atabaki T. 2001, *Recasting Oneself, Rejecting the other: Pan-turkism and Iranian Nationalism, Identity Politics in Central Asia and the Muslim World: Nationalism, Ethnicity and Labour in the Twentieth Century*. London, Tauris & Company, 80 p.
- Galichian R. 2012, *Clash of Histories in the South Caucasus*, London, Bennett & Bloom, 236 p.
- Karpat K. 2001, *The Politicization of Islam: Reconstructing Identity, State, Faith, and Community in the Late Ottoman State*, Oxford University Press, 553 p.
- Martin T. 2001, *The Affirmative Action Empire, Nations and Nationalism in the Soviet Union, 1923-1939*, Cornell University Press, 496 p.
- Sheffer B. 2002, *Borders and Brethren, Iran and the Challenge of Azerbaijani Identity*, Cambridge, MIT Press, 251 p.
- Smith A. 2009, *Ethno-symbolism and Nationalism: a Cultural Approach*, London, Routledge, 192 p.
- Smith J. 1999, *The Bolsheviks and the National Question, 1917-1923*, New York, St. Martin's Press, 281 p.
- Souleimanov E. 2011, The Evolution of Azerbaijani Identity and the Prospects of Secessionism in Iranian Azerbaijan, *The Quarterly Journal* 11(1), p. 77-84.
- Swietochowski T. 1985, *Russian Azerbaijan, 1905-1920, The Shaping of National Identity in a Muslim Community*, Cambridge University Press, 272 p.

- Yilmaz H. 2013, The Soviet Union and the Construction of Azerbaijani National Identity, in the 1930s, Iranian Studies, vol. 46, No. 4, p. 511-533.
- Atatürk K. 1970, Nutuk, Cild I: 1919-1920, Milli eğitim basimevi, İstanbul, 432 s.
- Nesibli N. 2001, Azerbaijanin milli kimlik sorunu, Avrasia Dosyasi, İlkbahar 2001-Sayı 1 Azerbaijan Özel Üç Aylık Uluslararası İlişkilr ve Stratejik Araştırmalar Drgisi, s. 132-160.
- Oran B. 2002, Türk dış politikası (cilt 1-1919-1980), İstanbul, iletişim Yayıncılık, 900 s.
- Aşirli A. 2009, Azərbaycan mətbuatı tarixi: 1875-1920, Bakı, «Əlm və Təhsil», 172 s.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏԻՏԴՈՍԱԿԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ «ԱԴՐԲԵՋԱՆՑԻ» ԱՆՎԱՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Անուշ Հարությունյան

Ամփոփում

XIX դ. սկսված էթնոհամախմբման գործընթացը Արևելյան Այսրկովկասի մահմեդականների շրջանում դեռևս չէր հանգեցրել ընդհանրական էնդոէթնոնիմի՝ ինքնանվան ստեղծմանը, որը էթնոսի ինքնության որոշարկման կարևորագույն բաղադրիչներից է: Ռուսական տիրապետության շրջանում թյուրքալեզու մահմեդականների նկատմամբ կիրառելի էր «թաթար» անվանումը՝ որպես էթնոնիմ, իսկ Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության շրջանում՝ «թուրք» անվանումը: Արդեն 1920-ական թթ. ԽՍՀՄ-ի բնիկացման քաղաքականությամբ ի հայտ եկավ «տիտղոսակիր» ժողովուրդ հասկացությունը, և շուտով անհրաժեշտություն առաջացավ վերափոխել այդ ժողովրդի ինքնությունն այնպես, որ չհայտնվի թուրքական և իրանական ազգաշինության գործընթացների ազդեցության տակ: Անհրաժեշտ էր գտնել այնպիսի «լուծում», որը կհամապատասխաներ ԽՍՀՄ-ի էթնոտարածքային սկզբունքին, իսկ դա, ըստ Ստալինի, պետության անվանը համապատասխան թյուրքալեզու մահմեդական տիտղոսակիր ժողովրդին «ադրբեջանցի» անվանելն էր: Դա ամրագրվեց 1937 թ. Ադրբեջանական ԽՍՀ սահմանադրությամբ:

Բանալի բառեր՝ էնդոէթնոնիմ, տիտղոսակիր ժողովուրդ, բնիկացում, Թուրքիա, Իրան, ստալինյան սահմանադրություն, «ադրբեջանցիներ»:

К ВОПРОСУ О НАЗВАНИИ ТИТУЛЬНОЙ НАЦИИ СОВЕТСКОГО АЗЕРБАЙДЖАНА «АЗЕРБАЙДЖАНЦАМИ»

Ануш Арутюнян

Резюме

Начавшаяся в XIX веке этноконсолидация среди мусульман Восточного Закавказья еще не привела к созданию общего эндоэтнонима, который яв-

ляется одним из важнейших компонентов определения идентичности этноса. Во времена российского владычества в качестве этнонима использовалось название «татары», а в период Азербайджанской демократической республики – «тюрки». Уже в 1920-ые гг. в результате т.н. коренизации сформировалась концепция «титульной» нации, а вскоре возникла и необходимость такого типа преобразования идентичности, который исключал бы возможность влияния турецкой или иранской идентичности. Необходимо было найти «решение», которое не противоречило бы этнотерриториальному принципу СССР. Последнее, по мнению Сталина, предполагало соответствие этнонима названию государственного образования. Так тюркоязычные мусульмане Советского Азербайджана были названы «азербайджанцами», что было утверждено конституцией Азербайджанской ССР 1937 года.

Ключевые слова – эндоэтноним, титульная нация, коренизация, Турция, Иран, сталинская конституция, «азербайджанцы».

ON THE ISSUE OF CALLING THE TITULAR NATION OF SOVIET AZERBAIJAN "THE AZERBAIJANIS"

Anush Harutyunyan

Abstract

The process of ethnoconsolidation among the muslims of Eastern Transcaucasia (since the 19th century) hadn't led to the creation of general endoethnonym, which is one of the most important components of the determination of national identity. During Russian rule the name "tatar" was used as an ethnonym, and in the period of Azerbaijan Democratic Republic the name "Turk" was used. Already in 1920 s. due to the policy of nativization, the concept of "titular" nation was formed and soon the problem of transformation of identity arose to protect it from the impacts of Turkish and Iranian nation-building processes. It was necessary to find such a solution, which would correspond to the ethno-territorial principle of the USSR, which, according to Stalin, could be reflected in the calling of the Turkic-speaking Muslims of Soviet Azerbaijan - "the Azerbaijanis". This was fixed by the constitution of Azerbaijan SSR in 1937.

Key words – endoethnonym, titular nation, nativization, Turkey, Iran, Stalin's Constitution, "the Azerbaijanis".

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վահագն Ստեփանյան

Քաղաքական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ

ՀՀ, Երևան, Արամի 44

Էլ. հասցե՝ vahagn.stepanyan.1977@mail.ru

Հոդվածը ներկայացվել է 20.12.2021, գրախոսվել է 21.06.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022

DOI: 10.53548/0320-8117-2022.3-139

Ներածություն

Պետականության հիմնախնդիրները կարևոր տեղ են զբաղեցրել քաղաքական-իրավական մտքի պատմությունում: Ներկայումս, հատկապես Արևմուտքի քաղաքական-իրավական հայեցակարգում, պետությունը և պետականությունը դիտարկվում են ժողովրդավարական արժեքներով, մարդու ազատությամբ և իրավունքներով, նրանց զարգացմամբ, պետական իշխանության ապակենտրոնացմամբ, քաղաքացիական հասարակության զարգացմամբ և այլն: Այսօր տարածված է այն պատկերացումը, որ թույլ զարգացած ժողովրդավարությամբ, քաղաքացիական հասարակության ավանդույթներ չունեցող և անհատի վրա գերիշխող պետությունները հայտնվում են փակուղում: Այդպիսի գաղափարներ են տարածվում նաև Հայաստանում, ընդ որում, անտեսվում են Հայաստանի աշխարհաքաղաքական վիճակը, նրան սպառնացող ներքին և արտաքին վտանգները, հայ ժողովրդի մշակույթի և հոգեկերտվածքի առանձնահատկությունները: Նման պայմաններում անհնարին է դառնում Հայաստանի առջև ծագած ներքին և արտաքին մարտահրավերներին համարժեք պատասխանելը, և վտանգվում է երկրի պետականության ապագան:

Պետության և պետականության այս պատկերացումները մասամբ պայմանավորված են այն հանգամանքով, որ դրանք հիմնված են բացառապես պետականության վերաբերյալ քաղաքագիտական, իրավագիտական, լավագույն դեպքում՝ ընդհանուր սոցիոլոգիական գիտելիքների վրա: Սակայն նշված գիտություններից յուրաքանչյուրը պետության և պետականության հիմնախնդիրները քննարկում է իր տեսանկյունից և իրեն ներհատուկ եղա-

նակներով, ընդ որում, նրանց ուսումնասիրության շրջանակից դուրս են մնում պետության և պետականության մի շարք խիստ կարևոր հարցեր, մասնավորապես պետության և պետականության կեցության հիմքերի, էության, արժեքի, հասարակական կյանքում դրանց դերի ու նշանակության, ինչպես նաև պետության և պետականության ճանաչողության ընդհանուր եղանակների հետ կապված հարցերը:

Պետության և պետականության վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կարելի է կազմել միայն նրանց փիլիսոփայական իմաստավորման պայմաններում: Ի տարբերություն պետությունն ուսումնասիրող կոնկրետ գիտությունների, փիլիսոփայությունը կարող է անդրադառնալ պետականության առավել ընդհանուր և հիմնարար խնդիրներին, բացահայտել պետականության փիլիսոփայական հիմքերը, այսինքն՝ պետականության գոյաբանական, իմացաբանական և արժեքաբանական սահմանային հիմքերի համակարգը:

Պետություն և պետականություն

Պետության և պետականության իմաստավորման ելակետը պետք է լինեն նրանց ընդհանուր հասկացությունները և սահմանազատումը: Ինչպես ընդհանուր սոցիոլոգիայում, այնպես էլ քաղաքագիտությունում ներկայումս շրջանառվում են պետության և պետականության վերաբերյալ տարբեր հայեցակարգեր: Ընդհանուր սոցիոլոգիայում պետությունը համարվում է քաղաքական ինստիտուտ, ինստիտուցիոնալացված քաղաքական իշխանություն: Ընդ որում, քաղաքական իշխանության հիմքը լեգիտիմությունն է, որը կարող է խարսխված լինել ավանդույթի, մեծամասնության կողմից ընդունված բացառիկ հեղինակության (խարիզմայի) կամ ռացիոնալ ընտրության վրա¹: Քաղաքագիտությունում պետությունը համարվում է որոշակի տարածքում գերազույն իշխանություն իրականացնող քաղաքական ինստիտուտների համակցություն և, ըստ էության, նույնացվում է կառավարման ապարատի՝ ինստիտուտների համալիրի հետ, որն ունի բացահայտ հրապարակային բնույթ՝ այն իմաստով, որ պետությունը պատասխանատու է հասարակական կյանքի կազմակերպման համար և ֆինանսավորվում է հասարակության կողմից²: Իրավագիտությունում պետությունը համարվում է հասարակության իշխանական-քաղաքական կազմակերպություն, որն օժտված է պետական

¹ Социология 2002, 373.

² Хейвуд 2005, 108.

ինքնիշխանությամբ, ունի կառավարման և հարկադրանքի հատուկ ապարատ, պետական գանձարան և որոշակի տարածքում հաստատում է իրավակարգ³: Պետության և պետականության փիլիսոփայական իմաստավորման ընթացքում պետք է հաշվի առնել այս բոլոր պատկերացումները, և չի կարելի հիմք ընդունել միայն այս կամ այն կոնկրետ պատկերացումը:

Պետությունը և պետականությունը սովորաբար նույնացվում են, սակայն վերջին ժամանակներում, հատկապես իրավագիտության մեջ պետությունը սկսել են տարբերել պետականությունից: «Պետականություն» կատեգորիան հնարավորություն է ընձեռում ընդլայնելու «պետություն» հասկացությունը, քանի որ այդ կատեգորիան արտացոլում է պետության զարգացման լրացուցիչ պատմական, շարժուն և փոփոխական առանձնահատկությունները, բացահայտում է հասարակական և պետական կյանքի մի շարք նոր, էական խնդիրներ: Պետականությունը համարվում է պետականորեն կազմակերպված հասարակության որակական վիճակ, որը պայմանավորված է կոնկրետ պատմական, ազգային, մշակութաբանական և այլ գործոնների կայունությամբ ու ժառանգականությամբ: Ենթադրվում է, որ պետականությունն առավել լայն կատեգորիա է, և նրա բաղադրիչներն են՝

- ա) պետությունը և պետական իշխանությունը,
- բ) պետական իշխանության մարմինները,
- գ) հասարակական ինստիտուտները, որոնք աջակցում են պետական իշխանության իրականացմանը, նպաստում նրա գործառույթների կատարմանը,
- դ) անհատները՝ պետության հետ փոխազդեցությունում,
- ե) քաղաքական գաղափարախոսությունը⁴:

Ակնհայտ է, որ հենց պետականությունը պետք է փիլիսոփայական իմաստավորում ստանա, որը ենթադրում է ինչպես պետության, այնպես էլ պետականության այլ բաղադրիչների փիլիսոփայական իմաստավորումը:

Պետականության փիլիսոփայական իմաստավորման հիմնական գծերը

Պետականության ուսումնասիրությունը ճանաչողական գործընթաց է, որն իրականացվում է կոնկրետ գիտությունների՝ ընդհանուր սոցիոլոգիայի, քաղաքագիտության և իրավագիտության կողմից: Այդ գործընթացի միջոցով տեղի է ունենում պետականության վերաբերյալ գիտելիքների կուտակում,

³ Морозов 2019, 49.

⁴ Кожевников 2009, 265.

բացահայտվում են պետականության նորանոր կողմեր, մարդկային միտքն ավելի ու ավելի խորն է ներթափանցում պետականության էության և պետական կյանքի հարաբերությունների մեջ: Սակայն ընդհանուր սոցիոլոգիայի, քաղաքագիտության և իրավագիտության՝ պետականության վերաբերյալ գիտելիքները չեն կարող կտրված լինել նրա փիլիսոփայական իմաստավորումից: Եվ ընդհանրապես, պետականությունն ուսումնասիրող գիտությունների առաջընթաց զարգացումն անհնար է առանց պետականության փիլիսոփայական իմաստավորման, որի շնորհիվ էլ բացահայտվում են պետականության իմաստն ու նշանակությունը, նրա դերը մարդկության պատմական զարգացման մեջ:

Փիլիսոփայությունը չի հավակնում պետականության վերաբերյալ կոնկրետ գիտությունների կողմից ձեռք բերվող գիտելիքների եզակիությանը, այլ բացահայտում է այդ գիտությունների ձեռք բերած գիտելիքների տեղն ու դերը պետականության ճանաչողության մեջ ընդհանրապես, ինչը հնարավորություն է ընձեռում համեմատել և հարաբերակցել գիտական տարբեր ձեռքբերումները: Այդ տեսակետից փիլիսոփայությունը չի կարող ունենալ պետականության վերաբերյալ մեկ՝ միակողմանի տեսակետ, չի կարող նույնանալ պետականության վերաբերյալ ընդհանուր սոցիոլոգիայի, քաղաքագիտության կամ իրավագիտության որևէ ուսմունքի կամ տեսության հետ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ փիլիսոփայական գիտելիքները տարբերվում են մյուս գիտելիքներից, փիլիսոփայությունն առավել ընդհանուր գիտելիքների համակցություն է՝ աշխարհի և նրա զարգացման օրինաչափությունների, աշխարհում մարդու տեղի ու դերի, կյանքի իմաստի վերաբերյալ և այլն: Փիլիսոփայությունը հենվում է ամենաընդհանուր կատեգորիաների վրա, ինչպիսիք են կեցությունը, իմացությունը, ճշմարիտը, արժեքը և այլն, ունի ճանաչողության յուրահատուկ մեթոդներ, ինչպես, օրինակ, մետաֆիզիկան կամ դիալեկտիկան: Կարևոր է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ փիլիսոփայությունը չի դոփում տեղում և հանդես է գալիս իբրև միասնական, հավերժ զարգացող գիտելիքների համակարգ, որի ներսում տեղի է ունենում հակասական ուսմունքների բախում⁵:

Պետականության փիլիսոփայական իմաստավորումը պետք է տեղի ունենա մտքի այնպիսի ուղղության շրջանակում, ինչպիսին սոցիալական փիլիսոփայությունն է: Բանն այն է, որ սոցիալական փիլիսոփայությունը սոցիալական երևույթների փոխազդեցության առավել ընդհանուր օրինաչա-

⁵ Миронов 2011, 276.

փոթյունների և միտումների, հասարակության կենսագործունեության և զարգացման, սոցիալական կյանքի ամբողջական գործընթացի վերաբերյալ գիտելիքների համակարգ է⁶։ Սոցիալական փիլիսոփայության խնդրակարգում կարևորագույն խնդիրներ են հասարակության նկատմամբ սոցիալ-փիլիսոփայական մոտեցման ընդհանուր սկզբունքները, ինչպես նաև հասարակական կեցության ոլորտները։ Հասարակական կեցության կառուցվածքում կարևորվում և առանձնանում են քաղաքական հարաբերությունները, որոնք կազմում են հասարակության քաղաքական կեցության բովանդակությունը։ Հասարակության-քաղաքական հարաբերություններն են պետության, սոցիալական խմբերի և անհատների այն հարաբերությունները, որոնք կապված են քաղաքական իշխանության ձեռքբերման և իրականացման հետ։ Այստեղից էլ՝ պետականության փիլիսոփայական իմաստավորման անհրաժեշտությունը հենց սոցիալական փիլիսոփայության շրջանակում։

Պետության փիլիսոփայական իմաստավորման ընթացքում այն պետք է դիտարկվի իբրև ամբողջ, միաժամանակ, մարդու կեցության տեսակետից բացահայտվեն այդ ամբողջի արժեքը, իմաստն ու նշանակությունը։ Պետականության փիլիսոփայական իմաստավորումը հնարավորություն կընձեռի պարզելու անհատի և պետության հարաբերությունների բնույթն ընդհանուր առմամբ՝ անկախ պետության կոնկրետ տիպերից։ Բացի այդ, պետականության փիլիսոփայական իմաստավորման ընթացքում կբացահայտվեն մարդու և պետության հարաբերությունների ընդհանուր սկզբունքները և օրինաչափությունները։ Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ մարդու և պետության հարաբերություններն ամենից առաջ մարդու կեցության և պետության կեցության զուգորդումն են, որը նրանց գոյաբանական միասնության համապարփակության վկայությունն է։ Պետականության փիլիսոփայական իմաստավորման շնորհիվ կբացահայտվեն նաև դրա էությունը, գոյաբանական հիմքերը, հետևաբար, այն նվազագույն պայմանները, որոնց առկայության դեպքում պահպանվում է պետության ամբողջականությունը։ Պետականության փիլիսոփայական իմաստավորման շնորհիվ կարժևորվի նաև պետականության գիտական ճանաչողության մեթոդաբանությունը, և կընդհանրացվեն պետականությունն ուսումնասիրող կոնկրետ գիտությունների՝ ընդհանուր սոցիոլոգիայի, քաղաքագիտության և իրավագիտության մեթոդաբանությունը և փորձը։

⁶ Социальная философия 1995, 13-14.

Հարկ է նշել, որ պետականության փիլիսոփայական իմաստավորումն ունի երկու բնորոշ գիծ, որոնցով պետականությունը տարբերվում է ուսումնասիրող կոնկրետ գիտություններից: Պետականության փիլիսոփայական իմաստավորումը, նախ, նորմատիվ է, և երկրորդ՝ հակաթեոիկ: Պետականության փիլիսոփայական իմաստավորման ընթացքում պետք է ուշադրությունը բևեռել այն բանին, ինչ գոյություն ունի, միաժամանակ անդրադառնալ նրան, ինչ պետք է լինի: Դա նշանակում է, որ պետականության փիլիսոփայական իմաստավորման ընթացքում պետք է համադրվեն իրականությունը (գոյը) և նորմը կամ իդեալը (պիտոն): Ընդ որում, պետականության փիլիսոփայական իմաստավորման ընթացքում նորմատիվությունը կամ պիտոն պետք է ոչ միայն հաստատվի, այլև ենթարկվի ռեֆլեքսիայի: Այն, ինչ գոյություն ունի, կարող է իմաստավորվել պիտոյի միջոցով՝ նրանով, ինչը պիտի լինի, և հակառակը, այն, ինչ պետք է լինի (պիտո) համադրվում է նրա հետ, ինչը գոյություն ունի: Պետականության փիլիսոփայական իմաստավորման ընթացքում պետք է ոչ միայն բացահայտվի նորմը (իդեալը), այլև հիմնավորվի այն: Պետականության փիլիսոփայական իմաստավորման նորմատիվ կողմը նրան մոտեցնում է գաղափարախոսությանը, քանի որ ներառում է իդեալի վերաբերյալ գիտելիքներ: Այսպիսով, պետականության փիլիսոփայական իմաստավորումը պետք է անդրադառնա պետականության և՛ գոյին, և՛ պիտոյին, այսինքն՝ պետք է լինի և՛ ճշմարիտ, և՛ նորմատիվ:

Պետականության փիլիսոփայական իմաստավորման մյուս բնորոշ գիծը հակաթեոիկությունն է: Պետականության փիլիսոփայական իմաստավորման ընթացքում պետք է ձևակերպվի և զարգացվի ո՛չ միայն դրույթը, այլև հակադրույթը, որը ոչ պակաս կարևորություն ունի, քան դրույթը: Դա նշանակում է, որ թեպետ պետական փիլիսոփայական իմաստավորման ընթացքում պետք է առաջադրվեն սահմանային հարցեր, բայց դրանք չեն կարող վերջնական լուծում ստանալ: Հենց դրանով է պետականության փիլիսոփայական իմաստավորումը տարբերվում կոնկրետ գիտություններից:

Պետականության փիլիսոփայական իմաստավորման խնդիրները և հիմնական գործառույթները

Պետականության փիլիսոփայական իմաստավորման ընթացքում պետք է առաջադրվեն և լուծվեն մի շարք կարևոր խնդիրներ: Դրանք են՝

ա) պարզել պետականության կեցության բնույթը և բացահայտել դրա էությունը,

բ) պարզել, թե ինչո՞ւ կա պետականություն, որո՞նք են հասարակության և մարդու կյանքում պետականության ի հայտ գալու նախադրյալները, պայմանները, գործոնները,

գ) պարզել պետականության արժեքը, դերն ու նշանակությունը հասարակության և մարդու կյանքում, լայն առումով բացահայտել պետականության գործառույթները,

դ) ուսումնասիրել պետականության տեղն ու դերը հասարակության գիտատեխնիկական, տեխնոլոգիական-հաղորդակցական զարգացման գործում,

ե) մարդու կյանքի իմաստի և նպատակադրման համատեքստում քննարկել պետականության դերն ու նշանակությունը,

զ) բացահայտել պետականության, իրավունքի և օրենքի հարաբերակցությունը, այդ կապակցությամբ քննարկել և արժևորել պետականության, իրավունքի և օրենքի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և իրավական պետության վերաբերյալ տեսություններն ու հայեցակարգերը,

է) ուսումնասիրել անհատների, սոցիալական խմբերի և հասարակական պետական կեցությունն ու գիտակցությունը, պետականության մշակույթը,

ը) պարզել պետականության վերաբերյալ ընդհանուր սոցիալական, քաղաքական և իրավական գիտելիքների փիլիսոփայական հիմնավորվածությունը և դրանց գործնական կիրառման արդյունավետությունը,

թ) քննարկել և գնահատել ընդհանուր սոցիոլոգիայի, քաղաքագիտության և իրավագիտության գործառույթները, պետականության վերաբերյալ դրանց հայեցակարգերը, պետականության ուսումնասիրության մեթոդները, գիտական հետազոտությունների արդյունավետությունը:

Պետականության փիլիսոփայական իմաստավորման նշված խնդիրները կարող են փոփոխվել կամ լրացվել, ինչը պայմանավորված է հասարակության զարգացման ընթացքում և մարդու կյանքում տեղի ունեցող փոփոխություններով:

Պետականության փիլիսոփայական իմաստավորումն ունի մի շարք կարևոր գործառույթներ՝ գոյաբանական, արժեքաբանական, իմացաբանական, մեթոդաբանական, աշխարհայացքային: Գոյաբանական գործառույթն արտացոլում է պետականության կեցության, էության, համապարփակ հիմքերի, գոյության պայմանների ուսումնասիրությունները: Արժեքաբանական գործառույթն արտացոլում է պետականության այն չափումը, որը կապված է դրա նշանակալիության, կարևորության հետ և համեմատելի է մարդու ու հա-

սարակության սոցիալական արժեքների հետ: Իմացաբանական գործառույթի միջոցով ձեռք է բերվում գիտելիքների այնպիսի համակցություն, որը հնարավորություն է ընձեռում համակարգված արտացոլելու պետականությունն իբրև ամբողջ, ինչպես նաև բացահայտելու կոնկրետ գիտությունների կողմից պետականության ճանաչման հնարավոր բոլոր խնդիրները: Պետականության իմաստավորման իմացաբանական գործառույթի հետ սերտորեն կապված է մեթոդաբանական գործառույթը, որն արտահայտվում է պետականության ճանաչողության որոշակի մոտեցումների, եղանակների, միջոցների մշակման, հիմնավորման և փորձարկման մեջ: Պետականության փիլիսոփայական իմաստավորումն ունի նաև կարևոր աշխարհայացքային գործառույթ: Աշխարհայացքն աշխարհի, աշխարհում մարդու տեղի վերաբերյալ հայացքների և աշխարհի նկատմամբ մարդու վերաբերմունքի ամբողջությունն է, որի մեջ կարևոր տեղ ունեն պետականության, մարդու և պետության վերաբերյալ հայացքները և պետականության նկատմամբ մարդու վերաբերմունքը: Պետականության փիլիսոփայական իմաստավորման աշխարհայացքային գործառույթի միջոցով կձևավորվեն պետականության վերաբերյալ մարդու, սոցիալական խմբերի և հասարակության առավել խորը և ամբողջական հայացքներ, արժեքային գնահատականներ, ինչպես նաև որոշակի կերպով գործելու դիրքորոշումներ:

Պետականության փիլիսոփայական իմաստավորման գործառույթներին համապատասխան կարելի է առանձնացնել այդ իմաստավորման գոյաբանական, իմացաբանական և արժեքաբանական կողմերը. դա հնարավորություն է տալիս խոսելու պետականության գոյաբանական, իմացաբանական, արժեքաբանական իմաստավորումների մասին: Գոյաբանական իմաստավորումն ընդհանուր առմամբ պետք է հիմնվի փիլիսոփայական այն հիմնարար կատեգորիաների վրա, որոնք գծագրում են կեցության, հասարակության և մարդու ուսումնասիրությունների գոյաբանական չափումը: Աշխարհի իմաստավորման ընթացքում փիլիսոփայությունը ձևավորում է հիմնարար հասկացություններ՝ կատեգորիաներ, որոնք ամրակայում են իրականության առավել ընդհանուր և էական հատկություններն ու հարաբերությունները: Աշխարհի իմաստավորումը սկսվում է «կեցություն» կատեգորիայի միջոցով: Այն իր ծավալով չափազանց լայն և բովանդակությամբ չափազանց աղքատ հասկացություն է, որն արտահայտում է դրա միայն մեկ հատկանիշը՝ լինելը կամ գոյություն ունենալը: Կեցության կատեգորիայի հիմքն այն ակնհայտ փաստն է, որ մենք և մեզ շրջապատող իրերը, բնության երևույթները գոյություն

ունենք: Գոյությամբ են օժտված ոչ միայն զգայապես ընկալվող աշխարհը, այլև հոգևոր երևույթները՝ մտքերը, զգացմունքները, ապրումները, իդեալները և տեսությունները, երևակայությունը և առասպելները⁷:

Կեցության կատեգորիայի հետ սերտորեն կապված են այլ գոյաբանական կատեգորիաներ, ինչպիսիք են էությունը, փոփոխությունը, շարժումը, զարգացումը, տարածությունը, ժամանակը և այլն: Այս գոյաբանական կատեգորիաների և մի շարք կարևոր հասկացությունների միջոցով ուսումնասիրվում են կեցությունն իբրև այդպիսին, նրա հիմնարար սկզբունքները և հատկությունները:

Այդ տեսակետից, պետականության գոյաբանական իմաստավորման ընթացքում առաջին հերթին պետք է պարզել փիլիսոփայական, սոցիալական, քաղաքագիտական, իրավագիտական այն կատեգորիաների և հասկացությունների շրջանակը, որոնք կիրառելի են կեցության, մասնավորապես, սոցիալական կեցության, ինչպես նաև պետականության կեցության ուսումնասիրություններ կատարելիս:

Պետականության գոյաբանական իմաստավորման գործում առանձնահատուկ նշանակություն ունեն «կեցություն» և «էություն» փիլիսոփայական կատեգորիաները: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ պետականության գոյաբանական իմաստավորման առանցքը հենց պետականության կեցության և էության առանձնահատկությունների բացահայտումն է: Պետականության կեցության և էության վերաբերյալ պատկերացումները խտացված արտահայտված են պետության և պետականության վերաբերյալ տարբեր տեսություններում, ուսմունքներում ու հայեցակարգերում: Պետականության գոյաբանական իմաստավորման գործում այդ տեսությունների, ուսմունքների և հայեցակարգերի նշանակությունն այնքան կարևոր է, որ փիլիսոփայական տեսակետից նրանց համապատասխանում է «պարադիգմա» (հարացույց) կատեգորիան: Այս կատեգորիան գիտական շրջանառության մեջ է դրվել XX դարի երկրորդ կեսին, ամերիկացի փիլիսոփա Թ. Կունի կողմից: Նրա բնորոշմամբ, պարադիգմաները (հարացույցները) լայն ճանաչում ունեցող գիտական ձեռքբերումներ են, որոնք որոշակի ժամանակահատվածում գիտական հանրությանը տալիս են հիմնախնդիրների առաջադրման և լուծման մեթոդներ⁸: Այսինքն՝ պարադիգման (հարացույցը)

⁷ Философия 2000, 6.

⁸ Кун 2009, 11-12.

գիտական հանրության կողմից ընդունված ռացիոնալ գիտական գործունեության մոդել է: Թ. Կունի կարծիքով, բնական գիտությունների զարգացումը տեղի է ունենում մի հարացույցը մյուսով փոխարինելու միջոցով: Վիճակը մի փոքր այլ է սոցիալական գիտությունների զարգացման հարցում: Սոցիալական գիտությունների զարգացումը տեղի է ունենում ոչ այնքան հարացույցների փոփոխության, որքան նրանց միաժամանակյա գոյության և մրցակցության միջոցով: Դա վերաբերվում է նաև պետականությունն ուսումնասիրող գիտությունների զարգացմանը:

Պետականության գոյաբանական իմաստավորման ընթացքում պետք է անդրադառնալ դրա կեցության և էության վերաբերյալ կոնկրետ գիտություններում իշխող հարացույցներին, գնահատել, հիմնավորել կամ հերքել այդպիսիք: Պետք է պարզել նաև, թե պետականությունն ուսումնասիրող կոնկրետ գիտությունների հիմքում ընկած հարացույցները ժամանակակից պայմաններում որքանով են նպաստում կամ խոչընդոտում պետականության զարգացմանը:

Պետականության գոյաբանական իմաստավորման գործում կարևոր նշանակություն ունեն նաև այնպիսի փիլիսոփայական կատեգորիաներ, ինչպիսիք են տարածությունը և ժամանակը: Փիլիսոփայական պատկերացումների համաձայն, տարածությունը մատերիայի կարևոր ատրիբուտն է, որ ձևավորում է կեցության հենքը: Տարածության փիլիսոփայական պատկերացումը բազմակողմ է, ինչը թույլ է տալիս առանձնացնելու տարածության տարատեսակներ՝ աշխարհագրական, սոցիալական, մշակութային, հոգևոր և այլն: Տարածության տարատեսակ կարելի է համարել նաև պետականության տարածքը: Այս տարածքն ունի իր սահմանները, որի դրսևորումներից մեկը պետական սահմանն է: Պետական սահմանով զծագրված աշխարհագրական տարածությունում հաստատվում է պետության ինքնիշխանությունը:

Պետականության զարգացման պատմական միտումներից մեկն այն է, որ պետությունները ծագում են ընդարձակել իրենց տարածքը, ինչը հանգեցնում է պատերազմների և բազում աղետների: Պետականության զարգացման այս միտումը պետք է փիլիսոփայական իմաստավորում ստանա: Այսօր նկատվում է պետականության զարգացման հակասական միտում: Համաշխարհայնացման (գլոբալիզացիա) պայմաններում պետականության սահմանները, մի կողմից, դառնում են ավելի ու ավելի թափանցիկ և սկսում են վերացվել-ջնջվել, մյուս կողմից՝ ամրապնդվում են և կարծրանում: Պետականության զարգացման այսպիսի երկակի միտումը պետք է փիլիսոփայական իմաստավորում ստանա, մասնավորապես պետք է պարզել, թե երկու

հակասական միտումներից ո՞րն է առավել արժեքավորը ինչպես համայն մարդկության, այնպես էլ կոնկրետ հասարակությունների և ազգերի առումով: Պետականության փիլիսոփայական իմաստավորման կարևոր խնդիրներից է նաև այն, թե ի՞նչ պետք է անել, որ, մի կողմից, պահպանվեն համաշխարհային շահերը, մյուս կողմից՝ երաշխավորվեն ազգերի ու ժողովուրդների շահերն ու իրավունքները:

Ժամանակի փիլիսոփայական պատկերացումների համաձայն, այն ֆիզիկական, կենսաբանական, հոգեկան և այլ երևույթների ընթացքի ձև է: Փիլիսոփայությունն առանձնացնում է օբյեկտիվ և սուբյեկտիվ, պատմական, սոցիալական և այլ ժամանակներ: Ժամանակի կատեգորիան կարելի է կիրառել նաև պետականության նկատմամբ: Այդ տեսակետից պետականության գոյաբանական իմաստավորման կարևոր խնդիրներից է պետականության գոյության տևողությունը, նրա վիճակների հաջորդական փոփոխությունների բնույթն ու առանձնահատկությունները բացահայտելը:

Պետականության փիլիսոփայական իմաստավորումն ունի ոչ միայն գոյաբանական, այլև իմացաբանական կողմ: Իմացաբանությունը ճանաչողության փիլիսոփայական ուսմունք է, որն զբաղվում է ճանաչողության հետազոտություններով, քննադատությամբ և զանազան տեսություններով: Իմացաբանությունը ճանաչողության գործընթացը քննում է ճանաչողության օբյեկտի նկատմամբ ճանաչողության սուբյեկտի հարաբերությունների տեսանկյունից:

Ճանաչողությունը չափազանց բարդ և բազմակողմանի գործընթաց է: Ճանաչողության արգասիքը իրերի և երևույթների վերաբերյալ այնպիսի գիտելիքների ձեռքբերումն է, որոնք տարբերվում են այդ նույն իրերի և երևույթների վերաբերյալ առօրեական պատկերացումներից: Միևնույն ժամանակ, ճանաչողությունը չի կարող անտեսել իրերի և երևույթների վերաբերյալ առօրեական պատկերացումները: Փիլիսոփայական գրականության մեջ նշվում է, որ փիլիսոփայությունը, ձևավորելով աշխարհի իր պատկերը, մշտապես ձգտում է այն առանձնացնել առօրյա պատկերացումների աշխարհից, ինչպես նաև անցումներ գտնել դրանց միջև: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ փիլիսոփայության ելման դիրքն առօրեականությունն է, և առօրեական ու «ճշմարիտ իրականության» աշխարհների միջև կամուրջներ գտնելով է միայն հնարավոր կողմնորոշել մարդկային իմացությունն ու գործունեությունը⁹: Այս նկատառումները պետք է հաշվի առնել

⁹ Лекторский 2010, 31.

պետականության իմացաբանական իմաստավորման ընթացքում և կարևորել նաև պետականության վերաբերյալ առօրեական պատկերացումները:

Պետականության իմացաբանական իմաստավորումը նույնպես պետք է հիմնվի փիլիսոփայական կատեգորիաների վրա, որոնց միջոցով հնարավոր է բացահայտել պետականության ճանաչողության բնույթն ու առանձնահատկությունները: Այն կարող է ամբողջական գիտելիքներ տալ պետականության ճանաչողության էության, կառուցվածքի, ձևավորման, ընթացքի և զարգացման վերաբերյալ, մշակել պետականության վերաբերյալ գիտելիքների ճշմարտացիության և արժանահավատության չափանիշներ: Այդ ամենի միջոցով կընդլայնվեն պետականության ուսումնասիրությունների սահմանները, պետականության ճանաչողության հարցում նոր ազդակներ կհաղորդվեն ընդհանուր սոցիոլոգիային, քաղաքագիտությանը և իրավագիտությանը, վերջին հաշվով, կնպաստեն դրանց գիտելիքների խորացմանը:

Պետականության իմացաբանական իմաստավորումը, հաշվի առնելով էմպիրիկ, տեսական և փիլիսոփայական գիտելիքների տարբերակումը, հնարավորություն կընձեռի, ընդհանուր առմամբ բնութագրելու պետականության ճանաչողության փուլերն ու պրոցեդուրանները, բացահայտելու պետականության վերաբերյալ էմպիրիկ, տեսական և փիլիսոփայական գիտելիքների առանձնահատկությունները, մշակելու այդ գիտելիքների ճշմարտացիության չափանիշներ: Բացի այդ, դրա շնորհիվ կարող են ընդհանրացվել, մշակվել և միասնականացվել ճանաչողության այն սկզբունքներն ու նորմերը, որոնք պետականության հետազոտությունների ընթացքում պետք է կիրառվեն ընդհանուր սոցիոլոգիայի, քաղաքագիտության և իրավագիտության կողմից: Դրանով իսկ, այդ իմաստավորման շնորհիվ կլուծվի պետականության վերաբերյալ գիտելիքների համապարփակության հարցը:

Պետականության փիլիսոփայական իմաստավորման գործում կարևոր նշանակություն ունի նաև դրա արժեքանական բաղադրիչը: Արժեքանությունը փիլիսոփայական ուսմունք է, որն ուսումնասիրում է արժեքների աշխարհի կառուցվածքը և աստիճանակարգությունը, այդ աշխարհի գոյաբանական կարգավիճակն ու ճանաչման եղանակները, ինչպես նաև արժեքային դատողությունների մշակութաբանական, սոցիալական, քաղաքական, իրավական ողջ ներկայակնը: Արժեքանության հիմնական կատեգորիան արժեքն է: Փիլիսոփայական գրականության մեջ նշվում է, որ արժեքները մարդկային կեցության իմաստակազմ հիմքերն են, որոնք պայմանավորում են մարդկային կյանքի, գործունեության, կոնկրետ գործողությունների և արարքների

ուղղվածությունն ու շարժառիթները: Արժեքները մարդու նպատակասլաց գործունեության այն հիմքերն են, որոնք նրան հնարավորություն են տալիս ներդաշնակ ապրելու աշխարհում¹⁰:

Պետականության արժեքանական իմաստավորման ընթացքում, մարդու, սոցիալական խմբերի և պետության տեսական ու գործնական հարաբերություններից բացի, պետք է առանձնացվեն այն հարաբերությունները, որոնք վերաբերելի են բարու, ճշմարտի և գեղեցիկի միջոցով ձևավորվող կոորդինատների համակարգին: Պետականության արժեքանական իմաստավորումը հնարավորություն կընձեռի բացահայտելու ինչպես պետականությունը, որպես արժեք, այնպես էլ պետականության արժեքները, այդ բոլոր արժեքների բնույթը և տեղը իրականության մեջ ու արժեքային աշխարհի կառուցվածքում: Դա նշանակում է, որ պետականության արժեքանական իմաստավորման շնորհիվ կարող են բացահայտվել պետականության և պետական արժեքների կապերը միմյանց, մշակութային և սոցիալական գործոնների, ինչպես նաև անձի կառուցվածքի հետ:

Եզրակացություններ

Պետության և պետականության քաղաքագիտական, իրավագիտական, ընդհանուր սոցիոլոգիական ուսումնասիրությունների շրջանակից դուրս են մնում մի շարք կարևոր հարցեր, որոնք կապված են դրանց գոյության հիմքերի, էության, արժեքի, հասարակական կյանքում դերի ու նշանակության, ինչպես նաև դրանց ճանաչողության ընդհանուր եղանակների հետ: Այդ հարցերի ուսումնասիրությունը հնարավոր է միայն պետության ու պետականության փիլիսոփայական իմաստավորման պայմաններում, ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ պետականությունն առավել լայն հասկացություն է, և պետությունը սոսկ նրա բաղադրիչներից մեկն է:

Պետականության փիլիսոփայական իմաստավորումն ունի գոյաբանական, իմացաբանական և արժեքանական կողմեր, համապատասխանաբար կարելի է խոսել պետականության գոյաբանական, իմացաբանական և արժեքանական իմաստավորումների մասին: Պետականության գոյաբանական իմաստավորման միջոցով կարելի է բացահայտել պետության կեցության համապարփակ հիմքերը, գոյության պայմանները, էությունը, իմացաբանական իմաստավորման միջոցով՝ կոնկրետ գիտությունների կողմից պետակա-

¹⁰ Иванов 2004, 545.

նության ուսումնասիրության մոտեցումների, եղանակների և միջոցների հիմնավորվածությունն ու արդյունավետությունը, արժեքանական իմաստավորման միջոցով՝ պետականության և դրա հետ կապված արժեքների բնույթն ու փոխադարձ կապերը:

¹⁴ Парасоцкая 2012, 58.

ciation and losses from devaluation, and the animals are in the scope of ISA 41, irrespective of the fact, whether they are fertile or consumable (graph 3).



Graph 3: The Inclusion of Fertile Plants and Productive Animals within the Scope of ISAs

In addition, as a result of the amendments in the standard, the tree grown by the organization's own means will be considered as inaccessible fixed asset for use, before it becomes fruitful, that is to say, the expenses incurred on the tree year after year (before it becomes fruitful) should be collected in the corresponding account of 82 groups of an accounting plan, be wrote off in the end of the year and be reflected in the account "Inaccessible fixed assets for use".

Conclusion

Thus, International Accounting Standards have unique approaches to the classification, accounting, and evaluation of living plants and living animals, and the task of accounting is to form reliable information on biological assets and agricultural products, that meets international standards.

Literature

- ՀՀՄՍ 41 «Գյուղատնտեսություն» ստանդարտ, ՀՀ կառավարության 11.03.2010 թ. N 235-Ն որոշման հավելված, դրվագ 5, 4:
- Балашова Н.Н., Цепляева М.В. 2018, Методические основы представления и раскрытия информации о биологических активах и отчетно-операционных сегментах субъекта агробизнеса. Международная научно-практическая конференция, т. 3, Волгоградский ГАУ, Волгоград, с. 3-8.
- Береза А.О. 2019, Оценки биологических активов по справедливой стоимости, Мир новой экономики, #3, с. 59-70 <https://wne.fa.ru/jour/article/view/221/212> (дата обращения: 25.01.2022).

- Гасанов М.Ю. 2013, Особенности оценки биологических активов, «Молодой учёный», #6, с. 292, file:///C:/Users/User/Downloads/moluch_53_ch2.pdf (дата обращения: 25.01.2022).
- Гренадерова М.В., Петрова В.М. 2020, Проблемы учета в сельскохозяйственной отрасли: российские и международные подходы, Вестник Алтайской академии экономики и права, # 10-2, с. 120-126, URL:<https://vaael.ru/ru/article/view?id=1356> (дата обращения: 25.01.2022).
- Клычова Г.С., Закирова А.Р., Ситдикова Л.Ф. 2015, Методический инструментарий учета биологических активов в сельскохозяйственных организациях, Международный бухгалтерский учет, # 10, с. 14-25. <https://cyberleninka.ru/article/n/metodicheskie-podhody-k-uchetu-biologicheskikh-aktivov-rastenievodstva/viewer> (дата обращения: 15.01.2022).
- Левчук И.С., Горбач Н.Ф. 2019, Отражение информации о биологических активах растениеводства в бухгалтерской отчетности с учетом требований МСФО (на примере зерновых культур), Сборник научных статей, Гродно, ГГАУ, с. 154-155.
- Никитина А.А., Буранбаева Л.З., Мазитов Р.Ф., Ханова И.М., Сибатулла Р.М. 2021, Учет биологических активов по международным и российским стандартам, Управленческий учет, # 6, с. 324-332, <https://uprav-uchet.ru/index.php/journal/article/view/796/352> (дата обращения: 05.03.2022).
- Яковлева Я.С. 2020, Биологические активы в российской и международной практике, Экономика и бизнес: теория и практика, # 8 (66), с. 204-209, <http://economyandbusiness.ru/wp-content/uploads/2021/06/Yakovleva-1.pdf> (дата обращения: 25.01.2022).
- Терехов А.М., Терехова А.В. 2015, Методические аспекты оценки биологических активов в сельскохозяйственных организациях Нижегородской области, Научный альманах, #2 (4), с. 27-34, <https://ukonf.com/doc/na.2015.02.pdf#page=27> (дата обращения: 24.02.2022).
- Шелест Е.А., Гонтаренко Т.А. 2016, Особенности применения международного стандарта финансовой отчетности 41 в Украине, Научный вестник, ДГМА, # 1, с. 225 [http://www.dgma.donetsk.ua/science_public/science_vesnik/%E2%84%961\(19%D0%95\)_2016/article/33.pdf](http://www.dgma.donetsk.ua/science_public/science_vesnik/%E2%84%961(19%D0%95)_2016/article/33.pdf) (дата обращения: 25.01.2022).
- Парасоцкая Н.Н. 2012, Особенности учета и принципы признания биологических активов в учете и отчетности согласно МсФО 41, Международный бухгалтерский учет, # 12 (210), с. 55-60 <file:///C:/Users/User/Downloads/osobennosti-ucheta-i-printsipy-priznaniya-i-otsenki-biologicheskikh-aktivov-v-uchete-i-otchetnosti-soglasno-msfo-ias-41.pdf> (дата обращения: 21.03.2022).

ԿԵՆՍԱՐԱՆԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ

Մանյա Պողոսյան, Գոհար Հարությունյան

Ամփոփում

Քանի որ կենսաբանական ակտիվների և գյուղատնտեսական արտադրանքի հաշվառման խնդիրը միջազգային չափորոշիչներին համապատասխան արժանա-

հավատ տեղեկատվության ձևավորումն է, ուստի հաշվառման տեսանկյունից կարևորվում է նորմատիվ ակտերի կիրառման տեսական հիմքերի բացահայտումը:

Քննելով կենսաբանական ակտիվները՝ որպես ՀՀՄՍ 41 «Գյուղատնտեսություն» չափորոշչի կիրառման օբյեկտի առանցքային պայմաններ կենսաբանական ակտիվների վաճառքի համար՝ պայմանավորված կենսաբանական փոխակերպման կառավարմամբ, նպատակ ունենք բացահայտել այն հանգամանքերը, որոնց շնորհիվ ներկայացված կենսաբանական ակտիվները ներառվում են այլ չափորոշիչներում:

Միջազգային չափորոշիչներում ներառվող կենդանի բույսերի և կենդանիների դասակարգման վերաբերյալ տեսական մոտեցումները համահունչ են ՀՀՄՍ 41 չափորոշիչներում կատարված փոփոխություններին, որոնք բացառում են բերքատու բույսերը ՀՀՄՍ 41 «Գյուղատնտեսություն» չափորոշչի գործողության դաշտից:

Բանալի բառեր՝ գյուղատնտեսական գործունեություն, կենսաբանական ակտիվներ, գյուղատնտեսական արտադրանք, հաշվառում, կենսաբանական փոխակերպում, ՀՀՄՍ 41 «Գյուղատնտեսություն», միջազգային չափորոշիչներ:

ПРОБЛЕМЫ УЧЕТА БИОЛОГИЧЕСКИХ АКТИВОВ ПО МЕЖДУНАРОДНЫМ СТАНДАРТАМ

Маня Погосян, Гоар Арутюнян

Резюме

Поскольку задачей учета биологических активов и сельскохозяйственной продукции является предоставление достоверной информации в соответствии с международными стандартами, то весьма важно раскрыть теоретические основы применения нормативных актов с точки зрения бухгалтерского учета.

С этой целью необходимо рассмотреть ключевые условия применения биологических активов в качестве объекта использования стандарта МСФО (IAS) 41 «Сельское хозяйство» для продажи биологических активов под управлением биологической конверсии для выявления обстоятельств, при которых биологические активы включаются в другие стандарты.

Представленные теоретические подходы классификации живых растений и животных, включенных в Международные стандарты в соответствии с поправками к МСФО 41, исключают плодовые культуры из сферы действия МСФО 41 «Сельское хозяйство».

Ключевые слова – сельскохозяйственная деятельность, биологические активы, сельскохозяйственная продукция, учет, биологическая трансформация, МСФО 41 «Сельское хозяйство», международные стандарты.

THE PROBLEM OF ACCOUNTING OF BIOLOGICAL ASSETS TO INTERNATIONAL STANDARDS

Manya Poghosyan, Gohar Harutyunyan

Abstract

As the purpose of accounting for biological assets and agricultural products is to provide reliable information in accordance with international standards, this article is devoted to revealing the theoretical basis for the application of normative acts from the point of view of accounting.

The article discusses the key conditions for the use of biological assets as the subject of IAS 41 Agriculture for the sale of biological assets under the management of biological conversion in order to identify the circumstances in which biological assets are included in other standards.

This article also presents the theoretical approaches to the classification of live plants and animals included in international standards in line with the amendments to IAS 41, which exclude crops from the scope of IAS 41 Agriculture.

Key words – agricultural activity, biological assets, agricultural products, accounting, biological transformation, IAS 41 "Agriculture", international standards.

ՀՀ ԳՆԱՃԻ ՇԱՐԺՆԹԱՅԸ 2008-2020 ԹԹ.

Դիանա Գևորգյան

Տնտեսագիտության թեկնածու
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոն
ՀՀ, Երևան, Նալբանդյան 128

Էլ. հասցե՝ diana.gevorgyan91@gmail.com

Հոդվածը ներկայացվել է 21.12.2021, գրախոսվել է 11.11.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.3-183

Ներածություն

Ինչպես ցանկացած երկրի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության տնտեսության մրցունակության գնահատման տեսանկյունից առանցքային նշանակություն ունի նաև գնաճի շարժընթացի ուսումնասիրությունը: Այն խաթարում է մրցունակության բնականոն ընթացքը: Երկրները փորձում են պահպանել գների կայուն մակարդակը և չափավոր աճը, քանի որ գնաճի բարձր տեմպերը հանգեցնում են տնտեսության բնականոն ռիթմի խաթարմանը: Այն կարող է նվազեցնել նաև խնայողությունների իրական արժեքը, երբ իրական տոկոսադրույքները բացասական են:

Գնաճի շարժընթացը ՀՀ-ում

Վերջին տարիներին ՀՀ-ում գնաճը կրում է տատանողական բնույթ: Սա պետք է համարել օբյեկտիվ օրինաչափություն, որը բնորոշ է գրեթե բոլոր զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներին: Պատճառն այն է, որ այդպիսի տնտեսությունները տարբեր գնաճային ճնշումների նկատմամբ խիստ զգայուն են:

Պետք է նշել, որ վերջին տարիներին գնաճի տեմպը ՀՀ-ում բարձր չէ և կառավարելի է¹: Ինչպես աշխարհի գրեթե բոլոր երկրների կենտրոնական բանկերը, ՀՀ կենտրոնական բանկը (ԿԲ) ևս նպատակ է հետապնդում ապահովելու գների, ինչպես նաև ֆինանսական կայունությունը: Գների կայունությունը տնտեսական գործունեության համար անխաթար պայմանների ստեղծման հիմնական նախադրյալներից է: Գների կայունության ապահովմամբ ԿԲ-ն նպաստում է երկարաժամկետ հատվածում բարձր տնտեսական աճին, հետևաբար նաև բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

¹ Ֆինանսական կայունության հաշվետվություն 2016, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/fin_kay_17.pdf, էջ 7:

Միջազգային փորձի հիման վրա իրականացված վերլուծությունները ցույց են տալիս, որ բարձր և տատանողական գնաճը խոչընդոտում է տնտեսության զարգացմանը: Մասնավորապես, բարձր և տատանողական գնաճի պայմաններում, որը, ի դեպ, ուղեկցվում է նաև գների փոփոխման հետագա անորոշությունների մեծացմամբ, կրճատվում են իրական եկամուտներն ու խնայողությունները, ինչպես նաև ներդրումները երկարաժամկետ բիզնես ծրագրերում: 2007 թ. սկսած՝ ՀՀ-ում գնաճի նպատակային թիրախ է սահմանվել 4%-ը՝ $\pm 1.5\%$ շեղման թույլատրելի միջակայքով: Գնաճը չափվում է սպառողական գների համաթվի միջոցով, որը սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանքների և ծառայությունների գների միջին մեծությունն է: Սակայն 2017 թ. չորրորդ եռամսյակում տնտեսական աճը կազմել է 2.5%, որի պարագայում 2017 թ. միջին տնտեսական աճը 2.25% է (զձ.)²: 2018 թ. երկրորդ եռամսյակում, սեզոնային ապրանքների գնանկմամբ պայմանավորված, գնաճը որոշակիորեն դանդաղել է: 2018 թ. առաջին կիսամյակում պահպանվել է բարձր տնտեսական ակտիվություն՝ հիմնականում մասնավոր հատվածի ներդրումների բարձր աճի հետ կապված: Հումքային և պարենային ապրանքների շուկաներում պահպանվել են գնային համեմատաբար բարձր մակարդակները՝ պայմանավորված կայուն պահանջարկի պարագայում առաջարկի գործոնների և դրանց առնչվող խնդիրներով³:

Վերջին տարիներին ՀՀ-ում նկատվում է գնաճի տեմպի անկում: 2013-2015 թթ. ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող դրամավարկային քաղաքականությունը բնութագրվում է չեզոքից դեպի ընդլայնող ուղղվածությամբ: ՀՀ ԿԲ-ն այս ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, թուլացրել և մեղմել է դրամավարկային պայմանները՝ ակնկալելով նպաստել գնաճի ցուցանիշի կայունացմանը (4 ± 1.5) և համախառն պահանջարկի ընդլայնմանը: Սակայն 2014 թ. տարեվերջը կարելի է առանձնացնել որպես ֆինանսական և արժույթային շուկաներում ձևավորված լարվածության ժամանակահատված, որին ՀՀ ԿԲ-ն արձագանքել է՝ ճշգրտելով դրամավարկային քաղաքականության ուղղությունը ընդլայնողից դեպի զսպող: 2015 թ. տարեվերջից նախ իրականացվել են մակրոպրոդեցիալ⁴ մի շարք միջոցառումներ, ապա անփո-


² ՀՀ ԿԲ, Գնաճի հաշվետվություն, Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 1-ին եռամսյակ, 2018, էջ 4 (36), https://www.cba.am/AM/ppperiodicals/gnach_I_18.pdf

³ ՀՀ ԿԲ, Գնաճի հաշվետվություն, Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 3-րդ եռամսյակ, 2018, էջ 4-7 (38), https://www.cba.am/AM/ppperiodicals/gnach_III_18.pdf

⁴ Մակրոպրոդեցիալ գործիքների արդյունավետ ընտրության հիմքում ընկած են մակրոպրոդեցիալ քաղաքականության միջանկյալ նպատակները, որոնք, ըստ էության, բնութագրում են

փոխ են թողնվել դրամավարկային պայմանները, և միայն տարվա երկրորդ կեսից գնաճային սպասումների նվազմանը զուգահեռ մեղմվել են դրամավարկային պայմանները:

Գծապատկեր. Գնաճի շարժընթացը ՀՀ-ում 2008-2020 թթ.
(ըստ սպառողական գների համաթվի, տարեկան %)⁵



2016 թ. ընթացքում ՀՀ ԿԲ-ն իրականացրել է դրամավարկային պայմանների շարունակական մեղմում, և գնաճային սպասումները մեղմվել են ավելի արագ տեմպերով: Նպաստող գործոններից է եղել նաև բնական գազի սակագնի իջեցումը:

2016 թ. տարեսկզբից ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է գնանկումային միջավայր: Հուլիսին, նախորդ տարվա հուլիսի նկատմամբ, գնանկումը կազմել է 1.3%, որը պայմանավորվել է պարենային ապրանքախմբում (ներառյալ ոգելից խմիչքը և ծխախոտը) արձանագրված 2.2% գնանկումով (բացասական նպաստումը գնաճին՝ 1 տոկոսային կետ), ոչ պարենային ապրանքների գների 3% գնանկումով (բացասական նպաստումը՝

համակարգային ռիսկի դրսևորման հնարավոր աղբյուրները: Այսինքն, նախ գնահատվում են ռիսկերի հավանական աղբյուրները, դրանց հարաբերական ուժգնությունը, որից ածանցված թիրախավորվում են մակրոպրոդենցիալ քաղաքականության կոնկրետ միջանկյալ նպատակներ, և ընտրվում են մակրոպրոդենցիալ համապատասխան գործիքներ:

⁵ World Bank Group, Inflation, https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?locations=AM&year=2006&year_low_desc=true

0.6%-ային կետ) և ծառայությունների սակագների 0.9% հավելաճով (նպաստումը գնաճին՝ 0.3%-ային կետ)⁶:

Տնտեսության մրցունակության գնահատման տեսանկյունից անկյունաքարային են նաև ազգային արժույթի փոխարժեքի դերն ու նշանակությունը: 2015-17 թթ. ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ տատանողական բնույթ է ունեցել:

2017 թ. չորրորդ եռամսյակում միջբանկային դրամային տոկոսադրույքները նախորդ եռամսյակի համեմատությամբ բարձրացել են: Այդ ժամանակահատվածում ԱՄՆ-ի դաշնային պահուստային համակարգը, շարունակելով դրամավարկային պայմանների աստիճանական խստացումը, ևս 0.25%-ային կետով բարձրացրել է պահուստային միջոցների տոկոսադրույքները: ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի անվանական փոխարժեքը հիմնականում դրսևորել է կայուն վարքագիծ՝ արժեզրկվելով 1%-ով: ԱՄՆ դոլարի նկատմամբ գործընկերների արժույթները նույնպես արժեզրկվել են: Ամբողջությամբ հակակշռելով ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկմանը՝ ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքը չորրորդ եռամսյակում մնացել է նախորդ եռամսյակի մակարդակում. արժևորում՝ ընդամենը 0.1%: Անվանական արդյունավետ փոխարժեքը մոտ 1.5%-ային կետով արժևորվել է՝ պայմանավորված նախորդ եռամսյակի նկատմամբ ՀՀ տնտեսության գնաճի տեմպերի արագացմամբ⁷:

Պետք է նկատել, որ տնտեսության մրցունակության վրա նշանակալի ազդեցություն է ունենում նաև ազգային արժույթի փոխարժեքը: Այսպես՝ ուժեղ ազգային արժույթը զսպում է արտահանումը՝ պայմաններ ստեղծելով ներմուծման ակտիվացման համար: Դա է պատճառը, որ շատ երկրներ միջազգային շուկայում տեղական արտադրության ապրանքների և ծառայությունների իրացման ծավալների աճը խթանելու համար երբեմն վարում են ազգային արժույթի արժեզրկման քաղաքականություն: Սակայն պետք է նկատել, որ ՀՀ-ում այդպիսի քաղաքականության կիրառումը կարող է ճիշտ հակառակ ազդեցությունն ունենալ: Պատճառն այն է, որ ՀՀ-ն, հարուստ չլինելով բնական ռեսուրսներով, պարտադրված է դրանք ներմուծել: Հատկապես մեծ է ՀՀ տնտեսության կախվածությունը էներգակիրներից՝ նավ-

⁶ ՀՀ Ազգային ժողով, ՀՀ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումը, http://www.parliament.am/draft_docs5/K-862_arajarkutyunnerov/1.2.Uxerc.Mas.1b.pdf, էջ 91-93 (123)

⁷ Գնաճի հաշվետվություն 2018, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/gnach_I_18.pdf, էջ 27-29 (36):

թից և գազից, իսկ վերջիններիս ձեռքբերման համար ՀՀ-ն վճարում է արտարժույթով: Այսպիսով՝ ազգային արժույթի դիրքերի թուլացման քաղաքականությունը կհանգեցնի ներքին շուկայում շատ ապրանքների և առաջին հերթին էներգակիրների գների աճի: Սա, իր հերթին, կունենա ընդգծված սոցիալական և տնտեսական բացասական դրսևորումներ: Այն ընկերությունները, որոնք չունեն արտահանման կողմնորոշում և օգտագործում են էներգակիրներ (հատկապես առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ հաց, աղ, ջուր, տրանսպորտ և այլն), պարտադրված կլինեն բարձրացնելու վաճառքի գները, ինչը կարող է հանգեցնել նոր սոցիալական ցնցումների: Այս առումով ՀՀ-ն կարծես թե չի կարող ազատորեն օգտվել թույլ արժույթային քաղաքականության միջոցով միջազգային շուկայում տեղական ապրանքների ու ծառայությունների գնային մրցունակությունը բարձրացնելու հնարավորությունից:

2017 թ. չորրորդ եռամսյակում ԱՄՆ-ի դաշնային պահուստային համակարգի կողմից իրականացված և սպասվող դրամավարկային քաղաքականության ներքո գործընկեր երկրների արժույթային շուկաներում արձանագրվել են ԱՄՆ դոլարի արժևորման ճնշումներ: Գործընկեր երկրների միջև կշռված անվանական փոխարժեքը 2017 թ. արժեզրկվել է 3%-ային կետով՝ պայմանավորված հիմնականում եվրոյի, թուրքական լիրայի և բուլղարական լևի արժեզրկմամբ (համապատասխանաբար՝ 1.1, 0.6 և 0.6 տոկոսային կետ նպաստում), մինչդեռ, ռուսական ռուբլին արժևորվել է: ՀՀ դրամի անվանական միջին փոխարժեքն ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.7%-ով⁸:

2019 թ. սկզբին պահպանվել է 2018 թ. ձևավորված ցածր գնաճային միջավայրը, և ՀՀ ԿԲ-ն շարունակում է իրականացնել խթանող դրամավարկային քաղաքականություն, որի պարագայում, համախառն պահանջարկի վերականգնմանը զուգընթաց, գնաճը միջնաժամկետում կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

2018 թ. չորրորդ եռամսյակից մինչև 2019 թ. չորրորդ եռամսյակն ընկած ժամանակահատվածում 12-ամսյա գնաճը պահպանվել է ցածր մակարդակում՝ կազմելով 0.5%: 2019 թ. ընթացքում, պահպանվող ցածր գնաճային միջավայրում, ԿԲ-ն շարունակել է վարել խթանող դրամավարկային

⁸ Գնաճի հաշվետվություն 2017, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/Gnach%201_17.pdf, էջ 40-42:

քաղաքականություն, սակայն մշտապես նախապատվությունը տրվել է գնաճի՝ իր նպատակային ցուցանիշի շուրջ աստիճանական խարսխմանը⁹:

Արտաքին աշխարհի հետ հարաբերություններում ՀՀ-ն համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը ազատականացված է: Վճարային հաշվեկշիռը հնարավորություն է ընձեռում գնահատելու երկրի արժութային և ֆինանսական վիճակը, կատարելու վերլուծություններ և դրանց հիման վրա էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու մակրոտնտեսական քաղաքականության մշակման գործընթացը: Այս տնտեսական գործիքը լավագույնս բնութագրում է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը: Այն նաև ցույց է տալիս, թե տվյալ երկիրը արտադրող է (երբ առկա է վճարային հաշվեկշռի դրական մնացորդ) կամ սպառող (երբ վճարային հաշվեկշռի մնացորդը բացասական է): Երկրի ընթացիկ հաշվի ճեղքվածքը առաջանում է ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման տարբերությունից:

2019 թ. առաջին երեք եռամսյակներին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ընթացիկ հաշվի պակասուրդը գերազանցում էր նախորդ տարվա ցուցանիշները: Ընթացիկ հաշվի պակասուրդը 2019 թ. երրորդ եռամսյակում կազմել է մոտ - 251 մլն ԱՄՆ դոլար, մինչդեռ 2018 թ. երկրորդ և երրորդ եռամսյակների ընթացքում գրանցվել են դրական ցուցանիշներ:

Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության տարեկան ցուցանիշը 2019 թ. հունվար-սեպտեմբերին արդեն կազմել է 8.5% և մոտենում էր վտանգավոր շեմին, ուստի դա լուրջ ահազանգ էր ՀՀ տնտեսության համար, որը կարող էր կանգնել արժութային և տնտեսական ճգնաժամերի առաջացման վտանգի առաջ:

2020 թ. ապրիլից 2021 թ. մարտն ընկած ժամանակահատվածը անբարենպաստ էր թե՛ ամբողջ աշխարհի և թե՛ Հայաստանի տնտեսության համար: 2019 թ. վերջին աշխարհում բռնկված նոր կորոնավիրուսի համավարակը, ինչպես նաև Հայաստանի և Արցախի Հանրապետության դեմ 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեյջանի սանձազերծած պատերազմը Հայաստանը կանգնեցրին տնտեսական, սոցիալական և առողջապահական լուրջ խնդիրների առջև: ՀՀ-ում դրանք արտահայտվեցին տնտեսական ցուցանիշների անկմամբ և գնաճային ցածր միջավայրի ձևավորմամբ: Ստեղծված իրա-

⁹ Գնաճի հաշվետվություն 2020, ՀՀ ԿԲ, file:///C:/Users/diana.gevorgyan/AppData/Local/Temp/7z08B2B3D1A/Gnach_I_19.pdf, էջ 4-5:

վիճակում կառավարությունը իրականացրել է հարկաբյուջետային, իսկ Կենտրոնական բանկը՝ դրամավարկային խթանող քաղաքականություն: 2020 թ. ՀՀ տնտեսության տարեկան աճի տեմպը կանխատեսված 0.7%-ից ԿԲ-ն իջեցրել է -0.4%-ի, որը պայմանավորված էր ինչպես երկրորդ եռամսյակում ակտիվության անկման խորացմամբ, այնպես էլ ՀՀ տնտեսության վերականգնման դանդաղ տեմպով: Հայաստանում գնաճը 2020 թ. չի գերազանցել նախատեսված 4%-անոց մակարդակը: 2020 թ. նոյեմբերին գնաճը կազմել է 1,3%՝ 2019 թ. նույն ժամանակահատվածում գրանցված 1,1%-ի համեմատ, և 12-ամսյա գնաճը կազմել է 1,6%, ինչը դեռևս ցածր է նպատակային 4%-ի ցուցանիշից¹⁰:

Կենտրոնական բանկը վերաֆինանսավորման տոկոսադրույքը գրեթե չորս տարի՝ 2017 թ. փետրվարից աստիճանաբար իջեցնելուց հետո (երբ 6 %-ից այն հասավ 4,25%-ի), 2020 թ. դեկտեմբերին կտրուկ բարձրացրեց մեկ տոկոսային կետով՝ 5,25%: Այնուհետև, 2021 թ. ընթացքում ԿԲ-ն շարունակաբար բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հասցնելով 7%-ի: Կենտրոնական դրամատունը տարիներով նվազեցնում էր վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ նպատակ ունենալով այդ կերպ առավել մատչելի դարձնել ֆինանսական միջոցների հասանելիությունը տնտեսությունում, ուստի նաև խթանել տնտեսական աճը: Այժմ Կենտրոնական դրամատունը գնաճի նման պայմաններում թանկացնում է դրամը՝ զսպելու գների աճը:

Եզրակացություններ

Գնաճը բացասական երևույթ չէ, եթե մարդկանց եկամուտները աճում են համաչափորեն: Այստեղ խնդիրը ոչ թե գնաճն է, այլ այն, որ մարդկանց եկամուտները համապատասխան չափով չեն աճել: Պաշտոնական վիճակագրությամբ՝ միջին անվանական աշխատավարձը 2020 թ. ընթացքում աճել է 5,4%-ով, իսկ գնաճը՝ 1.6%-ով:

Գրականություն

Գնաճի հաշվետվություն 2017, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/Gnach%20I_17.pdf, էջ 42 (ներբեռնման օրը՝ 10.09.2021):

Գնաճի հաշվետվություն 2018, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/gnach_I_18.pdf, էջ 36 (ներբեռնման օրը՝ 12.09.2021):

¹⁰ Դրամավարկային քաղաքականության հաշվետվություն ծրագրի կատարում 2021, ՀՀ ԿԲ, էջ 3-4, <https://www.cba.am/AM/ppperiodicals/MP%20report%202021Q1.pdf>

- Գնաճի հաշվետվություն 2018, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/gnach_III_18.pdf էջ 38 (ներբեռնման օրը՝ 10.09.2021):
- Գնաճի հաշվետվություն 2020, ՀՀ ԿԲ, file:///C:/Users/diana.gevorgyan/AppData/Local/Temp/7z08B2B3D1A/Gnach_I_19.pdf, էջ 45 (ներբեռնման օրը՝ 10.09.2021):
- Դրամավարկային քաղաքականության հաշվետվություն ծրագրի կատարում 2021, ՀՀ ԿԲ էջ 35 <https://www.cba.am/AM/ppperiodicals/MP%20report%202021Q1.pdf> (ներբեռնման օրը՝ 10.09.2021):
- ՀՀ Ազգային ժողով, ՀՀ տնտեսական և հարկաբյուջետային հիմնական ցուցանիշների կանխատեսումը. http://www.parliament.am/draft_docs5/K-862_arajarkutyunnerov/1.2.Uxerc.Mas.1b.pdf, էջ 123 (ներբեռնման օրը՝ 10.09.2021):
- ՀՀ ԿԲ, Գնաճի հաշվետվություն, Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 1-ին եռամսյակ, 2018, էջ 36, https://www.cba.am/AM/ppperiodicals/gnach_I_18.pdf (ներբեռնման օրը՝ 10.09.2021):
- Ֆինանսական կայունության հաշվետվություն 2016, ՀՀ ԿԲ, https://www.cba.am/AM/ppperiodicals/fin_kay_17.pdf, էջ 61 (ներբեռնման օրը՝ 10.09.2021):
- World Bank Group, Inflation, https://data.worldbank.org/indicator/FP.CPI.TOTL.ZG?location=s=AM&year=2006&year_low_desc=true (ներբեռնման օրը՝ 10.09.2021):

ՀՀ ԳՆԱՃԻ ՇԱՐՇԸՆԹԱՅԸ 2008-2020 ԹԹ.

Դիանա Գևորգյան

Ամփոփում

Գնաճը խոչընդոտ է միջազգային մրցունակության համար: Յուրաքանչյուր երկիր փորձում է զսպել գնաճը, քանի որ այն հանգեցնում է տնտեսական լուրջ խնդիրների առաջացմանը: Անհրաժեշտ է պահպանել գնաճի առավելագույն ցածր մակարդակը, որ փողը չկորցնի իր արժեքը: Գնաճը բացասաբար է ազդում նաև գնողունակության մակարդակի վրա: Դա պայմանավորված է նրանով, որ դոլարն արժեզրկված է, և նրանք չեն կարող գնել բավարար չափով ապրանքներ և օգտվել ծառայություններից: Հետևաբար, պահանջարկը նվազում է:

Հավելենք, որ գնաճը իջեցնում է խնայողությունների իրական արժեքը, երբ իրական տոկոսադրույքները բացասական են: Սա նշանակում է, որ տոկոսադրույքը չի ճշգրտվում գների ընդհանուր մակարդակը բարձրացնելու համար: Վարկառուի պարտքի իրական արժեքը նվազել է: Եթե գնաճը դառնում է անկանխատեսելի, տնտեսվարողները չեն կարող հասկանալ թե առաջիկայում գների ինչ փոփոխություն կլինի: Եթե մասնագետները կարողանան ճշգրիտ հաշվարկել գնաճը, կապահովեն կայունություն, օրինակ՝ ընկերությունները կարող են սահմանել իրենց գները, իսկ վարկատուները՝ կարգավորել տոկոսադրույքը: Սրանք են այն պատճառները, որոնք երկրների կառավարություններին մղում են պայքարելու գնաճի դեմ:

Բանալի բառեր՝ գնաճ, գնողունակություն, մրցունակություն, գների մակարդակ, վերաֆինանսավորման տոկոսադրույք, ազգային արժույթի փոխարժեք, Կենտրոնական բանկ:

УРОВЕНЬ ИНФЛЯЦИИ В РА В 2008-2020 ГГ.

Диана Геворгян

Резюме

Инфляция подрывает международную конкурентоспособность. Правительства пытаются снизить инфляцию разными способами, поскольку это приводит к перекосам и проблемам в экономике. Инфляция должна поддерживаться на самом низком уровне, чтобы люди в стране были уверены в ценности собственной валюты. Явление инфляции также может привести к снижению реальной стоимости сбережений при отрицательных реальных процентных ставках. Это означает, что процентная ставка не корректируется для повышения общего уровня цены. Когда из года в год инфляция становится непредсказуемой, экономисты не могут прогнозировать, каков будет уровень инфляции в ближайшем будущем. Если бы экономисты могли рассчитать инфляцию, то это обеспечило бы стабильность, а именно: компании могли бы устанавливать свои цены, а кредиторы – урегулировать процентные ставки. Этим обусловлена борьба мировых правительств с инфляцией.

Ключевые слова – инфляция, покупательская способность, конкурентоспособность, ценовой уровень, ставка рефинансирования, курс национальной валюты, Центральный банк.

INFLATION RATE IN RA DURING 2008-2020

Diana Gevorgyan

Abstract

Inflation undermines international competitiveness. Governments try to reduce inflation in many ways, as this leads to distortions and problems in the economy. It can reduce purchasing power and the level of demand. The phenomenon of inflation can also lead to a decrease in the real value of savings at negative real interest rates.

This means that the interest rate is not adjusted to increase the overall price level. When inflation is unpredictable from year to year, economists can not predict what the rate of inflation will be in the near future. When people can accurately calculate inflation, it would be possible to rely on self-defence; for example, companies can set their own prices and lenders can adjust interest rates. Because of this, I think the government wants to fight inflation. These are reasons why governments may want to fight inflation.

Key words – purchasing power, competitiveness, price level, refinancing rate, national currency rate, Central Bank.

**ՍՓՅՈՒՌՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ԵՎ ՆՈՐ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

Միհրան Գալստյան

Պատմական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ akoonk@yahoo.com

Գայանե Հակոբյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Էլ. հասցե՝ gayik20@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 10.03.2022, գրախոսվել է 13.07.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.3-193

Ներածություն

Հետխորհրդային Հայաստանից բնակչության աճող միգրացիոն հոսքերը տարբեր երկրներում առաջացնում են մի շարք խնդիրներ ոչ միայն ընդունող հասարակությունների, այլև արդեն ձևավորված հայ համայնքների և նոր միգրանտների միջև: Արտերկրի հայության ավանդական և ժամանակակից հատվածների միջև համագործակցությունն ու համերաշխությունը կազմակերպված և ուժեղ սփյուռքի գրավականն են: Հետևաբար այդ խնդրի ուսումնասիրությունը գործնական տեսանկյունից ունի արդիական նշանակություն՝ հարուստ նյութ տրամադրելով հայկական սփյուռքի հետազոտական խնդիրների ուսումնասիրությանը:

Պատմական և ժամանակագրական առումով սփյուռքի ավանդական համայնքների ձևավորման և դրանում գործող կառույցների հարցերն ակադեմիական գրականության մեջ լավ ուսումնասիրված թեմաներից են: Արտերկրում հայկական համայնքների ձևավորումը տեղի ունեցավ Թուրքիայի՝ հայերի նկատմամբ իրականացրած ցեղասպանությունից հետո: Այդ արհավիրքից փրկվածների որոշ մասը բռնի տեղահանվեց և բնակություն հաստատեց Մերձավոր Արևելքի երկրներում, Եվրոպայի մի շարք երկրներում և ԱՄՆ-ում: Ազգային ինքնագիտակցությունն ու մշակույթի պահպանման

անհրաժեշտությունը էթնիկ խմբի անդամներին դրդեցին համախմբման տարատեսակ ձևերի: Սակայն պետք է նշել, որ ոչ բոլոր դեպքերում է էթնիկ համախմբումը հանգեցնում համայնքի ձևավորման: Համայնքի գաղափարը բազմազան և համակցված երևույթ է: Այն արձարծում է ինքնության և պատկանելության, այլ հանրությանների հետ ընդհանրությունների և տարբերությունների, տվյալ սոցիալական միջավայրում ներառելու և արտամղման հարցեր¹:

Սփյուռքի առավել նշանակալի համայնքներում ձևավորվեցին կուսակցական, հոգևոր, կրթամշակութային, բարեգործական և այլ կառույցներ, որոնք, ստեղծելով ներազգային կենսագործունեության միջավայր, ցանցային համակարգով ձևավորեցին համահայկական կազմակերպություններ: Դրանք առաջին հերթին հայ ազգային կուսակցություններն էին ու ՀԲԸՄ-ն՝ իրենց շուրջ կամ իրենց կից ձևավորված բնագավառային կառույցների համահայկական ցանցով²: Համասփյուռքյան ցանցի ձևավորմանը նպաստեց նաև այն հանգամանքը, որ հատկապես Մերձավոր Արևելքի, նաև Եվրոպայի համայնքներից հայերը տեղափոխվեցին ԱՄՆ՝ շարունակելով նույն գործունեությունը և պահպանելով կապն իրենց ծագման համայնքների հետ:

Սփյուռքի գրականության մեջ այս խմբերը և նրանց ձևավորած համայնքները հիշատակվում են որպես «ավանդական» կամ «դասական» սփյուռք: Դասական սփյուռքի հայեցակարգը կառուցված է էթնիկ պատկանելության, բռնի տեղահանման, ինչպես նաև հայրենիքի նկատմամբ կողմնորոշման շուրջ³: Խ. Թոլոյանը կարևորում է սոցիալական, մշակութային և քաղաքական էլիտաների աշխատանքը, որոնք պատասխանատու են սփյուռքի ինքնությունների ստեղծման կազմակերպված և գիտակցված ջանքերի գործադրման համար: Կայացած, ավանդական համայնքներն ունեն կարևոր գործառույթներ. դրանք են, օրինակ, ինքնության պահպանման միջավայրի ձևավորումը⁴, համայնքային ինստիտուտների առկայությունը⁵, ազգային խնդիրներին հետամուտ լինելը⁶, կապը հայրենիքի հետ⁷ և այլն:

¹ Bell, Newby 1971, 262, Cater, Jones 1989, 260, Delanty 2003, 227.

² Եղիազարյան 2017, 54-55:

³ Armstrong 1976, 393-408.

⁴ Safran 2003, 437-441, Sheffer 2003, 173-179.

⁵ Tölölyan 1991, 3-7.

⁶ Sheffer 2003, 202-215.

⁷ Sheffer 2006, 121-145.

Խ. Թուլյանը, զուգահեռներ անցկացնելով «սփյուռք» հասկացության նախկին և ներկա բովանդակային ըմբռնումների միջև, նշում է, որ եթե նախկինում այն հիմնականում տարածվում էր բռնի տեղահանումների հետևանքով հայրենիքը լքած խմբերի վրա, ապա մեր ժամանակներում այդ հասկացությունն ունի ավելի լայն իմաստ և ընդգրկում է նաև «ներգաղթյալ», «հայրենիքից վտարված», «փախստական», «աշխատանքային միգրանտ», «աքսորված համայնք», «էթնիկ համայնք» և այլ կատեգորիաներ⁸: Այս մոտեցմամբ նա կարևորում է սփյուռքյան համայնքների ոչ միատարր լինելու խնդիրը: Սփյուռքի փորձի, ներհամայնքային տարբերությունների գաղափարին և դրա միջոցով սփյուռքի բազմազանության ճանաչման հարցին անդրադարձել են նաև այլ հեղինակներ⁹: Սփյուռքի հայ ավանդական համայնքը միատարր չէ. այն իր հերթին բաժանվում է մի շարք ենթահամայնքների: Նրանց մի մասը համախմբվելու, ենթամշակութային առանձնահատկությունները, սովորույթները պահպանելու և սերունդներին փոխանցելու նպատակով ինքնակազմակերպվել և ստեղծել է հայրենակցական միություններ:

Սփյուռքի ներհամայնքային բազմազանության խնդիրն է՛լ ավելի ընդգծվեց, երբ այն սկսեց համալրվել տնտեսական և այլ պատճառներով հետխորհրդային Հայաստանից արտագաղթած բնակչությամբ: Ըստ միգրացիայի հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների գնահատականների՝ 1988-2019 թթ. Հայաստանից արտաքին միգրացիոն բացասական մնացորդի մեծությունը կազմել է շուրջ 1600-1700 հազար մարդ¹⁰, և այդ տեղաշարժերի 90%-ը 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ ուղղվել է Ռուսաստանի Դաշնություն, իսկ մնացածը՝ ԱՊՀ այլ երկրներ, եվրոպական երկրներ, ԱՄՆ, Կանադա և այլն¹¹:

Հայաստանի անկախությունից հետո արտերկրում հաստատված հայերին գրականության մեջ բնորոշում են որպես նոր սփյուռք: Ի տարբերություն ավանդական սփյուռքի՝ Հայաստանից մեկնած հայերը չեն ունեցել համայնքային-մշակութային կյանքով ապրելու փորձ, չեն եղել անդրազգային կազմակերպությունների անդամ: Բացի դրանից, հայերի այդ երկու հատվածների միջև կան լեզվական, մշակութային, կրոնի և եկեղեցու նկատմամբ

⁸ Tölölyan 1996, 3-36.

⁹ Hall 1990, 222-237.

¹⁰ Եգանյան 2020, 52-66:

¹¹ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2020:

վերաբերմունքի տարբերություններ, որ խոչընդոտում են ավանդական համայնքի և նոր միգրանտների միջև համագործակցությունը:

Հոդվածում նպատակ է դրված քննարկել Հայաստանից արտագաղթած միգրանտների նոր խմբերի հարաբերությունները սփյուռքի ավանդական համայնքների հետ, վերլուծել ավանդական կառույցներում նրանց ներառվածության, համագործակցության, նրանց ցուցաբերած աջակցության խնդիրները և վեր հանել այդ հարցում գոյություն ունեցող խոչընդոտները: Հետխորհրդային Հայաստանի արտագաղթի հիմնախնդիրները հետազոտելու նպատակով 2021 թ. Հայաստանի բոլոր մարզերի 20 քաղաքային, 37 գյուղական բնակավայրերում և Երևանում կատարվել են հարցումներ¹²: Ծրագրի թիրախային խումբ են համարվել Հայաստանում գտնվող այն ընտանիքները, որոնց անդամների մի մասը արտագաղթել և բնակություն է հաստատել արտերկրում: Նաև փորձագիտական հարցազրույցներ են անցկացվել տարբեր մասնագետների և գերատեսչությունների շրջանում, մասնավորապես ՀՀ ԱԺ ԿԳՄՍ հանձնաժողովի, ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության, Սփյուռքի գործերի հանձնակատարի գրասենյակի, մարզպետարանների համապատասխան վարչության, ժողովրդագիրների, վիճակագիրների, սփյուռքագետների, տնտեսագետների հետ:


Սփյուռքի ավանդական կառույցների և նոր արտագաղթածների առնչությունների շրջանակները

Ըստ քանակական հետազոտության արդյունքների՝ 639 ընտանիքից 1259 անձ արտագաղթել և մշտական բնակություն է հաստատել արտերկրում: Ինչպես տեսնում ենք գծանկարից, հայ միգրանտների համար նպատակակետ երկիրը Ռուսաստանի Դաշնությունն է: Այնուհետև մեծ թիվ են կազմում եվրոպական երկրներ¹³, ապա ԱՄՆ և Կանադա արտագաղթած հայերը: Որոշակի տոկոս են կազմում նաև ԱՊՀ (Ուկրաինա, Բելառուս, Ղազախստան և այլն) և այլ երկրներ (Վրաստան, Չինաստան, Հնդկաստան և այլն) արտագաղթած ընտանիքները¹⁴:

¹² Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 20TTSH.040 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

¹³ Եվրոպական երկրների մեջ առաջին տեղում Գերմանիան է (33,8%), ապա Ֆրանսիան (22,8%), Իսպանիան (12,5%), Բելգիան (5,9%), Հունաստանը (5,9%), Լեհաստանը (5,2%), Նիդեռլանդները, Շվեյցարիան, Անգլիան և այլն:

¹⁴ Ցածր ցուցանիշի պատճառով հոդվածում առաջադրված խնդիրները քննարկելիս առանձին չի դիտարկվի այս երկրների օրինակը:



Գծանկար. Արտագաղթի երկիրը, %

Բերված վիճակագրական տվյալները փաստում են, որ Հայաստանից արտագաղթի պատճառով արտերկրի հայ ավանդական համայնքների կողքին հաստատվում են միգրանտների նոր խմբեր, որոնք հետագայում ձևավորում են առաջիններից տարբերվող սոցիալ-մշակութային նոր տարածք. տեղի է ունենում սոցիալական իրականության ընկալման վերախմաստավորում՝ նոր միջավայրում հանգեցնելով խմբային կենսաձևի¹⁵ և ներփակման գործընթացների: Հայկական սփյուռքում նոր միգրանտների խմբային կենսաձևին և ավանդական սփյուռքի կառույցների հետ հարաբերություններին անդրադարձել է նաև փորձագետը. «Միգրացիոն այն հոսքը, որ տեղի ունեցավ 90-ականներից սկսած, առկա է աշխարհի տասնյակ երկրներում: Մենք սա կարող ենք տեսնել նաև ավանդական հայկական համայնքների կազմակերպությունների կողքին զանգվածաբար նոր՝ համայնքային, մշակութային, բարեգործական, կրթական կառույցների ձևավորման տեսքով: Կան ավանդաբար գործող կառույցներ, և կան կառույցներ, որոնք 10-20 տարվա պատմություն ունեն. սրանք հայաստանցիների շերտն են ներկայացնում: Որոշակի չըմբռնվածություն կա հին և նոր համայնքների միջև. սա նկատելի է որոշ տեղերում: Դա պայմանավորված է նոր մեկնած հայաստանցիների ոչ լիարժեք ինտեգրմամբ, գիտության, մշակույթի, քաղաքականության, հասարակական կյանքի, տեղական կառավարման մարմիններում դեռևս ընդգրկված չլինելու, նաև միգրանտների անօրինական և փախստականի կարգավիճակում գտնվելու հանգամանքներով, որոնք հակասություններ են բերում հին և նոր հայության խմբերի միջև» (փորձագիտական հար-

¹⁵ Brubaker 2002, 163-189.

ցազրույց Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի մասնագետի հետ):

Նոր միգրանտների և սփյուռքի գործող կառույցների հետ հարաբերությունների հարցը պարզելու նպատակով հարցազրույցի մասնակիցներին տրված՝ «Ինդիում եմ ասել, թե ինչպե՞ս են կապված տեղի հայկական համայնքի հետ» հարցի պատասխաններից կարելի է եզրակացնել, որ այն կրում է հատվածային բնույթ, և մի քանի հարցերի շուրջ է, որ համագործակցության այդ ցուցանիշը բարձր է: Ինչպես ցույց են տալիս քանակական ցուցանիշները, արտագաղթածների՝ **համայնքային որևէ կազմակերպությանն անդամակցելու** միջին ցուցանիշը չի գերազանցել 6.3%-ը (աղ.): Համայնքային կառույցներին ֆորմալ անդամակցելու ցուցանիշը համեմատաբար բարձր է ԱՄՆ-ում և Կանադայում (9,7%): Եվրոպական երկրներում այն կազմում է 6,6%, ամենացածրը ՌԴ-ում է՝ 5.3%:

Այս ցուցանիշներից կարող ենք եզրակացնել, որ նրանց անդամակցությունը ավանդականի կառույցներին թույլ է, որը բացատրվում է վերջիններիս պահպանողական գործունեությամբ, միգրանտների՝ համայնքային կյանքի մասնակցության փորձի պակասով, ինչպես նաև միգրանտների՝ իրենց սոցիալական ցանցերում մնալու հանգամանքով, որը հանգեցնում է խմբային, իսկ որոշ գնահատականներով՝ նաև անհատականացված գործելաոճի: Նման դիտարկում է կատարել նաև ծրագրի փորձագետներից մեկը. «...Որոշ դեպքերում նախընտրելի է լինել անհատ, քան թե համայնքի ներկայացուցիչ, որն էլ բերում է համայնքից կտրվելուն: Եվ այսօրվա Սփյուռքը դառնում է անհատների հավաքածու, որի անդամներն ունեն հայկական ազգանուն, այլ ոչ թե հեղեղաբանական Սփյուռք» (հարցազրույց սոցիոլոգ-փորձագետի հետ):

Ամերիկյան և եվրոպական երկրների պարագայում նաև ավանդական սփյուռքի և նոր արտագաղթածների արժեքային և աշխարհայացքային տարբերություններն են պատճառը, որ վերջիններս չեն ինտեգրվում սփյուռքյան համայնքային կազմակերպություններին: Այդ կարծիքն առկա է նաև փորձագիտական գնահատականներում. «Ավանդական սփյուռքն արժեքային ուրիշ համակարգ ունի ձևավորված, քան նոր սփյուռքը: Այդ առումով իրենց մոտ անտառնիստական բաներ կան, որը գուցե թե սոցիալ-մշակութային ադապտացիային բացարձակապես չի նպաստում» (հարցազրույց միգրացիայի հիմնախնդիրներով զբաղվող փորձագետի հետ):

Աղյուսակ. Հայ համայնքի հետ առնչության ձևերը՝ ըստ արտագաղթի երկրի (%)

Առնչության ձևերը	Ընդհանուր	Արտագաղթի երկիրը		
		Ռուսաստան	Եվրոպական երկրներ	ԱՄՆ և Կանադա
Անդամակցում են որևէ համայնքային կազմակերպության	6,3	5,3	6,6	9,7
Երեխաները հաճախում(ել) են կիրակնօրյա դպրոց	8,9	7,2	9,8	16,1
Հայ համայնքը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել	2,8	2,7	4,1	3,2
Հայ համայնքը ոչ ֆինանսական աջակցություն է ցուցաբերել	6,4	3,4	12,3	9,7
Մասնակցել են համայնքային միջոցառումներին	26,9	24,1	32,0	33,9
Մասնակցել են հայ համայնքի կազմակերպած ակցիաներին, ցույցերին	21,3	17,0	29,5	37,1
Մասնակցել են հայ համայնքի կազմակերպած դրամահավաքներին	32,9	30,5	34,4	54,8

Համայնքային կազմակերպություններին ֆորմալ անդամակցելու ցուցանիշը, ինչպես արդեն նշեցինք, ամենացածրն է ՌԴ-ում (աղ.), որտեղ համայնքային կառույցները չունեն հարուստ պատմություն և ձևավորվել են վերջին 30 տարիների ընթացքում (օրինակ՝ Ռուսաստանի հայերի միությունը): Միայն ԽՍՀՄ-ի փլուզումից հետո Ռուսաստանի հայությունը կանգնեց համայնքային միավորներ ձևավորելու անհրաժեշտության առաջ, քանզի խորհրդային շրջանում ՌԴ հայությունն իրեն սփյուռք չէր ընկալում այն պատճառով, որ հայության հայրենաբնակ հատվածի հետ մեկ պետության՝ ԽՍՀՄ-ի քաղաքացի էր¹⁶: Համայնքային ինստիտուտների ձևավորումը ՌԴ-ում ընթացավ հայաշատ բնակավայրերում համայնքային մարմինների ստեղծման ճանապարհով: Այսօր, սակայն, միգրանտները Ռուսաստան

¹⁶ Арутюнян 2011, 154.

առավել մոտ են ընկալում մշակութային ընդհանրությունների տեսանկյունից, որի հետևանքով համայնքային կազմակերպություններին անդամակցելու և նրանց առաքելությանը հետևելու հարցը խիստ չի դրված: Համայնքային կառույցների առաքելության մեջ ամրագրված ինքնության պահպանման միջավայրի ձևավորման գործառույթն էլ երկրորդային է դառնում, քանզի այդ պահանջմունքը հայերը բավարարում են հաճախակի Հայաստան այցելելով, ամռանը երեխաներին հարազատների մոտ ուղարկելով: Համայնքների շուրջ համախմբված է հայության փոքր մասը նաև այն պատճառով, որ ճնշող մեծամասնությունը, զբաղված լինելով ընտանիքի գոյության համար անհրաժեշտ միջոցներ հայթայթելով, կարծես բավարարվում է միայն տոներին և այլ համահայկական միջոցառումներին մասնակցելով:

Հայ համայնքն արտերկրում ստանձնում է կարևոր դեր նաև արտագաղթած ընտանիքների երեխաների կրթական և ինքնության պահպանման հարցերում, որոնք հիմնականում եվրոպական մի շարք երկրներում և ԱՄՆ-ում իրականացվում են եկեղեցու կամ հասարակական, բարեգործական կազմակերպությունների միջոցով: Ըստ հետազոտության ցուցանիշների՝ հարցման մասնակիցների ողջ համախմբությունից միգրանտների միայն 8,9% ընտանիքներում են երեխաները հաճախել/հաճախում կիրակնօրյա դպրոց: Բերված ցածր ցուցանիշները կարող են պայմանավորված լինել Հայաստանից տեղափոխված ընտանիքների երեխաների մի մասի հայերեն իմացության, ինչպես նաև հետագայում կրթություն ստանալու և աշխատանք գտնելու նպատակով օտար լեզվի իմացությանը նախապատվություն տալու հանգամանքներով: Մեր փորձագետներից մեկի գնահատմամբ՝ այդ իրավիճակը պայմանավորված է նաև նոր միգրանտների զբաղվածության խնդրով, որոնք ժամանակ չունեն համայնքային կազմակերպությունների աշխատանքներին մասնակցելու և երեխաների ինքնության պահպանության հարցերով ավելի շատ զբաղվելու. «Գլխավոր խնդիրներից մեկը նաև համայնքային կառույցներում՝ մշակութային, բարեգործական, կրթական և այլն, երիտասարդության ցածր ներգրավվածությունն է: Բայց սա ունի իր պատճառները: Այնպես չէ, որ այդ կառույցները գրավիչ չեն, խթանող ծրագրեր և միջոցառումներ չեն անում, այլ մարդիկ ներառված են կյանքի տարբեր խնդիրների ու հարցերի շրջանակի մեջ և չունեն այդ ժամանակը» (հարցազրույց Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի մասնագետի հետ):

Եթե ըստ երկրների դիտարկենք հարցը, ապա կտեսնենք գրեթե նույն օրինաչափությունը. կիրակնօրյա դպրոց ավելի շատ հաճախում են/հաճախել են ԱՄՆ և Կանադա, ավելի քիչ՝ ՌԴ արտագաղթած ընտանիքների երեխաները (աղ.): ԱՄՆ-ում առկա է կրթական հաստատությունների համեմատաբար

լավ ցանց, և 16,1% ընտանիքների երեխաներ հաճախել են կիրակնօրյա դպրոց՝ սովորելով մայրենի լեզու, հայոց պատմություն, գրականություն, երգ ու պար և այլն: «Հայաստանից նոր մեկնածները աշխուժացրել են նաև լեզվի իմացության մակարդակը: Երբեմն արևմտահայերենի և արևելահայերենի խառնված տարբերակն է հանդիպում, բայց այսօրեղ դպրոցների ցանցը բավականին լայն է, իսկ տիրապետողների մակարդակը՝ բարձր» (հարցազրույց Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի մասնագետի հետ):

Եվրոպական որոշ երկրներում նույնպես ակտիվ են կիրակնօրյա դպրոցները, որոնց նկատմամբ, ըստ մեր քանակական հետազոտության տվյալների, հետաքրքրություն ցուցաբերել է 9,8% ընտանիք: Այստեղ հայապահպանությունը կարևոր դիրքերում է՝ հաշվի առնելով նաև համայնքային կազմակերպությունների, եկեղեցու ակտիվությունը, եկեղեցուն կից տարբեր դպրոցների և խմբակների առկայությունը:

ՌԴ-ում, բացի հանրակրթական որոշ դպրոցներում դասավանդվող հայերենից, կիրակնօրյա դպրոցների տրամադրած գիտելիքներից օգտվել են 7,2% ընտանիքների երեխաները: Այս հարցում փորձագետները կրկին ընտանիքի գործոնն են կարևորում. «Ընտանիքների մեծ մասը, որոնք հայրկապես նոր կամ ոչ հեռավոր անցյալում են տեղափոխվել ՌԴ, բախվելով սոցիալ-տնտեսական և այլ խնդիրների, զբաղված լինելով նաև իրենց աշխատանքով, ընտանիքի հոգսերով, այս խնդիրը բարձիթողի են մատնել: Եվ որոշակիորեն նկատելի է, որ ՌԴ հայ համայնքը կամ նոր սերունդը մայրենի լեզվին տիրապետում է կա՛մ կենցաղային մակարդակով, կա՛մ բարբառային մակարդակով, կա՛մ հասկանում է, բայց չի կարողանում խոսել» (հարցազրույց Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի մասնագետի հետ): «Ռուսաստանում երեխաները բացարձակապես հայերենին չեն տիրապետում, և իրենք միայն ռուսերեն են խոսում: Չնայած որ ծնողը կարող է նույնիսկ ռուսերեն չիմանա, բայց երեխան շատ լավ ռուսերեն գիտի» (հարցազրույց ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության մասնագետի հետ):

Արտագաղթի երկրում միգրանտները նաև բազմաթիվ խնդիրների են բախվում, որոնք մեղմացնելու համար փնտրում են հենման կետեր: Դրան-

ցից մեկը նաև ձևավորված հայ համայնքից որևէ **օժանդակության ակնկալումն է**: տվյալ դեպքում կարելի է կարծել, որ համայնքը նրանց համար դառնում է «սոցիալական կապիտալ», որը, ըստ Պ. Բուրդիեի, կարող է տրամադրել փաստացի կամ հավանական ռեսուրսներ¹⁷: Նման պարագայում սփյուռքյան համայնքային կառույցներն ունեն բավականաչափ ռեսուրսներ՝ նոր միգրանտներին ոչ միայն նյութական, այլև ոչ նյութական աջակցություն ցուցաբերելու համար: Վերջինս առնչվում է նրանց իրավունքների պաշտպանությանը, սոցիալական և բարեգործական ծրագրերի իրականացմանը, որոնք կարող են նպաստել առաջնային խնդիրների լուծմանը: Սակայն, ինչպես ցույց են տալիս մեր հետազոտության արդյունքները, այդ հարցում ավանդական համայնքների և նոր միգրանտների միջև դեռևս առկա է վստահության պակաս: Թերևս դրանով կարելի է բացատրել այն հանգամանքը, որ ֆինանսական տեսքով աջակցություն ստացել է նրանց 2,8%-ը, իսկ ոչ ֆինանսական օժանդակություն՝ 6,4%-ը (աղ.): Այսինքն՝ կարող ենք փաստել, որ ավանդական համայնքային կառույցները, որպես «սոցիալական կապիտալ», շատ քիչ դերակատարում ունեն նոր միգրանտների խնդիրների լուծման հարցում:

Նոր միգրանտների մասնակցությունը համայնքի կազմակերպած միջոցառումներին

Համայնքի բնութագրիչների մեջ կարևոր են նաև հետևյալ հատկանիշները՝ ընդհանուր պահանջներ և նպատակներ, ընդհանուր կենցաղ, կենսագործունեության, աշխարհայացքների, մշակույթի և կոլեկտիվ գործողության ընդհանրության զգացում¹⁸: Այդ տեսանկյունից դիտարկելով սփյուռքահայ համայնքի և նոր միգրանտների համերաշխության հարցը՝ **համայնքային միջոցառումներին մասնակցության** պարագայում կտեսնենք ցուցանիշների որոշակի բարձրացում. հետազոտության արդյունքներով, նոր արտագաղթած ընտանիքների 26,9%-ը մասնակցել է համայնքի կազմակերպած որևէ միջոցառման: Հիմնականում դա մասնակցությունն է ազգային և ավանդական հայկական տոներին: Այս ցուցանիշը կրկին բարձր է ամերիկյան և եվրոպական երկրներում՝ համեմատած ՌԴ-ի հետ (համապատասխանաբար 33,9%, 32,0% և 24,1%, աղ.): Ընդհանուր մշակութային պատկանելության և կոլեկտիվ գործողության պահանջմունքը բավարարելուց զատ,

¹⁷ Bourdieu 1985, 241-258.

¹⁸ Silk 1999, 5-17.

այդ միջոցառումներին մասնակցությունը, ըստ նաև փորձագիտական գնահատականների, երբեմն կրում է ձևական բնույթ. «*Ես մի անգամ առիթ ունեցա Շվեյցարիայի հայ համայնքի տարեկան հավաքության մասնակցելու: Շաբաթ-շաբաթ տրավելով էի, թե ինչքան բազմաշերտ էր շվեյցարահայ համայնքը... Հին համայնքի ներկայացուցիչները նորեկների նկատմամբ շատ զգուշավոր էին՝ նկատի ունենալով, որ եկան, տեսնես ինչով պիտի զբաղվեն, ինչու հայրենիքը թողեցին... Ու դու տեսնում էիր, որ յուրաքանչյուր սեղանի շուրջ հավաքվել էին որոշակի խավի ներկայացուցիչներ՝ հին, նոր, շատ նոր. այդ լարվածությունը կար, բայց բոլորը ցույց էին տալիս, թե շատ ուրախ են՝ այնպեղ գտնվելով» (հարցազրույց ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության մասնագետի հետ):*

Նոր արտագաղթածների առումով ավանդական համայնքային կառույցների հետ համագործակցությունը համեմատաբար բարձր է նաև կոլեկտիվ գործողություններին, օրինակ՝ **համայնքի կազմակերպած ցույցերին ու ակցիաներին** մասնակցելիս: Յուրաքանչյուր հինգերորդը (21,3%) դրանով ցույց է տալիս իր համերաշխությունը համայնքային կազմակերպություններին (աղ.): Նրանց մասնակցությունը բարձր է հատկապես յուրաքանչյուր տարվա ապրիլի 24-ին ցեղասպանության զոհերի ոգեկոչման և Արցախին նվիրված միջոցառումներին: Այս առումով կրկին ավելի ակտիվ են ԱՄՆ և եվրոպական երկրներ արտագաղթած հայերը, քան Ռուսաստանի Դաշնություն (համապատասխանաբար 37,1%, 29,5% և 17,0%, աղ.): Նրանց մասնակցությունը բարձր է նաև համայնքի կազմակերպած **դրամահավաքներին**՝ հատկապես արցախյան պատերազմների ժամանակ մարդասիրական օգնություն ցուցաբերելիս: ԱՄՆ-ում, եվրոպական երկրներում և Ռուսաստանում մասնակցության ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 54,8%, 34,4% 32,9% (աղ.):

Եզրակացություններ

Ամփոփելով կարող ենք նշել, որ հետխորհրդային Հայաստանի բնակչության արտագաղթի հետևանքով արտերկրում ձևավորված նոր սփյուռքի և ավանդական համայնքային կազմակերպությունների միջև համագործակցությունը սահմանափակ է՝ հանգեցնելով խմբային կենսաձևի և ներփակման գործընթացների: Հայերի այդ երկու հատվածների միջև դեռևս պահպանվում են լեզվական, մշակութային, կրոնի և եկեղեցու նկատմամբ վերաբերմունքի որոշակի տարբերություններ, որը խոչընդոտում է սփյուռքի

ավանդական համայնքային կազմակերպությունների և նոր միգրանտների միջև համագործակցությունը: Ի տարբերություն ավանդական սփյուռքի՝ Հայաստանից մեկնածները չեն ունեցել համայնքային-մշակութային կյանքով ապրելու փորձ, չեն անդամակցել սփյուռքում գործող անդրազգային կազմակերպություններին: Այդ հարցում պետք է հաշվի առնել նաև սփյուռքի ավանդական համայնքի ոչ միատարր լինելու և բազմազանության խնդիրը: Այս և նմանատիպ այլ գործոններով պայմանավորված՝ նրանք դեռևս չեն ինտեգրվում սփյուռքի համայնքային կազմակերպություններին:

Հետազոտության արդյունքների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ նոր միգրանտների՝ սփյուռքի համայնքային կազմակերպությունների հետ ունեցած թույլ հարաբերությունները դրսևորվում են համայնքային կառույցներին անդամակցության, երեխաների՝ կիրականօրյա դպրոցներ հաճախելու, նյութական և ոչ նյութական աջակցության հարցերում: Համագործակցության համեմատաբար բարձր ցուցանիշներ են արձանագրվել համայնքային միջոցառումներին մասնակցության դեպքում, սակայն դրանք կրում են հատվածային բնույթ: Պայմանավորված ընդունող երկրի գործոնով՝ համագործակցության ցուցանիշներն ունեն տարբեր միտումներ:

Գրականություն

- Եգանյան Գ. 2020, Միգրացիոն իրավիճակը և բնակչության տեղաշարժերի կառավարման ռազմավարությունները ՀՀ-ում, Բանբեր Երևանի համալսարանի (տնտեսագիտություն) գիտական հանդես, N 3 (33), էջ 52-66:
- Եղիազարյան Ա. 2017, Ազգային համակեցական միջավայրերի ձևավորումը հայկական «դասական» և «նոր» Սփյուռքում (Լիբանանի և ՌԴ հայկական համայնքների օրինակով), Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես, Երևան, էջ 50-66:
- Միգրացիա, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2020 https://www.armstat.am/file/article/demog_2020_7.pdf (ներբեռնման օրը՝ 31.03.2022):
- Арутюнян Ю. 2011, Об армянской диаспоре в России. Этносоциологическое исследование армян Москвы и Краснодара, Ереван, «Гитутюн», 154 с.
- Armstrong J. 1976, "Mobilized and proletarian diasporas". The American political science review, 70 (2), p. 393-408.
- Bell C., Newby H. 1971, Community Studies, An Introduction to the Sociology of Local Community, London, "Allen and Unwin", 262 p.
- Brubaker R. 2002, Ethnicity without groups, University of California (Los Angeles), European Journal of Sociology, 43 (2), p. 163-189.
- Bourdieu P. 1985, "The Forms of Capital." In Handbook of Theory and Research for the Sociology of Education, edited by J.G. Richardson, New York: Greenwood Press, p. 241-258.

- Cater J., Jones T. 1989, Social Geography, An Introduction to Contemporary Issues, London, "Edward Arnold", 260 p.
- Delanty G. 2003, Community, UK, "Routledge", 227 p.
- Hall S. 1990, Cultural Identity and Diaspora, J. Rutherford (Ed.), Identity: Community, Culture, Difference, London, "Lawrence and Wishart", p. 222-237.
- Safran W. 2003, Recent French Conceptualizations of Diaspora, "Diaspora": a Journal of Transnational Studies, 12 (3), p. 437-441.
- Sheffer G. 2003, Diaspora Politics: At Home Abroad, UK, "Cambridge University Press", 290 p.
- Sheffer G. 2006, Transnationalism and Ethnonational Diasporism, "Diaspora": a Journal of Transnational Studies, 15 (1), p. 121-145.
- Silk J. 1999, The Dynamics of Community, Place and Identity, Environment and Planning A, v. 31, p. 5-17.
- Tölölyan Kh. 1991, The Nation-State and its Others: in Lieu of a Preface, "Diaspora": a Journal of Transnational Studies, 1 (1), p. 3-7.
- Tölölyan Kh. 1996, Rethinking Diaspora (s): Stateless Power in the Transnational Moment, Diaspora: a Journal of Transnational Studies, 5 (1), p. 3-36.

ՍՓՅՈՒՌՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՆՈՐ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Միհրան Գալստյան, Գայանե Հակոբյան

Ամփոփում

Թուրքիայի իրականացրած ցեղասպանությունից հետո հայերի մի մասը բռնի տեղահանվեց և բնակություն հաստատեց աշխարհի տարբեր երկրներում: Հայության այս խմբերը և նրանց ձևավորած համայնքները գրականության մեջ հիշատակվում են որպես ավանդական, դասական սփյուռք: Հետխորհրդային Հայաստանից արտագաղթի պատճառով արտերկրի հայ ավանդական համայնքների կողքին հաստատվում են միգրանտների նոր խմբեր, որոնք բնորոշվում են որպես նոր սփյուռք: Ավանդական և նոր սփյուռքների միջև առկա են լեզվական, մշակութային, արժեքային որոշ տարբերություններ, որոնք խոչընդոտում են սփյուռքի ավանդական համայնքային կազմակերպությունների և նոր միգրանտների միջև համագործակցությունը՝ հանգեցնելով խմբային կենսաձևի: Նրանց միջև թույլ հարաբերություններ են ձևավորված հատկապես համայնքային կառույցների հետ համագործակցության, երեխաների՝ կիրակնօրյա դպրոցներ հաճախելու, նյութական և ոչ նյութական աջակցության հարցերում: Համագործակցության համեմատաբար բարձր ցուցանիշներ են արձանագրվել համայնքային միջոցառումներին մասնակցության դեպքում, սակայն դրանք կրում են հատվածային բնույթ և տարբեր են՝ արտագաղթի երկրի գործոնով պայմանավորված:

Բանալի բառեր՝ ավանդական և նոր սփյուռք, արտագաղթ, միգրանտ, համայնքային կառույցներ, համագործակցություն, խմբային կենսաձև, ինտեգրում:

К ВОПРОСУ О СВЯЗЯХ ТРАДИЦИОННЫХ ОБЩИННЫХ СТРУКТУР ДИАСПОРЫ И НОВЫХ МИГРАНТОВ

Мигран Галстян, Гаянэ Акопян

Резюме

Армянские общины, возникшие в разных странах мира после Геноцида армян, осуществленного Турцией, принято характеризовать как традиционную и классическую диаспору. В результате эмиграции из постсоветской Армении в этих странах обосновываются новые группы мигрантов, которые представляют собой новую диаспору. Между традиционной и новой диаспорами существуют определенные языковые, культурные, ценностные различия, затрудняющие сотрудничество традиционных общинных организаций и новых мигрантов. Последнее приводит к групповому образу жизни. Между ними налаживаются слабые связи, особенно в вопросах участия в общинных организациях, посещения детьми воскресных школ, материальной и иной поддержки. Относительно высокими показателями тесного сотрудничества характеризуется участие в общинных мероприятиях, однако они носят сегментарный характер и различаются в зависимости от страны миграции.

Ключевые слова – традиционная и новая диаспора, эмиграция, мигрант, общинные структуры, сотрудничество, групповой образ жизни, интеграция.

ABOUT THE RELATIONSHIP BETWEEN TRADITIONAL DIASPORA COMMUNITY STRUCTURES AND NEW MIGRANTS

Mihran Galstyan, Gayane Hakobyan

Abstract

After the Genocide committed by Turkey, many Armenians were forcibly separated from their homeland and settled in different countries of the world. These groups of Armenians and the communities formed by them are referred to as the traditional, classical Diaspora in the academic literature. Due to emigration from post-Soviet Armenia, new groups of migrants have been established alongside traditional Armenian communities

abroad that are defined as a new Diaspora. There are certain linguistic, cultural, and value differences between the traditional and new Diasporas, which hinders the cooperation of new migrants and traditional Diaspora community organizations, the latter leads to formation of group lifestyle. Weak relationships have been formed between them, especially in terms of membership in community structures, children's attendance to Sunday schools, material and non-material support. Relatively high levels of cooperation have been reported on participation in community events, but the participation has fragmented nature and vary based on the country of emigration factor.

Key words – traditional and new Diaspora, emigration, migrant, community structures, cooperation, group lifestyle, integration.

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

Հարություն Վերմիշյան

Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
Երևանի պետական համալսարան
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ harutyunvermishyan@ysu.am

Վահան Ենգիդունյան

Երևանի պետական համալսարանի մագիստրանտ
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ engidunyan-vahan@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 20.01.2021, գրախոսվել է 28.01.2021, ընդունվել է տպագրության 12.12.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.3-208

Ներածություն

Քաղաքային տարածության ձևավորման և զարգացման համատեքստում էական դեր ունեն քաղաքի պատմամշակութային տարածությունների պլանավորման գործընթացները: Պատմամշակութային տարածությունները գեներացնում ու վերարտադրում են քաղաքային պատմությունը՝ դառնալով քաղաքային տարածության քվինտեսենցիալ տարրը¹: Այս տեսանկյունից արդի քաղաքի պատմամշակութային տարածությունների պլանավորման գործընթացը վերածվում է քաղաքային տարածություն-հասարակություն փոխհարաբերության գործընթացի: Այստեղ կարևորվում է ճարտարապետի դերը քաղաքաբնակների՝ ֆիզիկական տարածության վերաբերյալ սուբյեկտիվ ընկալումների և գիտակցական զգացողությունների (տեղի զգացողություն)² ձևավորման և տարածությանը սուբյեկտիվորեն նշանակալի իմաստներով օժտելու գործընթացներում³:

Վերջիններս պայմանավորում են քաղաքային գաղափարախոսության և համարժեք մշակութային պրակտիկաների ձևավորումը⁴: Նշյալ մոտեցումները ցույց են տալիս պլանավորման սոցիալապես պայմանավորված լինելը:

¹ Gurvitch 1964.

² Humton 1992.

³ Чернявская 2012, 97.

⁴ Wright 2002.

Գաղափարախոսության և մշակութային պրակտիկաների հատումները բացահայտում են արդի քաղաքի պատմամշակութային տարածությունների պլանավորման համակարգը: Պլանավորման համակարգը ոչ միայն նյութականացնում է քաղաքային մշակույթը, այլև սահմանում է արժեքային այլ կողմնորոշումներ՝ ազդելով քաղաքաբնականների տեղի զգացողության վրա: Այսպիսով, տարածությունների պլանավորման համակարգը մեկնաբանելի է կառուցվածք-իմաստավորում-գործողություն հարաբերությունների համատեքստում: Այն գործում է հետադարձ կապի մեխանիզմով, ինչը ենթադրում է, որ տարածական վերածնունդների իրականացումը չի կարող մեկտեղվել հասարակական փոխազդեցությունների միայն որոշակի տիրույթում: Կառուցվածքային մակարդակում տարածության պլանավորումը մասնագիտացված է (իրականացվում է մասնագետների կողմից), ինչը պայմանավորված է քաղաքային գաղափարախոսության հոմոգենության պահպանման անհրաժեշտությամբ: Սակայն քաղաքային մշակույթի վերարտադրության տեսանկյունից քաղաքաբնականներն են իմաստավորում տարածության «սպառման» կոլեկտիվ ձևերն ու հնարավորությունները: Սույն իմաստավորումները համարվում են այն գործիքները, որոնցով քաղաքաբնականները հնարավորություն են ստանում իրագործելու քաղաքային տարածությունների խորհրդանշական կառավարում: Դրա շնորհիվ առաջադրվում է քաղաքային տարածությունների պլանավորման այն մոտեցումը, որում տարածքային զարգացումը սահմանվում է քաղաքային լիազորությունների սահմաններում՝ միջավայրին համապատասխան քաղաքականություն ձևավորելով: Այն հիմնվում է համայնքային նախաձեռնությունների վրա⁵: Մասնավորապես, խոսքը նշյալ տարածությունները «սպառող» քաղաքաբնականների դերի նշանավորման մասին է:

Գործառնելով քաղաքային տարածություններում՝ քաղաքաբնականները սահմանում են քաղաքի պատմամշակութային տարածությունների այն ճանաչողական քարտեզը, որը պայմանավորում է պլանավորման վերոնշյալ սահմանման սոցիալական բաղադրիչը՝ այն օժտելով լեզվատիրությամբ: Քաղաքի պատմամշակութային տարածությունների փոփոխման և քաղաքաբնականների՝ այդ տարածությունների «սպառման» ճանաչողական համակարգի միջև կապը թույլ է տալիս ենթադրել, որ քաղաքային պլանավորման գործընթացը օժտված է յուրահատուկ նարատիվայնությամբ⁶: Քաղաքի պատմամշակութային տարածությունների պլանավորման նարատիվը «...հաս-

⁵ Evert. Ballard, 2010.

⁶ Lynch 1960.

կանալու և մեկնաբանելու միջոց է՝ վերջիններիս անհատականացման կապով»⁷: Պատմամշակութային տարածությունների պլանավորման նարատիվը կազմված է ճանաչողական և պրագմատիկ շերտերից: Պլանավորման նարատիվի ճանաչողական բաղադրիչը քաղաքաբնականների՝ քաղաքի պատմամշակութային տարածություններում գործառնության ընթացքում ձևավորված և վերարտադրվող փորձի, հիշողությունների ու ընկալումների, ինչպես նաև պլանավորման ինստիտուցիոնալ հիմքերի ամբողջությունն է⁸: Սակայն պլանավորման ինստիտուցիոնալ հայեցակետը վերարտադրվում է քաղաքային պլանավորման և մասնավորապես պատմամշակութային կառույցների տնօրինման օրենսդրական որոշումներով: Պլանավորման նարատիվի պրագմատիկ շերտն այս համատեքստում ենթադրում է պլանավորման կոնկրետ գործողությունների, մեխանիզմների առաջադրում: Այն ապահովում է տարածությունների պլանավորման գործուն մեխանիզմների ներդրման հնարավորությունը և մասնագիտացված է⁹:

Պլանավորման այսօրվա հնարավորությունների և ապագա ազդեցությունների գնահատման տեսանկյունից հետազոտական արդիական խումբ են համարվում քաղաքաբնակ երիտասարդները, որոնք ապահովում են սերունդների և սեփական փորձի կուտակում: Միևնույն ժամանակ, երիտասարդությունը պատմականորեն համարվում է նաև քաղաքային փոփոխությունների հիմնական պահանջատերն ու «սպառողը»¹⁰: Այս տեսանկյունից էական նշանակություն ունեն նաև մասնագիտական այն հանրույթները*, որոնք հանդես են գալիս որպես քաղաքային տարածությունների պլանավորողներ: Սրանք այն խմբերն են, որոնք պլանավորման մեխանիզմները համապատասխանեցնում են քաղաքային տարածություններին¹¹: Մասնագիտական հանրույթը իրականացնում է պատմամշակութային տարածությունների կառուցվածքային փոփոխություններ, իսկ երիտասարդությունը ոչ միայն դրանց ակտիվ կամ պասիվ «սպառողն» է, այլև փոփոխությունների իրականացման յուրաքանչյուր փուլում տարածության վերաիմաստավորողն ու արձագանքողը:

⁷ Tilley 1994, 15.

⁸ Kellams 2017.

⁹ Schwab, Brower 2009, 66-69.

¹⁰ Сосновская, Михайлов, Орлова 2018.

* Մասնագիտական հանրույթներն, այս համատեքստում, քաղաքային պլանավորման գործընթացին առնչվող մասնագետների՝ ուրբանիստ, սոցիոլոգ, իրավաբան, ճարտարապետ և այլն, հանրույթն է:

¹¹ Waldon 2009.

Պլանավորմամբ պայմանավորված պատմամշակութային տարածությունների կառուցվածքային փոփոխությունն ազդում է տեղի հետ կապվածության և տեղային ներգրավվածության մշտական վերարտադրության վրա: Առկա և ձևավորվող ընկալումների անհամապատասխանությունը հանգեցնում է քաղաքային լոկուսի կառուցվածքային խեղաթյուրմանը: Այն տեղի է ունենում լրկալ տարածություն-հասարակություն համատեքստում, որտեղ հասարակության՝ քաղաքային տվյալ տարածության հետ իրեն չնույնականացնելն առաջ է բերում քաղաքի պատմական-կառուցվածքային տիպի և առկա քաղաքային պրակտիկաների միջև կապի թուլացում¹²: Այսպիսի փոխակերպումը կարող է հանգեցնել թե՛ խորհրդանշական, թե՛ անգամ ֆիզիկական հեռացվածության տվյալ տարածություններից: Սա քաղաքային կյանքի ապահովման տեսանկյունից նշանակում է խզում քաղաքային կազմակերպման և հասարակության միջև, որն հանգեցնում է քաղաքային բնականոն գործունեության խաթարմանը¹³:

Սույն տեսական մոտեցումները կիրառելի են մասնավորապես հետխորհրդային տիպի քաղաքների կառուցվածքային-խորհրդանշական առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից: Հետխորհրդային քաղաքներում, մասնավորապես Երևանի կենտրոն վարչական շրջանում, շարունակում են արդիական համարվել պատմամշակութային կառույցների պահպանման հետ կապված խնդիրները: Սույն հետազոտությունը նպատակ ունի բացահայտելու Երևանաբնակ երիտասարդների և մասնագիտական հանրույթի՝ Կենտրոնի պատմամշակութային տարածությունների և դրանց պահպանմանն առնչվող ընկալումների տարբերությունները:

Հետազոտության մեթոդները և ընտրանքը

Հաշվի առնելով հիմնախնդրի յուրահատկությունները՝ իրականացվել է խառը մեթոդներով հետազոտություն՝ համադրելով քանակական հարցման, խորին հարցազրույցի, փաստաթղթերի ավանդական վերլուծության և փորձագիտական հարցման մեթոդները¹⁴:

- Քանակական հարցման ընտրանքը քվոտային է, ըստ սեռի (արական, իգական) և տարիքի (15-19, 20-24, 25-29), սակայն ընտրանքային համախմբության սուբյեկտների ընտրությունը իրականացվել է պատահական

¹² Luther 2015.

¹³ Hall, Held 1996.

¹⁴ Creswell 2014, 264-288.

նության սկզբունքով՝ գլխարկի մեթոդով¹⁵ (ընտրանքային համախմբությունը 360 է, վստահության միջակայքը՝ $\pm 5\%$):

- Փորձագիտական և խորին հարցազրույցների ընտրանքը տիպային է.
- ընտրվել է վեց փորձագետ՝ ըստ գործունեության ոլորտի (ակադեմիական, պետական, մասնավոր),
- խորին հարցազրույցներին մասնակից երիտասարդներն ընտրվել են քանակական հարցման մասնակիցներից: Մասնավորապես, երիտասարդների ընտրության չափանիշներն են տեղի զգացման մակարդակը (ցածր, միջին, բարձր), որը գնահատվել է Լայկերտի սանդղակով, և սեռը (արական, իգական): Ընդհանուր առմամբ, ընտրվել է 12 երիտասարդ:
- Հետազոտության ընթացքում վերլուծվել են վերոնշյալ հետազոտական հիմնախնդրին առնչվող գործող օրենսդրական կարգավորումները:

Հետազոտության արդյունքները

Սույն աշխատանքի շրջանակում հետազոտվում են Կենտրոնի պատմամշակութային տարածությունների պլանավորման նարատիվի ճանաչողական և պրագմատիկ շերտերի միջև առկա քանակական կապերը և դրանց որակական դրսևորումները: Այս համատեքստում չափվում են տարածական, տեղեկատվական և սոցիալական ներգրավվածությունները, որոնցով, ըստ Օ. Չերնյավսկայայի, բացահայտվում է քաղաքաբնակների կապվածությունը հետազոտվող տարածությունների նկատմամբ¹⁶: Մասնավորապես, երևանաբնակ երիտասարդների կողմից հիշատակման առավել բարձր մակարդակ ունեն լիովին և հիմնականում պահպանված պատմամշակութային կառույցները (օրինակ՝ օպերայի շենք, Հանրապետության հրապարակ), որոնք կազմում են հիշատակված կառույցների ընդհանուր թվի համապատասխանաբար 41% և 32%-ը, իսկ մասամբ պահպանված և ոչնչացված կառույցները՝ 23% և 4%: Ստացված նոր տվյալների համաձայն, հաստատվում է այն կանխադրույթը, որ պահպանվածության աստիճանի բարձրացմանը զուգընթաց աճում է նաև վերջիններիս նկատմամբ տարածական ներգրավվածությունը, որն այս դեպքում արտահայտվում է վայրերի հիշատակման հաճախությամբ: Այս համատեքստում ուշադրության են արժանի երևանաբնակ երիտասարդության ընկալումներն առ այն, թե փոփոխվող իրականության պայմաններում Կենտրոնի պատմամշակութային կառույցների ինչպիսի վե-

¹⁵ Соболев 1968, 20-25.

¹⁶ Чернявская 2012, 96-102.

րափոխումներ ընդունելի կլինեն նրանց համար: Այսպիսով, առավել ընդունելի փոփոխություններ են համարվում հասարակական նոր վայրերի (օրինակ՝ զբոսայգի) կառուցման (39.7%) և պատմամշակութային կառույցների ամրակցման (35.4%) աշխատանքները: Սա թերևս բխում է երևանաբնակ երիտասարդության շրջանում քաղաքային տարածության մասնակի փոփոխության անհրաժեշտությունից, քանզի հարցվածների միայն 12.3%-ի դեպքում է դիտելի պատմամշակութային տարածությունների նկատմամբ խիստ պահպանողական վերաբերմունքը:

Տարածական ընկալումների հետազոտության տեսանկյունից էական նշանակություն ունեն նաև երևանաբնակ երիտասարդների՝ Կենտրոնի պատմամշակութային տարածությունների նկատմամբ տեղեկատվական ներգրավվածությանն առնչվող հարցադրումները: Խոսքը հատկապես տարածական ընկալումները պայմանավորող տեղեկատվական այն աղբյուրների ազդեցության մասին է, որոնք ապահովում են Կենտրոնի պատմամշակութային տարածությունների վերաբերյալ տեղեկատվական դաշտը: Տվյալ դեպքում տեղեկատվական հիմնարար աղբյուրները երևանաբնակ երիտասարդության համար համացանցը (28.8%) և հեռուստացույցն են (19.8%):

Տեղեկատվական ներգրավվածության վերլուծության տեսանկյունից կարևոր է վերջինիս՝ այլ գործոնների հետ կապի համատեքստում դիտելու հնարավորությունը: Մասնավորապես, ուսումնասիրվում է տեղեկատվական ներգրավվածության հիմնարար տարրի՝ տեղեկատվական ակտիվության և տեղի զգացողության միջև առկա հնարավոր կապը: Հաշվի առնելով առաջ քաշված վարկածի յուրահատկությունը՝ իրականացվել է բազմաչափ գծային ռեգրեսիոն վերլուծություն՝ ուսումնասիրվող հատկությունների ընդգրկման քայլի մեթոդով¹⁷: Ստացված տվյալների համաձայն, հետազոտվող փոփոխականների միջև կապի ուժգնությունը, նշանակալիությունը ($R_{մոդել}=0.688$, $R^2\approx 0.5$, $R=0.516$, $p<0.001$) և երկկողմանիությունը ապացուցում են, որ, եթե բարձր է տեղի նկատմամբ տեղեկատվական ակտիվությունը, ապա բարձր է նաև տեղի զգացողությունը:

Կենտրոնի պատմամշակութային տարածությունների նկատմամբ ներգրավվածության և տեղի զգացման նման դրսևորումները ի վերջո վերարտադրում են քաղաքաբնակ երիտասարդության ճանաչողական յուրահատուկ համակարգ, որը ձևավորում է Կենտրոնի պատմամշակութային տարածությունների իմացական սահմանները երիտասարդության շրջանում: Եվ

¹⁷ Наследов 2008, 324-335.

հատկանշական է, որ երևանաբնակ երիտասարդությունը իր մտային քարտեզում Կենտրոնը ներկայացնում է առավելապես պատմամշակութային վայրերի և դրանք կապակցող օժանդակ տարրերի միջոցով (փողոց, սրճարան, այգի, բնակության վայր և այլն): Ահա թե ինչպես է բնութագրում Կենտրոնը հարցմանը մասնակցած երիտասարդներից մեկը.

«Կենտրոնը հենց Երևանն է: Էստեղ գոնե կան ինչ-որ շենքեր, որոնք ցույց են տալիս հին Երևանը: Ճիշտ է, չգիտեմ՝ իրենք պետք է պահպանվե՞ն, թե՞ պետք է քանդվեն մի օր, բայց գոնե էդ շրջական, օրինակ, հենց համալսարանը (խոսքը ԵՊՀ-ի մասին է) մի քիչ. հենց Երևանի բնույթը համալսարանն է ցույց տալիս էդ մեծ շենքով, հնությունը պահպանելով» (20 տ. իգ. սեռ, Փոքր կենտրոնի բնակիչ):

Հարցին, թե՛ ինչպե՞ս կսահմանեք «պատմամշակութային վայրեր» հասկացությունը, հարցվողները տվել են պատասխաններ, որոնց հիման վրա կատարված վերլուծության միջոցով առաջ է քաշվում հասկացության համակարգ, որը ներառում է զուգադրական տարրերի կառուցվածքային, էքզիստենցիալ և սոցիալ-մշակութային ենթահամակարգերը: Իբրև կառուցվածքային տարրեր են հանդես գալիս հին շինությունները, արձաններն ու թանգարանները, էքզիստենցիալ՝ փորձությունների միջով անցնելու և ապրած լինելու գաղափարները, իսկ սոցիալ-մշակութային մակարդակում՝ պատմամշակութային արժեքի, պատմության, քաղաքի ինքնության ու հիշողության մոտեցումները: Հատկանշական է, որ, բացի Կենտրոնի պատմամշակութային տարածությունների իմացական սահմաններից, երևանաբնակ երիտասարդության մեջ վերաիմաստավորման են ենթարկվում պատմամշակութային տարածությունների մաս կազմող առանձին կառույցներ, որոնք պայմանավորում են ընդհանրական տարածության ուժեղ կողմերը¹⁸: Դրանք են՝ Օպերայի և բալետի թատրոնը, Հանրապետության հրապարակը, Աբովյան փողոցը, Մատենադարանը, որոնք հարցվողների ճանաչողական քարտեզներում դիտվում են որպես ուղենիշ-հանգույցներ: Երևանի կենտրոնի պատմամշակութային տարածությունների պլանավորման հարցում ուշադրության է արժանի պլանավորման նարատիվի պրագմատիկ շերտը վերարտադրող՝ մասնագիտական հանրույթի շրջանում Կենտրոնի պատմամշակութային տարածությունների պլանավորման հնարավոր մեխանիզմների վերաբերյալ մոտեցումների հետազոտությունը: Մասնավորապես, իրականացված հետազոտության շնորհիվ պարզ է դառնում, որ մասնագիտական հանրույթի

¹⁸ Վերմիշյան, Բալասանյան 2015:

տեսանկյունից պատմամշակութային տարածությունների և այդ տարածությունը կազմող կառույցների՝ որպես այդպիսին սահմանման հնարավորությունները դիտելի են ոչ միայն դրանց գիտաճանաչողական, այլև զգայական առանձնահատկությունների շեշտադրման առումով: Այսպես, օրինակ, «...1988 թ. Օպերայի հրապարակը վերածվեց ազգային զարթոնքի կենտրոնի: Այդ ժամանակահատվածում ժողովուրդը համախմբվելով գնաց դեպի անկախություն և իշխանություններից պահանջեց Արցախի հետ միավորում: Ձևավորվեց մի մշակույթ, որի պարագայում յուրաքանչյուր ժամանակահատվածում առաջացած դժգոհությունների ժամանակ ժողովուրդը իր դիրքորոշումը հայտնում է այդ հրապարակում» (մասնավոր սեկտորի իրավաբան):

Սա թույլ է տալիս ենթադրելու, որ Երևանի կենտրոնի պատմամշակութային տարածությունները և կառույցները մասնագետների համար սահմանվում են որպես քաղաքի մշակութային կապիտալի քվինտեսենցիաներ, որոնք կոչված են ապահովելու քաղաքային հիշողության, ազգային ինքնության վերարտադրությունը: Այս պայմաններում, ըստ մասնագիտական հանրույթի, էական նշանակություն ունի քաղաքաբնակների, մասնավորապես, երևանաբնակ երիտասարդության ներգրավումը Կենտրոնի պատմամշակութային տարածությունների պլանավորման գործընթացում: Ռ. Հարթի մասնակցության աստիճանակարգով¹⁹ իրականացված գնահատման շնորհիվ պարզ է դառնում, որ հարցվածների մեծամասնությունը կարևորում է երիտասարդների ու մասնագետների հավասարազոր ձայնի իրավունք ունենալը: Պլանավորման քաղաքականության ձևավորման տեսանկյունից մասնագիտական հանրույթը կարևորում է հատկապես միջդիսցիպլինար-գիտամեթոդական խմբերի ստեղծման գաղափարը, որի համաձայն, մասնագետները հնարավորություն կստանան իրապես ներգրավվելու Կենտրոնի պատմամշակութային տարածությունների պլանավորման գործում՝ լսելի դարձնելով սեփական մոտեցումներն այդ հարցում: Այսպես, պետական ոլորտում ներգրավված փորձագետների շրջանում կարևորվում է պատմամշակութային կառույցների գործառության, ոչ արմատական փոփոխությունը: Ակադեմիական ոլորտը ներկայացնողները կարևորում են անօրինական կառույցների վերացման անհրաժեշտությունը, իսկ մասնավոր սեկտորի փորձագետները՝ տարածական նորարարությունները (լուսավորություն ժամանակակից տեխնոլոգիաներով, վերգետնյա անցումներ և այլն):

¹⁹ Hart 1992.

Այլ են Երևանի կենտրոնի պատմամշակութային տարածությունների պլանավորման նարատիվի ճանաչողական շերտի ինստիտուցիոնալ հայեցակետում՝ օրենսդրական կարգավորումների համակարգում, առաջադրված մոտեցումները: Մեր վերլուծությունը ցույց է տալիս, որ գործող որոշումների համաձայն՝ պատմամշակութային կառույցների պահպանության հնարավորությունները սերտորեն առնչվում են ժամանակակից օգտագործման միտումների հետ և ենթադրում են արդիական լուծումներով կառույցների կցում պատմամշակութային հուշարձաններին: Սակայն, միևնույն ժամանակ, սահմանված չեն նմանօրինակ լուծումների կիրառելիության պայմաններն ու նպատակահարմարությունը: Իրավական կարգավորման նման պայմանների պարզաբանումը մասամբ բացատրելի է տնտեսական տարբեր սուբյեկտների՝ պատմամշակութային կառույցների տնօրինման շրջանակում իրականացվող գործողությունների համատեքստում, որոնք հաճախ հակասության մեջ են մտնում գործող օրենքների հետ: Նշված չեն նաև Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման նպատակով միջոցհսկայինար խմբերի (բացառությամբ ճարտարապետաշինարարական) ձևավորման ու գործառնության հնարավորությունները, պահանջները: Այսպիսով, առկա են պլանավորման կարգավորումների խզումներ, որոնք դրսևորվում են Երևան քաղաքի և, մասնավորապես, Կենտրոնի պատմամշակութային տարածությունների պլանավորման ինստիտուցիոնալ գործընթացի և այդ տարածությունները վերարտադրող քաղաքաբնակ երիտասարդության և փորձագիտական հանրույթի հայեցակարգային ընկալումների միջև:

Եզրակացություններ

Երևանի Կենտրոնի պատմամշակութային տարածությունների պլանավորման նարատիվի ճանաչողական և պրագմատիկ շերտերի միջև առկա փոխառնչություններում կան որոշակի խնդիրներ: Չնայած երևանաբնակ երիտասարդության և մասնագիտական հանրույթի կողմից շրջանառվող մոտեցումների համադրելիությանը՝ Կենտրոնի պատմամշակութային տարածությունների պլանավորման ինստիտուցիոնալ հնարավորությունների առումով գոյություն ունի պատմամշակութային տարածությունների կառավարման, ինչպես նաև երիտասարդությանը և մասնագիտական հանրույթին այդ որոշումներում ներգրավելու մեխանիզմների անհստակություն:

Պատմամշակութային կառույցների պահպանման հայեցակարգային սահմանումների և տարածությունների պլանավորման ներկայացուցչակա-

նության տիրույթներում առկա խնդիրները պլանավորման ինստիտուցիոնալացման մակարդակում հանգեցնում են անորոշությունների: «Քաղաքաշինություն», «քաղաքաշինական ծրագիր» եզրույթները նույնացվում են «ճարտարապետաշինարարության» հետ:

Այսպիսով, տարածությունների պլանավորման տեսանկյունից Երևանի կենտրոնի պատմամշակութային տարածությունների կառույցների կառավարմանն առնչվող կարգավորումները առավելապես միակողմանի են և ոչ ներկայացուցական:

Գրականություն

- Վերմիշյան Հ., Բալասանյան Ս. 2015, Լոկալ ինքնությունները Երևանում: Քաղաքային տարածության կառուցվածքները, Երևան, ԵՊՀ հրատ., 157 էջ:
- Наследов А.Д. 2008, SPSS 15. Профессиональный статистический анализ данных, СПб., издательский дом «Питер», 415 с.
- Соболев М.И. 1968, Метод Монте-Карло/Популярные лекции по математике, т. 46, изд. 3, Москва, «Наука», 64 с.
- Сосновская А.М., Михайлов А.В., Орлова О.Ю. 2018, Нематериальное наследие и идентичность молодежи Санкт-Петербурга. Управленческое консультирование, N 2, СПб., с. 88-99.
- Чернявская О.С. 2012, Изучение идентичности горожан, Вестник Нижегородского университета им. Н.И. Лобачевского. Серия социальные науки 2(26), Нижний Новгород, с. 96-102.
- Creswell J. 2014, Research Design: Qualitative, Quantitative, and Mixed Methods Approaches / 4th ed. SAGE Publications, Inc. USA, 342 p.
- Evert K. Ballard E., eds. 2010, Encyclopedic Dictionary of Landscape and Urban Planning/International Federation of Landscape Architects, Berlin Heidelberg, Springer-Verlag, 1547 p.
- Gurvitch G. 1964, The Spectrum of Social Time, Dordrecht, Holandia, 152 p.
- Hall S., Held D. 1996, Modernity. An Introduction to Modern Societies, Oxford, Blackwell, 664 p.
- Hart R. 1992, Children's Participation: From Tokenism to Citizenship/ UNICEF International Child Development Centre/Florence, Italy, 44 p.
- Hummon D. 1992, Community Attachment: Local Sentiment and Sense of Place, New York, Plenum Press, USA, 52 p.
- Kellams T. 2017, The Mind, The Narrative, and The City: How Narratives of Space Make Place in Cognitive Maps, Kansas, Kansas State University Manhattan, 171 p.
- Luther D. 2015, Active Citizens and The Historical Identity of a City Slovenský národopis, Slovak Ethnology, vol. 63, Issue 4, Bratislava, p. 355-365.
- Lynch K. 1960, The Image of The City, Cambridge MA, MIT Press, 194 p.
- Schwab A. Brower D. 2009, Serving Two Masters: The Legal Context of Local Planning, Local Planning. Contemporary Principles and Practice edited by Gary Hack Eugénie L. Birch Paul H. Sedway Mitchell J. Silver/(An ICMA green book), USA, p. 66-69.
- Tilly C.Y. 1994, A Phenomenology of Landscape: Places, Paths, and Monuments, Oxford, Berg 3PL, 236 p.

- Waldon S. 2009, Planners and Politics/ Local Planning. Contemporary Principles and Practice edited by Gary Hack Eugénie L. Birch Paul H. Sedway Mitchell J. Silver, An ICMA green book, USA, 496 p.
- Wright E. 2002, Class Analysis of Ideology/Foundations of Class Analysis, Lecture 11, Department of Sociology University of California, Berkeley, 22 p.

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԱՏՄԱՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

Հարություն Վերմիշյան, Վահան Ենգիդունյան

Ամփոփում

Քաղաքային տարածության ձևավորման և զարգացման համատեքստում կարևոր նշանակություն ունեն քաղաքի պատմամշակութային տարածությունների պլանավորման գործընթացները: Պատմամշակութային տարածությունները քաղաքի պատմության վերարտադրողներն են: Քաղաքի պատմամշակութային տարածությունների պլանավորումը ենթադրում է տարածություն-հասարակություն-ստեղծարար հանրույթ փոխհարաբերությունների բարդ շղթա: Այս փոխհարաբերություններում են ձևավորվում քաղաքային հանրույթների՝ տեղի զգացողությունն ու տարածական ներգրավվածության ձևերը: Քանակական հարցումների, փորձագիտական և խորին հարցազրույցների, ինչպես նաև փաստաթղթերի վերլուծության մեթոդների համադրությամբ արված հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ Երևանի կենտրոնի պատմամշակութային տարածության պլանավորման մեջ առկա են հակասություններ քաղաքային տարածությունը «սպառողների» ճանաչողական պատկերացումների, մասնագիտական-պրագմատիկ որոշումների և/կամ լուծումների և իրավական կարգավորումների միջև:

Բանալի բառեր՝ տարածական պլանավորում, պատմամշակութային տարածություն, Երևանի կենտրոն, երիտասարդություն, փորձագիտական հանրույթ, տեղի զգացողություն, տարածական ներգրավվածություն:

СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЕ АСПЕКТЫ ПЛАНИРОВАНИЯ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПРОСТРАНСТВ ЦЕНТРА ЕРЕВАНА

Арутюн Вермишян, Ваан Енгидунян

Резюме

В контексте формирования и развития городского пространства процессы планирования историко-культурных пространств города являются глав-

ными, поскольку они воспроизводят городскую историю и считаются её квинтэссенцией. Планирование историко-культурных пространств подразумевает сложную цепочку отношений пространство-общество-творческое сообщество. В этих отношениях формируются чувство места городских сообществ и форма пространственной вовлеченности. Применение методов количественного опроса, экспертного, глубинного интервью и анализа документов приводит к заключению, что в процессе планирования историко-культурного пространства центра Еревана возникают противоречия между когнитивными представлениями потребителей городского пространства, прагматичными профессиональными решениями и их правовым урегулированием.

Ключевые слова – пространственное планирование, историко-культурное пространство, центр Еревана, молодежь, экспертное сообщество, чувство места, пространственная вовлеченность.

THE SOCIO-CULTURAL ASPECTS OF PLANNING OF THE HISTORICAL AND CULTURAL SPACES OF YEREVAN CITY CENTER

Harutyun Vermishyan, Vahan Yengidunyan

Abstract

In the context of the formation and development of urban space, the planning processes of the historical and cultural spaces of the city are central. These spaces of the city are the reproducers of urban history and are considered the quintessence of above-mentioned history. The planning of the historical and cultural spaces of the city implies a complex chain of space-society-creative community relations. In these relationships, the sense of place of urban communities and the form of spatial engagement are formed. Combining quantitative survey, expert and in-depth interviews and document analysis methods, it becomes clear that in the process of planning the historical and cultural space of the Yerevan city Center, there are contradictions between the cognitive perceptions of urban space consumers, pragmatic professional decisions and/or solutions its legal regulations.

Key words – spatial planning, historical and cultural spaces, Center of Yerevan, youth, expert community, sense of place, spatial engagement.

ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ 510-ԱՄՅԱԿԸ (1512-2022 ԹԹ.)

Գագիկ Սուքիասյան

Մանկավարժական գիտությունների դոկտոր
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 13/ա
Էլ. հասցե՝ gagiksukiasian@mail.ru
Հոդվածը ներկայացվել է 21.12.2021, գրախոսվել է 24.12.2021, ընդունվել է տպագրության 12.12.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.3-220

Ներածություն

Հայ գրատպության պատմությունը համաշխարհային մշակույթի ու քաղաքակրթության զարգացման պայծառ էջերից է և առանձնահատուկ տեղ է զբաղեցնում «Գուտենբերգյան գալակտիկայում»: Դարեր շարունակ ենթարկվելով բարբարոս ժողովուրդների գերիշխանությանը և զանգվածային կոտորածների՝ հայ ժողովրդի զգալի մասը ստիպված էր հեռանալ մայր երկրից՝ սփռվելով աշխարհով մեկ: Տարբեր երկրներում ստեղծելով գաղթօջախներ՝ նրանք ամենուր հիմնեցին տպարան, դպրոց, եկեղեցի, զարգացրին հարուստ մշակույթ՝ ձգտելով պահպանել իրենց ազգային դիմագիծը:

Աղբյուրները վկայում են, որ տպագրական արվեստի հետ հայերի ամենավաղ առնչությունը գալիս է XIV դարից: Այսպես. Չինաստանում Ռուսաստանի դեսպան (ծագումով մոլդովացի) Նիկոլայ Գավրիլովիչ Սպաֆարին (1636-1708) տպագրության «չինական գաղտնիքը» Արևելքից Եվրոպա տարածելու գործում հիշատակել է նաև հայազգի Անտոնին: Իր գրքի «Աշխարհի՝ Ասիա կոչվող առաջին մասի նկարագրությունը» գլխում նա գրել է. «...երբ կալմիկները (մոնղոլները - Գ.Ս.) և թաթարները գրավեցին Չինաստանը, նրանց հետ Չինաստան եկան հայր Օդերիկը, Անտոն Հայը և Մարկո Պավել (Պոլո - Գ.Ս.) վենետիկցին... նրանք Չինաստանից Եվրոպա բերեցին այդ արվեստները»¹:

Իսկ Ֆրանսիացի գիտնական Պ. Գյումանը 1916 թ. կարծիք է հայտնել, թե տպագրությունը Եվրոպա կարող էին բերել փոքրասիական և կովկասյան ժողովուրդները, օրինակ՝ հայերը, թուրքերի և մոնղոլների ճնշում-

¹ Спафарий 1960, 184.

ներից նահանջելով արևմուտք²։ Ըստ Գյումանի, մի խումբ հայեր, ույգուրների մոտ սովորելով տպագրության ամենակատարյալ ձևերը, մեկնում են Նիդեռլանդիա, որտեղ ապրում էր Լաուրենս (Լավրենտի) Յանսզոն Կոստերը (1405-1484)՝ եվրոպական գրատպության ենթադրյալ հիմնադիրներից մեկը (Գուտենբերգից առաջ)։ Սակայն գրքագիտության նորագույն տվյալները հաստատում են, որ Նիդեռլանդիայի Հառլեմ քաղաքի վանական Կոստերը տպագրական տեխնիկայի գաղտնիքն իմացել է արևելքից եկած հայ գաղթականներից³։ Սա, մեր կարծիքով, ցնցող փաստ է համաշխարհային հագիտության և արդի գրքագիտության զարգացման համար։

Հայկական գրատպական կենտրոնների զարգացումը XVI-XXI դդ. որպես համակարգ և տպագիր մշակույթի արտացոլումը մատենագիտական հրատարակություններում

Հայ գրատպության օրրանը Վենետիկն է (Իտալիան), որտեղ 1512 թ. Հակոբ Մեղապարտը⁴ հիմք դրեց մեսրոպատառ առաջին տպագիր հրատարակությանը՝ «Ուրբաթագիրք» վերնագրով։ Այս հազվագյուտ գրքի մի օրինակը գտնվում է Հայաստանի ազգային գրադարանում, մյուսը՝ Մխիթարյան միաբանների Մատենադարանում։ Այնուհետև (1512-1513) լույս է տեսել ևս չորս գիրք. «Պատարագատետր», «Աղթարք», «Պարզատոմար» և «Տաղարան»։ Այսպիսով, հայերը ոչ միայն եվրոպացի շատ ազգերից առաջ, այլև նախկին Խորհրդային Միության ժողովուրդներից ու ներկայիս ԱՊՀ երկրներից առաջինն էին, որ իրականացրին ազգային լեզվով տպագրություն։ XVI դ. հայ տպագրության (հիմնադիրը Աբգար Դպիր Թոխատեցին էր, հետագայում՝ Գրիգոր Մարզվանեցին. կարևոր օջախներ էին նաև Կ. Պոլիսը (1567), Հռոմը (1584), որտեղ տպագրվել են բազմաթիվ գրքեր։

XVII դ. հայ տպագրությունը թևակոխում է նոր շրջան։ Հայկական տպագրական արվեստի զարգացման մյուս կենտրոնները դարձան Լվովը (1616), Միլանը (1621), Փարիզը (1633), Լիվոռնոն (1643), Լայպցիգը (1680)։ 1638 թ. Նոր Զուղայում Խաչատուր Կեսարեցին հիմք է դնում հայ տպագրական օջախի, որն առաջինն էր ոչ միայն Իրանի հողում, այլև Մերձավոր և Միջին Արևելքի ժողովուրդների կյանքում։ Նոր Զուղայում են տպա-

² Владимиров 1988, 95.

³ История книги 1998, 50.

⁴ Իշխանյան 1982:

գրվել «Հարանց վարք» (1641), «Ժամագիրք Ատենի» (1642) գրքերը: Այս դարաշրջանի հայկական տպարաններից ամենահայտնին Ամստերդամին էր (1660), որտեղ Ոսկան Երևանցու ջանքերով 1666 թ. տպվեց հայերեն առաջին ամբողջական «Աստվածաշունչը», որը մեծ անկյունաքար՝ եղավ հայ տպագրության համար: Հետագայում ամստերդամյան գրահրատարակչությունը զարգացավ Թովմաս, Ղուկաս և Միքայել Նուրիջանյանների շնորհիվ (պատմական Հայաստանի Վանանդ գավառից): Վանանդեցիները 1695 թ. Հոլանդիայում հրատարակեցին առաջին հայագիր քարտեզը՝ «Համատարած աշխարհացույցը», V դ. հայ նշանավոր պատմիչ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»: Հայ մատենագիտության ժամանակակից հրատարակություններում առանձնահատուկ տեղ ունի Պետրոս Հովհաննիսյանի հեղինակած՝ Մովսես Խորենացու ամբողջական մատենագիտությունը (Եր., 2013)՝ նվիրված «Հայոց պատմության» անդրանիկ տպագրության 320-ամյակին⁵:

XVIII դ. հայերեն գրքերի հրատարակման գործում աչքի ընկնող դեր են խաղում Մխիթարյանները⁶, որոնք 1701 թ. հաստատվեցին Վենետիկում: Նրանք սկսեցին հրատարակել հայագիտական բնույթի բազմաթիվ գրքեր, ինչպես նաև հունա-հռոմեական գրականությունից արված թարգմանություններ: Հարկ է հիշել Մ. Սեբաստացու «Բառգիրք հայկազյան լեզվի» երկհատոր բառարանը (1749-69), Մ. Չամչյանի եռահատոր «Հայոց պատմությունը» (1784-86) և այլն: Այդ ժամանակաշրջանում հայկական տպագրության օջախներ են ստեղծվում Լոնդոնում (1736), Մադրասում (1772) (այստեղ 1794 թ. լույս է տեսնում հայերեն առաջին պարբերականը՝ «Ազդարարը») և Կալկաթայում (1796): Անհրաժեշտ է նշել, որ 2019 թ. նոյեմբերի 28-29-ին Հայաստանի ազգային գրադարանում կայացավ գիտաժողով՝ նվիրված «Ազդարարի» 225-ամյակին, որտեղ գիտական զեկուցումներով հանդես եկան գիտության, կրթության և մշակույթի բազմաթիվ գործիչներ Հայաստանից, Արցախից և Սփյուռքից⁷: 1781 թ. Գ. Խալդարյանի նախաձեռնությամբ առաջին անգամ Ռուսաստանում՝ Սանկտ Պետերբուրգում, հայկական տպարանի հիմքն է դրվում: 1786 թ. տպարան է հիմնվում Նոր Նախիջևանում, իսկ տասը տարի անց՝ Աստրախանում (1796): Այստեղ

⁵ Հովհաննիսյան 2013:

⁶ Յարոմյան 1989, Պզդիկյան 2003, հմմտ. նաև Морган де Жак 2020:

⁷ Հայ մամուլի դերը 2020:

1815 թ. լույս է տեսնում արևելահայ առաջին շաբաթաթերթը՝ «Արևելյան ծանուցմունքը»:

XVIII դ. երկրորդ կեսին Հայաստանում (Էջմիածնում), առաջին անգամ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի (1710-1780) նախաձեռնությամբ 1771 թ. հիմնվում է տպարան, որին կից 1776 թ. գործել է թղթի գործարան: Այստեղ են լույս տեսել «Արարատ» (1868), 1944-ից «Էջմիածին» հայագիտական ամսագիրը (հայ եկեղեցու պաշտոնական օրգանը), Ս. Երևանցու «Ջամբոլ» (1873) և այլ գրքեր:

Գրատպական կենտրոնների աշխարհագրական ընդգրկմամբ և տպագիր հրատարակությունների բազմազանությամբ ամենից բեղունը եղավ XIX դարը: Այս դարում հայոց վերազարթնումի կենտրոնը մնում էր Իտալիան: Սակայն Մխիթարյանների մի մասը, որոնք 1772 թ. Սուրբ Ղազարից հեռացել էին գնացել Տրիեստ, 1810 թ. տեղափոխվում են Վիեննա (Ավստրիա), որտեղ 1812 թ. հիմք են դնում տպագրական մի նոր օջախի: Վենետիկի և Վիեննայի հայ գաղթօջախները մինչև օրս էլ անգնահատելի դեր են խաղում հայկական մշակույթի վերածննդի հարցում: Այս քաղաքներում են հիմնադրվել հայագիտական երկու արժեքավոր հանդեսներ՝ «Բազմավեպը» (Վենետիկ, 1843) և «Հանդես ամսօրյան» (Վիեննա, 1887), որոնք լույս են տեսնում ցայսօր: Վերջապես՝ եվրոպական այդ կենտրոնների հայկական մատենադարաններում է հիմնվել հայ ազգային մատենագիտական իսկական դպրոցը, որը սկզբնաղբյուր դարձավ եվրոպական հայագիտության ու նրա մատենագիտության զարգացման համար:

XIX դարում հայ տպագրական կենտրոններ են ստեղծվում ինչպես Եվրոպայի, Ասիայի, այնպես էլ Ամերիկայի և Աֆրիկայի երկրներում: Գրատպության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցան Բոմբեյի (1810), Երուսաղեմի (1833), Կահիրեի (1865), Ալեքսանդրիայի (1888), Ժնևի (1891), Աթենքի (1892), Թեհրանի (1894) հայկական տպարանները: 1857 թ. հայ տպագրությունը մուտք է գործում Նյու-Յորք, իսկ 1899 թ.՝ Բոստոն: Այս շրջանին է վերաբերում Շուշիի (1828), Մոսկվայի Լազարյան ճեմարանի (1828) և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1823) հայկական տպարանների հիմնումը, որոնց դերը նույնպես մեծ էր գրահրատարակության և տպագիր մշակույթի զարգացման մեջ: Ս. Նազարյանցի խմբագրությամբ և Մ. Նալբանդյանի եռանդուն աջակցությամբ 1858-1864 թթ. Մոսկվայում լույս է տեսել «Հյուսիսասիայլ» ամսագիրը: Թիֆլիսում է առաջին անգամ տպագրվել հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի (1809-

1848) «Վերք Հայաստանի» վեպը (1858): Հասարակական-քաղաքական, գրական ու մշակութային կյանքը լայնորեն պատկերելու տեսանկյունից աչքի ընկնող դեր են խաղացել «Մեղու Հայաստանի» (1858-1886), «Արծագանք» (1882-1898), «Մուրճ» (1889-1907), «Ազգագրական հանդես» (1896-1916), «Գեղարվեստ» (1908-1921) և այլ պարբերականներ, որոնք նույնպես հրատարակվել են Թիֆլիսում: Իսկ Շուշիում լույս տեսած առաջին գիրքը Հարություն Զուղայեցի Դավթյանի «Պատմություն Սուրբ Գրոցն» է (1828): Բազմաթիվ տպագիր գործերից ու բազմանուն պարբերականներից բացի, Շուշիում են առաջին անգամ տպագրվել Ռաֆֆու «Խենթը» (1881), ինչպես նաև Բայրոնի «Շիլլոնի կալանավորի» (1837), Գոգոլի «Տարաս Բուլբայի» (1886), Ֆիրդուսու «Ռոստամ և Սոհրաբի» («Շահնամե») (1893) հայերեն առաջին թարգմանությունները:

Նշանավոր էր նաև XIX դ. 2-րդ կեսը, երբ Հայաստանի թե՛ արևելյան մասում՝ Երևանում և Ալեքսանդրապոլում (1876), և թե՛ արևմտյան մասում՝ Վանում (1858) և Մուշում (1863), ստեղծվեցին գրատպության նոր կենտրոններ: Վանում (Վարագա վանքում) 1858 թ. քաղաքական, հոգևոր և մշակութային մեծ գործիչ Մ. Խրիմյանի (1820-1907) խմբագրությամբ լույս է տեսնում «Արծիվ Վասպուրականի» ամսագիրը, իսկ Մուշում Գ. Սրվանձտյանի (1840-1892) խմբագրությամբ հրատարակվեց «Արծվիկ Տարոնո» պարբերականը (1865):

Գրքամատենագիտական հետազոտությունը ցույց է տալիս, որ մինչև 1920 թ.⁸ աշխարհում գործած 460 հայկական տպարաններում տպագրվել են այնքան հայերեն գիրք ու պարբերական, որոնք կազմում են համաշխարհային ամբողջ գրքային արտադրանքի 14,5 տոկոսը⁹: Սա լուրջ փաստ է տպագրական քաղաքակրթության զարգացման պատմության մեջ:

Մայր Հայաստանը գրքի և տպագրական արվեստի զարգացման ծաղկուն կենտրոն դարձավ խորհրդային և հետխորհրդային շրջաններում, երբ Երևանում սկսեցին հիմնադրվել տասնյակ գրահրատարակչություններ՝ «Հայպետհրատ» (1921), «Գիտություն» (1936), «Լույս» (1964), «Հայկական հանրագիտարան» (1967), «Տիգրան Մեծ» (1968), «Խորհրդային գրող» (1976), «Արևիկ» (1986), «Էդիթ Պրինտ» (1993), «Ձանգակ-97» (1997) և այլն: Հայալեզու և օտարալեզու գրականության տարածման գործում սկսեցին կա-

⁸ Իշխանյան 1981, 153:

⁹ Սուքիասյան 1990:

րևոր նշանակություն ձեռք բերել նաև բուհական տպարաններն ու ժամանակակից էլեկտրոնային տեխնոլոգիական միջոցները¹⁰:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով՝ միայն 1980-ական թթ. վերջերին աշխարհում լույս է տեսել 10 միլիարդ գիրք, իսկ Հայաստանում՝ 12 միլիոն օրինակ հրատարակություն:

Ըստ աղբյուրների՝ հայկական ձեռագրերի և տպագիր գրքերի բազմաթիվ հուշարձաններ անհետ կորել են, բայց զգալի մասը «ապաստանել» է Հայաստանի և արտասահմանի, ներառյալ հայկական սփյուռքի գրադարաններում, մատենադարաններում ու թանգարաններում: Այդ մասին են վկայում Հայաստանում ու հայկական սփյուռքում լույս տեսած բազմաթիվ տպագիր ձեռագրացուցակներն ու գրացուցակները: Օրինակ, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հրատարակած «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի»-ն (հ. Ա՝ 1984, հ. Բ՝ 2004, հ. Գ՝ 2007, հ. Դ՝ 2008, հ. Ե՝ 2009, հ. Զ՝ 2012, հ. Է՝ 2012, հ. Ը՝ 2013, հ. Թ՝ 2017, հ. Ժ՝ 2019)՝ ընդգրկելով մինչև 3400 ձեռագրերի մատենագիտական նկարագրություն և Հայաստանի ազգային գրադարանի հրատարակած «Հայ գրքի մատենագիտությունը» (հ. 1՝ 1988, հ. 2՝ 1967, հ. 3՝ 1999, հ. 4՝ 2007, հ. 5՝ 2012, հ. 6՝ 2018), ընդգրկելով 1512-1940 թթ. տպագրված գրքերը: Համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ արժեքավոր մատենագիտություններն օժտված են նյութերի ընդգրկման անչափելի խորությամբ ու բազմազանությամբ, մատենագիտական նկարագրության առանձնահատկություններով, որոնք աղբյուրագիտական, գրադարանային-տեղեկատվական և գրքագիտական տեսանկյուններից ունեն մեծ նշանակություն: Դրանցում խստորեն պահպանված է նաև ժամանակագրական կարգը, որը չափազանց կարևոր է:

Այդ ամենից բացի, հայ գրքին նվիրված մատենագիտական նորանոր աշխատանքներ են կատարվել ու հրապարակվել Երևանում, Սուրբ Էջմիածնում, Բեյրութում, Կահիրեում, Թիֆլիսում, Լոս Անջելեսում, Անթիլիասում, Նոր Զուղայում, Արցախում և այլուր: Այդ մասին են վկայում հետադարձ բնույթի հետևյալ հրատարակությունները.

1. Արցախ-Ղարաբաղ: Մատենագիտություն, մաս 1, 1988-1989, կազմ.՝ Ռ.Վ. Չիլինգարյան, Ս.Զ. Բիլբուլյան, Երևան, ԵՊՀ, 1993, 190 էջ:

¹⁰ Սուքիասյան 2018, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն 2011:

2. Գիրքը Սովետական Հայաստանում, հ. 1, 1920-1930, Երևան, ՀՍՍՀ պետ. գրապալատ, 1978, 574 էջ, հ. 2, 1931-1940, կազմ.՝ Լ. Ղազարյան, Թ. Սարգսյան, Երևան, Հայաստանի ազգային գրապալատ, 1988, 953 էջ, հ. 3, հ. 9, 2003-2012 թթ.:

3. Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն (1833-1996), կազմ.՝ Ա.Ա. Մուրադյան, առաջաբան և խմբ.՝ Գ.Ա. Սուքիասյանի, Երևան, հեղ. հրատ., 2011, 148 էջ:

4. Լիբանանահայ գիրքը 1894-2012, Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Ա. Տազեսեան և Ա. Իվրնէշլեան, Պէյրութ, 2013, 440 էջ:

5. Հայ գիրքը Եգիպտոսի մեջ (1888-2011), Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Ս.Ն. Պայրամեան: Գիրքը նվիրված է Հայ գրատպության 500-ամյակին, Գահիրե, Նուպար տպարան, 2012, 287 էջ:

6. Հայոց Մեծ եղեռն. մատենագիտական ցանկեր, կազմողներ՝ Ա. Մալոյան, Լ. Գրիգորյան, Գ. Թադևոսյան: Ուսումնասօժանդակ ձեռնարկ, Երևան, «Տիգրան Մեծ», 2016, 180 էջ:

7. Հայոց Եղեռնի քրեստոմատիա, կազմ.՝ Ն. Սուքիասյան, Երևան, «Էդիթ Պրինտ», 2015, 520 էջ:

8. Հարությունյան Ա, Հայոց ցեղասպանություն և Հայկական հարց: Գրքերի մատենագիտություն (1860-2010), խմբ.՝ Պետրոս Հովհաննիսյան: Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014, 560 էջ:

9. Վարդան Լևոն, Հայկական տասնհինգը թուրք մատենագիտության և մամուլին մեջ և մենք, Պէյրութ, հրատ. նշված չէ, 1998, 257 էջ:

10. Հայերեն երգարանների մատենագիտություն (1513-1921), աշխատասիրությամբ՝ Կ. Հարոյանի, խմբ. և առաջաբանի հեղինակ՝ Թ. Պողոսյան, Երևան, «Նահապետ», 2014, 612 էջ:

11. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Վաչե և Թամար Մանուկյան, Մատենադարան, Ցեղասպանագիտական գրականություն, Սուրբ Էջմիածին, 2015, 28 էջ:

12. Մինասյան Լ.Գ., Հայ տպագիր գիրքը Իրանում 1636-2000, Մատենագիտություն, Նոր Զուղա, 2001, 224 էջ:

13. Մինասյան Լ.Գ., Մատենագիտական ցանկ Սպահանի հայոց թեմին վերաբերող հայերեն, պարսկերեն և անգլերեն գրքերի ու հոդվածների: Նվիրվում է հայերի Նոր Զուղայում հաստատման 400-ամեակին, Նոր Զուղա, 2007, 122 էջ:

14. Նալպանտեան Հովսեփ, Հայ գիրքը Ամերիկայի մեջ (1857-2015), Լույս Անջելես, հրատ. նշված չէ, 2015, 386 էջ:

15. Պողոսյան Ն., Հայ հնատիպ գրքերի ձեռագիր հիշատակություններ (1512-1712): Նվիրված է հայ գրատպության 500-ամյա հոբելյանին, Երևան, ԵՊՀ հրատ., 2012, 88 էջ:

16. Սարգիսեան Յակոբ, Հայ գիրքը եղեռնի տարիներուն (մատենացանկ), առաջաբանը Գարեգին Բ կաթողիկոսի, Անթիլիաս-Լիբանան, 1985, 74 էջ:

17. Տեր-Խաչատրյան Ա., Հայ գրքի մատենագիտական գործեր, խմբ.՝ Կ. Հովհաննիսյան, Պեյրուֆ, 2014, 420 էջ:

18. Арцах-Карабах. Библиография на русском языке: 1988-2010, сост. А.Г. Симонян, А.А. Гарибян, Э.А. Бабабян, Ер., ЕГУ, 2011, 36 с.

19. Армянская книга в Грузии: 1921-1938. Библиография, сост. С. Шхян, Тбилиси: Книжная палата Грузии, 1941, 152 с. и т.д.

Ընդգրկած աղբյուրների ծավալով, պատմականությամբ ու եզակիությամբ այս աշխատություններն առանձնանում են թեմատիկ ուղղվածությամբ և ունեն գրքամատենագիտական ու հայագիտական կարևոր նշանակություն:

Առանձին խումբ են ԽՍՀՄ բազմազգ ժողովուրդների գրականությունը (հայ գրականությունը օտար լեզուներով և օտարալեզու գրականությունը հայերենով) արտացոլող մատենագիտական հրատարակությունները, որոնք գրադարանային-տեղեկատվական, պատմամշակութային ու սոցիալ-հաղորդակցական կապերի զարգացման տեսանկյուններից չեն կորցրել իրենց արդիականությունը նաև այսօր¹¹: Այդպիսիք են՝

1. Հայ-բելոռուսական գրական կապեր. 1935-1978: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Է. Բաբայան, Լ. Եփրեմյան, Երևան, 1979, 108 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

2. Հայ-էստոնական գրական կապեր. 1945-1980: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Հ.Ա. Նազինյան, Ի.Ս. Սիմոնյան, Երևան, 1981, 146 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

3. Հայ-թուրքմենական գրական կապեր. 1944-1982: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Պ.Ս. Գալստյան, Ի.Ս. Սիմոնյան, Երևան, 1983, 73 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

4. Հայ-լատիշական գրական կապեր. 1945-1975: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Հ. Նազինյան, Ի. Սիմոնյան, Երևան, 1978, 117 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

5. Հայ-լիտվական գրական կապեր. 1946-1975: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Հ. Նազինյան, Ի. Սիմոնյան, Երևան, 1976, 72 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

¹¹ Сукиасян 2019, 65-73.

6. Հայ-կիրգիզական գրական կապեր. 1939-1985: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Լ.Ս. Գալստյան, խմբ.՝ Ա.Հ. Եփրեմյան, Երևան, 1988, 62 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

7. Հայ-ղազախական գրական կապեր. 1937-1986: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Լ.Հ. Եփրեմյան, խմբ.՝ Ի.Ս. Սիմոնյան, Երևան, 1987, 144 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

8. Հայ-մոլդովական գրական կապեր. 1945-1980: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Լ.Հ. Եփրեմյան, Երևան, 1982, 159 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

9. Հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից /Իսրայել Օրի:/ Անոտ. մատենագիտություն, կազմ.՝ Լ.Խ. Մարտիրոսյան, խմբկողմ.՝ Ղարիբջանյան Գ.Բ. և ուրիշներ, Երևան, 1985, 21 էջ: Գիտա-ինֆորմ բյուլետեն, ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. ինֆորմ. կենտրոն:

10. Հայ-վրացական գրական կապեր. 1920-1970: Մատենագիտական ցանկ, խմբկողմ. Վ.Ա. Խաչատրյան և ուրիշ, Երևան, 1979, 192 էջ: ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. ինֆորմ. կենտրոն:

11. Հայ-տաջիկական գրական կապեր. 1893-1989: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Լ.Ս. Գալստյան, Ա.Հ. Եփրեմյան, Երևան, «Գիրք», 1990, 199 էջ: ՀՀ Մշակույթի նախարարության Հայաստանի ազգային գրադարանի ինֆ. մատենագիտ. բաժին:

12. Հայ-ուզբեկական գրական կապեր. 1940-1984: Մատենագիտական ցանկ, կազմ.՝ Պ.Ս. Գալստյան, Ի.Ս. Սիմոնյան, խմբ.՝ Ա.Հ. Եփրեմյան, Երևան, 1986, 171 էջ: ՀՍՍՀ կուլտ. մինիստրության, Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. գրադ.-ի ինֆորմ. և մատենագիտ. բաժին:

13. Հայ-ուկրաինական գրական կապեր 1861-1971: Մատենագիտություն, կազմ.՝ Ս.Գ. Ամիրյան, պատ. խմբ.՝ Հ.Մ. Դավթյան, Լ.Ի. Սկոկան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, 370 էջ:

14. Հայ գրականությունը օտար լեզուներով, 1971, Մատենագիտություն, կազմ.՝ Ա. Նազինյան, Յ. Խաչատրյան, Ա. Յիցինյան, խմբ. և առաջ.՝ Ռ. Իշխանյանի, Երևան, 375 էջ:

15. Հայրենական մեծ պատերազմի մատենագիտություն (1941-1983), 1985, կազմ.՝ Ռ. Խաչատրյան, Երևան, 134 էջ: ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. ինֆորմ. կենտ. բյուլետեն:

16. Հայրենական Մեծ պատերազմի պատմության մատենագիտություն (1984-1990) 1990, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հաս. գիտ. ինֆորմ. կենտրոն, 60 էջ:

17. Սովետահայ թարգմանական գեղարվեստական գրականություն (1920-1980): Մատենագիտություն, կազմ.՝ Գ.Գ. Հակոբյան, Գ.Ս. Միրիջանյան, Լ.Մ. Զաքյան, Երևան, ՀՍՍՀ պետ. գրապալատ, 1983, 783 էջ (նվիրվել է ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին):

Բազմաթիվ ու բազմաբովանդակ են նաև պարբերական մամուլի վերաբերյալ կազմված հետադարձ մատենագիտությունները՝ տպագրված Հայաստանում, Արցախում և հայկական Սփյուռքում, որոնք վերոնշյալ ցանկերի հետ ընթերցող հասարակության, կրթական և գիտական հաստատությունների համար տեղեկատվության և գիտելիքի անսպառ աղբյուրներ են: Դրանցից են՝

1. «Արծիվ Վասպուրականի» ամսագրի մատենագիտություն (1855-1856, 1858-1864 թթ.), կազմեց և առաջաբանը գրեց Էմմա Կոստանյանը, խմբագիր՝ Ալբերտ Խառատյան, Երևան, ԳԱԱ հրատ., 2006, 45 էջ:

2. «Գարուն» ամսագրի մատենագիտություն. 1967-2000 թ. (Արդի հայ գրականությունը «Գարունում»), կազմեց և առաջաբանը գրեց Լ. Անանյանը, Երևան, «Ապոլոն», 2011, 510 էջ:

3. Հայ մամուլը Եգիպտոսի մեջ: Մատենագիտական ցուցակ, կազմ.՝ Ս. Պայրամյան, Գահիրե, 2005, 395 էջ:

4. «Հանդես Ամսօրեա»-ի հոդվածները 100 տարում: Մատենագիտական ցուցակ 1887-1986, կազմ.՝ Հ. Օգոստինոս վրդ. Սեքույան, Վիեննա, 1990, 397 էջ:

5. «Հյուսիսափայլ» ամսագիրը 1858-1864 թթ.: Մատենագիտություն, կազմ.՝ Ե. Ներսիսյան, խմբ.՝ Ռ. Իշխանյան, Երևան, Ալ. Մյասնիկյանի անվ. գրադարան: Ինֆորմ. և մատենագիտ. բաժին, 1978, 117 էջ:

6. Մատենագիտություն «Հայկազեան հայագիտական հանդեսի»: Ա-Լ հատորներ (1970-2010), կազմ՝ Օգնայեան Սագո: Հրատ. Հայկազյան համալսարանի հայագիտական ամբիոն, Պեյրուֆ, 2010, 144 էջ:

7. Օգնայեան Սագո: Մատենագիտություն «Սփյուռք» շաբաթաթերթի, 1958-1978, Բեյրութ, 1984, 410 էջ:

8. «Պատմաբանասիրական հանդես»: Մատենագիտական ցանկ (1983-2007), Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 2009, 318 էջ: Հայերեն, ռուսերեն և անգլ. լեզուներով: Ցանկի 1958-1982 թթ. ընդգրկող մասը (222 էջ) լույս է տեսել 1983 թ.:

9. «Ազդարարի» Մատենագիտություն: Բարսեղյան Խ.Հ., Հայ անդրանիկ պարբերականը, «Ազդարար», Երևան, «Գիտություն», 1994, էջ 57-66:

10. Հայ պարբերական մամուլը: Մատենագիտական համահավաք ցանկ (1794-1980), կազմ.՝ Մ.Ա. Բաբլոյան, պատ. խմբ.՝ Մ.Հ. Մխիթարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 371 էջ:

11. Մատենագիտություն «Էջմիածին» ամսագրի (1974-2008), կազմ.՝ Արարատ քահանա Պողոսյան, Սուրբ Էջմիածին, 2012, 480 էջ:

12. Տեր-Խաչատրյան Ա., Հայ մամուլի մատենագիտական գործեր, խմբ.՝ Կ. Հովհաննիսյան, Պեյրուֆ, 2014, 693 էջ:

13. Հայ մամուլն ու գրատպությունը Եգիպտոսի մեջ և Հայ գրատպության 500-ամյակի (1512-2012) ոգեկոչումը Գահիրեի մեջ, պատրաստեց՝ Տոքթ. Ս.Ն. Պայրամեան, Գահիրե, «Նուպար», 2013, 46 էջ:

14. Հարությունյան Մ.Ա., Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874-2009 թթ.): Պատմաքննական ներածությամբ, ծանոթագրություններով, մեկնաբանումներով, Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2010, 232 էջ:

Հարկ է նշել, որ բոլոր դարաշրջաններում գրահրատարակչական գործընթացները պայմանավորված են եղել հասարակական-տնտեսական պահանջներով և մեծ չափով նպաստել գրադարանային ֆոնդերի համալրմանն ու ճյուղային գիտությունների վերընթաց զարգացմանը: Մատենագիտական այս հրատարակությունների վերլուծությունը, որոնք աչքի են ընկնում նաև ժամանակագրական առանձնահատկություններով ու վիճակագրական տվյալներով, ցույց է տալիս, որ *մատենագիտական տեղեկատվության զարգացումը Հայաստանում և նրա սահմաններից դուրս, անշուշտ, կրել է համակարգային բնույթ՝ կարևոր դեր խաղալով տպագիր մշակույթի տարածման, ընթերցանության ու կրթության զարգացման բնագավառներում:*

Հայկական մշակութային ժառանգության ճակատագիրը արցախյան նոր պատերազմում և հայ գրատպության 510-ամյակը նշելու պատմական անհրաժեշտությունը

Հոդվածը ներկայացվել է 02.12.2022, գրախոսվել է 05.12.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.3-323

Ներածություն

Հայաստանի պատմության տարբեր շրջափուլերում մեր երկիրը մշտապես քաղաքական, առևտրատնտեսական և մշակութային կապեր ու հարաբերություններ է ունեցել հարևան Իրանի հետ: Բացառություն չէ նաև Երևան քաղաքը, որի ճարտարապետական դիմագծի ձևավորման վրա մեծ ազդեցություն թողեցին իրանական ճարտարապետությունն ու շինարվեստը, որոնք ցայտուն կերպով դրսևորվեցին դեռևս իլխանության շրջանում, ապա և՛ ուշ միջնադարում, երբ քաղաքը դարձավ Սեֆյան տերության Երևանի կուսակալության վարչական կենտրոնը: Այդ շրջանում, պարսից խաների օրոք, Երևանի հոգևոր-մշակութային և աշխարհիկ շենքերից զատ, կառուցվեցին Երևանի բերդը, մի շարք մզկիթներ, շուկա-հրապարակներ, իջևանատներ, բաղնիքներ, ինժեներական կառույցներ, որոնց վերաբերյալ հարուստ տեղեկություններ են պահպանվել հայ և օտարազգի պատմիչների ու ճանապարհ-

հորդների աշխատություններում¹: Սույն հոդվածը պատմական սկզբնաղբյուրների, ճարտարապետական և ինժեներական կառույցների, իրանական շինարվեստի նմուշների քննությամբ ներկայացնում է պարսից տիրապետության օրոք Երևանի քաղաքաշինության ընդհանուր նկարագիրը:

Երևանը պարսկական տիրապետության շրջանում (1502-1827 թթ.)

XVI դարասկզբին (1502 թ.) Իրանի Սեֆյան հարստության հիմնադիր շահ Իսմայիլը (1501-1524 թթ.), Հայաստանի արևելյան երկրամասերի հետ միասին, թուրքմենական ակ-կոյունլու տիրակալներից նվաճեց նաև Երևան քաղաքը²: Իբրև սահմանային մեծ բեկլարբեկության կենտրոն՝ Երևանը շահ Իսմայիլի օրոք ձեռք բերեց ռազմական և վարչական մեծ նշանակություն³: XVI-XVII դդ. Սեֆյան Իրանի և Օսմանյան Թուրքիայի միջև տեղի ունեցող ռազմական գործողությունների ընթացքում Երևանն իր շրջակայքով մշտական կռվախնձոր էր այդ երկու տերությունների միջև և ենթարկվում էր շարունակական ավերածությունների⁴:

1639 թ. կնքված Կասրե Շիրինի հաշտությամբ հաստատվեց երկարատև խաղաղություն⁵: Երևանը դարձավ Սեֆյան տերության Չոխսուր-Սաադի (Երևանի) կուսակալության կենտրոնը⁶, որը կառավարում էր սարդարը⁷: Այդ վիճակը շարունակվեց մինչև 1747 թ.:

XVII դարում Երևանի խանությունը զբաղեցնում էր Արևմտյան Արփաչայից (այժմ՝ Ախուրյան) մինչև Աղմաղանի (այժմ՝ Գեղամա) լեռները և Հայկական Պար լեռնաշղթայից (որը 1639 թ. կազմում էր թուրք-պարսկական սահմանը) մինչև Փամբակի լեռնաշղթան ու Արագածի հյուսիսային ստորոտներն ընկած տարածքները⁸:

Խաղաղության շրջանը նպաստեց երկրի տնտեսության աստիճանական վերականգնմանը, մասնավորաբար՝ քաղաքաշինության զարգացմանը: Երևանում կառուցվում են մի շարք հոգևոր-մշակութային և հասարակական նշանակության շինություններ, ջրանցքներ, վերակառուցվում է Երևանի բերդը:

¹ Մանրամասն տե՛ս Շահազիզ 2003, 131-134, 158-161, 169, 171-174, Հակոբյան 1971, 366-376, Բաբայան, Ժամկոչյան 2015, 12-13, 18-26, Ջուլայան 1990, 139-140, 147, 167-168: Երևանի հիշատակության մասին պատմիչների վկայությունները տե՛ս Յակոբեան 2019, 97-99: ش. نایب‌سود (زی‌ایپ) ۲۰۰۶:

² Հայոց պատմություն 2014, 597, Հակոբյան 1971, 7-9:

³ Հայոց պատմություն 2014, 625, Հակոբյան 1971, 137-140:

⁴ Հայոց պատմություն 2014, 597-604, Հակոբյան 1971, 10-16, 23-37, Զաքարիա Քանաթեղի 2015, 13:

⁵ Հայոց պատմություն 2014, 605-606, Հակոբյան 1971, 40-52:

⁶ Հայոց պատմություն 2010, 87, Мухаммад-Рафи 1991, 21-25:

⁷ Երևանի բեկլարբեկությունը, լինելով սահմանային, նրա խանը օժտված էր ավելի մեծ իրավունքներով և հաճախ ստանում էր բեյլերբեյ տիտղոսը ու ստանձնում մի քանի խանությունների զորքերի ընդհանուր հրամանատարի՝ սարդարի (=զորահրամանատարի) պարտականությունները:

⁸ Այսինքն՝ մոտավորապես այն տարածքը, որ ուներ XVIII դ. վերջին և XIX դ. սկզբներին: Տե՛ս Հակոբյան 1971, 142:

XVII դ. երկրորդ կեսին և XVIII դ. սկզբներին Երևանի խանությունը Սեֆյան տերության եկամտաբեր երկրամասերից մեկն էր, որտեղ բավական զարգացած էին առևտուրն ու արհեստագործությունը: Երևանի կիսանկախ խանը հարևանների հետ ինքնուրույն բանակցություններ վարելու իրավունք և դրամահատության արտոնություն ուներ:

Երևանի համար մեծ պատուհաս դարձած 1679 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով քանդվեցին քաղաքի գրեթե բոլոր կառույցները, այդ թվում՝ նշանավոր ամրոցը, և խափանվեցին մեծ ջրանցքները: Սակայն հետագա տարիներին դրանք մեծ թափով վերականգնվեցին: Երևան եկան նշանավոր արվեստագետներ՝ նպաստելով արվեստի ու մշակույթի զարգացմանը:

XVIII դարասկզբին Պարսկաստանում սկիզբ առած անկայուն վիճակը թուրքական նոր արշավանքի պատճառ դարձավ: 1724 թ. Երևանի և շրջակա գյուղերի բնակիչները ավելի քան 3 ամիս դիմակայեցին թուրքական մեծաքանակ բանակին, և պաշարվածները միայն պարենի ու զինամթերքի սպառման հետևանքով անձնատուր եղան: Երևանի հերոսական պաշտպանությունը 1720-ական թթ. հայ ազգային-ազատագրական պայքարի նշանավոր դրվագներից է⁹: Պարսկա-թուրքական նոր պատերազմներն ընդհատումներով շարունակվեցին մինչև 1736 թ., երբ Նադիր շահն (1688-1747 թթ.) իր հաղթական արշավանքով դաժան պարտության մատնեց օսմանյան բանակին և Օսմանյան Թուրքիային հարկադրեց հաշտություն խնդրելու՝ հրաժարվելով իր նվաճումներից¹⁰:

Մինչև Նադիր շահի մահը Երևանի բեկլարբեկությունը՝ իբրև սահմանամերձ կուսակալություն, կառավարվում էր զինվորական նահանգապետների միջոցով: Այդ ընթացքում Երևանի ներքին գործերի տնօրինման մեջ մեծ իրավունքներ ստացան մելիքներ Մկրտումն ու Հակոբջանը¹¹:

XVIII դ. կեսին, Պարսկաստանի կենտրոնական իշխանության թուլացման պայմաններում, Երևանի խանությունը չկարողացավ պահպանել իր անկախությունը: Երևանի խանը, քոչվոր ցեղերի դեմ պայքարելու համար Վրաստանից ստացված օգնության դիմաց, հարկատու դարձավ վրաց Հերակլ II թագավորին: Վրաստանն ամրապնդեց իր ռազմաքաղաքական ներկայությունը Արևելյան Հայաստանում մինչև 1790-ական թթ.: Երևանի խաների՝ հարկերից ժամանակ առ ժամանակ հրաժարվելու պատճառով Հերակլ II-ի ձեռնարկած պատժիչ արշավանքների հետևանքով Երևանի

⁹ Աբրահամ Երեանցի 1977, 26, Հայոց պատմություն 2010, 40-42, Հակոբյան 1971, 78-95, Եղիազարյան 2022, 55-75:

¹⁰ Հայոց պատմություն 2010, 52-53:

¹¹ Հայոց պատմություն 2010, 58-59:

խանության գավառները հերթական անգամ ավերվեցին, իսկ մեծաթիվ բնակչությունը բռնագաղթվեց Վրաստան¹²:

Մինչև XVIII դ. վերջը Պարսկաստանի քաղաքական մասնատման ու կենտրոնական իշխանության վերացման պայմաններում Երևանի խանության տարածքում սկիզբ առած ասպատակություններն ու ռազմական գործողությունները, ինչպես նաև շարունակվող տնտեսական քայքայումը հայ բնակչության արտագաղթի պատճառ դարձան:

XVIII դարավերջին և XIX դարասկզբին տարածաշրջանի քաղաքական կյանք մտած Ռուսաստանի և Պարսկաստանի միջև պատերազմների¹³ հետևանքով 1828 թ. կնքված Թուրքմենչայի պայմանագրով Երևանի և Նախիջևանի խանություններն անցան Ռուսաստանին, իսկ Երևանը դարձավ Հայկական մարզի կենտրոնը: Այդ շրջանում քաղաքն ուներ մոտ 15 հազար բնակչություն, այստեղ էին կենտրոնացած խանության վարչական մարմիններն ու զորքերի մեծ մասը: Երևանը կառավարում էր ոստիկանապետը, որն զբաղվում էր քաղաքի կարգուկանոնով և տուրքերի հավաքմամբ:

Շինարարական վերելքը ուշմիջնադարյան Երևանում՝ ըստ գրավոր աղբյուրների

Հայաստանում պարսկական տիրապետության ժամանակաշրջանի պատմության լուսաբանման լավագույն սկզբնաղբյուրն Առաքել Դավրիժեցու պատմագիրքն է, որի ԻԴ (24) գլխում տեղեկություններ են հաղորդվում մեր երկրորդ Լուսավորիչ Մովսես Տաթևացի վարդապետի (հետագայում կաթողիկոս՝ 1629-1633 թթ.) քարոզչության, Երևանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցում սպասավորելու և տեղապահ-կառավարիչ Ամիրգունա խանի (1604-1625 թթ.) առաջարկով Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատում (ներկայիս Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցին) հաստատվելու, այն բարեկարգելու, վանական և ուսումնական կենտրոն դարձնելու վերաբերյալ. *«Տեսանես զայս եկեղեցիս, որ ամայի կայ. արդ, լո՛ւր ինձ, և մի՛ գնար յայլ աշխարհ, այլ արա՛ զսա քեզ բնակութիւն և դադարես՝ աստէն...»*¹⁴:

Երևանի հյուսիսային այգիներում գտնվող ավերակ ու անմարդաբնակ անապատն Ամիրգունա խանի ցուցմամբ և Մովսես Տաթևացու ջանքերով դառնում է քաղաքի հոգևոր և գրչական կյանքի երևելի կենտրոններից մեկը: Հաստատվելով Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատում՝ Մովսես Տա-

¹² Հայոց պատմություն 2010, 70, 88:

¹³ Ռուս-պարսկական երկու պատերազմների (1804-1813 թթ. և 1826-1828 թթ.) ժամանակ ռուսական զորքերը 3 անգամ պաշարել են Երևանի բերդը: 1804 թ. գեներալ Պավել Յիցիանովի և 1808 թ. գեներալ Իվան Գուդովիչի գլխավորությամբ արշավանքները Երևան արդյունք չեն տվել: 1827 թ. հոկտեմբերի 1-ին ռուսական զորքը՝ Իվան Պասկևիչի հրամանատարությամբ կարողացավ գրավել Երևանի բերդը, որով էլ ավարտվեց Պարսկական տիրապետությունը Երևանում:

¹⁴ Առաքել Դավրիժեցի 1990, 245:

թևացին այստեղ նաև գրչության դպրոց է հիմնում, որտեղ ձեռագրեր են ընդօրինակվում: Ուշագրավ է նրա աշակերտներից Եսայի սրկ. Կարճավանեցու՝ 1625 թ. անապատում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում Ամիրգունա խանին ուղղված բնութագրականը. «Եւ ապա բազում աշակերտաք գնացեալ Այրարատեանն գաւառ (Մովսէս Տաթևացին – Ա.Հ.), որ եւ անդ տիրեալ էր իշխան ոմն ազգաւ պարսիկ՝ Ամիրգունայ անուն կոչեցեալ քաջ եւ արի, հմուտ ի պատերազմ, մինչ զի յահէ նորայ սարսէին ազգն իսմաէլական, որ չկայր նման նմայ: Թէպէտ կրօնիք այլազգի էր, սակայն բարեպաշտ եւ յերկիւղած էր եւ քրիստոնէասէր, մինչ զի հանդիպել սրբոյս անդ, յոյժ փափաքանաւք ընկալեալ եւ բազում սիրելիութիւնս ցուցեալ եւ տուեալ տեղի մի, որ կոչի Անանիայ առաքեալ, գեղեցիկ եւ վայելուչ ի մէջ այգաստանեաց»¹⁵:

Ամիրգունա խանին իբրև «...այր քաջ և սրտապինդ և արի ի պատերազմունս, անահ և աներկիւղ, շէնարար և սիրող քրիստոնէից...»¹⁶ բառերով է բնութագրում նաև Զաքարիա սրկ. Քանաքեոցին, որը հատկանշում է խանի վերաբերմունքը քրիստոնյաների նկատմամբ. «...սիրեաց ազգս հայոց և միշտ գնայր ի տունս քրիստոնէից, ուրէր և ըմպէր ընդ նոսա»¹⁷: Նրա օրոք քաղաքում մեծապես զարգացել է նաև այգեգործությունը, ի մասնավորի՝ խաղողագործությունը, որը նույն տեմպերով շարունակվել է նաև XVII դարավերջին՝ Զալ խանի օրոք¹⁸: Երևանում շինարարական զգալի աշխատանքներ են կատարվել ոչ միայն Ամիրգունա և Զալ խաների, այլև Խոսրով, Հուսեյն-Ալի և մի քանի այլ խաների ժամանակ¹⁹:

Պարսից տիրապետության շրջանում Երևանում իրականացված շինարարական աշխատանքների մասին են վկայում նաև վիմագրերը: Ի դեպ, դրանցից մեկը՝ պահպանված Երևանի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային պատին (նկ. 1), վկայում է դեռևս պարսից շահ Աբաս Ա-ի (1587-1629 թթ.) թագավորության, Ամիրգունա խանի իշխանության, Մելքիսեթի կաթողիկոսության և տեր Համազասպի եպիսկոպոսության (Երևանի և Հավուց թառի առաջնորդի) շրջանում՝ 1609 թ., Թեզգաուլենց տոհմից ոմն Գրիգորի և իր կողակից պարոն (տիկին իմաստով) Խաթունի միջոցներով ի հիմանց ժամատուն կառուցելու մասին, որի դիմաց սուրբ տաճարի սպասավորներից երկու ժամ-պատարագ են ստացել. «Ի թ(ա)գ(աւո)րոյթ(ւ)նն շահ Ապազին, իշխանութի(ւն) Ամիրգոն(ա) խանին... ես՝ Գրիգորս, որդի Թէզագուլենց Մարգարին եւ ամուսին իմ պ(ա)րոն Խաթուն, միաբանեցաք եւ շի-

¹⁵ Հակոբյան, Հովհաննիսյան 1978, 178-179: Տե՛ս նաև Հարությունյան 2020ա, 100:

¹⁶ Զաքարիա Քանաքեոցի 2015, 64:

¹⁷ Զաքարիա Քանաքեոցի 2015, 64:

¹⁸ Հակոբյան 1971, 442:

¹⁹ Հակոբյան 1971, 446-447:

նեցաք ժամարունս ի հիմանց...»²⁰: Վիմագրի վերջում գրիչը թողել է նաև իր ստորագրությունը՝ «Յակոբ գրիչս յ(հ)շ(եցէք)»²¹:

Հայ իրականության մեջ մշակութային վերազարթոնքի համար համեմատաբար նպաստավոր պայմաններ են ստեղծվում հատկապես Հայաստանի 1639 թ. բաժանումից հետո: Կարելի է արձանագրել, որ Հայաստանի արևելյան՝ պարսկական տիրապետությանն անցած հատվածում XVII դ. երկրորդ կեսից բուռն զարգացում են ապրում մշակութային կյանքն ու եկեղեցաշինությունը: Պարսից Աբաս Բ (1642-1666 թթ.) և Սոլեյման Բ (1666-1694 թթ.) շահերի հրովարտականքը ժամանակի պատմության լուսաբանման համար աղբյուրագիտական մեծ արժեք ունեն: Արարատյան դաշտի, Նախիջևանի և հարակից այլ բնակավայրերի եկեղեցաշինությունը կյանքի է կոչվել հիմնականում շահական հրովարտականքի արտոնությամբ: Մաշտոցյան Մատենադարանում պահվող 1661 թվակիր հրովարտականքից մեկում Աբաս Բ շահը հայաբնակ շրջանների իշխանություններին կարգադրում է հայ բնակչությանը չխոչընդոտել եկեղեցիների ավելի բարձր կառուցման ու նորոգման հարցում. «...թող այսուհետև վերոհիշյալ եկեղեցիների պատճառով, որոնք ավելի ընդարձակ կամ այլ կերպ կառուցված կլինեն, վերոհիշյալ հայերին անօրինական պահանջներ չներկայացնեն: Ընդհանրապես չպետք է նրանց նեղեն, այլ պետք է թողնեն, որպեսզի հանգիստ զբաղվեն հաղթական պետության հարապնմանն ուղղված աղոթքներով: Թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն ու ամեն տարի նոր հրամանագիր չպահանջեն: Գրվեց 1071 թ. (1661) օրինյալ Ռամազան ամսին»²²:

Ինչպես հրովարտականքի, այնպես էլ ժամանակամերձ ձեռագիր հիշատակարանների ու վիմական արձանագրությունների հիմամբ որոշակի է դառնում պարսից գահակալների օրոք Երևանի մինչերկրաշարժյան և հետերկրաշարժյան (1679 թ.) հուշարձանների նորոգման և ի հիմանց կառուցման ժամանակագրությունը: Երևանի Կաթողիկե Ս. Աստվածածնի եռանավ սրահ, Երկուերեսնի - Ս. Պողոս-Պետրոս, Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի, Գեթսեմանի մատուռ (Ս. Հարություն), Կոնդի Ս. Հովհաննես Մկրտիչ, Զորագյուղի անապատի հուշարձանախումբ, Նորագավիթի Ս. Գևորգ, Քանաքեռի Ս. Հակոբ, Ս. Աստվածածին, Նորքի Ս. Ստեփանոս, Ս. Սիմեոն Ծերունի, Ս. Աստվածածին - ահա եկեղեցիների այն հիմնական խումբը, որոնք նորոգվեցին կամ վերակառուցվեցին Արարատյան երկրում պարսկական տիրապետության հաստատումից հետո: Սրա առհավատչյան նաև Նորքի՝ Գետառի վրա կառուցված միաթռիչք կամրջի արևմտյան պատին՝

²⁰ Ղաֆադարյան 1975, 139:

²¹ Ղաֆադարյան 1975, 139:

²² Կոստիկյան 2005, 43-44:

կամարակապ քիվի ողջ երկայնքով պահպանված երկտող արձանագրությունն է (նկ. 2), որտեղ վկայված են ոչ միայն կառուցման ժամանակը, նախաձեռնող Հովհաննես վարդապետի ու նրա հարազատների, այլև երկրի աշխարհական ու հոգևոր իշխանավորների անունները. «Շինեցաւ սա (կամուրջը – Ա.Հ.) ի թ(ա)գ(առ)ր(ու)թե(ա)ն պարսից երկրի շահ Ապագին եւ իշխ(ա)ն(ու)թե(ան) երկրիս Ապագ Ղուլի խանին եւ հ(ա)յր(ա)պ(ե)տ(ու)թե(ա)ն հայոց տ(եառ)ն Յակոբայ սրբազան կ(ա)թ(ո)ղ(ի)կ(ո)սի... ի թվ(ին) ՌՃԺԳ. (1664)»²³:

Հովհաննես վարդապետի անունը փակագրված է նաև կամրջի արևելյան պատին. «Յովհաննէս վարդապետ»²⁴, իսկ փակագիրն ամբողջացնող քարը ներկայումս գտնվում է Հայաստանի պատմության թանգարանում (գծ.):



Գծ. Հովհաննես վարդապետի անվան փակագիրը
(գրչ.՝ Ա. Հարությունյանի, 2022 թ.)

Նշենք նաև, որ կամրջի կառուցման թվականը վկայված է նաև արևմտյան պատի աջակողմյան հատվածում, որտեղ հիշատակված է նաև արձանագրության գրչի՝ Կիրակոսի անունը. «Թվ(ին) ՌՃԺԳ. (1664), զԿիրակոս գր(ո)ղ գրի կամուրջիս, (յի)շել աղաչեմ»²⁵:

Վիմագրական ու մատենագրական բերված օրինակներն ինքնին պարզում են պարսից տիրապետության օրոք Երևանում և շրջակայքում իրականացված շինարարական աշխատանքների ընդհանուր նկարագիրը, որոնք վկայում են հարևան երկրի մշակութաին և ինչ-որ տեղ նաև հայապապական քաղաքականության մասին:

Երևանի պարսկական հուշարձանները

Հայաստանում պարսկական տիրապետության շրջանում (XVII-XIX դդ.), ի մասնավորի՝ Երևանի խանության տարիներին (1747-1828 թթ.), Երևանում կառուցվել և վերակառուցվել են բազմաթիվ շինություններ, որոնք կազմում են մեր մայրաքաղաքի պատմության անքակտելի մասը: Երևանի պարսկական պաշտամունքային և աշխարհիկ շինությունները կոչված էին բավարա-

²³ Շահագիզ 2003, 213, Հարությունյան 1960, 121, Ղաֆադարյան 1975, 167:

²⁴ Շահագիզ 2003, 213, Հարությունյան 1960, 122, Ղաֆադարյան 1975, 168:

²⁵ Շահագիզ 2003, 213, Ղաֆադարյան 1975, 168:

րելու վերնախավի պահանջմունքները և արտացոլում էին նրանց կենցաղավարության առանձնահատկությունները: Դրանցից քչերն են այսօր պահպանվել, մեծ մասամբ մեզ են հասել տեղագրական աշխատությունների միջոցով:

Երևանի բերդը հայտնի էր իր անառիկությամբ (նկ. 3): Թուրք-պարսկական ռազմական գործողությունների ընթացքում այն ձեռքից ձեռք էր անցնում՝ ավերվում և փոխնիփոխ հիմնակառուցվում՝ դառնալով մերթ մեկի, մերթ մյուսի ռազմական հենակետը: 1639 թ. ստեղծված խաղաղության պայմաններում, երբ Երևանը համանուն խանության վարչական կենտրոնն էր, բերդը դառնում է սարդարի նստավայրը: 1679 թ. ավերիչ երկրաշարժից հետո կրկին վերակառուցվում է Ջալ խանի կողմից: Բերդի պատմության հիշարժան դրվագներից է 1724 թ. երեքամյա պաշարումը օսմանյան թուրքերի կողմից: Երկար պաշարումից հյուծված պարսիկ կառավարիչները ստիպված այն հանձնել են հայոց Աստվածատուր Ա Համադանցի կաթողիկոսի միջնորդությամբ²⁶: 1735-1827 թթ. բերդը վերստին խանի նստավայրն էր, որտեղ վերջին՝ Հուսեյն Ղուլի խանի օրոք կառուցվեցին շքեղ պալատը, մզկիթը բաղնիքները, վառոդարանը և այլ նշանակության շենքեր: Ուշագրավ են Ծարդենի նկարագրությունները բերդի վերաբերյալ. «...նմանվում է մի փոքրիկ քաղաքի, որտեղ ապրում են ծագումով պարսիկ կառավարիչն ու 2000-անոց կայազորը: Հայերը բերդում միայն խանութներ ունեն, որտեղ գերեկները զբաղվում են առևտրով, իսկ երեկոյան վերադառնում տուն»²⁷:

Երևանի բերդն ունեցել է քառանկյուն հատակագիծ և զբաղեցրել 7 հա տարածք (նկ. 3): Արևմտյան կողմից պաշտպանված է եղել Հրազդանի ձորով: Այդ մասը եղել է հողաձածկ և ծառայել բերդապաշտպան հրանոթների համար: Մյուս երեք կողմերից շրջապատված է եղել *ալումնավոր պարիսպներով*²⁸՝ հում աղյուսով շարված 50-60 կիսակլոր բուրգերով: Առաջին պարսպաշարը կառուցվել է 1583 թ.՝ Ֆահրադ փաշայի կողմից, իսկ երկրորդը՝ 1603 թ. շահ Աբասի կողմից: Հաստ և բարձր պարիսպներն ունեցել են որմնախորշեր, որոնք հարմարեցրած են եղել հրետանու ու հրացանակիրների պաշտպանությանը: Պարիսպները շրջապատված են եղել լայն ու խոր խրամներով, որոնք վտանգի ու հարձակումների ժամանակ լցվել են ջրով: Բերդն ունեցել է երկու մեծ ու ամրակուռ դարպասներ՝ երկաթե ամուր դռներով ու փականներով: Երկու դարպասներն ունեցել են հատուկ պահակախմբեր, որոնցից առաջինը՝ «Բաբը-Շիրվան»-ը, գտնվել է հյուսիսային կողմում, իսկ երկրորդը՝ «Թավրեզ-Ղափուս»-ը, հարավային կողմում: Բացի երկու հիմնա-

²⁶ Եղիազարյան 2022, 55-75:

²⁷ Шарден 1902, 242.

կան դարպասներից, բերդն ունեցել է գաղտնուղի, որը դուրս է եկել դեպի Հրազդան գետը²⁸:

Երևանի բերդը սոսկ պաշտպանական կառույց չէր: Պատերից ներս տարածվում էր մի ամբողջ թաղամաս, որը ներառում էր խանի ապարանքը, երկու մզկիթ, բաղնիք, պահեստներ, զինանոցներ, կրպակներ, խանութներ, բնակելի տներ, այլ շինություններ, որոնց թվում՝ հայկական Ս. Գևորգ եկեղեցու ավերակները: Արդեն XVIII դ. վերջին և XIX դ. սկզբներին բերդում մշտաբնակ քաղաքացիներ չեն եղել, ամբողջությամբ ծառայել է հարեմին ու կայազորին²⁹:

Բերդի տպավորիչ շինություններից է եղել պարսկական ճարտարապետական ոճով կառուցված *սարդարի պալատը*: Այն եղել է քառանկյուն և ընդարձակ շինություն՝ բաղկացած երկու մասից՝ բուն պալատից և հարեմի բաժնից: Վերջինս ունեցել է երկհարկ և եռահարկ սենյակներ ու միջանցքներ: Հետագայում, երբ ռուսները գրավել են Երևանը, այդ ընդարձակ պալատը վերանորոգվել և վերածվել է հիվանդանոցի:

Հիշատակության է արժանի պալատի *հայելապատ հանդիսասրահը* (Շուշաբանդ-այվանը), որտեղ Երևանի սարդարը սովորաբար անցկացրել է իր ազատ ժամանակը (նկ. 4): Սրահը հայելապատ է կոչվել, որովհետև դրա քիվերը ծածկված են եղել գույնզգույն հայելիներով, որոնք անդրադարձրել են լույսը տարբեր հարթությունների վրա՝ ստեղծելով գունախաղ: Առաստաղը զարդարված է եղել գույնզգույն ծաղիկների որմնանկարներով, իսկ դահլիճի պատերին փակցված են եղել ութ պատկեր, այդ թվում՝ Հուսեյն Ղուլի խանը, Ֆաթի-Ալի շահը և այլք:

Սարդարի պալատի մասն է կազմել *բաղնիքը*, որն ամբողջովին կառուցված է եղել մարմարից՝ զարդարված պարսկական զարդամոտիվներով: Բաղնիքին կից եղել է ջրավազան, որը ծառայել է ամառը լոգանք ընդունելու համար: Թե՛ բաղնիքը, թե՛ ջրավազանը քանդվել են 1830 թ.: Խանի պալատից 450 մ հեռու գտնվել է *քարավանատունը*: Շենքը եղել է քառակուսի՝ բաղկացած երեք խոշոր և վաթսուն փոքր սենյակներից: Ունեցել է ընդարձակ գոմեր և մեծ խանութներ: Շենքի դիմաց գտնվել է հրապարակը՝ շրջապատված մթերային խանութներով, իսկ կողքին՝ մի մզկիթ և երկու սրճարան: Բերդն ունեցել է նաև փոքրիկ շուկա, որի շուրջը տարածվել են փոքր կրպակները:

²⁸ Ղաֆադարյան 1975, 98:

²⁹ Բերդի տարածքը ներկայումս բաժանված է Երևանի Արարատ կոնյակի, գինու և օղու գործարանի, Գլենդել Հիլզ բնակելի թաղամասի ու Մայրաքաղաքային գործարանի միջև:




Նկ. 1. Շահ Աբաս Ա-ի օրոք Երևանի Կաթողիկե եկեղեցուն կից ժամատան կառուցման վիմագիրը, 1609 թ., Հակոբ գրիչ (լսնկ.՝ Ա. Հարությունյանի, 2019 թ.)



Նկ. 2. Նորքի ուշմիջնադարյան կամուրջը. կամարակապ քիվին՝ շինարարական արձանագրությունը, 1664 թ. (լսնկ.՝ Ն. Երանյանի, 2020 թ.)



Նկ. 3. Երևանի բերդը. ընդհանուր տեսարան (արտատպված Շահագիզ 2003 գրքից, էջ 145)



Նկ. 4. Հատված Սարդարի պալատի հայելապատ դահլիճից (արտատպված Շահագիզ 2003 գրքից, էջ 188)



Նկ. 5. Հաջի Նովրուզի մզկիթի մուտքը (արտատպված Շահագիզ 2003 գրքից, էջ 200)



Նկ. 6ա. Կոնդի (Թափաբաշի) մզկիթը (արտատպված Շահագիզ 2003 գրքից, էջ 202)



Նկ. 6բ. Կոնդի (Թափաբաշի) մզկիթը մեր օրերում (լսնկ.՝ Դ.Դավթյանի, 2013 թ.)



Նկ. 7ա. Կապույտ մզկիթը 1929 թ. (արտատպված Շահազիզ 2003 գրքից, էջ 200)



Նկ. 7բ. Կապույտ մզկիթը մեր օրերում (լսնկ.՝ Ա. Բաբաջանյանի, 2014 թ.)



Նկ. 8. Երևանի մուսուլմանական դամբարանի շքադուռները (արտատպված Kalantaryan et al. 2009 գրքից, աղ. LXX/2)

Երևանի մզկիթներից շատերն ավերվեցին 1679 թ. հզոր երկրաշարժի հետևանքով: Հստակ չէ, թե մինչ երկրաշարժը քանի մզկիթ է եղել Երևանում: Արդեն XIX դ. ուսումնասիրողները թվարկում են ութ մզկիթ, որոնցից երկուսը բերդի տարածքում, վեցը՝ քաղաքում³⁰: 1931 թ. դրությամբ Երվանդ Շահազիզը նշում է վեց մզկիթ՝ չներառելով Կոնդինը³¹: Բազմաթիվ այլ աղբյուրների քննությամբ պարզվում է, որ XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբներին Երևանում գործում էր յոթ մզկիթ, առկա էին ևս երկու չգործող մզկիթներ³²:

Աբաս Միրզայի կամ Սարդարի մզկիթը գտնվում էր Երևանի բերդի տարածքում, որից այժմ ոչինչ չի պահպանվել: Մզկիթը կառուցվել է Երևանի վերջին սարդար Հուսեին Ղուլի խանի կողմից՝ որպես պալատական գլխավոր մզկիթ և անվանակոչվել պարսից թագաժառանգի՝ շահ Ֆաթի-Ալի Ղաջարի որդու՝ Աբաս Միրզայի պատվին: XIX դ. առաջին կեսին՝ ռուսական տիրապետության հաստատումից հետո, մզկիթը վեր է ածվել զինանոցի, ապա լքվել է և աստիճանաբար ավերվել: Կառուցված էր թրձած աղյուսով, գմբեթը և ճակատը երեսպատված էին կապույտ և կանաչ խճանկար սալիկներով:

Զալ խանի մզկիթը գտնվում էր Շահար թաղամասում՝ այժմյան Նկարիչների միության շենքի տեղում: Զալ խանի մզկիթը կառուցվել է 1687 թ. Դիվ սուլթան մզկիթի տեղում, որն ավերվել էր երկրաշարժից³³: Ըստ ականատեսների՝ ուներ պարսպապատ բակ՝ շատրվանով և գեղեցիկ այգիով³⁴: Զալ խանի մզկիթը չունեւ մինարե, գմբեթը երեսպատված էր ջրաղյուսներով ձևավորված գեղեցիկ զարդապատկերներով: Մզկիթի շենքը վերջնականորեն քանդվել է 1958 թ.³⁵:

Հաջի Նովրուզ Ալի բեկի մզկիթը գտնվում էր այժմյան Վերնիսաժի մոտ (նկ. 5): Թեև պահպանվել էր մինչև XX դ. 60-ական թթ., սակայն կառույցի մասին տեղեկությունները խիստ սուղ են: Այն դասվում էր Շահարի մզկիթների թվին: Կառուցվել է երկրաշարժից հետո և իր հատակագծով նման էր Զալ խանի մզկիթին³⁶:

Դեմիրբուլաղի Հաջի Իմամ Վերդի մզկիթը, որը հայտնի էր նաև «Քյոոփուղուլաղ մզկիթ» անունով, ժամանակին տեղակայված էր «Ռոսիա» կինոթատրոնի հանդիպակաց մայթին: Թեև հիշատակվում է XIX դ. առաջին կե-

³⁰ Հակոբյան 1971, 366:

³¹ Շահազիզ 2003, 165:

³² Պետրոսյան 2018, 179:

³³ Հարությունյան 2021, 56:

³⁴ Պետրոսյան 2018, 187:

³⁵ Ի տարբերություն մզկիթի անմիջական հարևանությամբ գտնվող Պողոս-Պետրոս եկեղեցու, որն ավերվեց 1931 թ.՝ մզկիթը կանգուն էր մինչև 1950-ական թթ.: Դրա հիմքի վրա Ռ. Իսրայելյանը կառուցեց Նկարիչների միության շենքի դահլիճը:

³⁶ Շահազիզ 2003, 202:

սից, սակայն լուսանկարներում պահպանված իր արտաքին տեսքը ստացել է 1909 թ. վերակառուցումից հետո³⁷: Մզկիթը կառուցված է եղել տուֆով, առանց մինարեի էր, ունեցել է երեք՝ ոչ համաչափ գմբեթներ: Գործել է առնվազն մինչև 1954 թ., ինչի մասին վկայում է Դեմիրբուլաղի մզկիթի խորհրդի նախագահ Ֆարաջևի ցավակցական նամակը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին՝ Գևորգ Զ Չորեքչյանի մահվան կապակցությամբ³⁸: Քանդվել է 1958 թ. քաղաքում շինարարական աշխատանքների ու Տիգրան Մեծի պողոտայի լայնացման աշխատանքների ընթացքում:

Մուհամմեդ Սարդիպ խանի մզկիթը ևս չի պահպանվել, գտնվել է այժմյան Հանրապետության փողոցի վրա՝ Խ. Դաշտենցի անվան թիվ 114 դպրոցի հարևանությամբ: Դատելով անունից՝ ենթադրելի է, որ կառուցվել է Երևանի վերջին սարդար Հուսեին խանի բարձրաստիճան հրամանատար Մուհամմադ Սարտիպ խանի պատվին՝ XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին: Ունեցել է մեկ փոքր մինարե: Մոտակայքում գտնվող Մեդրեսեի հետ (հին երևանաբնակների շրջանում կառույցը կոչվում էր «խանի տուն») միասին կազմել է մեկ համալիր: Ավերվել է 1958 թ.՝ շինարարական աշխատանքների ընթացքում:

Հաջի Ջաֆար բեկի մզկիթը տեղակայված էր Վարդանանց և Երվանդ Քոչար փողոցների հատման վայրում՝ այժմյան Վարդանանց 22 հասցեում: Գտնվել է Դեմիրբուլաղ թաղամասում, կառուցման ժամանակն անհայտ է: Հայտնի է նաև *Հաջի Սաֆար-Բեկի մզկիթ* ու *Չաթիրլի (հովհանցավոր) մզկիթ* անուններով՝ մինարեի փոխարեն բարձր հարթակի վրա կախված անձրևանոցի պատճառով: Կառուցված է եղել տուֆի և աղյուսի համադրությամբ:

Կոնդի (Թափաբաշի) մզկիթը հիմնվել է 1687 թ., Երևանում մասնակի պահպանվածներից է, այժմ օգտագործվում է որպես բնակելի տուն (նկ. 6ա, բ): Հայտնի է նաև Աբաս Ղուլի խանի մզկիթ անունով: Հաշվի առնելով այն փաստը, որ նույն շրջանում ակտիվորեն վերականգնվում էին մեծ երկրաշարժից քանդված բոլոր եկեղեցիները՝ հավանաբար, մինչև 1679 թ. Կոնդի մզկիթի տեղում եղել է ավելի հին հայկական եկեղեցի: Կոնդի մզկիթն ունեցել է երկու գմբեթ՝ մեծ ու փոքր: Մեծը քանդվել է 1960-ականներին: Ունեցել է շքաղյուսներով երեսպատում՝ ռոմբաձև զարդապատկերներով: Մզկիթն ամբողջությամբ աղյուսաշեն էր³⁹: 1915 թ. այստեղ բնակություն են հաստատել ցեղասպանությունից փրկված 17 ընտանիք, որոնց ժառանգները մինչ այսօր էլ ապրում են մզկիթի շենքում:

³⁷ Պետրոսյան 2018, 191:

³⁸ Ամենայն Հայոց երջանկահիշատակ կաթողիկոս Նորին Ս. Օծություն Ս.Տ. Գևորգ հայրապետի դառնակսկիծ մահվան առթիվ Գերագույն հոգևոր խորհրդի անունով ստացված ցավակցական հեռագրերն ու գրությունները 1954, 23:

³⁹ Շահխաթունեանց 2014, 305:

Հուսեին-Ալի Խանի կամ Կապույտ մզկիթը (նաև Գյոյ ջամի, Գյոք ջամի, Գյոյմեջետ, Մասջետ քարուղ) ՀՀ-ում գործող միակ մզկիթն է՝ տեղակայված Մաշտոցի պողոտայի սկզբնամասում (նկ. 7ա, բ): Ըստ պահպանված արձանագրության՝ հիջրի 1176 թ. (1765/6 թ.) կառուցել է Հուսեին-Ալի Խանը: Խաչատուր Աբովյանի ուղեկցությամբ մզկիթ է այցելել գերմանացի ճանապարհորդ բարոն Ավգուստ ֆոն Հաքստհաուզենը: Նկարագրելով մզկիթի ներքին հարդարանքը՝ նա այն համարել է Երևանում իր տեսած ամենավեհաշուք շինությունը⁴⁰: Համալիրը ուղղանկյուն ընդարձակ շինություն է՝ մեծ ուղղանկյուն բակով: Կենտրոնում ջրավազան-շատրվանն է, որը ժամանակին ծառայել է՝ աղոթքից առաջ ծիսական լվացման համար: Մզկիթը 3 կամարակապ փոխկապակցված աղոթասրահներով գտնվում է ուղղանկյուն պարսպապատ համալիրի հարավային կողմում: Պարսպի երկայնքով առկա առանձին սենյակները ծառայել են կրոնական, ուսումնական և կենցաղային նպատակների: Մզկիթն ունի մեկ մինարե, մեկ գլխավոր և երկու կողային փոքր գմբեթներ: Համալիրը գրեթե ամբողջությամբ աղյուսաշեն է՝ բացառությամբ տուֆային հիմնախարսխի: Մինարեի գմբեթն ու մզկիթի կենտրոնական գմբեթն ունեն ջնարակապատ սալկներով խճանկարային երեսպատում՝ հիմնականում կապույտ երանգավորմամբ (այստեղից էլ տարածված անունը): Մզկիթի կենտրոնական գմբեթին կրկնվող ոճավորված բուսական զարդերի մեջ արաբատառ գեղագիր հայելային գրով կարդացվում է «ՅԱ ԱԼԻ» (یا علی – ով Ալի) արտահայտությունը⁴¹: Համալիրն ունեցել է ներքին բակ տանող երեք դարպաս, որոնցից հարավայինը և արևմտյանը համարվում էին հիմնական, իսկ արևելյանը տանում էր դեպի արտաքին բակ: Արևմտյան դարպասը փակվել է շինություններով՝ ներկայիս Մաշտոցի պողոտայի ընդլայնման և կառուցապատման ընթացքում, անկյունագծով հատվել է նաև համալիրի հյուսիսարևմտյան հատվածը, և բացվել է նոր շքամուտք: Խորհրդային տարիներին մզկիթում տեղակայվել են Երևանի պատմության և Հայաստանի բնության թանգարանները: 1995 թ. մզկիթը հանձնվել է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության հոգաձույթանը:

Երևանի ջրամատակարարման համակարգը

Կիսաանապատային գոտում գտնվող Երևանում, որը գրավոր աղբյուրներում հիշատակվում է իր բազմաթիվ այգիներով, դեռևս ուրարտական շրջանում, ապա զարգացած միջնադարում մեծ ուշադրություն են դարձրել ոռոգման համակարգին, կառուցվել և վերակառուցվել են բազմաթիվ ջրանցք-

⁴⁰ Հակոբյան 1971, 369:

⁴¹ Պետրոսյան 2018, 185-186:

ներ, ջրամբարներ, ջրհորներ և առուներ⁴²: Առավել հայտնի են Արուիայաթի, Դալմայի, Մամոի, Նորագյուղի և Ումեշինի (Էջմիածնի) ջրանցքները, որոնք ինժեներական բարդ լուծումներով կառույցներ էին՝ առանձին հատվածներում անցնում էին կամուրջ-ջրանցույցներով, քարակերտ կամ ժայռափոր թունելներով⁴³:

Հնագույն ժամանակներում կառուցված Երևանի ջրանցքներն, առուներն ու ջրամբարները պատերազմների և բնական աղետների պատճառով բազմիցս խափանվել են, ապա նորոգվել: Ուշ միջնադարում քաղաքի ոռոգման ցանցին մեծ ուշադրություն են դարձրել պարսիկ սարդարները: Այսպես՝ 1605 թ. Երևանի կառավարիչ Ամիրգունա խանի օրոք վերականգնվել են հին առուները և անցկացվել մի քանի նոր՝ երկրորդական առուներ, որոնք սկիզբ էին առնում մայր առուներից, նաև Հրազդան և Գետառ գետերից: 1679 թ. երկրաշարժից խափանված ջրամատակարարման համակարգի վերականգնման համար մեծ եռանդ է ցուցաբերել Երևանի սարդար Զալ խանը: Հուսեին Ղուլի խանի կառավարման շրջանում թե՛ մաքրվել և վերանորոգվել են վրաց Հերակլ թագավորի արշավանքների (1765, 1769 և 1779 թթ.) հետևանքով ավերված ջրանցքները, թե՛ անցկացվել են նոր առուներ: Երևանի ոռոգման խիստ հազեցած համակարգը շարքից դուրս է եկել 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի հետևանքով, քանի որ քաղաքը ռազմական գործողությունների թատերաբեմում էր⁴⁴:

Իրանական իշխանության շրջանում Երևանն այգեգործական մեծ բնակավայր էր: Քաղաքում կային հարյուրավոր հեկտարների հասնող մրգատու և խաղողի այգիներ: Այգեգործությունն ու խաղողագործությունը զարգացան հատկապես XVII դ. սկզբներին՝ Ամիրգունա խանի իշխանության տարիներին և նույն դարի վերջերին՝ Զալ խանի օրոք: Քաղաքի բոլոր մեծ ջրանցքները համարվում էին խանի սեփականությունը: Խանական ջրանցքներից կարող էին օգտվել միայն խանի թույլտվությամբ՝ հատուկ հարկ վճարելու պայմանով: Մի վավերագրի համաձայն՝ Հուսեին Ղուլի խանի օրոք ջրի պակասության պատճառով Դավիթ կաթողիկոսը դիմել է նրան՝ խնդրելով թույլ տալ խանական ջրանցքների, հավանաբար, «Դալմայի» ջրերով ոռոգել Էջմիածնի ցանքերը: Խանը կաթողիկոսի պահանջը բավարարել է⁴⁵:

Հայտնի էին հետևյալ ջրանցքները:

Ումեշինի ջրանցքը (երկ.՝ մոտ 24 կմ) սկիզբ էր առնում Հրազդան գետի աջ ափից, «Կարմիր բլուր» ամրոցից 1.5 կմ արևելք՝ ներկայիս Իսակովի և

⁴² Հոդվածի այս ենթագլուխը գրված է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21AG-6A080 ծածկագրով թեմայի շրջանակում:

⁴³ Հակոբյան 1971, 263-265, Մուշեղյան 1971, 208-215:

⁴⁴ Հակոբյան 1971, 265, Շահազիզ 2003, 52, Հարությունյան 2012, 55:

⁴⁵ Հակոբյան 1959, 166-167, Հակոբյան 1971, 267:

Բագրատունյաց պողոտաների խաչմերուկից մոտ 900 մ հարավ: Ոռոգել է մինչև Զվարթնոց հասնող հողատարածքները:

Նորագյուղի ջրանցքը (երկ.՝ մոտ 11 կմ) սկիզբ էր առնում Հրազդանի աջ ափից, Նորագյուղ թաղամասից 1.5 կմ հյուսիս-արևելք՝ Հրազդան մարզաշտից արևելք: Ոռոգել է Նորագյուղի այգիները:

Դալմայի ջրանցքը (երկ.՝ մոտ 7 կմ) սկիզբ էր առնում Հրազդանի աջ ափից՝ Դավթաշենի կամրջից մոտ 400 մ հյուսիս-արևելք: Ոռոգել է Հրազդանի աջափնյա Դալմայի այգիները: Ըստ ավանդապատման, խափանված հնագույն ջրանցքը պեղելով, հայտնաբերվում և վերակառուցվում է Հուսեին Ղուլի խանի հրամանով, իսկ անունը ստուգաբանվում է որպես «պեղված»:

Մամոհի ջրանցքը (երկ.՝ մոտ 16 կմ) սկիզբ էր առնում Հրազդանի ձախ ափից՝ Դավթաշենի կամրջից մոտ 400 մ հյուսիս-արևելք: Ոռոգել է Հրազդանի ձախափնյա այգիները և լցվել Վարդավառի լիճը: 1820-1824 թթ. Հուսեին խանը վերանորոգում է այն և իր կնոջ անունով կոչում՝ Մամոհ⁴⁶:

Աբուհայաթ ջրանցքը (երկ.՝ մոտ 21 կմ) սկիզբ էր առնում Կոտայքի մարզի Գետամեջ գյուղի մոտակայքից՝ Հրազդանի ձախ ափից: Հոսել է դեպի Կորեայի ձոր թաղամաս, Քանաքեռի բարձրունքի արևմտյան կողմը, ապա «Լամպերի» և «Երագ» գործարանների տարածքով թեքվել դեպի Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտի տարածք, հատել Գոգոլ փողոցը, դուրս եկել Գետառի աջ ափ, իջել Գետառի կիրճը, անցել գետը (հավանաբար՝ գետանցում-կամրջակով) և կենդանաբանական այգու ծորակը շրջանցելով՝ հոսել Նորք-Մարաշի Գ. Հովսեփյան փողոցի երկայնքով, իջել Սարի թաղով ու լցվել Վարդավառի լիճը: Ջրանցքի հնագույն անունը չի պահպանվել: «Աբուհայաթ» պարսկերենից թարգմանաբար նշանակում է «կյանքի ջուր», «կենսաջուր»: Մեկ այլ ստուգաբանությամբ՝ ջրանցքի անունը նշանակում է «ջուրը ներծծված», հավանաբար այն պատճառով, որ երկար տարածություն անցնելով, մինչև բուն քաղաք հասնելը ջրերը հիմնականում ներծծված էին լինում⁴⁷: Աբուհայաթ անունը, հավանաբար, կապվում է միջնադարում երկարատև խափանումներից հետո վերականգնման կամ նորոգման գործը նախաձեռնողի անվան հետ⁴⁸: Ըստ լեգենդի՝ Աբու-Հայաթը գեղեցիկ աղջիկ էր, որը նենգորեն խաբվելով՝ ինքնասպան է լինում ներկայիս Երևանի երկաթուղային կայարանից հարավ՝ Մուխաննաթ թափա (Նենգ

⁴⁶ Բաբայան, Ժամկոչյան 2015, 37:

⁴⁷ Միրզոյան 1960, 49, Շիրմազան 1962, 29-32, Ղանալանյան 1969, 90, Մուշեղյան 1971, 207-215, Շահազիզ 2003, 51-52: Հմմտ. նաև <https://www.facebook.com/STCOPC/posts/7716729931732972/> (25.10.2022թ.):

⁴⁸ Մուշեղյան 1971, 207-215:

բլուր) կոչվող վայրում: Լսելով այդ մասին՝ նրա փեսացու Թոխմախ խանն իրեն նետել է Թոխմախան գյուղ և խեղդվել⁴⁹:

Երևանի ջրամատակարարման համակարգում կարևոր միավոր էր **Վարդավառի լիճ** (Թոխմախ/ան գյուղ, մոտ 70.000 մ² մակերեսով): Ստեղծվել է բնական գոգավորության դիմաց հողե պատվար կառուցելով (պատվարի երկ.՝ 650 մ, բարձր.՝ 5 մ)⁵⁰: Ըստ պարսկական ավանդախառն վկայությունների՝ Թոխմախան լիճը կառուցվել, բայց ավելի հավանական է վերակառուցվել է Թոխմախ խանի (1570-1580 թթ.) օրոք և կոչվել նրա անունով⁵¹:

Պարսկական մշակույթի ազդեցությունը Երևանի քաղաքային կերպարի վրա

Ուշմիջնադարյան Երևանի քաղաքային կերպարի մասին բազմաթիվ հիշատակությունների թվում առավել արժեքավորը ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենի և նրա ուղեկից Ժ. Գրելոյի՝ Երևանի համայնապատկերը ներկայացնող փորագրանկարն է, որն արվել է 1673 թ.՝ Նախքան Երևանի 1679 թ. հզոր երկրաշարժը⁵²: Թեև այդ հուշարձանները կործանվել են այդ երկրաշարժի հետևանքով, սակայն 2000-ական թթ. սկզբներին Երևանի տարբեր թաղամասերում շինարարական աշխատանքների շնորհիվ հայտնաբերվել են իրանական խեցեգործական կենտրոններում արտադրված շքադրամների, ինչպես նաև ջնարակապատ թասերի բեկորներ⁵³, որոնք հայ-իրանական առևտրական և մշակութային փոխհարաբերությունների խոսուն վկայությունն են: Սեֆյան Իրանում ճարտարապետության և կիրառական արվեստի զարգացումը վայելում էր պետական հովանավորություն, և շահն ինքն էր խթանում արվեստի ապրանքային դերը առևտրում: Պարսկական կիրառական արվեստի նմուշների՝ երեսպատման սալիկների և տեքստիլի՝ հատկապես նկարազարդ գորգերի մեծաքանակ արտադրությունը նպաստեց պարսկական ճարտարապետությանը բնորոշ արտաքին և ներքին հարդարանքի ազդեցությանը Երևանի ճարտարապետական կերպարի վրա: Այդ շրջանում ներքին հարուստ կահավորանքի մասին են պատմում ճանապարհորդների նկարագրություններն ու պահպանված լուսանկարները⁵⁴:

Երկրաշարժից հետո կառուցված բնակելի շենքերի արտաքին հարդարանքը ևս կրել է իրանական ճարտարապետության որոշակի ազդեցությո-

⁴⁹ Ղանալանյան 1969, 30, 78:

⁵⁰ Մուշեղյան 1971 207-215, Ջալալբեկյան 1977, 47-51:

⁵¹ Հակոբյան 1971, 264-265:

⁵² Шарден 1902, 241.

⁵³ Բաբայան, Ժամկոչյան 2015, 39:

⁵⁴ Շահազիզ 2003, 160-161, 169, 172:

յունը, մասնավորապես՝ թրծած աղյուսների խճանկարային դասավորությամբ զարդաձևերով երեսպատված շենքերի ճակատները⁵⁵:

Իրանական միջնադարյան շինարվեստի վաղ նմուշները՝ շենքերի ճակատների երեսպատման համար կիրառվող շքաղյուսները, Երևանում հայտնաբերվել են 2001 թ. Աբովյան 3 հասցեում բացված ստորգետնյա դամբարանի պեղումներով⁵⁶: Դրանք աստղաձև հախճաասալեր են, որոնք արտադրվել են Իրանի խոշոր խեցեգործական կենտրոններից մեկում՝ Քաշան քաղաքում, և թվագրվում են XIII դ. վերջին քառորդ - XIV դ. սկզբով (նկ. 8): Նկարազարդվել են ենթաջնարակային և վերջնարակային տեխնիկաների համադրմամբ: Հախճաասալերի մակերեսին կոբալտի գծագրությամբ ստեղծվել է շքաղյուսի շրջանակն ու մակերեսի հիմնական ուրվանկարը, որը լրացվել է շողյունով արված խիստ ոճավորված բուսազարդերով և դրանց միջև պատկերված թռչուններով: Եզրային գոտիները զարդարված են արաբատառ մակագրություններով, որոնք այդ շրջանի բանաստեղծների պոեմներից հատվածներ, օրհնանքներ կամ բարեմաղթանքներ են⁵⁷: Հետնախորքը գրեթե ամբողջությամբ շողյունով լցնելը, կոբալտով նկարված ժապավենազարդերն ու *նասխ* գիրը հատկանշում են այդ հախճաասալերի նկարազարդման *քաշանյան* ոճը⁵⁸:

Այդ շքաղյուսներն, ըստ երևույթին, ագուցված են եղել դամբարանի վերգետնյա հարկի վերնամասում, ինչպես նույն ժամանակով թվագրվող մուսուլմանական դամբարաններում, նաև Եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթի վեղարի և սելջուկյան շրթայի միջև գոտու վրա⁵⁹: Թեև շենքերի ճակատների հարդարումը գունավոր շքաղյուսներով հայկական ճարտարապետության մեջ լայնորեն տարածված չէր, այնուամենայնիվ դրանց գյուտերը հայտնի են Հայաստանի մի շարք հնավայրերի պեղումներով⁶⁰, նաև եկեղեցիների՝ Վայոց ձորի Սպիտակավորի, Եղվարդի Ս. Աստվածածնի, Կիրանց վանքի թմբուկների արտաքին հարդարանքից⁶¹: Քաղաքական ու մշակութային փոխազդեցություններով պայմանավորված՝ XII-XIV դդ. Հայաստան ներմուծվեց աշխարհիկ ու պաշտամունքային շենքերի ճակատները խաչաձև, աստղաձև, բազմանկյուն ու քառակուսի շքաղյուսներով հարդարե-

⁵⁵ Ղաֆադարյան 1975, 100, Բաբայան, Ժամկոչյան 2015, 44-45, նկ. 85-86:

⁵⁶ Հմմտ. Քալանթարյան, Մելքոնյան 2005, 121-122: Հարկ է նշել, որ այդ դամբարանի վերգետնյա մասը կործանվել էր 1679 թ. երկրաշարժի հետևանքով: Այն ժ. Գրեյլի փորագրանկարում երևացող և «աշտարակ» անունը ստացած կառույցն է, որի վերաբերյալ մասնագետները տարակարծիք են (իրապարակումների ցանկը տե՛ս Շահազիզ 2003, 132, Բաբայան, Ժամկոչյան 2015, 20-21, Հարությունյան 2021, 39-44):

⁵⁷ Հմմտ. Փոռոմոհամմադի 2014, 136-148:

⁵⁸ Շողյունով նկարազարդ խեցեղենի մեջ տարբերակվում են կերպավորման երեք եղանակ՝ կոթողային, մանրանկարչական և քաշանյան:

⁵⁹ Հմմտ. Porter 2021, 97-146:

⁶⁰ Հմմտ. Բաբաջանյան 2015, 129-131, աղ. 23:

⁶¹ Հմմտ. Kalantaryan et al. 2009, 177, Гюзальян 1984, 153-174, Donabédian, Porter 2017, 851-855.

լու սովորույթը: Վաստակավոր հայագետ Հ. Օրբելին, արվեստի ու ճարտարապետության պատմաբան Ա. Յակոբսոնը մուսուլմանական աշխարհում տարածված շենքերի ճակատները շքաղյուսներով հարդարելու սովորույթը կապում են հայկական ճարտարապետության մեջ բազմազույն ու բազմաձև քարերով եկեղեցիների ճակատների խճանկար հարդարանքի հետ⁶²:

Իրանական ճարտարապետությանը բնորոշ պաշտամունքային և աշխարհիկ շենքերի արտաքին ու ներքին հարդարանքում շքաղյուսների կիրառությունը շարունակվեց հետագա դարերում: Երևանի տարբեր թաղամասերում հայտնաբերվել են հումքի այլ բաղադրությամբ (կարմրախեցի) և ավելի պարզ նկարագրով մամբ շքաղյուսներ⁶³: Ի տարբերություն ավելի վաղ թվագրվող շքաղյուսների, որոնց, բացի մակերեսի նկարագրով բարդ տեխնիկաների համադրումից, բնորոշ էր սալիկի ձևավոր կերտվածքը (աստղաձև, խաչաձև, բազմանկյուն)՝ XVII-XVIII դդ. երեսպատման շքաղյուսները հիմնականում ենդ, ուղղանկյուն սալիկներ են, որոնք ունեն տարբեր գունավորում (գերակշռում են փիրուզագույնը, դեղինը և կապույտը): Գունավոր սալիկների խճանկարային դասավորությամբ էլ ստեղծվում են շենքերի արտաքին հարդարանքի երկրաչափական ու բուսական պատկերները, որոնք զարդարում են Երևանում միակ կանգուն «Կապույտ» մզկիթի ճակատները, գմբեթը և մինարեի վերնամասը (նկ. 7ա, բ):

Եզրակացություններ

XVII-XVIII դարերը Արևելյան Հայաստանի և, մասնավորապես, Սեֆյան Իրանի Չուխուր-Սաադի կուսակալության կենտրոն Երևանի պատմության մեջ նշանավորվել են երկակի իմաստով. մի կողմից, շարունակվում են հայ ժողովրդի համար ծանր հետևանքներով լի թուրք-պարսկական բախումները, որոնք ուղեկցվում են սովով, համաճարակներով, բռնազաղթով, մյուս կողմից, նկատվում է պարսից գահակալների համեմատաբար մեղմ քաղաքականությունը հայկական մշակութային ժառանգության պահպանման գործում:

Երևանի քաղաքաշինության և քաղաքային կերպարի ձևավորման վրա իրենց ավանդն ունեցան Իրանի կառավարիչները, որոնք հատուկ ուշադրություն էին դարձնում քաղաքի թե՛ վարչական-հասարակական, պաշտամունքային և թե՛ ինժեներական կառույցների բարեկարգմանն ու նորոգմանը: Լինելով Սեֆյան տերության սահմանային կուսակալություններից ամենաեկամտաբերը՝ Երևանի խանության տարածքում և հատկապես Երևան քա-

⁶² Орбели 1963, 261-262, Якобсон 1950, 99.

⁶³ Բաբայան, Ժամկոյան 2015, 39, նկ. 27:

ղաքում ենթակառուցվածքների ամրապնդումը բխում էր տերության կենտրոնական իշխանության շահերից:

Զարգացած և ուշմիջնադարյան փուլերում Երևանը, գտնվելով Իրանից Թուրքիա ձգվող ուղեգծի վրա, ակտիվ մասնակցում էր երկրի ներքին և տարածաշրջանային առևտրին. մասնավորապես, քաղաքի առևտրատնտեսական զարգացման համար մեծ կարևորություն ուներ Թավրիզ-Ջուղա-Երևան-Էջմիածին-Կարս-Էրզրում մայրուղին⁶⁴: Առևտրատնտեսական կապերի ամրապնդման և կիսանկախ խանության ներքին առևտրի արդյունավետ կազմակերպման համար էական նշանակություն ուներ Երևանի դրամահատարանի (զառաբխանա) գործարկումը⁶⁵: Երևանում թողարկվել են ինչպես իլխանական⁶⁶, այնպես էլ սեֆյան, աֆշարական, զենդյան, ղաջարական դրամներ⁶⁷:

Այդ շրջանում Երևանի թաղամասերում կառուցված բազմաթիվ խանութ-կրպակները, իջևանատները, շուկա-հրապարակները, որտեղ աշխատում էին հիմնականում հայերը, վկայում են այն մասին, որ Երևանը ոչ միայն տարանցիկ առևտրի հանգույց էր, այլև խանության տարածքում հռչակ վայելող արհեստագործական և վաճառականական կենտրոն: Թեև Երևանի սարդարները մեծ արտոնություններով օժտված կիսանկախ կառավարիչներ էին, այնուամենայնիվ, երկրի կառավարման ներքին գործերին չէին խառնվում և իրենց ձեռքում էին պահում միայն հսկողությունը: Կառավարման համակարգում մեծ դերակատարում ունեին մեյլքները և կաթողիկոսը, որոնք պահպանել են իրենց իրավունքները և միջնորդներ էին խաների և ժողովրդի միջև: Այդ փաստը վավերացվում է մատենագիր և վիմագիր աղբյուրներով⁶⁸:

Սեֆյանների վերելքով նշանավորվեց պարսկական մշակույթի ծաղկման նոր դարաշրջանը, որի կարևոր առանցքը ճարտարապետությունն է՝ իր հորինվածքային և ոճական առանձնահատկություններով: Այն լայնորեն տարածվեց երկրի տարբեր շրջաններում, այդ թվում՝ Երևանում: Պետական կենտրոնացված կառավարական համակարգի ստեղծումն իր արտահայտությունը գտավ Սեֆյան տերության նոր մայրաքաղաք Սպահանի քաղաքաշինական նախագծում, որտեղ երկրի կառավարման երեք կարևոր օղակները՝ հոգևոր իշխանությունը (Մասջեթ է-շահի մզկիթը), առևտրական ուժը (շուկան՝ Կայսերական բազարը) և անձամբ իր՝ շահի իշխանությունը (Ալի Գափու պալատը) հավաքվեցին մի հրապարակի (Նաքշ-է Ջահան մեյդան)

⁶⁴ Հակոբյան 1971, 225-230:

⁶⁵ Հակոբյան 1971, 216-223, Բաբայան, Ժամկոչյան 2015, 11-12:

⁶⁶ Հմմտ. Վարդանյան 2018ա, 185-186:

⁶⁷ Հմմտ. Վարդանյան 2018բ, 202-209:

⁶⁸ Ղաֆադարյան 1975, 139/3, 167, Բաբայան, Ժամկոչյան 2015, 11-14, Շահագիզ 2003, 85-91:

շուրջ⁶⁹: Պետական կառավարման նման համակարգը և քաղաքային տարածքի կազմակերպման նախագիծը տեսնում ենք նաև Երևանում՝ հատկապես բերդում, որտեղ գտնվում էին սարդարի պալատը, մզկիթը և շուկան⁷⁰:

Այսպիսով, հայկական դարավոր ճարտարապետության՝ հայկական եկեղեցիների, մելիքական տների և բնակելի շենքերի կողքին պարսկական ճարտարապետության և շինարվեստի առանձնահատկություններով ստեղծված կառույցները դարձան ուշմիջնադարյան Երևանի քաղաքային կերպարի անբաժանելի մասը: Ցավոք, 1679 թ. ավերիչ երկրաշարժի հետևանքով դրանց մի մասը կործանվեց, իսկ երկրաշարժից հետո կառուցված հուշարձանները քանդվեցին Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երևանի գլխավոր հատակագծման ընթացքում իրականացված շինարարական աշխատանքների հետևանքով: Պարսկական ճարտարապետության հուշարձաններից այժմ կանգուն է Կապույտ մզկիթը (մասամբ նաև՝ Կոնդի մզկիթը), որտեղ շարունակում է գործել իրանական մշակույթի կենտրոնը՝ կից գրադարանով, կիրակնօրյա դպրոցով և աղոթասրահով:

Գրականություն

- Աբրահամ Երեանցի 1777, Պատմութիւն պատերազմացն 1721-1736 թուի, հրատ. Հ. Սահակ Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 182 էջ:
- Ամենայն Հայոց երջանակահիշատակ կաթողիկոս Նորին Ս. Օծություն S.S. Գևորգ հայրապետի դառնակսկիծ մահվան առթիվ Գերագույն հոգևոր խորհրդի անունով ստացված ցավակցական հեռագրերն ու գրությունները 1954 (ԺԱ տարի) N 5, էջմիածին, էջ 7-24:
- Առաքել Դարիժեցի 1990, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ՝ Լ. Խանլարյանի, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 596 էջ:
- Բաբայան Ֆ., Ժամկոչյան Ա. 2015, Ուրվագծեր Հին Երևանի պատմության և հնագիտության, Երևան, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայության ՊՈԱԿ», 108 էջ:
- Բաբաջանյան Ա. 2015, Հայաստանի XIV-XVII դդ. խեցեղենը (չիրատարակված ատենախոսություն), Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 212 էջ:
- Եղիազարյան Ա. 2022, Երևանի 1724 թվականի ինքնապաշտպանությունը, Հայագիտության հարցեր, N 2, էջ 55-75:
- Զաքարիա Քանաքեռցի 2015, Պատմութիւն. Կոնդակ Սուրբ ուխտին Յօհաննու վանից, աշխատասիրությամբ՝ Ա. Վիրաբյանի, Երևան, հեղ. հրատ., 243 էջ:
- Զուլպյան Մ. 1990, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, XIII-XVIII դդ., գիրք Ա, Քաղաքական պատմություն, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 364 էջ:
- Կոստիկյան Բ. 2005, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731 թթ.), կազմեց՝ Բ. Կոստիկյան, Երևան, «Ձանգակ-97», 728 էջ:
- Հակոբյան Թ. 1959, Երևանի պատմությունը (1801-1879 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 672 էջ:
- Հակոբյան Թ. 1971, Երևանի պատմություն (1500-1800 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 524 էջ:

⁶⁹ Savory 1930, 536.

⁷⁰ Շահազիզ 2003, 111, 171-173, 184-188:

- Հակոբյան Վ., Հովհաննիսյան Ա. 1978, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԷ. դար, հ. Բ. (1621-1640 թթ.). կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 940 էջ:
- Հակոբյան Վ. 1984, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. ԺԷ. դար, հ. Գ. (1641-1660 թթ.). կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1015 էջ:
- Հայոց պատմություն 2010, հ. III, գիրք առաջին, Նոր ժամանակաշրջան (XVII դ. երկրորդ կես - 1918 թ.), խմբագրական խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշներ, Երևան, «Զանգակ-97», 704 էջ:
- Հայոց պատմություն 2014, Միջին դարեր (IV դար - XVII դարի առաջին կես), հ. II, գիրք երկրորդ, խմբագրական խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշներ, Երևան, «Զանգակ», 800 էջ:
- Հարությունյան Ա. 2012, Երևանը և շրջակայքը, Երևան, «Էդիթ պրինտ», 128 էջ:
- Հարությունյան Ա. 2020ա, Երևանի Ա. Անանիա առաքյալի անապատը կամ Զորավոր Ա. Աստվածածին եկեղեցին, Երևան, Զորավոր Ա. Աստվածածին եկեղեցի, 2020, 354 էջ:
- Հարությունյան Ա. 2020բ, Հին Երևանի և ներկա արվարձանների եկեղեցիներն իբրև գրչության կենտրոններ, Բանբեր Մատենադարանի, հ. 30, Երևան, Մատենադարան, էջ 455-479:
- Հարությունյան Ա. 2021, Հին Երևանի եպիսկոպոսանիստ եկեղեցին. Երկուբեմանի - Ա. Պողոս-Պետրոս, Ա. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 144+9 ներդիր էջ:
- Հարությունյան Վ. 1960, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, «Հայպետհրատ», 145 էջ:
- Ղանալանյան Ա. 1969, Ավանդապատում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 757 էջ:
- Ղաֆադարյան Կ. 1975, Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 249 էջ:
- Միրզոյան Ա. 1960, Հին Երևանի պատմությունից (16-րդ դարի սկզբից մինչև 1828 թ.), Երևան, Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտ, 82 էջ:
- Մուշեղյան Գ. 1971, Զրամատակարարման հարցը Էրեբունիում և Թեյշեբախիում, Պատմաբանասիրական հանդես, N 1, էջ 207-215:
- Յակոբեան Ա. 2019, Կոզեռն-Կոնդի 591 թ. ենթադրեալ բերդի հետքերով, «Սեդրակ Բարխուդարյան-120» գիտական հոդվածների ժողովածու, խմբ. Գ. Սարգսյան, Ա. Հարությունյան, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 92-108:
- Պետրոսյան Լ. 2018, Երևան քաղաքի մզկիթները (պատմական ակնարկ), Արաբագիտական ուսումնասիրություններ, N 10, Երևան, էջ 177-200:
- Շահագիզ Ե. 2003, Հին Երևանը (1931 թ. հրատարակության լրամշակված վերահրատարակություն), Երևան, «Մուլինի», 272 էջ:
- Շահխաթունեանց Յ. 2014, Ստորագրություն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ զաւառացն Արարատայ, Ա. Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 560 էջ:
- Շիրմազան Գ. 1962, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, Հայպետգյուղհրատ., 176 էջ:
- Ջալալբեկյան Ռ. 1977, Հնագույն ջրաշինարարական աշխատանքները Հայաստանում, Գիտություն և տեխնիկա, N 6, էջ 47-51:
- Սարգսյան Ա., Ամիրջանյան Լ., Սարգսյան Հ. (խմբ.) 2009, Երևանի նշանավոր ընտանիքները, Երևան, «Երևանի պատմության թանգարան», 237 էջ:
- Վարդանյան Ա. 2018ա, Մոնղոլական (իլխանական) և հետմոնղոլական ժամանակաշրջանի դրամները Հայաստանում. 1220-1500 թթ., Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը (խմբ. Ռ. Վարդանյան), Երևան, «ՀՀ Կենտրոնական բանկ», էջ 176-195:
- Վարդանյան Ա. 2018բ, Օսմանյան և ուշ իրանական դրամները Հայաստանում. 1501-1828 թթ., Հայաստանի դրամաշրջանառության պատմությունը (խմբ. Ռ. Վարդանյան), Երևան, «ՀՀ Կենտրոնական բանկ», էջ 196-212:

- Փոորմոհամմադի Փ. 2014, XIII-XIV դդ. հայ-իրանական մշակութային փոխհարաբերությունների պատմությունից, Բանբեր հայագիտության, N 1, էջ 136-148:
- Քալանթարյան Ա., Մելքոնյան Հ. 2005, Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1990-2003 թթ., Երևան, «Մուղնի», 150 էջ:
- Гюзальян Л. 1984, Иранские средневековые изразцы на купольном барабане храма Богородицы в Егварде, Историко-филологический журнал, N 2, с. 153-174.
- Мухаммад-Рафи Ансари 1991, Дастур ал-Мулук (Устав для государей), предисловие, перевод, примечания и указатели А.Б. Вилдановой, Ташкент, 301 с.
- Орбели И. 1963, Мусульманские изразцы. Очерк. Избранные Труды, Ереван, изд. АН АрмССР, с. 252-268.
- Шарден Ж. 1902, Путешествие кавалера Шардена по Закавказью в 1672-1676 гг. (перевод Е. Бахутовой и Д. Косовича), Тифлис, скоропечатня М. Мартиросянца, 301 с.
- Яacobson A. 1950, Очерк истории зодчества Армении V-XVIII вв., Москва-Ленинград, Гос. изд. архитектуры и градостроительства, 167 с.
- Donabédian P., Porter Y. 2017, Éghvard (XIVe s.), la chapelle de l'alliance, Hortus atrium medievalium: Journal of the International Research Center for Late Antiquity and Middle Ages, Brepols, 23/2, p. 837-855.
- Kalantaryan A., Karakhanyan G., Melkonyan H., Petrosyan H., Hakobyan N., Babayan F., Zhamkochyan A., Nawasardyan K., Hayrapetyan A. 2009, Armenia in the Cultural Context of East and West. Ceramics and Glass (4th-14th Centuries), Yerevan, "Gitutyun", 191 p.
- Porter Y. 2021, "Talking" Tiles from Vanished Ilkhanid Palaces (Late Thirteenth to Early Fourteenth Centuries): Frieze Luster Tiles with Verses from the *Shah-nama*, Journal of Material Cultures in the Muslim World, 2, p. 97-149.
- Savory R. 1930, The History of Shah Abbas the Great, vol. I, Boulder, CO: Westview Press, 544 p.
- ۳۷، مرامش، "نامیپ" ینگنرف ممانلصف، انوری اخیرات، رب رصتخم یه اگان، (زییایپ) ۲۰۰۶. ش. نایپسوه، ۲۰۰۶. ش. ۱ هو سپیان ۷-۳۹. ص، تهران
- (Հովսեփյան Շ. 2006, Համառոտ հայացք Երևանի պատմությանը, «Պայման» մշակութային պարբերական, հատ. 37, Թեհրան, էջ 39-71):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Դիաննա Միրիջանյան, Արսեն Հարությունյան, Դավիթ Դավթյան,
Ավետիս Գրիգորյան, Աստղիկ Բաբաջանյան

Ամփոփում

Ուշ միջնադարում պարսկական ճարտարապետությունը և շինարվեստը որոշակի կնիք են թողել Երևանի քաղաքային կերպարի ձևավորման վրա, երբ այն դարձավ Սեֆյան տերության Երևանի կուսակալության վարչական կենտրոնը: Սեֆյանների վերելքով նշանավորվեց պարսկական մշակույթի և ճարտարապետության ծաղկման նոր դարաշրջանը: Նրանց օրոք ստեղծված ճարտարապետական հորինվածքային և ոճական առանձնահատկություններով կառուցված շենքերը ուշմիջնադարյան Երևանի քաղաքային կերպարի անբաժանելի մասն են: Այդ շրջանում Երևանի հայկական հոգևոր-մշակութային, քաղաքացիական և բնակելի շենքերից զատ, պարսիկ խաների օրոք կառուցվում և վերակառուցվում էին Երևանի բերդը,

մի շարք մզկիթներ, շուկա-հրապարակներ, իջևանատներ, բաղնիքներ և ինժեներական կառույցներ: Որոշ խաների օրոք, որոնք բարյացակամ վերաբերմունք էին դրսևորում հայերի նկատմամբ, վերականգնվում և բարեկարգվում էին հայկական հողևոր-մշակութային օջախները: Ուշադրություն էր հատկացվում նաև Երևանի ոռոգման համակարգին և ենթակառուցվածքներին:

Պարսկական կիրառական արվեստի նմուշների՝ մասնավորապես ջնարակապատ սալիկների օգտագործումը շենքերի արտաքին հարդարանքում դեռևս XIII-XIV դարերից, թեև օտարամուտ էր հայկական ճարտարապետությանը, սակայն պեղումներով հայտնաբերված օրինակները վկայում են դրանց կիրառումը հայկական զարգացած և ուշմիջնադարյան կառույցների ճակատների ձևավորման մեջ: Դա պայմանավորված էր նաև ժամանակի ոճային առանձնահատկություններից հետ չմնալու ցանկությամբ:

Բանալի բառեր՝ Երևան, պարսկական իշխանության շրջան, իրանական մշակույթ, քաղաքաշինություն, ճարտարապետություն, ջրամատակարարում, ուշ միջնադար:

ОСОБЕННОСТИ ГРАДОСТРОИТЕЛЬСТВА ЕРЕВАНА В ПЕРИОД ПЕРСИДСКОГО ГОСПОДСТВА

Дианна Мириджанян, Арсен Арутюнян, Давид Давтян,
Аветис Григорян, Астхик Бабаджанян

Резюме

Персидская архитектура и строительное искусство наложили своеобразный отпечаток на градостроительство Еревана в период позднего средневековья, когда город стал административным центром Ереванского ханства в Сефевидской империи. Новый расцвет персидской культуры и архитектуры был связан с приходом к власти Сефевидов. Здания с присущими персидской культуре архитектурно-стилистическими особенностями составляют неотъемлемую часть городского облика позднесредневекового Еревана. В этот период, кроме армянских духовно-культурных, гражданских и жилых построек, при персидских ханах были построены и перестроены Ереванская крепость, ряд мечетей, рыночные площади, постоянные дворы, бани и инженерные сооружения. В годы правления некоторых ханов, проявлявших лояльное отношение к армянам, восстанавливались и благоустраивались армянские духовно-культурные центры. Особое внимание было уделено системе водоснабжения и инфраструктуре Еревана.

Хотя и использование образцов персидского прикладного искусства (в частности глазурованных изразцов) во внешней отделке зданий начиная с

XIII-XIV веков было чуждо армянской архитектуре, но найденные в результате раскопок экземпляры свидетельствуют об их использовании в оформлении фасадов армянских сооружений в развитом и позднем средневековье, что было обусловлено стремлением следовать стилистическим особенностям того времени.

Ключевые слова – Ереван, период персидского господства, градостроительство, архитектура, водоснабжение, персидская культура, позднее средневековье.

THE PECULIARITIES OF URBAN PLANNING OF YEREVAN IN THE PERIOD OF PERSION DOMINATION

Dianna Mirijanyan, Arsen Harutyunyan, Davit Davtyan, Avetis Grigoryan,
Astghik Babajanyan

Abstract

The Persian architecture and construction art influenced the urban planning of Yerevan in the late medieval period when the city was the administrative centre of the Yerevan khanate in the Safavid Empire. The new age of the heyday of the Persian culture and architecture was marked with the rise of Safavids. The edifices built in the Persian architectural and stylistic peculiarities constitute the inseparable part of the Yerevan urban landscape. Along with Armenian religious and cultural, public and residential buildings the Iranian governors built and rebuilt the Yerevan fortress, a number of mosques, squares, inns, bathhouses, and engineering structures. During the rule of khans who were well-disposed towards Armenians, the Armenian religious and cultural centres were built and restored. The Persian governors paid attention on the water supply system and infrastructure as well.

Although the use of Persian handicraft art samples – especially glazed tiles, in the exterior design of the buildings since the XIII-XIV cc. was uncommon for Armenian architecture, the uncovered finds attest their usage in the decoration of facades during the high and late medieval periods. This was connected also with the aspiration to follow to the stylistic features common for that time.

Key words – Yerevan, Period of Persian rule, urban planning, architecture, water supply system, Persian culture, Late medieval period.

«ԿԱԹՆԱՎՈՎ ՄԱՏԱՂ»՝ ԱՆՁՐԵՎԱԲԵՐ ԵՎ ԱՆՁՐԵՎԱԽԱՓԱՆ ԾԵՍ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Ռոման Հովսեփյան

Կենսաբանական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ roman.hovsepyan@iae.am

Հասմիկ Աբրահամյան

Պատմական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ hasmikabrahamyan@yandex.ru
Հոդվածը ներկայացվել է 26.02.2022, գրախոսվել է 01.03.2022, ընդունվել է տպագրության 12.12.2022
DOI: 10.53548/0320-8117-2022.3-349

Ներածություն

Երկրագործական և անասնապահական տնտեսաձևերով ապրող ժողովուրդների համար ջուրն առաջնային նշանակություն ունի: Ջրից, մասնավորապես մթնոլորտային տեղումների քանակից և ժամանակից են կախված մշակաբույսերի բերքատվությունը և անասնակեր հանդիսացող բույսերի առատությունը, որից էլ՝ ընտանի կենդանիների կենսազանգված ավելացնելու գործընթացը, ծնելիությունը և կաթնատվությունը:

Մթնոլորտային երևույթները կարգավորելու, մասնավորապես անհրաժեշտ քանակով և որոշակի սեզոնի ընթացքում անձրև՝ ոռոգում ապահովելու անհրաժեշտությունը, ինչպես նաև անցանկալի տեղումները, մասնավորապես ավերիչ կարկուտները կանխելու անհրաժեշտությունը ծնունդ են տվել մի շարք ծեսերի, որոնք, հազարամյակներ գոյատևելով, հասել են մինչև մեր օրերը: Այդ ծեսերի կամ դրանց բացակայության ազդեցությունը ուսումնասիրելու համար անհրաժեշտ է իմանալ վերաբերմունքը մասնակիորեն պահպանվում է մինչ օրս: Անձրևաբեր, անձրևախափան և կարկուտախափան ծեսերի կամ դրանց մասին հիշողությունները հավելյալ աղբյուր են եղանակային պայմանների և գյուղատնտեսության ոլորտում գոյություն ունեցած իրավիճակի, ինչպես նաև տվյալ համայնքի ներկայացուցիչների ավանդույթների և աշխարհընկալման մասին պատկերացում կազմելու համար: Մթնոլորտային գործընթացները կարգավորելուն միտված և ջրօգտագործմանն առնչվող

ծեսերը և հավատալիքները մեր օրերում կորցրել են իրենց կարևորությունը, գրեթե չեն կիրառվում և մոռացման եզրին են, սակայն մինչև ոչ հեռավոր անցյալը դրանք «կենսական» նշանակություն են ունեցել՝ լինելով ժողովրդական մշակույթի կարևոր բաղադրիչ: Այս ծեսերի և հավատալիքների մասին գիտելիքի փաստագրումը և հետազոտությունը մշակութապահպան նշանակություն ունեն, իրենց բազմաշերտության շնորհիվ կիրառական են նաև այլ հումանիտար բնույթի հետազոտություններում և մարդու էկոլոգիայի ուսումնասիրության համար:

Հետազոտության թեման ընտրվել է՝ ելնելով Հայկական լեռնաշխարհում ջրօգտագործման մշակույթի հետազոտության համատեքստում եղանակին և գյուղատնտեսությանն առնչվող ծեսերի և հավատալիքների ուսումնասիրության կարևորությունից¹:

Մեթոդաբանություն

Հետազոտության թեման է անձրևաբեր և անձրևախափան «կաթնավով մատաղի» ծեսը: Հետազոտական նյութը հավաքվել է հիմնականում 2021-2022 թթ.-ին՝ Սյունիքի մարզի Գորիս (ք. Գորիս, գ. Վերիշեն, Քարահունջ, Ակներ, Խնձորեսկ) և Տեղ (գ. Տեղ, Քարաշեն, Խնածախ, Կոռնիձոր) համայնքներում մեր արշավախմբի կատարած դաշտային ազգագրական աշխատանքների ընթացքում²: Գրանցված նյութը հիմնականում բանասացների մանկական կամ պատանեկան շրջանների հիշողությունների ձևով է, թեև ծեսը որոշ համայնքներում կենցաղավարել է ընդհուպ մինչև վերջին տարիներին, իսկ Ակներ համայնքում՝ նաև մեր օրերում: Հիշողությունները՝ պատմությունների և պատումների ձևով, գրանցվել են անհատական և խմբային հարցումների ու խորացված հարցազրույցների մեթոդներով³: Ակներ համայնքում մեզ հաջողվել է ներկա գտնվել կաթնավով մատաղի ծեսի և ազգագրական նյութ գրանցել նաև անմիջական դիտարկումների միջոցով: Հարցազրույցների լավագույն դրվագների ամփոփումները տրվում են հոդվածի վերջում՝ Հավելվածով: Հարցազրույցները կողավորված են ըստ ամսաթվի և օրվա ընթացքում հերթականության. օրինակ՝ 210804–7a/2, որտեղ 210804-ը 2021 թ. օգոստոսի 4-ն է՝ հարցազրույցի անցկացման ամսաթիվը, 7-ը՝ տվյալ օրվա յոթերորդ հարցազրույցը, a-ն մատնանշում է հիմնական բանասացին (յուրաքանչյուր հարցազրույցում կարող են լինել նաև

¹ Հոդվածը պատրաստվել է ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի 21AG-6A080 և 20TTSH-053 գիտական նախագծերի շրջանակում:

² Դաշտային աշխատանքներին մասնակցել են նաև մեր 20TTSH-053 նախագծի հետազոտական խմբի անդամներ Անի Սարատիկյանը և Նինա Ստեփանյան-Ղանդիկյանը:

³ Hunt 2016, Winick et al. 2016 և այլն:

b, c, d և այլ բանասացներ, իսկ եթե լատինական տառով նշում չկա, ուրեմն հարցազրույցը մեկ բանասացի հետ է եղել, կամ հղում ենք ընդհանուր հարցազրույցին՝ առանց մասնավորեցնելու կոնկրետ բանասացի), իսկ /2-ը հոդվածի Հավելվածում տվյալ հարցազրույցի հղվող հատվածն է: Հարցազրույցներին մասնակցել են շուրջ երեք տասնյակ տեղացիներ վերոնշյալ համայնքներից:

Հոդվածում խմբավորված և ամփոփ ներկայացնում ենք «կաթնավով մատաղ» ծեսը՝ նույն համայնքի բանասացների պատմություններով փոխլրացնելով բաց թողնված մասերը: Բանասացների շարադրանքներում երեք և ավելի համընկնումների դեպքում, այսինքն՝ երբ կարելի է ենթադրել, որ համընդհանուր իրավիճակի մասին է խոսքը, կոնկրետ հարցազրույցները չենք նշում: Ընդհանուր իրավիճակից շեղվող կամ ընդհանուր իրավիճակի նկարագրությունը լրացնող ազգագրական տվյալների առկայության դեպքում նշում ենք կոնկրետ հարցազրույցը: Անհրաժեշտության դեպքում կամ երբեմն պարզապես առաջնային ազգագրական նյութը ներկայացնելու համար ուղղակի խոսքի ձևով մեջբերումներ ենք անում բանասացների պատմություններից (տե՛ս հոդվածի Հավելվածը): Ամենաշատ տեղեկություն հաղորդող որոշ հարցազրույցների բովանդակությունների շարադրանքը տալիս ենք Հավելվածում:

Հետազոտության առաջնային նպատակն է ազգագրության միջոցով ջրօգտագործման մշակութային գործընթացների և երևույթների մասին տվյալներ հավաքելը, ապա դրանց վերլուծության և տեսական վերակազմությունների միջոցով մարդկային հասարակությունների կողմից ջրային պաշարների հայթայթման և օգտագործման ռազմավարությունների մասին պատկերացում կազմելը: Հետազոտության նպատակներից է նաև գրանցել և պահպանել անձրևաբեր, անձրևախափան և կարկտախափան ծեսերը և հավատալիքները՝ որպես անցյալում «կենսական» կարևորություն և հանրայնություն ունեցած, բայց մեր օրերում անհետացող պրակտիկա, ինչպես նաև որպես Հայաստանի մշակութային ժառանգության բաղադրիչ:

Ազգագրական տվյալները և դրանց վերլուծությունը

Ծեսի ամփոփ նկարագիրը՝ ըստ ազգագրական (առաջնային) նյութերի

Անունը. «Կաթնավով (կաթնովով) մատաղ»

Նպատակը. անձրևաբեր/անձրևախափան

Ժողովրդական մեկնաբանությունը. «մատաղ անել»

Աշխարհագրությունը. Սյունիքի Գորիս համայնքի Գորիս քաղաք, Վերիշեն, Ակներ, Քարահունջ և Խնձորեսկ գյուղեր և Տեղ համայնքի Տեղ, Քարաշեն, Խնածախ և Կոռնիձոր գյուղեր

Ընդգրկունությունը. համայնքային

Հիմնական ֆիզիոլոգիկ/առարկաները. կաթը, հացահատիկը

Հասցեատերը. Աստված և երկինք

Կազմակերպիչները. տարեց կանայք

Կատարողները. տարեց կանայք, երեխաները և պատանիները՝ աղջիկ, տղա

Այլ մասնակիցներ. համայնքի բոլոր անդամները, անձանոթ անցորդները

Կատարման տեղը. գյուղամիջում, եկեղեցու բակում, խաչմերուկում, ճանապարհին

Կատարման ժամանակը և հաճախականությունը. որոշակի ժամանակ չկա՝ ըստ անհրաժեշտության

Կենցաղավարումը. հիմնականում մինչև 1990-ականները, որոշ համայնքներում՝ մինչև 2010-ականները, գ. Ակներում՝ նաև մեր օրերում:

«Կաթնավով մատաղ» ծեսի առանցքում կաթնով եփելն է և բանասացների բնորոշմամբ՝ որպես մատաղ բաժանելը: Նույն ծեսն ունեցել է երկու տարբեր՝ հակադիր գործառույթներ՝ անձրևաբեր և անձրևախափան:

Ծեսի համար պատրաստվող կաթնովը պարզ ուտեստ է, որի հիմնական բաղադրիչներն են կաթը, բրինձը (*Oryza sativa*) և (կամ) հաճարի (*Triticum dicoccum*) ձավարը: Թույլատրելի է համարվում ըստ ճաշակի ավելացնել աղ, շաքար և յուղ՝ կարագ կամ ձեթ:

2017 թվականից Սյունիքում կատարվող ազգագրական, բանահավաքչական աշխատանքների ընթացքում հետազոտվել են մի քանի տասնյակ գյուղեր մարզի բոլոր վարչական համայնքներում (Մեղրի, Քաջարան, Կապան, Տեղ, Գորիս, Տաթև, Սիսիան և Գորհայք), սակայն «կաթնավով մատաղ» ծեսը գրանցվել է միայն Գորիս և Տեղ համայնքներում: Այլ համայնքներում կաթնով պատրաստելը եղել է այլ անձրևաբեր և անձրևախափան ծեսերի մաս:

Արարողությունը համայնքային մասշտաբի է եղել: Այն հստակ ժամկետներ, տևողություն և ժամանակային այլ սահմանափակումներ չի ունեցել, կազմակերպել և կատարել են ըստ անհրաժեշտության. անձրևային եղանակների երկարատև շարունակականության դեպքում, մանավանդ եթե դա բերքահավաքի սեզոնին է, ծեսը կատարվել է անձրևախափան, իսկ երաշտների դեպքում՝ անձրևաբեր նպատակով: Ծեսի կազմակերպիչները եղել են

տարեց կանայք կամ կոնկրետ մի տարեց կին, սովորաբար համայնքում մեծ հարգանք վայելող, որը համայնքի կողմից ընդունված պատասխանատու է եղել «կաթնավով մատաղ» ծեսի կազմակերպման և իրագործման համար: Բանասացները շեշտում են կաթնավով ճաշ եփող կնոջ «մաքուր», մաքրասեր լինելու անհրաժեշտությունը: Կաթնով պատրաստող կանանց կույս, ամուսնացած կամ այրի լինելու հետ կապված նախապայմաններ բանասացները չեն նշել: Կաթնով եփելու արարողությանը նախորդել է համայնքի աղջիկ և տղա երեխաների և պատանիների կողմից կաթնովի հումքի, մասնավորապես՝ կաթի և հացահատիկեղենի հավաքը: Կաթնովի հումքը պետք է հավաքվեր առնվազն յոթ տնից:

Թեև ծեսի իրագործման համար եղել է հիմնական դերերի որոշակի բաշխում (մի կամ մի քանի տարեց կանայք երեխաների միջոցով կազմակերպել են սննդամթերքի հավաքը, կաթնովի պատրաստումը և բաժանումը), այն համայնքային ընդգրկունություն է ունեցել: «Կաթնավի» պատրաստումը կազմակերպվել է գյուղի ամենաբանուկ հատվածներում՝ գյուղամիջում, եկեղեցու բակում⁴, ամենաբանուկ ճանապարհի կամ խաչմերուկի վրա կամ երբեմն արարողությունը կազմակերպող կանանցից մեկի տանը⁵: Կաթնովը եփելու համար օգտագործել են մեծ կաթսաներ՝ 40 լիտր տարողությամբ մեկ կամ մի քանի կաթսա: Հաճախ կաթնովի մեջ աղ կամ շաքարավազ չեն ավելացրել⁶: Կաթնովը եփելուց աղոթքներ և բարեմաղթանքներ են ասել: Արարողությանը միացողները ևս բարեմաղթանքներ են ասել, մասնավորապես՝ «Մատաղը ընդունելի լինի»⁷: Համայնքի անդամները հավաքվել են եփվող կաթնովի շուրջը, շփվել, գյուղի անցուդարձը քննարկել, պատմություններ պատմել և փորձը փոխանակել⁸: Հատկապես խրախուսվել է երեխաների մասնակցությունը: Կաթնովը եփելուց հետո այն պետք է բաժանվեր առնվազն յոթ տեղ (տարբեր տներ կամ նույն տանը չքնակվող մարդկանց): Բանասացները հատկապես նշում են երեխաներին (երեխաները իրենց ամաններով մոտեցել են կաթսային և ստացել իրենց բաժինները) և կաթնովի պատրաստման վայրի մոտով անցնող-դարձող ծանոթ-անծանոթներին բաժին հանելը: Բաժին են ուղարկել այն համագյուղացիներին, որոնք ներկա չեն եղել կաթնովի արարողությանը: Ըստ ցանկության՝ ամեն մեկն իրեն բաժին հասած կաթնովի մեջ կարագ է ավելացրել: Ծեսը աստիճանաբար

⁴ Քարահունջ և Խնձորեսկ գյուղերում անձրևի համար կենդանու կամ կաթնովով մատաղ արել են տվյալ գյուղի Սբ Հովհաննես եկեղեցու բակում:

⁵ Ակներ գյուղում կաթնովով մատաղ են արել թե՛ գյուղում, թե՛ սարում:

⁶ Կաթնովի մեջ շաքարավազ կամ աղ չավելացնելը ևս այն որպես գոհաբերություն/մատաղ ընկալելու ցուցիչ է:

⁷ Ակներ, 220518-2:

⁸ Ակներ գյուղում նաև հարսնացու գտնելու փորձ էին անում (220518-2):

դադարել է կենցաղավարվել 1960-ական թվականներից, սակայն շարունակել է իր գոյությունը պահպանել մինչև XXI դարի սկիզբը: Բանասացները նշում են, որ մեր օրերում ծեսը չի կատարվում, կամ որ վերջին անգամ մի քանի տարի առաջ են արել: Այս պրակտիկայով անձրև կամ դրա դադար ակնկալում են «Աստվածից», որը երկնքում է:

Այսպիսով, ի լրումն բանասացների կողմից կաթնով եփելու ծեսը բառացիորեն *մաքաղ* անվանելուն և այն որպես մատաղ ընկալելուն, ծեսն ունի մատաղին բնորոշ մի քանի հատկանիշ և՛ ծեսի համայնքային լինելը, կաթնովի հումքի առնվազն յոթ տնից հավաքելը և յոթ տեղ բաժանելը, կաթնովին համեմունք չավելացնելը և բոլորին բաժին հանելը՝ առաջնահերթությունը երեխաներին և պատահական մարդկանց տալով, և այլն, որոնք լրացուցիչ վկայում են, որ այդ ծեսը եղել է զոհաբերություն: Թեև առաջնային ազգագրական նյութերում բանասացները նշում են, որ այս զոհաբերություն-մատաղը արել են անձրևի գալու կամ կտրվելու համար, ակնհայտ է, որ զոհաբերություն անողների համար ակնկալվող վերջնարդյունքը ոչ թե հենց անձրևը կամ ջուրն է, այլ այն, ինչ կարող է տալ կամ փչացնել կամ ինչի վրա կարող է ազդել այդ ջուրը (անձրևը, կարկուտը): Հարցազրույցներում ուղղակիորեն կամ անուղղակիորեն նշվում է (տե՛ս Հավելվածը) անձրևի (ջրի) ազդեցությունը բուսաբուծության ոլորտի վրա, որը ցույց է տալիս բուսական հումքի արտադրության առաջնահերթությունը տվյալ համայնքների համար և վերջիններիս երկրագործական մշակույթի ներկայացուցիչ լինելը⁹: Տրամաբանական կլինի ենթադրել, որ զոհաբերության՝ մատաղի համար ընտրված կաթնովի, մասնավորապես դրա բաղադրիչների՝ կաթի և հացահատիկեղենի ընտրությունը պատահական չէ: Կաթը անասնապահական գործունեության արտադրանքի հիմնական վերջնարդյունքն է, իսկ հացահատիկեղենը՝ երկրագործական արտադրանքի: Կաթնովով մատաղում այս երկու բաղադրիչները՝ կաթը և հացահատիկեղենը, խորհրդանշական գործառույթ ունեն և կիրառվել են թերևս թե՛ խորհրդանշական իմաստով՝ նպաստավոր անասնապահական պայմանների (կաթ) և նպաստավոր երկրագործական պայմանների համար (հացահատիկ), թե՛ զոհաբերվող ապրանքը այդ նույնի (կաթը՝ կաթի, հացահատիկեղենը՝ հացահատիկեղենի) բազմապատիկի դիմաց ակնկալիքներով¹⁰:

⁹ Հայաստանի եզդիների և քրդերի շրջանում, օրինակ, անձրևը կարևորվում է նաև անասնապահության համար անհրաժեշտ խոտ ապահովելու տեսանկյունից, ավելին՝ որոշ բանասացներ կարևորում են հենց միայն անասնաբուծությանը հասցվող օգուտի կամ վնասի տեսանկյունից (Հովսեփյան 2017):

¹⁰ Ասվածը հաստատում են նաև հետևյալ օրինակները. Լեռնային Ղարաբաղում շատերը կաթնովը եփել են արտերի միջնակներում (արտի վարած տեղերի միջև ավար մնացած մասում) և դրանով ցողել են հողամասի շուրջը, որպեսզի նպաստեն բերքաճին և ցանքսերը պահպանեն մորեխից,

Ընդհանուր առմամբ, կաթի հետ կապված, այդ թվում՝ կաթի առատացմանը և կաթի միջոցով բերքառատությանը նպաստող մի շարք ծեսեր կան¹¹: Որպես հանապազօրյա կենսական արժեք՝ հաճախ կաթի հետ զուգորդվել է առհասարակ բերքը (արտի, այգու, մեղվի և այլնի)¹²: Կենսական կարևոր բուժիչ հատկությունների շնորհիվ կաթնամթերքը ժողովրդական հավատալիքներում հանդես է գալիս նաև որպես չարխափան միջոց¹³:

Ըստ ներկա ազգագրական նյութերի՝ այլ անձրևաբեր կամ անձրևախափան ծեսերից կաթնովով մատաղին ամենասերտորենը առնչվում է տիկնիկ պատեցնելը:

Տիկնիկ պատեցնելը

Համայնքում տիկնիկ պատեցնելու պրակտիկան Սյունիքում և ընդհանրապես Հայաստանում և ողջ տարածաշրջանում ամենատարածված անձրևի ծեսերից է:¹⁴ Թեև տիկնիկի գործառույթը նույնական է գրեթե ամենուր, Սյունիքի տարբեր համայնքներում այն տարբեր անվանում է ունեցել. Անգեղակոթում՝ Չամչախաթուն, Շինուհայրում՝ Գողի, Տաթևի գյուղերում՝ Ղողի¹⁵, Շիկահողում, Արցախում՝ Ճոլի¹⁶ և այլն¹⁷:

Ստորև մանրամասն անդրադառնանք Չամչախաթուն տարբերակին: «Չամչախաթուն» բառի հիմքում իրանական «չամչա», թուրքական «չեմչա» բառերն են, որոնք «գդալ» են նշանակում¹⁸, և «խաթուն» բառը, որն արևելյան

կարկուտից, երաշտից ու այլ աղետներից (Լիսիցյան 1981, 71): Ջրին հատիկեղեն զոհաբերելով՝ կանանց, ինչպես նաև կովերի կաթն առատացնելու դրսևորում է Աղանձ աղբյուրում աղանձ շաղ տալը (Խանգաղյան 1984, 298): Համբարձման տոնին կոունկը խաղողի ողկույզ է բերել վանահորը և հարիսա եփել տվել (Սրուանձտեան 1874, 105-106): Հմտ. Աթայեան 1906, 188: Ուշագրավ է, որ «Կաթի տոն» անվամբ համանման ծես եղել է Կոստանդնուպոլսից ոչ հեռու գտնվող Օրթաքյոյ և Խուդին ավաններում ապրող քաղկեդոնական հայերի շրջանում: Համբարձման տոնին ամեն ընտանիք պատրաստել է կաթով և ցորենով աղացած մածուկ, որը ճաշակել են ընտանիքի բոլոր անդամները: Եթե աղքատ ընտանիքները չեն կարողացել կաթ ձեռք բերել, ապա վերցրել են հարևաններից, որ այդ սուրբ ծեսի կատարումից անմասն չմնան (Բարթիկյան 2008, 249): Այդ ծեսն առնչվում է Կիրելայի պաշտամունքին (Բարթիկյան 2008, 249): Իսկ ըստ հռոմեական դիցաբանության՝ Կիրելան ցանքի և հունձքի աստվածուհին է (Мифы народов мира 2008, 530):

¹¹ Խտրերեան 1918, 27: Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1967, 276:

¹² Հարությունյան 2018, 367:

¹³ Հարությունյան 2018, 368:

¹⁴ Մեր սեփական բանահավաքչական նյութերը, Սյունիք, 2017-2022, Լիսիցյան 1969, 129, Հովսեփյան 2017, 114-146, Հայրապետյան 2004, 217-227 և այլն:

¹⁵ Hovsepyan 2018.

¹⁶ Բդոյան 1972, 495:

¹⁷ Մանրամասների համար՝ Պետրոսյան 2021, 62-63:

¹⁸ Հ. Աճառյանը, մեջբերելով հայսմավորքյան վկայություն, բացատրում է *չամչաշերեփ* բառը, որը նշանակում է մեծ շերեփ, խոշոր գդալ: «Չամչա» բառի պարսկերեն և թուրքերեն համարժեքները նույնպես շերեփ իմաստն ունեն (Աճառեան 1926, հ. 3, 626): Նույն հարցին անդրադարձել է նաև Է. Պետրոսյանը (2021, 66):

լեզուներում նշանակում է «տիկին, մեծ կին, թագուհի, ազնվական կին»¹⁹: Տիկնիկ պտտեցնելու ծեսում հետազոտողները հիմնականում տիկնիկը մեկնաբանում են որպես ջրի տարերքի աստվածուհու խորհրդանշան²⁰: Այդ համատեքստում է նաև «չամչախաթուն» անվան «խաթուն» արմատի «տիկին, մեծ կին, թագուհի, ազնվական կին» նշանակությունը: Հայտնի է, որ անձրևի ծեսերի տիկնիկը հաճախ պատրաստվել է նաև գդալից, շերեփից և ունեցել է կնոջ կերպարանք²¹: Նաև նշենք, որ Հայաստանի շատ համայնքներում և հենց Այունիքում անձրևաբեր կամ անձրևախափան նպատակներով տիկնիկ պտտեցնելու ծեսի մաս (սովորաբար՝ ավարտական) է եղել հենց կաթնով պատրաստելը և ծեսի մասնակիցներով կամ ամբողջ համայնքով ուտելը²²: Սակայն, ինչպես տեսնում ենք հենց «Կաթնավով մատաղ» ծեսի օրինակով, այս երկու պրակտիկաները եղել են նաև ինքնուրույն տարբերակներով: Իհարկե, հնարավոր է, որ դրանք ի սկզբանե երկու տարբեր պրակտիկաներ են եղել, որոնք հետագայում որոշ համայնքներում միաձուլվել են և ժամանակի ընթացքում ամրապնդվել ավանդույթներում: Սակայն հնարավոր է նաև, որ շերեփով պատրաստած տիկնիկ պտտեցնելու և կաթնով պատրաստելու ծիսական պրակտիկաները ի սկզբանե եղել են նույն ծեսի մասեր: Տիկնիկ պտտեցնելը և կաթնով եփելը մեկ ընդհանուր ծեսի բաղադրիչներ լինելու մասին է վկայում նաև այն, որ հարևան համայնքներում «Կաթնավով մատաղ» անվամբ հայտնի ծեսը Հին Խնձորեսկում կոչվել է Խածածոլի²³ կամ Խաչածոլի²⁴, որտեղ «խաչ» բաղադրիչը թերևս վերաբերվում է տիկնիկի խաչածն պատրաստված լինելուն, իսկ «ծոլի»/«ճոլի» բաղադրիչը ըստ ամենայնի համապատասխանում է տիկնիկ պտտեցնելու ծեսի և տիկնիկի անվան ճոլի/Չոլի տարբերակներին²⁵: «Կաթնավով մատաղ» տիկնիկ պտտեցնելու ծեսի պես ունեցել է թե՛ անձրևաբեր, թե՛ անձրևախափան, այսինքն՝ երկակի գործառույթ, որը լրացուցիչ փաստարկ է այն բանի, որ նշված ծեսերը կարող են միևնույն ծեսի բաղադրիչները լինել:

¹⁹ Աճառեան 1926, հ. 2, 312:

²⁰ Հայրապետյան 2004, 221, 222, Պետրոսյան 2021 և այլն:

²¹ Լիսիցյան 1969, 129, Hovsepyan 2018, Պետրոսյան 2021, Սալմաստում Շերեփ-տիկնիկը պատրաստել են շերեփին որպես թևեր խաչածն փայտ կապելով և շորեր հագցնելով (Կուզնեցով 2007, 199): Անգեղակոթում հաստատվել են Խոյից և Սալմաստից գաղթածներ (Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 1986, հ. 1, 253), հետևաբար՝ տրամաբանական է, որ նոր բնակավայր բերեին ծեսի անվանումը: Ս. Զելինսկին ևս գրում է, որ Պարսկաստանոց գաղթածները շերեփին ասել են «չամչա» (Զելինսկի 1898, 181):

²² Հովսեփյան 2017, Hovsepyan 2018 և այլն:

²³ 210805-4:

²⁴ 220410-3:

²⁵ Բդոյան 1972, 491, Լիսիցյան 1981, 62:

Մի ուշագրավ հանգամանք ևս. Հայաստանի բոլոր գավառներում ընդունված է եղել Համբարձման տոնին կաթնովի մատաղ անելը. նպատակը կաթի առատության ապահովումն էր: Այդ օրվա ամբողջ կաթը բաժանում էին աղքատներին՝ այդ առատաձեռնությամբ ակնկալելով, որ ստանալիք կաթն էլ առատ կլինի²⁶: Առհասարակ, Համբարձման տոնին եղել են կաթի առատությանը միտված այլ ծեսեր ևս²⁷: «Նույն օրը (խոսքը Համբարձման օրվա մասին է - Հ.Ա.) առանց բացառության ամեն տուն «կաթնով» է եփում. տաքացնում են կաթը, մեջը բրինձ ածում և եփում: Շատ ընտանիքներ էլ կաթ են բաժանում՝ որպես ողորմության»²⁸: «Համբարձման օրն (խոսքը Համբարձման հինգշաբթի օրվա մասին է - Հ.Ա.) ամեն ընտանիք պիտի եփեր կաթնավ: Այս մատաղից նա գոնե յոթ ընտանիքի պիտի բաժին ուղարկեր: Մի քանի գյուղերում շատ տարածված էր հավաքած մթերքով և օրվա ամբողջ կաթով ընդհանուր կաթնավ եփելը: Մի խումբ կանայք, գրեթե ողջ թաղը, մեծ կաթսային մեջ միասին եփում էին այդ կաթնավը և թե՛ իրենք նստում՝ ուտում էին Համբարձման կաթնավ, թե՛ բոլոր անցուդարձ անողներին էլ հրավիրում ուտելու, իսկ մնացածն արտերի շուրջն էին շաղ տալիս, որ բերքն առատ լինի: Կաթնավ մատաղը շաղկապված էր այս տոնի հետ հայկական բոլոր գավառներում: Դա անկասկած նույն մագիկ միջոցառումն է: ...Ինչպես մայրն է իր զավակին առատ կաթ տալով նրան առողջություն և աճելու ուժ տալիս, զորացնում, այնպես էլ կաթնով մատաղի միջոցով ուժեղացվում էր արթնացած բնությունը, զորացվում ու հասունացվում էր»²⁹: Ե. Լալայանը վկայում է, որ Համբարձման հինգշաբթի, երբ աղջիկների խումբը շրջել է տնետուն, ծաղկեփնջեր բաժանել և ընտանիքից որևէ իր վերցրել վիճակի համար, տանտիրուհին նրանց տվել է կաթ, յուղ, ձու, նաև բրինձ³⁰: Այս դրվագը կրկնում է մեր դաշտային աշխատանքների ընթացքում գրանցած՝ կաթնով եփելու համար տնետուն շրջելու և առնվազն յոթ տնից կաթ ու բրինձ հավաքելու ծեսը: Ստեփան Լիսիցյանի այս նկարագրությունը հիմնականում նույնական է վերը բերված դաշտային ազգագրական նյութին, մասնավորաբար՝ կաթնովը որպես մատաղ բնորոշելը, յոթ ընտանիքին բաժին տալը,

²⁶ Լիսիցյան 1969, 152: Կաթի կապն անձրևի հետ բացատրվում է այսպես. արգելվում էր մածնով կամ կաթով կրակ հանգցնելը: Դրանք կրակի վրա թափելով և այդպիսով այն որոշ չափով գոլորշիացնելով՝ կարող էին պակասեցնել դրա առատությունը (Լիսիցյան 1969, 153):

²⁷ Համբարձման գիշերն աղջիկները խոտերից և ծաղիկներից ցող էին հավաքում և լցնում կաթի մեջ, որպեսզի կաթն առատ լինի (Լիսիցյան 1969, 152, 273-274): Չորեքշաբթի (Համբարձման հինգշաբթին նախորդող) վաղ առավոտյան մեծերը գնում են դաշտերը, սիրի-սիրի, աստղփուլ և ավելուկի թուփ քաղում ու բերում-դնում կաթնով լի ամանի վրա, որ կաթն առատ լինի (Լալայան 1903, 266):

²⁸ Լալայան 1898, 259:

²⁹ Լիսիցյան 1969, 274:

³⁰ Լալայան 1898, 258:

գյուղի բոլոր կանանց մասնակցությունը կաթնով եփելու ծեսին, մեծ կաթսայում եփելը, միասին ճաշակելը, անցուդարձ անողներին «կաթնավի» հրավիրելը:

Համբարձման կաթնովի և մեր դաշտային աշխատանքների ընթացքում գրանցված անձրևաբեր «կաթնավով մատաղի» ուշագրավ ընդհանրություններից է ժամանակային համընկնումը. ապրիլ-հունիս ամիսներ³¹: Երկու դեպքում էլ համայնքի անդամների նվիրաբերություններով հավաքված մթերքով մեծ կաթսաների մեջ կաթնով է եփվում և որպես մատաղ բաժանվում համայնքի անդամներին: Կապակցված են նաև կաթնովի մատաղի նպատակները. առաջին դեպքում մատաղ է արվում անձրևաբերության կամ անձրևախափանման նպատակով, իսկ Համբարձման ժամանակ նույն կաթնովը եփվում են առատության ապահովման նպատակով³²:

Սյունիքում տարածված են եղել անձրևաբեր և անձրևախափան այլ ծեսեր ու հավատալիքներ ևս (անձրևաբերներից, օրինակ՝ խաչքարի վրա ջուր լցնելը, խաչքարը, եկեղեցու պատից պոկած քարը կամ խեղդվածի գերեզմանից վերցրած քարը գետի մեջ գցելը, գետի մեջ քարը շրջելը, գետը վարելը, մատաղ անելը և այլն, իսկ անձրևախափաններից, օրինակ՝ փայտերով կամ պարզապես գետնի վրա խաչ անելը և վրան աղ ցանելը, անձրևաբեր նպատակով գետի մեջ գցած քարը հանել-տանել իր տեղը դնելը, խաչքարի վրա կրակ անելը, անձրևի տակ³³ տան առաջնեկի կամ ամենափոքրի հետույքը բացելը և այլն), որոնք բազմաթիվ ընդհանրությունների հետ նաև հաճախ տարբերվել են անգամ հարևանությամբ գտնվող գյուղերում:

Եզրակացություններ

• «Կաթնովով մատաղը» իր հիմնական բաղադրիչներով՝ հացահատիկ և կաթ, կարելի է մեկնաբանել որպես ջրի, անձրևի համար մատուցվող զոհա-

³¹ Հայոց եկեղեցու տոնացույցում Համբարձման տոնը նշվում է Զատիկից 40 օր անց՝ հինգշաբթի: Որպես գատկական շաբթի տոն՝ ունի 35-օրյա շարժականություն և տատանվում է ապրիլի 30-ից մինչև հունիսի 3-ն ընկած ժամանակահատվածում (Ղազարյան և այլ 2002, 532):

³² Հնարավոր է, որ կաթնառատության նպատակով մինչև Համբարձում ևս կատարվել են ծեսեր, այդ թվում՝ կաթնով եփել, սակայն Համբարձումը եղել է մոզական գործողության և ազդեցության այն գլխավոր կետը, որի ժամանակ պարտադիր էր կաթնով եփելը: Դրանով կարծես ամբողջանում էր և հաստատուն էր դառնում կաթի առատության ապահովմանն ուղղված ողջ նախընթաց փուլը: Ասվածի մասին է վկայում այն, որ Համբարձման օրը նվիրված է եղել կաթին (Լիսիցյան 1969, 152): Հայտնի է, որ Զատիկից մինչև Համբարձում կաթ չեն օգտագործել (Հայոց ավանդական ուսուցող, 2008, 21-22): Ըստ կարգի՝ Մեծ պահքից մինչև Զատիկ ընկած շրջանում նույնպես կաթ չեն գործածել: Իսկ Համբարձմանը, փաստորեն, կաթի մատաղ են արել: Ընդունված պրակտիկա է, որ տվյալ տոնից առաջ այս կամ այն սննդատեսակի պահք պահեն, իսկ հետո այն մատաղ անեն: Ըստ ժողովրդական ընկալման՝ մայիսն անբերրի ամիս էր (Սահակյան, Հովհաննիսյան 2012, 82): Մայիսի վերջից յուր ու պանրի ժողովելու ժամանակն էր (Բազեյան 2008, 35):

³³ Նույնը արվել է կարկուտը կանգնեցնելու նպատակով:

բերություն, որտեղ, սակայն, իրականում գործում է զոհ դրա բազմակի դիմաց ակնկալիքը կամ սկզբունքը, և կարևորվում է վերջնարդյունքը՝ երկրագործական և անասնապահական արտադրանքները:

- «Կաթնավով մատաղ» ծեսը, ըստ ամենայնի, ի սկզբանե եղել է համայնքում տիկնիկ պատեցնելու ծեսի բաղադրիչ, որը, ինչ-որ պահից սկսած, կտրվել է՝ դառնալով ինքնուրույն ծես:

- Կաթնով եփելու ծեսն իր կատարման ժամկետով, ծիսակարգով և նպատակով համընկնում է Համբարձման տոնին կաթնով եփելու ծեսի հետ:

- Անձրևաբեր ծեսերը, մասնավորապես տիկնիկ պատեցնելու և կաթնով եփելու ծեսերը, և Համբարձման կաթնով եփելու ծեսը իրենց բնույթով զոհաբերություն/մատաղ են և ունեցել են բերքառատություն ապահովելու գործառույթ:

Գրականություն

Աթայեան Ա. 1906, Սալմաստ, Նոր Զուղա, Կ. Աբեան հրատ., 232 էջ:

Աճառեան Հ. 1926, Հայերէն արմատական բառարան, հ. 2, Երեւան, ԵՊՀ հրատ., 688 էջ:

Աճառեան Հր. 1926, Հայերէն արմատական բառարան, հ. 3, Երեւան, ԵՊՀ հրատ., 636 էջ:

Բազեյան Կ. 2008, Ալեքսանդրապոլի ավանդական ուտեստն ու հացկերույթը, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, թիվ 11, Երևան-Գյումրի, էջ 34-39:

Բարթիկյան Հ. 2008, Հայ-հոռոմները (քաղկեդոնիկ հայերը) հունական պարբերականներում, Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 237-260:

Բոդյան Վ. 1972, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 510 էջ:

Զելինսկի Ս. 1898, Վայրի բոյսերի գործածութիւնը, Ազգագրական հանդես, գք. Դ, Թիֆլիս, էջ 177-179:

Լալայեան Ե. 1898, Սիսիան. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Նշանաւոր տօներ, Ազգագրական հանդես, գք. Գ, Թիֆլիս, տպարան Մ.Դ. Ռօտինեանցի, էջ 249-260:

Լալայեան Ե. 1903, Բորչալուի գաւառ, Նշանաւոր տօներ, Ազգագրական հանդես, գք. X, Թիֆլիս, Արագատիպ Մ. Մարտիրոսեանցի, էջ 249-268:

Լիսիցյան Ստ. 1969, Զանգեզուրի հայերը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 334 էջ:

Լիսիցյան Ստ. 1981, Լեռնային Ղարաբաղի հայերը (ազգագրական ակնարկ), Հայ ազգագրություն և բանահյուսություն, պր. 12, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 142+25 էջ:

Խանզադյան Ս. 1984, Հայրենապատում, 1959-1981, գք. Գ, Երևան:

Խաչատրյան Ռ. 1999, Թալին. նյութեր և ուսումնասիրություններ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, պր. 19, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 280 էջ:

Խտըրեան Ս. 1918, Համառօտ պատմութիւն Կեսարիոյ Նիրզէ գիւղի, առանց տպարանի հիշատակության և տպագրության վայրի, 146 էջ:

- Կուզնեցով Ի. 2007, Համշենահայերի եւ համշիլների մշակույթում պահպանուած պոնտական ժառանգութիւնը, «Համշեն եւ համշենահայութիւն» գիտաժողովի նիւթեր, Երեւան-Պէյրուս, Համազգայինի «Վ. Սէթեան» հրատ., էջ 181-197:
- Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 1986, հ. 1, Երևան, ԵՊՀ հրատ., 992 էջ+993-1008 էջերը՝ լուսանկարներ:
- Հայրապետյան Թ. 2004, Անձրևաբեր և անձրևախափան ծեսերի երկհակադիր ընկալումների շուրջ, Պատմաբանասիրական հանդես, N 3, Երևան, էջ 217-227:
- Հայոց լեզվի բարբառային բառարան 2004, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 3, 426 էջ:
- Հայոց ավանդական ուտեստ 2008, նյութը պատրաստեց Ս. Պողոսյան, Ագրոփզնեսի և գյուղի զարգացման կենտրոն, Երևան, «Ասողիկ», 63 էջ:
- Հարությունյան Հ. 2018, Կաթը և կաթնամթերքը բանահյուսական նյութերում, Պատմություն և մշակույթ, Երևան, էջ 266-375:
- Հովսեփյան Ռ. 2017, Հայաստանի եզդիների «Բուկա բարանե» («Անձրևի հարս») և մյուս անձրևաբեր ծեսերը, Էջմիածին, Ա, էջ 114-146:
- Հովսեփյան Ռ. 2019, Հացահատիկը, անձրևաբեր ծեսերը և վիշապները / Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին, Երևան, ՀԱԻ հրատ., էջ 318-240:
- Ղազարյան Ա. և ուրիշներ 2002, Համբարձում, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, «Տիգրան Մեծ», 1076 էջ:
- Պետրոսյան Է. 2021, Ծիսական տիկնիկի Նարին/Նուրին մականունների ստուգաբանության փորձ, Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն, Երևան, N 2, էջ 59-71:
- Սահակյան Կ., Հովհաննիսյան Ռ. 2012, Հացին առնչվող ժողովրդական պատկերացումներ և հավատալիքներ, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Երևան-Գյումրի, N 15, էջ 80-86:
- Սրուանձտեան Գ. 1874, Գրոց ու բրոց եւ Սասունցի Դաւիթ կամ Միէրի դուռ, Կ. Պոլիս, ԵՄ. Տնտեսեանի տպարան, 192 էջ:
- Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 1967, հ. 4, Թուրքական աղբյուրներ, Գ, Է. Չելեբի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 347 էջ:
- Ֆրեզեր Ջ. 1989, Ոսկե ճյուղը, Երևան, «Հայաստան», 880 էջ:
- Мифы народов мира 2008, Энциклопедия, электронное издание, Москва, «Советская энциклопедия», 1147 с.
- Hovsepian R. 2018, On the rain-related rituals of Tatev village, Armenia. *Herald of the Social Sciences*, Լրաբեր հասարակական գիտությունների, N 3 (654), Yerevan, p. 347-356.
- Hunt M. 2016, The Smithsonian Folklife and Oral History Interviewing Guide, Washington, DC, Smithsonian Institute Center for Folklife and Cultural Heritage, 56 p.
- Winick S., Bartis P., Groce N., Kruesi M., Shankar G. 2016, Folklife and Fieldwork: An Introduction to Cultural Documentation. 4th ed. Publications of the American Folklife Center, no. 3. Washington: DC, Library of Congress Publ, 40 p.

Հավելված

210804-5a/1 (Աշխեն, 65տ, Քարահունջ) - «Մարդ կա, որ անձրև չի գալիս, բերում են սուրբ խաչ, ոչխարի ականջը կտրում են, մատաղ են անում, աղ ու հաց, փլավ են անում, ժողովուրդին բաժանում են, իբր թե անձրևը կյալիս ա»:

210804-5a/2 (Աշխեն, 65տ., Քարահունջ) - «Կաթնավ են անում՝ մատաղ են անում: Մոտակայքում մի կնիկ կար Լենա անունով, էդ կնիկը միշտ տենց անում ա»: Նշում է, որ հիմնականում կաթնովով են մատաղ անում, և որ վերջին անգամ մի քանի, ամենաշատը տասը տարի առաջ են արել:

210804-7a/1 (Ռուզան, 60տ., Ակներ) - «Ան լճից մի քիչ ներքև մեր սարն ա, մենք լյա ընդեղ ենք լյալ, մենք ընդեղ ենք քոն լյալ, մեր կովերը: Հեն ա, տղաս էլ ա ընդեղ: Անասունները տանում են ընդեղ են պահում: Հիմա ընդեղ են: Առաջ ես էլ էի քյում: Դե, էրեխեքը էն ժամանակ հլա փոքր էին, պյան, արանքում քյում էի: Էն ժամանակ, որ քյում էինք սարը, անձրև չէր կյամ, կաթնավ էինք էփյամ, մատաղ... Կաթնավ են իփյում, բրինձով, կաթով: Կաթնավ իփյում են, ասենք, ժողովուրդը հրվաքվում են, ուտում, որ ասենք, անձրև կյա: Տյառնում ա մատաղ են անում, էլի: Կաթնավ մատաղ են անում, որ անձրև կյա»:

210804-7a/2 (Ռուզան, 60տ., Ակներ) - «Հիմա էլ կա. ասենք, էլի գյուղում տեսնում են, որ շատ անձրև չի կյամ, կանայք հավաքվում են, տենց կաթնավ-պյան իփյում են, որ անձրև կյա: Անցած տարի էր, թե նախանցած տարի ստեղ ըրեցին գյուղում: Արալ ըն, էլի, հա, անցած տարի էր, թե նախանցած տարի էր, էլի իփյալ ըն: Մեկի տանը [հավաքվում են], հիմնական տենց տեղ չկա, որ հավաքվեն: Մի քանի հոգով [են հավաքվում]: Ամեն մեկը, ասենք, մի պյան պիտի պիրեր, մատաղի նման որ տյառնա: Յոթ պյանը, որ պիրեն, որ տյառնա մատաղ»:

210804-7a/3 (Ռուզան, 60տ., Ակներ) - «Մարդ կա պետկավ ա օտում էդ կաթնավը, մարդ կա, աղ ա անում: Չէ, էփելուց չէ: Մի տարի, հիշում եմ, մի հատ աղջիկ կար, Սիրվարդը: Ինքը պետկով սիրում էր: Ըոտենց քառասուն կիլոյանոց ղզղանը էփեց, լրիվ պետկ լցրեց մեջը: Դե, ժողովուրդը չկերան կեսը: Հա, էլի էդ անձրևի հետ կապված: Լրիվ պետկ, քաղցր արեց, գիդյաց, թա որ ինքը սիրում ա, լրիվն էլ սիրում են: Ոչ մեկը չկերավ: Երևի մի քսան տարի առաջ: Իրա ճաշակով էր սարքել: Ասենք, մարդ կա, աղով ա սիրում: Աղ ա անում մի քիչ, ուտում»:

210804-7a/4 (Ռուզան, 60տ., Ակներ) - «Կարևորը էն ա, որ յոթ հոգի ուտեն, էլի, մատաղի նման: Ասենք, որ աքլորը, վերցակը մորթում են, մատաղ անում, պիտի յոթ տան պիժանեք: Յոթ հոգի պիտի ուտեն: Յոթ տուն, առանձին տուն պիտի ուտի, որ ասենք, մատաղը...: Մնացածն էլ, ինչքան ուզում են, ուտեն, կարևորը՝ յոթ հոգի ուտեն»:

210804-7ca/5 (c - Սաշիկ, 11տ., a - Ռուզան, 60տ., Ակներ) «...ծեռքիդ փիռնած գնաս հարևանի տուն, առաջինը մեկը անցնի, պիտի տաս իրան», «Հա, մեկ ուրիշին հանդիպում ես, պետք ա տաս իրան»:

210804-7a/1 (Ռուզան, 60տ., Ակներ) - «Ստեղ էլ եմ լսալ, Շինուհայրում էլ, որ քարը շուտ են տամ, որ անձրև գա»:

210804-7a2x (Ռուզան, 60տ., Ակներ) - «Երեխա ժամանակ մենք որ անձրևը շատ էր կյամ, քյում էինք սենց փեղերավ խաչ էինք սարքում, աղը լցնում յիրան անձրևի տակ, որ ասենք, անձրևը կտրվի, որ շատ էր կյամ: Հենց փողոցում խաչ էինք անում, աղը ածում մեջը, որ անձրևը կտրվի, որ շատ էր կյամ»:

210805-1 (Նելլի, 48տ., Գորիս) - Հաստատեց Ակներում անձրևաբեր նկատառումներով կաթնով եփելը:

210805-2d (d - Լարիսա Ավետիսյան, 62տ., Քարաշեն) - Հարցազրույցին (210805-2) մասնակցել է ևս հինգ հոգի՝ Քարաշենի համագյուղացիներից (a - Սևադա, b - Սևադայի դուստր Լիաննա, c - Տիգրան, 30տ., d - Լարիսա Ավետիսյան, 62տ., e - աղջիկ, f - կին), որոնք հաստատում էին գլխավոր բանասացի պատմածը և երբեմն լրացնում էին:

210805-2d/1 - *Պատումի առաջին տարբերակ*. «Ծավարավ կաթնավ էին անում, որ անծրև կյար: Մեր գյուղումը մի ճղուպերի ծառ ունենք: Էդ պոպոքի ծառի տակին կաթսան տիրալ ենք, իփյալ ենք: Հարեվանավ, գյուղումը լրիվ եկալ են: Որ էլ եկյալ չի, ուղարկալ ենք: [Կաթն ու ծավարը] Բոլորը [էին բերում]: Յոթ տանից պիտի պիրին («Յոթ տնից պտի: Մեկը աղը կրոերի, մեկը՝ էն մեկը, մեկը՝ էն մեկը»:», - Սևադա, 210805-2a): Հաճարի ծավար («Մեր մոտ վաքշե հաճարն են օգտագործում որպես ծավար: Ձեր մոտ էն բլղուրը, այանը, որ քնուպում են հատիկը: Տա օրիշ ա: Մեր մոտ դաժե սպասը հաճարի ծավարով են էփում», - Սևադա, 210805-2a): Կաթնավ ա՝ կաթն ա, հաճարի ծավարը: Էփում ես կաթի մեջ: Կաթը որ սկսում ա եռալը, մի բաժակ ջուր էլ ածում ես, որ էփի: Ձավարը մեջին էփի: [Ձավարի] քանակը՝ շատը, քիչ, արդեն դու իմանում ես, էլի... Մի էրկու լիտր կաթին մի բաժակ ճուր էք ածում: Ձավարը էլ մի կես, դե, քիչ էլի, ասենք՝ մի կիծ [=բուռ]: Արդեն որ էփյում ա, պրծնում, նոր աղը քցում ես: Պիտի աղը վերջում քցես, վեր կաթը կտրի վեջ: Յուղավ էլ օտում են: Մաքուր յուղով կերալ ենք: Օգում ես ճիրիկ ինյի՝ պատառ ծավարի քիչ քցի: Հալա պրնծով էլ ենք էփում: Բրնծով էլ... պատառ բրինձը շատ ենք անում, որ թանձր ինյի: Թանձր ինյի, յուղոտ ինյի մեջը: Սիրուն, համով ...Շատ համով ա ինյում, եթե բրնծով իփյում ես, տենց»:

210805-2d/2 - *Պատումի երկրորդ տարբերակ (երբ փորձեցինք պարզել՝ ո՞վքեր են կաթն ու ծավարը հավաքում)*. «Անծրև որ եկալ չի մի ամիս, էրկու ամիս, արդեն ինգյալ ենք տները, կաթ հըվաքալ: Ամեն մեկից մի կիլո, մի լիտր կաթ: Պիրալ ենք, հըվաքալ: Ամբողջ գյուղից: Դե ջահիլները [պետք է հավաքեն]: Պիտի ջահել լիներ: Զահելները հավաքալ են, պիրալ են, մեծը իփյալ ա արդեն: Յոթ տուն էին մտնում: Կարող ա շատ մտնեին: Բայց ասված օրենքով յոթ տուն էին մտնում: Յոթ տնից բերում էին: (Ոչինչ, հինչ օգում ա, ինյի, հինչ կա՞պ օնի տղա հըվաքի, աղջիկ) Ազաբ են իլյալ, հըվաքալ են, պիրալ, մեր տունը: Մեր գյուղի մեծն էլ մեծ կնիկ ա իլյալ, միշտ ինքն ա իփյալ: Թամար տատին սաղ օրը ճղուպերի ծառին տակին իփյում էր: Իփյալ են, նոր հըվաքվալ են Էդ ծառին տակին, как быдто Էդ օրին արդեն քեփ ա իլյալ: Լրիվը եկալ են, նստալ են, կերալ են, խմալ են: Իրոք վեր, իրոք վեր անծրևը եկալ ա: Ա, դե մեծ եմ իլյալ [, որ տեսել եմ]: Հենգ խոխա ա լյալ ինձ, վեր էդ այաները ես հալա անելիս ենք լյալ: Նոր, էս վերջի, էս մի էրկու տարին ա, վեր չեն անում: Ամենավերջը ասեմ քեզ, իլյալ ա տա 2003 թվին: Էդ 2003 թվականին էս որ ասում եմ Թամար տատիկը մեծ կնյեզ էր, մի 80 տարեկան կնյեզ էր, բայց գյեռ (հպարտ) կնյեզ էր: Հա, ամուսին օներ, աման հինչ էլ օներ: Ինքը [բուժ]բույր ա իլյալ: Քուր ա իլյալ, համ տատմար ա իլյալ: Համ տատմար ա իլյալ, համ ամեն հինչ ա իլյալ: Ինքն էլ էս այաներա բուժող կնյիկ ա իլյալ: Ինքը տենց այաները շատ լավ ա գլի-դացալ: Էդ տարին ինքը ըրավ, կերանք-խմեցինք, տրանից հետո արդեն հիվանդացավ: Երկու տարի հետո, տրա հետի եմ հիշում, որ էրկու տարի հետո Թամար տատիկը 2004, 2005 թվին արդեն վատ էր, չէր կարում: Բա էդ եմ ասում՝ 2003 թիվն էր վերջինը...»:

210805-2d/3 - *Պատումի երրորդ տարբերակ (երբ փորձեցինք պարզել՝ արդյո՞ք տիկնիկ օգտագործում էին ծեսում)*. «Ի, ինքն (երկրորդ պատումում նշվող Թամար տատիկն) անում էր [ծեսի համար տիկնիկ էր սարքում], ղաբաբ ա սարքալ, տիկնիկ ա սարքալ, այան արալ: Է՛, հինչ տեղեր ա տարալ, ստե գյուղումը ցուցահանդես-այան ըրալ: Էդ օրը (երաժշտությունը) միցնյում ին, նվագում ին, պար ին կյամ, երգում ին, պա հի՞նչ ին անում: [Տիկնիկը սարքելու համար] Շոր են փթաթալ, կանֆետ են կախ տվալ, խնձոր են կախ տվալ, ...Աստծուն խնդրալ ենք, որ ինքը... Էդ կնիկն ա սարքալ, որ ասում եմ Թամար տատիկը, Թամար տատիկն ա սարքալ: Ծառի ճյուղը յեր էր օնում, սիրուն, գեղեցիկ

սարքում ինքը: Էն թարմը ճղից կտրում էր, գեղեցիկ պատվանդան [հենակմախք ի նկատի ունի] սարքում, սիրուն տերևներ դնում, գեղեցիկ, ամեն հինչը պառավ էր սարքում, պիրում-տինում ծառին տակին դաբաբ պառավ: Ղաբա. դա գյո՞ւմ ե՞ս՝ հինչ ա: Ղաբան³⁴, ստեղերը կախ-կախ ըրած, զանգույակները կախ-կախ ըրած: («Ղաբա՝ ազգային հագուստի մաս», - Տիգրան, 210805-2c) Սարքում, պիրում-տինում տեղ [ճղողպուրի ծառի տակ]: Հույլ էլ կյամ էր, մի պյան էր կախ տամ՝ մի լենթ (ժապավեն) էր կախ տամ, մի պյան էր կախ տամ, հյուր սրտից հինչ տյուա էր կյամ, էլի... Դե, ծառի ճյուղը սարքում էր իրա ճղներավ, հետո ինքը արդեն սիրուն, կանաչ շորերավ կապում էր, կախ էր տամ, սարքում էր: Տերևները, շորերը, կանաչ պյաներավ [շոր] էր սարքում: Կարծեմ խնձորից էր կտրում ինքը, խնձորից, պիրում, սարքում: Բերքատու ծառից էր, էլի, բերում-սարքում:

210805-2a (Սևադա, Քարաշեն) - «Ծիպը [=տոբա, իբրև] մատաղ ա, էլի: Մատաղ են անում, որ [անձրև] կյա»:

210805-2a (Սևադա, Քարաշեն) - «...քըմակը պյաց են ըրալ, եղինջը որ կա, եղինջավ թակալ ըն...»:

210805-2d (Լարիսա Ավետիսյան, 62 տ., Քարաշեն) - «Հորը ըռչնըլն ա, թո [հետույքը կարկուտի տակ] պյաց անի, [եղինջով] թակի, կարկուտը կտրվի»:

210805-4a (Սեդա Փանդունց, 93 տ., Խնձորեսկ):

210805-4a/1 - «Խաճածոլին դե հլե էդ մատաղդ ա, որ ասում են Խաճածոլի: / Խաճածոլի՝ մեր Խնձորեսկի պյանավ ասում էին՝ մեծ-մեծ կանայք ասում էին. «մատաղ ինք անում», «Աստծուն մատաղ ենք անում, որ անձրև կյա»: / Էդ, լա Հին Խնձորեսկան ա եկալ, ալի... / Արդեն վեր տեղափոխվալ ընք, ստեղ էլ ենք անում»:

210805-4a/2 - «Խոխեքը, երեխեքը, ամանը՝ աղջիկ, տղա, ըմըները ծեռքին քինում ին կաթնով հըվաքում, ծավար հըվաքում: Պիրյում տներան, դե ուրանք թաղ էին պիրում լա, դե՝ թաղամաս-թաղամաս, թենց... / Օխտը՝ յոթ տանա կաթըն ալ էին հըվաքում, թե պրինձ - պենը... հատիկ՝ հաճարի հատիկ, ձավար: / Հավաքում են, տյառնում ա թենց մը բան, էլի... / [Հավաքողները] Ոչ մի պյան ո՛չ ասում էին, ո՛չ երգում: Վեր տենց հըվաքվալ են, ասալ են խաճածոլի ենք անում: / [Տվողները] ասում էին՝ բարի ինի, լավ ինի, Աստուծ թո ընթունի, մատաղը Աստված ընթունի, տենց... Մեծ-մեծ կնանիք մեծ-մեծ տենց խոսքերը ասում են, ալի... Հին օրհնության պես մի պյան էր: / Մեծերն ասում են՝ տարին հաջող ինյի, խոխեքը սենց ինյեն, պատերազմը չինյի, խաղաղություն ինյի, հիվանդություն չինյի...»:

210805-4a/3 - «[Ո՞վ էր էփում կաթնովը:] Գյուղի, թաղամասի մեծ կնյեզը, տարիքով կինը, որ էրգյան կյանք տեսած ա: Ճընըպըրումը օջախը սարքում ին, էդ 40 կըլոյանոց ղըզդանը տյունում, յոթ տանա կաթն իրն հըվաքում, թա պրինձ էր ըլնյում՝ բրինձ, թա ըլնում չէր՝ ձավար, հըվաքում էին, ըտեղ էփում էին, նա նհեն խոխեքը, չիմ հըվաքվում ին՝ ըմըները ծեռքին, ածում ին, տանում իրանց»:

210805-4a/4 - «Ավելի շատ [հաճարի ձավար], վեր [բրինձ] իլնյում ա (պրինձը Ղարաբաղան պյանավ են պիրալ), բրինձն ալ են խառնում, հաճարի ձավարն ալ: / Էրկուսը իրա հետ: Մըն հափուր ձավար եմ քցում, մըն հափուր պրինձ: / Էդ ավելի լյավ ա, ավելի քախճըն ա ընյում: / Ծավարը պատառ շուտ են անում, վեր էփյի»:

³⁴ Ղաբա՝ Ղարաբաղի և Գորիսի բարբառով՝ կանացի երկար զգեստ, կապա (Հայոց լեզվի բարբառային բառարան 2004, հ. 3, 343):

210805-4a/5 - «Թաղամասավ հրվաքվում ին, մեծ-մեծ մարդիկը, մեծ-մեծ կնանիքը: Սենց մըն թըղամասով սաղ հրվաքվում ին, ամա մընը ուրան խոսքն էր ասում, ամա մընը ուրան մտածածն էր ասում, ամա մընը ուրան կյանքում կատարածի մասին էր խոսում, որ կյանքում սենց ա, սենց արա: Զրյուցում ին, մենք ալ խոխեք էինք, ալի... Ասում իմ, հին օրհնությունը վեր կա, ընենց խոխեք են բոլորներովը կաղնած, պյան ըրած, իրանք խոսում ին, բան էին անում...»:

210805-4a/6 - «Հըվաքում էին, փողոցումը մե՛ծ դըզղանը տյունում փողոցումը, էփյում, քյունողուն, քյուլողուն, պըտըհողուն ալի տամ, իբր թա Աստծուն մատաղ են անում, վեր անծրև կյա»:

210805-4a/7 - «Ամբողջ թըղամասավ հրվաքվում էինք, քյունում էինք ընդեղ օտում էին: Աման էին տանում, բան, ըսենց, հրվաքվում ին, օտում...»:

210805-4a/8 - «Ասին մատաղ ենք անում, վեր անծրև կյա, կամ մատաղ ենք անում, վեր անծրև կտրե: Նոյն պյան էր... / Վեր վախտը, [որ] անծրև շատ էր կյամ, էլա էդ մատաղը անում ինք, վուր անծրևը կտրի: / Թա երաշտ ա լյալ, ըրալ են անծրև գյա, թա անծրև ա եկալ, ըրալ են, վեր պարզվի: /... , թե երաշտ ա լյալ, ըրալ ըն, որ անծրև կյա: Թե անծրևային ա լյալ, ըրալ են, վեր անծրևը ետ ըլի, պարզվի: ...տարին մըն էրկու հետի ա, էի... Ընթանուր ուրան նըշնակված օր չօնի, գիդացի՞ր: ...գարունն ա էլալ, լի, վեր շատ անծրև ա եկալ, ասալ են անենք, վեր անծրևը կտրե, կամ առաջ տարալ են արտերը սերմած, ասալ են անենք, անծրև կյա: Էդ սեզոնում ա լյալ: Ընթանուր օր չօնի, որ ասեմ ամսու էսքանին իլյալ ա»:

210805-4a/9 - «Չէ, չէ. մեր գյուղումը տենց պյան չի լյալ [որ Խաճածողիի Ժամանակ տիկնիկ սարքեին, ման ածեին գյուղում]: Հա, ես պյաներում տեսալ եմ, բայց մեր գյուղումը... [՝ չէ]: Ես էն, ինչ որ մեր գյուղումը կատարվալ ա, էն եմ ասում: / Տե տանը [տիկնիկ] սարքալ են, բայց ման տալ՝ չէ: Տներումը՝ հա, բայց ման կյալ ես տեսալ չեմ: (210805-4b Սերոժ - «Ե՛վ որպես խաղալիք, և՛ որպես թալիսմանատիպի բանի ձևով սարքել են») / Ըտեց միթավուր պյաները Սիսիանում ա ինյում: Մեր Գորիսի ռայոնում տենց պյաներ ես լսած չեմ: Օրինակ՝ մեր նա Սըսիանի միջի, Սըսիանի ռայոնի միջի մե՛ծ տարբերություններ կա: Նրանց բարբառը շատը թուրքերան ա, քանի վըր ընտեղ թուրքերն ալվի շատ են իլյալ, բայց մեր գյուղում էնքան թորք չի բնակվալ»:

210805-4a/10 - «Կարկուտի Ժամանակ խոխան տյուս են հանում, վեռը պյաց անում, որ իբր թա կարկուտը կտրի: Չէ, էդ կարկուտի Ժամանակ են անում, էդ հեչ...»:

210805-4b (Սերոժ, ~70 տ., Խնձորեսկ)

210805-4b/1 - «Արմատը՝ խաչը ճուլի, ճուլը կոչվում ա կենտրոն: Խաչ և ծոլի, խաչը կենտրոնում: Խաչաճուլի, ինձ ըտենց ա թվում...»:

210805-4b/2 - «Ա՛յ, մորքուր [210805-4a], ես հիշում եմ՝ պապան ինձի, էսքան խոխա եմ իլյալ, փռնած տարալ ա Սիպտակ կյումին³⁵ առաջը, տարալ ա ինձ մատաղի: / Ինձ տանում էին, տանում էին, որ ես էլ մասնակցեմ էդ մատաղին: Ասում ա՝ «Երեխաները որ մատաղին մասնակցում են, մատաղի հզորությունը ավելանում ա»: / Մեծերն էլ են մատաղ կիրալ: Մեծերը նստած, էդ կաթնավը մեծերն էլ են կերել: Կերել են ու խաչ քաշել (որտեղ պատահի): Ինչ լինում ա, խաչ են դրել: Փայտ են դրել... / Ով կարողացել ա, մի խաչի նշան արել են: Որտեղ պատահի»:

³⁵ Հին Խնձորեսկի գյուղամեջին ասել են Սպիտակ գոմ: Այն եղել է գյուղի հավաքատեղին (210805-4b, Սերոժ, Խնձորեսկ):

«ԿԱԹՆԱՎՈՎ ՄԱՏԱՂ»՝ ԱՆՁՐԵՎԱՐԵՐ ԵՎ ԱՆՁՐԵՎԱՒԱՓԱՆ ԾԵՍ ՍՅՈՒՆԻՔՈՒՄ

Ռոման Հովսեփյան, Հասմիկ Աբրահամյան

Ամփոփում

Եղանակի կարգավորման ծեսերից շատերը, մասնավորապես անձրևի ծեսերը, իրենց բնույթով զոհաբերություն են, բայց, բացառությամբ կենդանիների մատաղների, մեր օրերում մատաղ (զոհաբերություն) չեն կոչվում և որպես այդպիսին չեն գիտակցվում: Սյունիքում մեր ազգագրական հետազոտությունների ընթացքում Գորիս և Տեղ համայնքներում գրանցել ենք մի երկակի գործառույթով՝ անձրևաբեր-անձրևախափան ծես՝ «կաթնավով մատաղը», որը բառացիորեն անվանվում և ընկալվում է որպես մատաղ: Զոհաբերվող կաթնովը, որի պարտադիր բաղադրիչները հացահատիկը (հաճար կամ բրինձ) և կաթն են, վկայում են, որ այս զոհաբերության ծեսում գործում է զոհ դրա բազմակի դիմաց սկզբունքը, և ակնկալվում է երկրագործական և անասնապահական արտադրանքների՝ հացահատիկի և կաթի առատություն: Ըստ մեր վերլուծությունների՝ այս ծեսը իր գոյության վաղ շրջաններում հավանաբար տիկնիկով ծեսի մաս է եղել, սակայն հետո առանձնացել է և շարունակվել որպես ինքնուրույն ծես: Անձրևաբեր ծեսերը (մասնավորապես տիկնիկ պտտեցնելու և կաթնով եփելու ծեսերը) և Համբարձման կաթնով եփելու ծեսը իրենց բնույթով մատաղ են և ունեցել են բերքառատություն ապահովելու գործառույթ:

Բանալի բառեր՝ անձրևաբեր, անձրևախափան, ծես, կաթնով, մատաղ, Սյունիք, հացահատիկ:

«КАТНАВОВ МАТАГ» – ОБРЯД В СЮНИКЕ ВЫЗЫВАЮЩИЙ И ПРЕКРАЩАЮЩИЙ ДОЖДЬ

Роман Овсебян, Асмик Абраамян

Резюме

Многие обряды регуляции погоды, особенно обряды дождя, связаны с жертвоприношением. В ходе этнографических исследований в Сюнике, в общинах Горис и Тег, нами был зафиксирован обряд «молочного жертвоприношения», имеющий двойную функцию: он вызывает и предотвращает дождь. Обряд называется «матаг» и воспринимается как жертвоприношение. Жертвенный молочный суп, обязательными компонентами которого являются зерновые (полба и/или рис) и молоко, доказывает, что в этом ритуале действует принцип – чем жертвуешь, того и ожидаешь: обилие зем-

ледельческих продуктов и продуктов животноводства – зерновых и молока. На ранних этапах своего существования этот ритуал, по всей вероятности, являлся частью ритуала вращения куклы в селе. Однако в дальнейшем он стал самостоятельным ритуалом. Дождевые ритуалы, в частности ритуал вращения куклы по селу и ритуал молочного супа (в том числе и во время праздника Вознесения), по сути, представляют собой жертвоприношение/матэг с определенной функциональной направленностью – обеспечение плодородия.

Ключевые слова – вызывание дождя, прекращение дождя, обряд, молочный суп, жертвоприношение, Сюник, зерно.

"KATHNAVOV MATAGH" – RAIN-MAKING AND RAIN-STOPPING RITUAL IN SYUNIK

Roman Hovsepyan, Hasmik Abrahamyan

Abstract

Երկրագործ մարդն իր գործունեության ողջ ընթացքում ծեսերով, արարողություններով և սովորույթներով ծիսական բանահյուսության մեջ ձևավորել և զարգացրել է տարվա եղանակներով պայմանավորված հստակ կրոնաբարոյական աշխարհայացք: Ժողովրդական տոնացույցի բանահյուսության ուսումնասիրության շնորհիվ որոշարկվում է առանձին տոների տեղն ու դիրքը. ուշագրավ է, որ երկրագործական ամբողջական տարեպտույտում (ցիկլ) ընդգծվում է հացի բացահայտ դերը: Հացի հետ կապված սովորույթները ծիսական բանահյուսության մեջ ունեն պաշտամունքային նշանակություն, որոնք, հիմնվելով խոսքի կամ գործողության հմայական զորության հավատալիքի վրա, զուգորդվում են արարման առասպելին:

Բանալի բառեր՝ բանահյուսություն, ցորեն, ծես, խորհրդանիշ, հաց, տոնացույց, ոգի:

ХЛЕБ В ОБРЯДОВОМ ФОЛЬКЛОРЕ АРМЯНСКОГО ЗЕМЛЕДЕЛЬЧЕСКОГО КАЛЕНДАРЯ

Алина Киракосян

Резюме

В процессе земледельческой деятельности человека формируется и развивается целостное религиозно-нравственное мировоззрение благодаря четырем временам года, что находит свое выражение в народно-земледель-

ческом календаре, содержащем данные об обрядах, церемониях, обычаях и обрядовом фольклоре. Изучение фольклора народного календаря примечательно не только с точки зрения выяснения места и значения отдельных праздников, но и абсолютного доминирования роли хлеба в полном земледельческом цикле. В армянском обрядовом фольклоре обычаи, связанные с хлебом, имеют культовое содержание, которое, основываясь на вере в магическую силу речи или действия, сочетается с мифом о сотворении.

Ключевые слова – фольклор, пшеница, обряд, символ, хлеб, календарь, дух.

SYMBOLIC MANIFESTATIONS OF BREAD IN THE ARMENIAN ORAL TRADITION

Alina Kirakosyan


Abstract

In the process of human agricultural activity, a holistic religious and moral worldview is formed and developed due to the four seasons, which is reflected in the national agricultural calendar, containing data on rituals, ceremonies, customs and folklore. The study of the folk calendar is remarkable not only from the point of view of clarifying the place and significance of individual holidays, but also the absolute dominance of the role of bread in the full agricultural cycle. In the Armenian ritual folklore, the customs associated with bread have a cultic content, which, based on the belief in the magical power of speech or action, is combined with the myth of creation.

Key words – folklore, wheat, ceremony, symbol, bread, calendar, spirit.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ, Զմյուռնիայի և Էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթօջախները (XVI-XIX դ. I կես), Ե., «Գիտություն», 534 էջ+նկ.



Վաստակաշատ պատմաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Արմենակի Խառատյանը ժամանակ առ ժամանակ հայ պատմագիտական միտքը համալրում և հարստացնում է նոր, մնայուն ու հիմնարար գործերով:

Օրերս ընթերցողի սեղանին դրվեց նրա վերջին տարիների գիտական պրպտումների արդյունքը՝ «Զմյուռնիայի և Էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթօջախները (XVI-XIX դ. I կես)» վերնագրով:

Խնամքով և գեղեցիկ ձևավորված այս գիրքը լույս է ընծայել ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը: Այն հրատարա-

կության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտխորհուրդը, գիտական խմբագիրն է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա.Ա. Մելքոնյանը:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, հինգ ծավալուն գլուխներից (որոնք, իրենց հերթին, բաժանվում են ենթագլուխների), վերջաբանից, հավելվածից, մատենագիտական ցանկից, անվանացանկից:

Հեղինակը ներածականում իմաստավորում և կարևորում է սույն ուսումնասիրության հրատապությունն ու արդիականությունը, նշում, որ փոքրասիական արևմուտքի հայկական գաղթօջախները հնագույններից են սեփական բնօրրանի սահմաններից դուրս ապրած հայ հանրությունների մեջ: Նա արժանին է հատուցում այս թեմայով ուսումնասիրություններ կատարած հայ և այլազգի գիտնական-հետազոտողներին (Հ. Գելցեր, Հ. Բարթիկյան, Գևորգ Ասլան, Վ. Միքայելյան, Պ. Չարանիս, Բ. Սլարս, Հ. Քոսյան, Գր. Կամախեցի, Ա. Դավրիժեցի, Ղ. Ալիշան, Հ. Դիմաքսյան, Մակար վարդ. Բարխուտարյան, Աբրահամ Այվազյան, Հակոբ Քոսյան, Տիգրան Սավալանյան, Արշակ Ալպոյաճյան, Հրանտ Ասատուր, Մաղ. Արք. Օրմանյան, Գ. Գալուստյան, Ս. Ծոցիկյան, Ռիչարդ Հովհաննիսյան, Սեպուհ Ասլանյան և այլք):

Ա. Խառատյանը գիտական մեծածավալ գրականության՝ պատմագիտությանը և հարակից գիտություններին վերաբերող բազմաթիվ փաստերի, տվյալների, հայ և օտար պատմագիտական մտքի վերջին նվաճումների քննական համադրությամբ տալիս է հինավուրց Զմյուռնիայի հայ գաղթօջախի կենդանի ու ճշմարտացի նկարագիրը՝ սկսած վաղ ժամանակներից մինչև XIX դ. առաջին կեսը:

Առաջին գլխում («Զմյուռնիայի հայ գաղթօջախը») ներկայացված է Զմյուռնիան քաղաքակրթությունների պատմության միջով գիտական ծավալուն ակնարկը: Ըստ այդմ, քննվում է վաղնջական ժամանակներից եկող Զմյուռնիա քաղաքի պատմության սկիզբը՝ որպես հին հունական քաղաքակրթության ու դրա զարգացման արդյունք: Հիմնավոր կերպով փաստարկված տեղեկություններ են հաղորդվում այն մասին, որ Զմյուռնիան հիշատակվում է Հերոդոտի և Ստրաբոնի կողմից: Այն անվանակոչվել է Սմիրնա՝ ամազոնուհու պատվին: Իր աշխարհագրական ու տնտեսական բարենպաստ կացության շնորհիվ համալրել է հոնիական քաղաք-պետությունների շարքը (մ.թ.ա. VII դ.)՝ պահպանելով հոնիական անվանաձևը:

Այնուամենայնիվ, մի քանի հարյուրամյակ, կապված հունական քաղաք-պետությունների քաղաքական վայրէջքի հետ, հրաշագեղ ու ծովանիստ Զմյուռնիան կորցնում է իր ազդեցիկ նշանակությունը Էգեյանի քաղաքակրթական համակարգում: Մասամբ այն վերականգնվում է Ալ. Մակեդոնացու կողմից նվաճվելուց հետո: Հռոմեական դարաշրջանում քաղաքը մտնում էր կայսրության կազմի մեջ՝ վերածվելով պրոտեկտորատի:

Ներկայացնելով քաղաքի և նրա շուրջ ծավալված պատմաքաղաքական անցուդարձը՝ հետազոտող գիտնականը նշում է, որ Զմյուռնիային նոր փորձություններ պետք է պարտադրեին սելջուկներն ու հետագա դարերում սույն տարածաշրջանում չդադարող ռազմական առճակատումները:

Բազմաթիվ փաստերի համադրությամբ առավել ճշգրիտ ու առարկայական է դառնում Զմյուռնիայում և հարակից տարածքներում միջնադարի տարբեր փուլերում հայահոծ մշտական բնակչության առկայության խնդիրը:

Իհարկե, կրկին շեշտվում է այն հանգամանքը, որ Էգեյան ծովի մերձափնյա գաղթօջախների առաջացումը կապված է հայ ժողովրդի դժնդակ պատմական ճակատագրի, հայրենի եզերքներից հարկադրյալ գաղթելու իրողության հետ: Հունական ու հայկական աղբյուրներից առած բազմաթիվ փաստերի հստակ ու հմուտ համադրությամբ հեղինակը որոշակի ճշգրտումներ է անում Էգեյանի առափնյակում հայկական համայնքների կազմավորման ժամանակագրությանը վերաբերող հարցերում: Կարևոր ճշգրտումներով հարստացվում են նաև միջնադարի հետագա ժամանակաշրջաններում հայրենիքից դեպի Էգեյանի ափերը

հայ բնակչության տեղաշարժի ուղիներն ու նոր վայրերում հաստատվելու կայանները: Օրինակ, XVIII դ. 30-40-ական թթ. և մինչև նույն դարի կեսերը շարունակվում էին գաղթերը Արևելյան Հայաստանի տարբեր հատվածներից՝ Սյունիքից, Նախիջևանից, Արարատյան դաշտավայրից: Այս ամենը լրացվում և կոնկրետատացվում է հայ ներգաղթյալների հայրենիքին առնչվող աղերսներով, իրադարձություններով ու մանրամասնություններով:

Երկրորդ գլխում («Գաղթօջախները՝ Էջմիածնի թեմ») բացահայտվում են այն կապերն ու հարաբերությունները, որ ունեցել են Զմյուռնիայի և Էգեյանի առափնյա մյուս գաղթօջախները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ: Հստակեցվում է այն ժամանակահատվածը, երբ Զմյուռնիան ավանդաբար համարվել է Էջմիածնի տերունի թեմը: Մանրամասնություններ են հաղորդվում տերունի թեմի (վիճակ)՝ որպես Էջմիածնի վարչական կառույցի մասին. նրա տրոհումը ավելի մանր միավորների (քաղաքներ, գյուղախմբեր, բնակավայրեր), որոնց բոլորին էլ հովվում էր առաջնորդ-նվիրակը: Նշվում է, որ Զմյուռնիայում, ինչպես մյուս թեմերում, առաջնորդն օժտված էր կաթողիկոսի ներկայացուցչի ընդարձակ լիազորություններով, որը տնօրինում էր հոգևոր գործերի ամբողջ համալիրը՝ սկսած քահանա ձեռնադրելու իրավունքից մինչև հոգևոր հարկերի ու տուրքերի գանձումն ու վերահսկողությունը: Նրա վերահսկողության և հոգևոր, մասամբ նաև աշխարհիկ հոգաժողության ներքո էր թեմի ամբողջ ժողովուրդը: Անդրադարձ է կատարվում եկեղեցական հարկերի և տուրքերի հավաքագրման գործում նվիրակների թույլ տված չարաշահումներին, որոնք մերթ ընթ մերթ փորձում էին կանխել Մայր Աթոռի գահակալները: Անգեն աչքով նկատելի էին նաև այն պայքարն ու մրցակցությունը, որ ընթանում էին Ս. Էջմիածնի և մյուս աթոռների միջև՝ հանուն այնպիսի հարուստ թեմի, որպիսին Զմյուռնիան էր: Իսկ Կ. Պոլսի պատրիարքները, հաճախ օգտվելով քաղաքական ու պատերազմական խառնակ իրավիճակներից, երբ խզվում էր հաղորդակցությունը Պարսկաստանի և Թուրքիայի միջև, ձգտում էին Զմյուռնիայի թեմը միավորել Կ. Պոլսի պատրիարքությունը:

Այս և այլ կարգի կրոնաեկեղեցական հարաբերությունների վերաբերյալ բազմաթիվ փաստեր ու վկայակոչումներ են արված՝ տարբեր աղբյուրներից մեջբերված և համադրված: Նորանոր իրողություններ են ի հայտ գալիս, շրջանառության մեջ դրվում հետաքրքիր և բովանդակալից նոր փաստեր, դեպքեր, պատմություններ:

Նույնպիսի հետաքրքրությամբ են ընթերցվում այս ծավալուն աշխատության մյուս գլուխները (գլուխ 3. «Էգեյանի այլ գաղթօջախներ. տնտեսությունը առափնյակում», գլուխ 4. «Ներհամայնքային կյանքը Զմյուռնիայում», գլուխ 5. «Մշակույթը գաղթօջախներում»), որոնցում ուսանելի նյութ է ամբարված՝ խորհրդա-

ծուփյունների, վերլուծությունների, զուգահեռումների, դիտարկումների վիթխարի պաշարներով լեցուն: Անվանի պատմաբանը գիտական անաչառությամբ ու բարխղճությամբ է հետազոտում սույն թեմային առնչվող և դրա շրջանակում դիտարկվող յուրաքանչյուր խնդիր ու հիմնահարց՝ դրանք քննության առնելով բազմակողմ հայեցակետերով:

Ասենք, որ Զմյուռնիայի և Էգեյան ծովի առափնյակի հայկական մյուս գաղթօջախների մասին պատմող սույն աշխատությունը կենդանի ու բաբախուն գործ է, որը երկխոսության է մղում ընթերցողին այլևայլ հարցերի առնչությամբ: Պատճառը նաև այն յուրատիպ ոճն է, որը բանեցնում է պատմաբան, բանասեր և հրապարակախոս գիտնականը իր մնայուն գործը կերտելիս:

Բազմաթիվ են սույն գրքի առավելությունները: Ժամանակագրական առումով աշխատությունը վիթխարի ժամանակահատված է ընդգրկում, թեև վերնագրված է XVI-XIX դ. առաջին կեսի պարփակումով:

Վերջաբանում հեղինակը կատարում է հետևյալ եզրահանգումները.

1. Փոքրասիական արևմուտքի հայկական գաղթօջախները հնագույններից են առհասարակ հայրենիքից հեռու կազմավորված հայ հանրությունների պատմության մեջ: Էգեյանի արևմտյան հատվածի հայկական հնագույն գաղթօջախը համարվում է Պերգամոն (Բերգամա) քաղաքը, որտեղ հայրենիքից տարագրյալ հայերը ապաստան են գտել դեռևս VI-VII դդ.: Պարսկական տիրապետության դեմ Վարդան Մամիկոնյանի (Կարմիր Վարդան) գլխավորած ապստամբության պարտությունից հետո ըմբոստ հայ նախարարներն իրենց ռազմական ուժով և գերդաստաններով ապաստան գտան բյուզանդական իշխանությունների տրամադրած այդ քաղաքում:

2. Էգեյանի տարածքում հայ գաղթօջախների առկայությունը կապված է նաև բյուզանդացիների կողմից թոնդրակեցի աղանդավորներին Հայաստանից գաղթեցնելու իրողության հետ (XI դար):

3. Զմյուռնիան և տարածաշրջանի հայ գաղթօջախները նոր գաղթականություններով համալրվեցին XVI դ. վերջերին և XVII դ. առաջին տասնամյակներին, երբ ջալալիների ապստամբությունների, սովի, մոլեգնող թուրք-պարսկական պատերազմների պատճառով բազմաթիվ փախստական հայեր բնաշխարհի արևմտյան և արևելյան հատվածներից անցան Միջերկրականի և Էգեյանի կղզիներն ու առափնյա տարածքները:

4. Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ գաղթերը Սյունիքից և Արևելյան Հայաստանի այլ շրջաններից դեպի Էգեյանի առափնյակ, սկսվելով XV-XVI դդ., շարունակվել են ընդհուպ XIX դ. սկիզբը, որոնք պայմանավորված են մայր հայրենիքում տիրող սոցիալական ծանր կացությամբ և անապահով,

անպաշտպան իրավիճակով, ինչպես նաև շարունակվող գաղթերի սովորույթային տրամաբանությամբ:

5. Էգեյանի համայնքների պատմության բաղկացուցիչ մասն է կազմում նրանց եկեղեցիների, հատկապես Զմյուռնիայի եկեղեցիների պատմությունը: Զմյուռնահայերի առաջին եկեղեցին հիշատակվում է 1625 թ. (Ս. Ստեփանոսը), իսկ 1842 թ.՝ երկրորդ եկեղեցին՝ Ս. Գր. Լուսավորիչը: Զմյուռնիայի և նրա մերձակայքի հոգևոր ղեկավարումը մինչև XVII դ. 10-ական թթ. իրականացնում էր Ս. Էջմիածինը: Զմյուռնիայի և Օսմանյան Թուրքիայում էջմիածնական մյուս տերունի թեմերը վերացվեցին 1825 թ., Բ. դռան նոր քաղաքականության հետևանքով:

6. Գաղթօջախներում հայերը մշակում էին պետական, կրոնական ու բարեգործական հաստատությունների սեփականության հողերը: Հողի մշակությունը փոխհատուցվում էր պետականորեն ամրագրված հարկերով, որոնց միանում էին առանձին խումբ կազմող՝ եկեղեցուն տրվող հարկերն ու տուրքերը:

Հայ արհեստավորները մտնում էին էսնաֆական կազմակերպությունների մեջ՝ պահպանելով իրենց ազգային ու կրոնաբարոյական ավանդույթները: Կային հացագործների, երկաթագործների, կաշեգործների, ներկարարների, կտավագործների և շատ այլ միավորումներ, որոնք արհեստակիցներին վերաբերող խնդիրները քննարկում և լուծում էին էսնաֆի մեծ ժողովում: Գաղթօջախներում արհեստավորության հետ միասին սոցիալական նշանակալի դեր ուներ նաև վաճառականությունը, որը գործուն մասնակցություն է ունեցել Սև և Միջերկրական ծովերի միջև ընկած առևտրական ուղիներում և դրանցից այն կողմ՝ Էգեյանի առափնյակն ընդգրկող տարածքների ապրանքափոխանակության ասպարեզում:

Զմյուռնիայի հայ վաճառականները գործակցում էին Վենետիկի, Ջենովայի, Իտալիայի այլ քաղաքների առևտրական տների հետ: Ի տարբերություն իտալական առևտրահրապարակների հյուրընկալության, հայ առևտրականների փոխհարաբերությունները հարթ ու խաղաղ չեն ընթացել ֆրանսիացի վաճառականների հետ: Դա պայմանավորված էր Ֆրանսիայի արտաքին առևտրի՝ Լևանտում մենաշնորհային դիրքեր նվաճելու ձգտումներով:

XVII-XVIII դդ. զմյուռնահայ վաճառականությունն իր դիրքերն ամրապնդել է հոլանդական ապրանքաշրջանառության մեջ՝ Մարսելի նավահանգիստն օգտագործելով որպես տարանցիկ կայան: XIX դ. առաջին կեսին առավել շոշափելի են դարձել Զմյուռնայի հայ վաճառականների կապերը Անգլիայի առևտրականների և Լևանտում գործող անգլիական առևտրական ընկերությունների հետ:

7. Հինավուրց ավանդույթներ ունի Զմյուռնայի և հայկական մյուս գաղթօջախների ստեղծած հոգևոր և նյութական մշակույթը: Վերոնշյալ գաղթօջախ-

ները (Զմյուռնիա, Այասուք, Բերգամա, Մանիսա, Թուրգութ) եղել են հայ միջնադարյան գրչության կենտրոններ: Ամենահինը Եփեսոսում «Այասուք» 1622 թ. գրչագրված Ավետարանն է՝ իր հին հիշատակարանով: Գաղթօջախներում ընդօրինակվել է կրոնական գրականություն՝ Ավետարան, Սաղմոսարան, Հայսմավուրք, մեկնություններ և այլն:

8. Սույն գաղթօջախներում կանոնավոր հիմքի վրա էր դրված կրթական գործի կազմակերպումը: XVIII դ. 70-ական թթ. հիմնադրվում է Զմյուռնիայի հայության առաջին կանոնավոր կրթական հաստատությունը՝ ապագա «Ս. Մեսրոպյան» հռչակավոր վարժարանը, որը XIX դ. առաջին քառորդին եղել է «Մայր դպրատուն» անվամբ: Առափնյակի բոլոր գաղթօջախները համախմբվել էին «Մայր դպրատուն» շուրջը: Անշուշտ, հետագայում ստեղծվեցին տեղական կանոնավոր վարժարաններ:

Զմյուռնահայ դպրոցների պատմության մեջ հիշատակելի են նաև Մ. Աղաբեկյանի և Մ. Մամուրյանի հիմնած «Աղեաբեկյան» երկսեռ դպրոցը, ինչպես նաև Տ. Սավալանյանի դպրոցը (1850-ական թթ.):

9. Զմյուռնիայում բարձր զարգացման հասավ գրատպությունը: Այն սկզբնավորվել է Մահտեփ Մարկոսի գործունեությամբ (1759-1762 թթ.): XIX դ. 40-50-ական թթ. տպագրական գործն ընդլայնվեց նոր տպարանների հիմնադրումով, որոնցից էին «Ս. Մեսրոպյան» վարժարանի տպարանը (1841 թ.) «Պ. Թաթիկյան» վիմագրատունը (1839 թ.), Ստ. Պապոյանի տպարանը (1843 թ.) և այլն: Տպագրական գործը նպաստեց պարբերական մամուլի, թագմանական գրականության (ֆրանսերենից և անգլերենից), թատերական և հրատարակչական ոլորտների առաջընթացին:

10. XIX դ. 40-50-ական թթ. Զմյուռնիայում հրատարակվող հայերեն պարբերականներից առաջինը ամերիկյան բողոքականների «Շտեմարան պիտանի գիտելեաց» կրոնաբարոյախոսական հանդեսն էր (տպագրվել է 1839-ից, խմբ.՝ Հ. Հալլոք և Գ. Գրիֆիտ), իսկ ազգային բովանդակությամբ առաջին լրագիրը՝ «Արշալոյս Արարատեան»-ը (1840-1884, հիմնադիր խմբագիր՝ Պ. Պալդազարյան):

Պահպանողական ուղղության կրողն էր զմյուռնահայ մյուս պարբերականը՝ Խ. Մելիքսեղյանի խմբագրությամբ հրապարակվող «Հայրենասէր» շաբաթաթերթը: Լուսավորական ուղղվածություն ուներ Տետեյան եղբայրների խմբագրած «Արփի Արարատեան» ամսագիրը (1853-1855 թթ.): Վերջինս արտացոլում էր ուսման և կրթության ոչ միայն տեսական-իմացական, այլև գործնական բովանդակության պահանջները՝ ձգտելով եվրոպական քաղաքակրթության նվաճումները տարածել հայ ազգի սոցիալական բոլոր հատվածների մեջ:

Ուրեմն, եթե հանրագումարի բերենք ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանի ուսումնասիրության թեմատիկ և բովանդակային եզրահանգումները, կարող ենք նշել, որ անվանի պատմաբանը այս արժեքավոր աշխատությամբ նոր եզրեր է բացում հայ պատմագիտական մտքի հետագա զարգացման համար: Գրքում ընդգրկված վիթխարի նյութը ամփոփված է ժամանակագրական մեծ ծավալի մեջ և ունի աղբյուրագիտական հարուստ բազա: Պատմագիտական հմուտ վերլուծությամբ քննության են առնվում ոչ միայն բուն թեմայի՝ Զմյուռնիայի և Էգեյանի առափնյակի հայկական գաղթօջախներին, այլև նրանց մերձավոր կամ հեռավոր կերպով աղերսվող ու զուգահեռվող բազմաթիվ և բազմապիսի հարցեր ու խնդիրներ:


Դրանք բազմակողմանիորեն լուսաբանվում ու մեկնաբանվում են հարակից հայեցակետերով և գտնում են իրենց սպառիչ հիմնավորումն ու լուծումը:

Քիչ է ասել, թե Ալբերտ Խառատյանի աշխատությունը հանրագիտաբանային արժեք ու նշանակություն ունի, քանզի այս հաջողված պատմագիտական երկը պարունակում է բազմաթիվ ու բազմազան գիտելիքներ, թվեր, փաստեր դեմքերի ու դեպքերի և իրադարձությունների վերաբերյալ, բացահայտում է տվյալ դարաշրջանի պատմական զարգացման տրամաբանությունն ու միտումները: Այն իր բարձրացրած խնդիրների և հարցադրումների կարևորությամբ մշտապես լինելու է մասնագետների, ինչպես նաև հայոց պատմության ուսումնասիրությամբ զբաղվողների և ընթերցող լայն հասարակայնության ուշադրության առանցքում:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ, Ամերիկահայոց բանավոր ավանդույթը ժամանակի հոլովոյթում, խմբ.՝ Ս. Հարությունյան, անգլ. թարգմ.՝ Տ. Ծովիկյան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Ե., «Գիտություն» հրատ., 2021, 904 էջ, DVD+քարտեզ:



Ընթերցողի սեղանին է դրվել մի չափազանց արժեքավոր աշխատություն՝ հայագիտության խոշոր երախտավոր, բանագետ, բանահավաք, ցեղասպանագետ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, բ.գ.դ. Վերժինե Սվազլյանի հեղինակությամբ: «Ամերիկահայ բանավոր ավանդույթը ժամանակի հոլովոյթում» գիրքը լույս է տեսել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ: Խմբագիրն է վաստակաշատ բանագետ Սարգիս Հարությունյանը: Այն համալրում է Վ. Սվազլյանի ցեղասպանագիտական և բանագիտական բարձրարժեք աշխատությունների շարքը:

Աշխատությունն առաջին ամբողջական փորձն է՝ ներկայացնելու հայկական սփյուռքի խոշորագույն համայնքներից մեկի՝ ամերիկահայերի բանավոր ավանդույթը: Սխալ կլինի այն սոսկ ժողովրդական նյութերի ժողովածու անվանելը (թեև գրքի առյուծի բաժինը Վերժինե Սվազլյանի, մասամբ նաև Քնարիկ Ավագյանի՝ ամերիկահայ բանասացներից գրառած բանավոր պատմություններն են, բանահյուսական և ազգագրական նյութերը): Ըստ էության, աշխատանքը հետազոտական բնույթ ունի. երեք բաժիններից մեկը գրառված նյութերի բավական ընդարձակ ուսումնասիրություն է, որը լույս է տեսել կից անգլերեն թարգմանությամբ՝ դիտարկելով օտարալեզու ընթերցողին ներկայանալու գործը, երկրորդ մասն ամբողջապես ամերիկահայերից գրառված ժողովրդական բնագրերն են՝ գիտականորեն դասակարգված ըստ տեսակների և ժանրերի, իսկ երրորդ մասում այս սկզբնաղբյուրների փաստագրական-տեղեկատվական ցուցիչներն են:

Հետազոտական հարուստ հարցադրումներ են արված գրքի առաջին բաժնում՝ «Պատմաբանագիտական ուսումնասիրություն» վերնագրով, որի չորս մասերում, հիմնվելով պատմական տեղեկությունների և գրառված հսկայածավալ նյութի հետազոտությունից ստացված տվյալների վրա, շարադրվում է ամերիկահայ համայնքի պատմությունը, ներկայացվում են բանասացները, նրանց ան-

ցած ուղին և գրառված նյութերը: 206 բանասացների սեռատարիքային խմբերի համեմատական վերլուծությունը և նրանցից գրառված 1165 միավոր նյութի քննությունը քանակական մեթոդով թույլ են տալիս ուրվագծել ամերիկահայ բանավոր ավանդույթի կրած փոփոխությունները ժամանակի ընթացքում: Այս առումով շատ խոսուն է գրքի վերնագիրը, քանի որ կուտակված ժողովրդական նյութերը գրի են առնվել տարբեր տարիներին Ամերիկա կատարած հինգ ուղևորությունների ընթացքում՝ 1979, 1990, 2001, 2004, 2008 թթ.: Հետևաբար այսպիսի ընդհատումներով գրառված նյութերի համադրումը բանագետին թույլ է տվել հետևել ամերիկահայերի բանավոր ավանդության քանակական և որակական փոփոխությունների գործընթացին **Ժամանակի հոլովոյթում**: Գրառված ժողովրդական նյութերի ժանրային, թեմատիկ և գաղափարական առանձնահատկությունների քննությամբ Վ. Սվազյանը ցույց է տալիս այդ բանավոր ավանդության աստիճանական ձևափոխումը, օտար ազդեցությունների ենթարկվելն ու ուժացման ցավալի գործընթացը:

Աշխատանքի երկրորդ գլուխն ուշագրավ ենթաբաժիններով է ներկայացվում: Գրառված և կուտակված ողջ նյութը Վ. Սվազյանն անվանում է «Սկզբնաղբյուրներ»՝ առանձնացնելով պատմական, բանահյուսական և ազգագրական սկզբնաղբյուրների բաժինները, ինչպես նաև երգերի նոտագրությունները (նոտագրողներ՝ Ալինա Փահլանյան, Մանուկ Մանուկյան, Կարո Չալիկյան): Առաջին բաժինն ընդգրկում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ ամերիկահայ բանասացների անձնական և ընտանեկան հուշապատումներն ու վկայություններն ամփոփող փաստավավերագրական հսկայական նյութ, որ ներկայացնում է հետեղեռնյան ողբերգական շրջանում Ամերիկա գաղթելու և այդ ճանապարհին կրած փորձությունների ծանր պատմությունները: Պատմական այս սկզբնաղբյուրներն արվում են որոշակի դասակարգմամբ՝ ականատես վերապրողների հուշ-վկայությունների, զրույց-վկայությունների և ուղղակի ժամանակակիցների հարցազրույցների առանձին բաժիններով:

Բավական հարուստ ժանրային ստորաբաժանումներով է տրված բանահյուսական սկզբնաղբյուրների մասը: Վիպական բանահյուսությունն ընդգրկում է ավանդազրույցներ, հեքիաթներ, առակներ, կենդանական, բարոյախրատական, պատմական, կենցաղային և զավեշտական զրույցներ: Ավանդական սյուժեների կողքին վիպական բանահյուսության այս ժանրերում առկա են նաև նոր միջավայրի ազդեցությամբ ստեղծվածները, որտեղ գեղարվեստական արտացոլում են ստացել Ամերիկայում հայի առջև ծառացած խնդիրները, դրանց շուրջ մտորումները կամ երգիծանքի լեզվով քննադատությունը:

Քնարական բանահյուսության բաժինն սկսվում է պատմական երգերով, որոնք բանահյուսական արտահայտությունն են վկայություններում տեղ գտած

ցավոտ խնդիրների: Երգ-վկայությունները, որբի և որբանոցի երգերը, ինքնապաշտպանական հերոսամարտերի երգերը, հայրենագրկումի, պանդխտության, պահանջատիրության, հայրենադարձության երգերի բնագրերն արտացոլում են եղեռնի և դրան հաջորդող տարիների պատմական իրադարձությունները, ցեղասպանության անդառնալի հետևանքներն ու այդ հետևանքները հաղթահարելու հուսահատ և համառ փորձերը եղեռնից մազապուրծ հայության կողմից: Քնարական բանահյուսության մյուս բաժնում ներկայացված են ամերիկահայ կյանքի երգերը, որտեղ ավանդական ժողովրդական խաղիկների, սիրո և ուրախության, կենցաղի և խնջույքի («քեֆ-թայմ») երգային բնագրերում հայտնվում են նոր կյանքին ու միջավայրին բնորոշ՝ հայրենիքից հարսնացու գտնելու դժվարության, դուլարի գերիշխող ազդեցության, ժամանակակից բարքերը երգիծելու մոտիվներ: Երգերն աստիճանաբար դառնում են պարզունակ՝ կորցնելով իրենց հարուստ խորհրդաբանությունը. երգարվեստը սկսում է կրել ամերիկյան ռեպի ազդեցությունը՝ լեցուն օտար արտահայտություններով (էջ 132): Այնուամենայնիվ, գերիշխող է մնում հայրենիքի սիրո և կարոտի թեման, որ դրսևորվում է, Վ. Սվազյանի բնութագրմամբ, «ազգահավաքի և հայրենաշինության երգերում»:

Ուշագրավ բաժիններից է ասույթային բանահյուսությանը նվիրված հատվածը: Ավանդական առած-ասացվածքների կողքին Վ. Սվազյանը ներկայացնում է երկու այլ ուշագրավ բաժիններ՝ «Խրատներ» և «Իմաստուն մտքեր», որոնցում ամերիկահայերը խտացնում են իրենց նոր կյանքից ստացած տպավորությունները, ավանդական հոգևոր արժեքների կորստի վտանգը դրամի զորությունը արժևորող նոր հասարակության մեջ, հայի տեսակը պահպանելու կարևորության գիտակցությունը: Օտարման և ուժացման ցավալի գործընթացը տեսանելի է դառնում փոխառություններում, անգլերեն արտահայտությունների՝ հայկական խոսք ներթափանցումներում, ինչպես նաև գրքի փոքրածավալ, բայց խոսուն բաժնում՝ նվիրված տոնածիսական մշակույթին, որտեղ արդեն իսկ ներմուծվում են օտար տոներ՝ Վալենտինը, Հելոուինը, Գոհաբանության տոներ:

Եղեռն վերապրած մի ամբողջ սերնդի և այդ սերնդի շառավիղների հոգևոր մաքառման պատմությունն է շարադրում այս գիրքը՝ ամերիկյան տարաբնույթ մշակույթների հորձանուտում սեփական մշակույթը պահպանելու, չուժանալու, չկորչելու: Եվ, սակայն, նյութերի ժամանակագրական վերլուծությունը ցավալիորեն արձանագրում է այս ուժացման գործընթացը:

Գրքի արժեքը զգալիորեն մեծացնում են Համլետ Սարգսյանի ջանքերով կազմված քարտեզը, որն արտացոլում է հայերի տեղաբաշխումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում, հարուստ և ընդարձակ բառարանը, բանասացների վերաբերյալ մանրամասն տվյալներն ու լուսանկարները, ինչպես նաև ամերիկահայ շրջանում տարածված ժողովրդական երգերի ձայնասկավառակը:

Աշխատությունն ընդգրկում է Վերժինե Սվազյանի 40 տարիների տքնաջան աշխատանքը: Արժանին հատուցենք Մեծ հային և հայրենասերին, որն իր ամբողջ կյանքն ի սպաս է դրել հայ ժողովրդի հետեղեռնյան շրջանի ցավոտ պատմությունների և աստանդական դարձած և սփյուռքացված արևմտահայ մի սովոր զանգվածի բանավոր ավանդության գրառման, հետազոտման ու պահպանման կենսական կարևորություն ունեցող գործին:

Գիրքը կարող է օգտակար լինել բանագետների, պատմաբանների, սփյուռքագետների և հայագիտությամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջանակների համար:

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ՄԵՐ ՀՈՐԵԼՅԱՐՆԵՐԸ

ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆԸ, ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՍԵՐԸ (ԳԱԼՈՒՍՏ ԳԱԼՈՅԱՆ)



Այս տարի լրանում է XX դ. հայ պատմագիտության վառ ներկայացուցիչ ակադեմիկոս Գ. Գալոյանի ծննդյան 95-ամյակը:

Անվանի գիտնականն անհատականություն էր ոչ միայն որպես պատմաբան, այլև իր ողջ էությամբ: Մտավորականի օրինակելի կերպար Գ. Գալոյանի բարոյականության չափանիշն էր սկզբունքայնությունը, որին նա հավատարիմ մնաց ողջ կյանքում: Հասարակական-քաղաքական և ազգային գործիչն ու գիտակրթական համակարգի տաղանդավոր կազմակերպիչը մեծ հայրենասեր էր, որն անմնացորդ ծառայեց հայրենի երկրին ու ժողովրդին:

Գալուստ Անուշավանի Գալոյանը ծնվել է 1927 թ. մարտի 1-ին Արթիկի շրջանի Փոքր Պարնի գյուղում (այժմ՝ Անուշավան, Շիրակի մարզ): 1945 թ. ավարտելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը՝ ընդունվել է ԵՊՀ նորաբաց միջազգային հարաբերությունների ֆակուլտետ: Աչքի ընկնելով բարձր առաջադիմությամբ՝ Գ. Գալոյանը նաև համալսարանի հասարակական-քաղաքական կյանքի ամենաակտիվ մասնակիցներից էր: 1950 թ. նա ղեկավարում է համալսարանի կոմերիտական կազմակերպությունը՝ դրսևորելով տաղանդավոր կազմակերպչի ընդունակությունները:

Համալսարանն ավարտելուց հետո՝ 1950 թ., Գ. Գալոյանին աշխատանքի են ընդունում ՀԼԿԵՄ Երևանի քաղաքային կոմիտեում: Նա ընտրվում է Կիրովյան շրջկոմի առաջին քարտուղար, այնուհետև՝ Կենտկոմի քարտուղար: Իր քաղաքական գործունեության շնորհիվ Գ. Գալոյանը Հայաստանում ձեռք էր բերել հեղինակություն, ուներ առաջխաղացման մեծ հնարավորություններ: Այնուամենայնիվ, նա նախընտրում է գիտության ասպարեզը:

1953-1955 թթ. Գ. Գալոյանն ուսանում է Մոսկվայում՝ ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր Հասարակական գիտությունների ակադեմիայում, որտեղ 1955 թ. պաշտպանում է ատենախոսություն և ստանում պատմական գիտությունների

թեկնածուի գիտական աստիճան: Այնուհետև սկսվում է նրա ուղին դեպի մեծ գիտություն: 1955 թվականից Երևանում աշխատում է ԽՄԿԿ ԿԿ-ին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղում՝ նախ որպես ավագ գիտաշխատող, իսկ 1958-1963 թթ.՝ ինստիտուտի կուսակցության պատմության բաժնի վարիչ և գիտական գծով տնօրենի տեղակալ: Միաժամանակ նա դասավանդում է Երևանի պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում և այլ բուհերում:

Այդ տարիներին Գ. Գալոյանը լուրջ գիտահետազոտական աշխատանքներ է կատարում. լույս են տեսնում «Հայաստանում սովետական իշխանության համար պայքարը» («Борьба за Советскую власть в Армении» (Մ., 1957) և «Մայիսյան հերոսական ապստամբությունը» (Ե., 1960) մենագրությունները: Դրանք հետպատերազմյան տարիներին լույս տեսած առաջին աշխատություններից էին, որտեղ փաստական նոր հիմքի վրա և միանգամայն նորովի մոտեցմամբ՝ ՍՄԿԿ XX համագումարից սկիզբ առած մտավոր տեղաշարժի հայեցակետից, մեկնաբանվում էին արձարծված հիմնախնդիրները: Գիտնականը հիմնավորապես եզրահանգեց. բուրժուական պատմագիտության կողմից Հայաստանի և Անդրկովկասի պատմության խեղաթյուրումները միտումնավոր էին և կանխամտածված: Ուստի ձեռնամուխ է լինում նոր՝ թշնամական գաղափարախոսության վտանգավոր էությունը բացահայտող ուսումնասիրություններ հրապարակելուն:

Գ. Գալոյանի հետագա աշխատություններում առանձին ուսումնասիրության առարկա դարձան Հայաստանում խորհրդային իշխանության հաղթանակի խնդրի տարբեր կողմերը: Աղբյուրագիտական հարուստ նյութերի հիման վրա նա ցույց է տվել, որ ցեղասպանության սարսափներից փրկված արևմտահայ բեկորների և երիտթուրքերի ու քեմալականների կողմից ֆիզիկական ոչնչացման վտանգի ենթարկված արևելահայության փրկությունը Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումն էր: Ժամանակի դրոշմը, բնականաբար, ցայտուն է պատմաբանի աշխատություններում: Լինելով կոմունիստական գաղափարախոսության կրող՝ նա հավատում էր համամարդկային արժեքների համար մղվող պայքարին և առնվազն Խորհրդային Միությունը և համակիր սոցիալիստական ճամբարը դեպի լուսավոր ու արժանապատիվ ապագա տանող կարգախոսներին: Նա հավատարիմ էր իր հավատամքներին մինչև դրանց վերջնական փլուզումը: Գ. Գալոյանի ամենամեծ արժանիքներից էր այն, որ նոր գաղափարախոսության պայմաններում՝ նորանկախ Հայաստանի կայացման ճանապարհին, վերագտնելով սեփական գաղափարախոսությունը, ողջունելով ազգային արժեքների կուռ և անժխտելի համակարգի ձևավորումը, ինտեգրվե-

լով նորին, նա չհրաժարվեց իր համոզմունքներից և, հավատարիմ մնալով վերջիններին, վստահաբար գրում էր, որ խորհրդային կարգերը հնարավորություն ստեղծեցին Հայաստանը դարձնելու զարգացած տնտեսության, կրթության և մշակույթի երկիր:

ԿԿ պատմությանը նվիրված գիտական ուսումնասիրությունների հիմամբ Գ. Գալոյանը 1963 թ. Մոսկվայում պաշտպանում է դոկտորական ատենախոսություն, իսկ հաջորդ տարի արժանանում պրոֆեսորի կոչման: Հընթացս Գ. Գալոյանը ծավալում է բեղմնավոր գիտական և ակտիվ հասարակական գործունեություն: Նա 1963 թ. նշանակվում է ԳԱ պատմության ինստիտուտի տնօրեն: Այստեղ դրսևորվում են նրա գիտական և կազմակերպչական եզակի ընդունակությունները: Շուրջ 16 տարի՝ մինչև 1979 թ., գլխավորելով ԳԱ պատմության ինստիտուտը, նա լուրջ աշխատանք է տանում մեր հանրապետությունում պատմագիտական մտքի զարգացման և գիտական կադրերի պատրաստման գործում: Գ. Գալոյանի նվիրվածությունը աշխատանքին, քաղաքացիական ազնիվ կեցվածքն ու սթափ միտքը, գիտությանը ծառայելու մեծ պատրաստակամությունը, իր և ինստիտուտի յուրաքանչյուր աշխատակցի նկատմամբ պահանջկոտ ու հարգալից վերաբերմունքը փոխադարձ հարգանքի ու վստահության մթնոլորտ էին ստեղծում՝ խթանելով կոլեկտիվ աշխատանքի արդյունավետությունը:

Այդ տարիներին Գ. Գալոյանի ղեկավարած բեղմնավոր և լայնածավալ աշխատանքում առանձնակի է հայ ժողովրդի ամբողջական պատմության ութհատորյակի ստեղծումը (1967-1976 թթ., 1984 թ.): Երկերի բարդ և դժվարին աշխատանքները որպես գլխավոր խմբագիր՝ Գ. Գալոյանը ղեկավարեց ներդնելով իր բազմակողմանի գիտելիքները, գիտական-կազմակերպչական տաղանդը և համառ ու անխոնջ աշխատասիրությունը: Կոլեկտիվ՝ փոխըմբռնման հրաշալի համագործակցության շնորհիվ այն դարձավ պատմության ինստիտուտի խոշոր նվաճումը: Ակադեմիական այդ աշխատությունը, որն իր ընդգրկմամբ ու խորությամբ նախադեպը չունեւ, հայ պատմագիտական մտքի բարձրագույն դրսևորումն էր և խոշոր երևույթ հայագիտության մեջ: Սովորածավալ գործի ստեղծմանը մասնակցել էին Հայաստանի և արտերկրի անվանի և բազմավաստակ մասնագետներ: Բազմահատորյակն ընդունվեց որպես մեծարժեք ներդրում մեր ժողովրդի հոգևոր-մշակութային արժեքների գանձարանում՝ արժանանալով ՀԽՍՀ պետական մրցանակի:

Գ. Գալոյանը 1971 թ. ընտրվում է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1982 թ.՝ իսկական անդամ: Գ. Գալոյանի գիտական ժառանգության մեջ կարևոր տեղ էին գրավում Հայաստանի և Անդրկովկասի նոր և նորագույն ժամանակա-

շրջանների պատմության մեջ Ռուսաստանի դերի, հայ ժողովրդի պատմությանն առնչվող բուրժուական խեղաթյուրումների դեմ պայքարի բազմաբնույթ հիմնախնդիրների ուսումնասիրությունները:

Գ. Գալոյանի «Россия и народы Закавказья: очерки политической истории и их взаимоотношения с древнейших времен до победы Великой Октябрьской социалистической революции» (М., 1976) քննատեսական աշխատությամբ նորովի է լուսաբանվում Ռուսաստանի հետ անդրկովկասյան ժողովուրդների ունեցած ամբողջական պատմությունը: Գ. Գալոյանը հայ-ռուսական բարեկամության հետևողական ջատագովներից էր: 1970-ականների վերջին – 1980-ականների սկզբին հրատարակած գործերում նա ցույց է տվել, որ դարեր շարունակ տառապանքի ճանապարհ անցած հայ ժողովրդի համար ռուսական կողմնորոշումը եղել է պատմության թելադրանք: Մուսուլման տիրակալների լծից ազատագրումը պայմանավորված է եղել ոչ թե հայերի նկատմամբ ռուսական արքունիքի մարդասիրական վերաբերմունքով, այլ նրանով, որ պատմության քառուղիներում Ռուսաստանի և հայ ժողովրդի շահերը բազմիցս համընկել են: Նշենք «Պատմության քառուղիներում» մենագրությունը (Երևան, 1982): Հայ ժողովրդի ամբողջական պատմությունն ընդգրկող գիրքը Գ. Գալոյանի վերլուծական մոտեցումն է մեր պատմության արմատական հարցերին: Նա պատմական ծանր դասերի օգնությամբ ժամանակակիցներին և գալիք սերունդներին խորհելու տեղիք է տալիս՝ նպաստելով նաև հարազատ ժողովրդի ինքնաճանաչմանն ու գործի հարատևմանը: Դրանով իսկ աշխատությունը հույժ արդիական է և մնայուն:

1980-ական թվականների երկրորդ կեսից ի վեր Գ. Գալոյանը հրատարակում է բազմաթիվ արժեքավոր հոդվածներ, որտեղ առարկայացրել է Հայոց ցեղասպանության և Արցախի հիմնախնդրի թեմաները՝ լուսաբանելով տարբեր տեսանկյուններից և կտրվածքներով, գիտականորեն մշակված նյութին տալով նոր բովանդակություն և հաճախ անսպասելի, սակայն հիմնավոր մեկնաբանություններ: Հայոց ցեղասպանությանն առնչվող ուսումնասիրությունները հանրագումարի բերելով՝ Գ. Գալոյանը գրում է. «Հայոց ցեղասպանությունը կատարվեց մեծ տերություններից ոմանց հովանավորությամբ և ոմանց լռելայն համաձայնությամբ: Եթե կայգերական Գերմանիան բացահայտ դրդում ու հովանավորում էր թուրքերին հայաթափ անելու Արևմտյան Հայաստանը, ապա Անգլիան ու Ֆրանսիան (նրանց հետ նաև Իտալիան), վախենալով Փոքր Ասիայում Ռուսաստանի դիրքերի հնարավոր ուժեղացումից, ամբողջ XIX դ. ընթացքում հարում էին այդ քաղաքականությանը»:

Ազգասեր պատմաբանը հպարտ է, որ ծանր փորձություններից հետո հայ ժողովուրդն ուժ գտավ ուղքի կանգնելու և վերստեղծելու հարյուրամյակներ առաջ կորցրած պետականությունը: Իսկ երբ 1920 թ. աշնանը թուրքերը փորձեցին այն ևս ոչնչացնել, արհավիրքի դեմն առնելու միակ ելքը Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումն էր: Նա գրում է. «70 տարի հայ ժողովուրդն ապրեց Խորհրդային Միության ժողովուրդներին վիճակված կյանքով: Այդ միության մեջ գտնվելը փրկեց Հայաստանը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական նոր ագրեսիային ենթարկվելու վտանգից: Չնայած ստալինյան բռնատիրության հասցրած վնասներին, մեր ժողովուրդը Հայաստանը վերածեց խոշոր արդյունաբերության, զարգացած գյուղատնտեսության, ծաղկած գիտության ու ազգային մշակույթի երկրի: Եվ ամենագլխավորը. Հայաստանը պահպանվեց որպես պետություն, առանց որի գոյության չէր կարող ծնվել այսօրվա անկախ Հայաստանը»:

Գ. Գալոյանն անհերքելի փաստերով հաստատում է այն ճշմարտությունը, որ Հայոց ցեղասպանության դառը հետևանքներն առ այսօր առարկայական են: Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում, որ ծայր առավ XIX դարի 70-ական թվականներին և տևեց մինչև 1923 թ., սոսկ երկու միլիոն հայերի զանգվածային կոտորածը չէր: Այն արևմտահայերի՝ դարերով կուտակած հարստության հափշտակումն ու մշակութային արժեքների ոչնչացումը չէին միայն: Այն ցեղասպանությունից մազապործների՝ աշխարհով մեկ սփռվելու պատճառը չէր միայն: Հայ ժողովուրդն ուժաթափ եղավ՝ զրկվելով հայրենի Արևմտյան Հայաստանից և Արևելյան Հայաստանի մի զգալի մասից: Չլիներ այդ ցեղասպանությունը, Արևմտյան Հայաստանում հայերի քանակն այսօր առնվազն եռապատկված կլիներ: Հայոց ցեղասպանությունը հայոց պետականության վերականգնման և միացյալ ու անկախ Հայաստան ստեղծելու հույսերի ոչնչացումն էր: Դրա տխուր հետևանքներից է նաև հայ-թուրքական հարաբերությունների արդի վիճակը: Բնականաբար, հարց է ծագում, թե ինչ զարգացում պետք է ստանան այդ հարաբերությունները: Հումանիստ գիտնականն ընդգծում է. «Հայ ժողովուրդը երբեք ոխակալ չի եղել, բայց և թույլ չի տվել ոտնահարելու իր ազգային արժանապատվությունը: Եթե թուրքական իշխանությունները ձգտում են քաղաքակիրթ ժողովրդի կեցվածք ընդունել և կանոնավոր հարաբերություններ հաստատել հայ ժողովրդի հետ, պետք է քաջություն ունենան հրապարակավ ճանաչել Հայոց ցեղասպանությունը, քաղաքական բանակցությունների միջոցով հատուցել հայ ժողովրդին պատճառած վնասները և քաղաքակիրթ ձևով լուծել տարածքային հարցերը: Իսկ քանի դեռ թուրքական իշխանություն-

ները չեն դիմել այդ քայլին, նրանք ևս դիտվելու են որպես ոճրագործության մեղսակիցներ»:

Բեղմնավոր աշխատանքի մասին վկայող աշխատությունների շարքում գատորոշվում է Գ. Գալոյանի «Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ.» մենագրությունը (Երևան, 1999), որը հանրագումարի է բերում գիտնականի երկար տարիների ուսումնասիրությունները: Այն բաղկացած է երկու գրքից: Առաջինն ընդգրկում է XVI դարից մինչև 1917 թ. ընկած ժամանակաշրջանը, երբ Հայաստանը բռնի ուժով բաժանվեց Թուրքիայի և Պարսկաստանի միջև, և ծայր առան հայ ժողովրդի ազատագրական շարժումները՝ երկատված հայրենիքի վերամիավորման և Հայոց անկախ պետության վերստեղծման համար: Երկրորդ գիրքը լուսաբանում է Առաջին աշխարհամարտի վերջին տարիների՝ Առաջին հանրապետության ստեղծումից մինչև Լոզանի կոնֆերանսն ընկած ժամանակահատվածում Հայ դատի հանդեպ մեծ տերությունների վարած քաղաքականությունը: Հեղինակը, հիմնավորելով աշխատության կարևորությունն ու խիստ արդիականությունը, մասնավորապես ընդգծում է. «Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծման ու անկման, դաշնակից տերությունների, ինչպես նաև Թուրքիայի կողմից Արևմտյան Հայաստանի միջազգային ճանաչման և ապա ուրացման պատճառների գիտական քննությունն այսօր դարձել է խիստ արդիական, քանի որ Հայաստանն իր անկախության հռչակումից հետո կրկին հայտնվել է մեծ տերությունների քաղաքականության ոլորտում: Թե ինչպիսին է եղել մեծ տերությունների քաղաքականությունը Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ՝ Թուրքիայում շարունակվող հայերի ցեղասպանության պայմաններում, երբ Հայ դատի խնդիրը կրկին միջազգային դիվանագիտության ատյանների քննարկման առարկա էր, զուտ պատմագիտական հետաքրքրություն ներկայացնող հարց չէ: Այն այսօր գործնական նկատառումների խնդիր է»:

Գիրքն առանձնակի է արժևորվում, քանի որ հեղինակը, աշխատելով տարբեր երկրների՝ Մոսկվայի, Լոնդոնի և Վաշինգտոնի արխիվներում, հայտնաբերել է և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրել մինչ այդ հայ պատմագիտությանն անհայտ նյութեր՝ բազում վավերագրեր և դիվանագիտական փաստաթղթեր: Նա նշում է. «Ուսումնասիրության ընթացքում այդ փաստաթղթերի համադրումը և դրանց գիտական շրջանառության մեջ դնելը անխուսափելի են դարձրել պատմագիտական գրականության մեջ (այդ թվում նաև տողերիս հեղինակի նախորդ աշխատություններում) տեղ գտած մի շարք հարցադրումների վերագնահատումը»: Եվ իրոք, գիտնականն իրավամբ վերանա-

յում է մի շարք խնդրահարույց տեսակետներ, օրինակ՝ խորհրդային մոտեցումները Հայկական հարցի լուծման առնչությամբ:

Գ. Գալոյանը նոր բացահայտումներ է կատարում բազմաթիվ տարողունակ հարցադրումների շուրջ և հստակ եզրահանգում. հայերի խնդիրներով զբաղվելիս մեծ տերությունները ոչ միայն բացառապես հետապնդել են իրենց շահերը, այլև դիվանագիտական խաղերում հայ ժողովրդի արդարացի դատն օգտագործել որպես խաղաքարտ: Նրանց հանցավոր քաղաքականությունը Հայկական հարցում՝ Սևրից մինչև Լոզան ընկած ժամանակահատվածում, հանգեցրեց Թուրքիայի շահերի բացահայտ պաշտպանության: Հեղինակը միանգամայն նոր տեսանկյունից է վերլուծում հայտնի իրադարձությունները և նշում. «1922 թ. մարտին Անտանտի տերությունների՝ Փարիզում կայացած խորհրդաժողովը ճանաչեց Թուրքիայի սուվերենությունը նրա փաստական տիրապետության սահմաններում: Սա տապանաքար է Հայ դատի վրա, մեծ մատնություն, որն ավարտի հասցրեց հայ ժողովրդի ու Հայաստանի նկատմամբ մեծ տերությունների տասնյակ տարիներ վարած քաղաքականությունը»:

Մեծ հայրենասերն ու հմուտ պատմաբանը, հավատարիմ մնալով մեր ժողովրդի հաղթանակի և արժանապատիվ ապագա ունենալու իր հավատամքին, նաև ընդգծում է. «Հայ ժողովրդի դժբախտությունների պատճառները, անշուշտ, չպետք է փնտրել միայն մեզ շրջապատող արտաքին աշխարհում: Մենք աշխատել ենք վերը շարադրածում տեսնել նաև մեր դժբախտությունների ներքին պատճառները, որոնցից սերունդները դասեր պետք է քաղեն»:

Գ. Գալոյանի պատմագիտական հայեցակարգը հստակ պատկերացնելու համար կարևոր է ընդգծել, որ նա բազմիցս հանդես է եկել մեր ժողովրդի պատմության խեղաթյուրման դեմ, անզիջում հետևողականությամբ մշտապես հակահարվածել զրպարտություններին: Հայոց պատմության կեղծարարների դեմ ուղղված Գ. Գալոյանի աշխատություններն այսօր ևս ունեն խիստ արդիական նշանակություն և պատասխան են նաև մերօրյա կեղծարարներին:

Գիտնականի հայրենասիրական և քաղաքացիական դրսևորումներից է նաև այն, որ, պատմական արդարությունը վերականգնելու և հայ ժողովրդի օրինական իրավունքները պաշտպանելու սկզբունքին հավատարիմ, ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Գ. Գալոյանը ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների առաջին համագումարում (1989 թ. մայիսի 25–հունիսի 9) հարց բարձրացրեց ստեղծելու հանձնաժողով՝ ռուս-թուրքական 1921 թ. մարտի 16-ի պայմանագրի քաղաքական և իրավական գնահատականը տալու և հանձնաժողովի եզրակացությունը համագումարի քննարկմանը ներկայացնելու: Սա-

կայն, ինչպես նշում է նա, այդ առաջարկը «թաղվեց» Մ. Գորբաչովի ջանքերով և անգամ չդարձավ համագումարի քննարկման առարկա:

Գ. Գալոյանը գիտության շրջանակում ներփակված գիտնական չէր և մշտապես զուգակցել է պատմագիտական աշխատանքը գիտակազմակերպական գործունեության հետ՝ ակտիվորեն մասնակցելով գիտական թեմաների և աշխատանքների ծրագրմանը, հայոց պատմությանը նվիրված հանրապետական և միջազգային գիտաժողովների կազմակերպական ու խմբագրական աշխատանքներին: 1979 թ. սկսած՝ նա ՀԽՍՀ ԳԱ համակարգում վարում է ակադեմիկոս-քարտուղարի (1979-1982), փոխնախագահի (1982-1988 և 1990-1994) պաշտոնները, 1994 թվականից մինչև կյանքի վերջը եղել է ԳԱԱ փոխնախագահի խորհրդական և գիտահրատարակչական խորհրդի նախագահ, իսկ 1979-2003 թթ.՝ ԳԱԱ նախագահության անդամ:

Գ. Գալոյանը Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում ակտիվ դերակատարություն ունեցած գործիչ է: 1964-1969 թթ. եղել է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր գիտության և տեխնիկայի բնագավառում Լենինյան և պետական մրցանակների կոմիտեի անդամ, իսկ 1979 թ. ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի որոշմամբ նշանակվել է գիտության և տեխնիկայի բնագավառում պետական մրցանակների պետական հանձնաժողովի նախագահի տեղակալ, եղել է Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերության վարչության անդամ, Սովետաավստրիական բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի նախագահ, «ՍՍՀՄ-Չեխոսլովակիա» պատմաբանների հանձնաժողովի անդամ, Խաղաղության պաշտպանության հայկական հանրապետական կոմիտեի նախագահ: Հայաստանի կոմկուսի XXIII, XXIV, XXV, XXVI և XXVII համագումարներում Գ. Գալոյանն ընտրվել է Հայկոմկուսի ԿԿ անդամության թեկնածու, իսկ XXVIII համագումարում՝ ԿԿ անդամ: Ընտրվել է նաև Երևանի քաղաքային խորհրդի դեպուտատ: 1964 թվականից նա անընդմեջ ընտրվել է ՀԿԿ Կենտկոմի կազմում, իսկ 1988-1990 թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական աշխատանքների գծով քարտուղար: 1989 թ. ընտրվել է ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր:

Բարձր է գնահատվել Գ. Գալոյանի աշխատանքը: Հասարակական գործունեության ասպարեզում և պատմագիտության բնագավառում ունեցած մեծ ծառայությունների համար պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, Վավիլովի անվան և մի շարք այլ մեդալներով, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով, արժանացել ՀԽՍՀ պետական մրցանակի, իսկ

1988 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Գալուստ Գալոյանն ապրեց բովանդակալից և իմաստալից կյանք: Իր տաղանդն ու հնարավորությունները հայ պատմագիտությանը, հարազատ ժողովրդին ծառայեցնելու գործում նա օրինակ եղավ թե՛ սերնդակիցների, թե՛ իր ապրած ժամանակների երիտասարդների համար: Անուրանալի և ծանրակշիռ է նրա ավանդը մեր գիտության զարգացման գործում: Անխոնջ նվիրումն այդ գործին և թողած գիտական ժառանգությունը Գ. Գալոյանին արժանի տեղ են հատկացրել հայրենիքի երախտավոր զավակների շարքում:

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՄԲԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

Հայերեն նյութերի բաժնի խմբագիրներ՝ **Մելանիա Միքայելյան**
Սեդա Քուփեյան
Ռուսերեն նյութերի բաժնի խմբագիր՝ **Գայանե Հարությունյան**

Редакторы армянского отдела – **Меланья Микаелян**
Седа Купелян
Редактор русского отдела – **Гаянэ Арутюнян**

Editors of Armenian part **Melania Mikaelyan**
Seda Kupelyan
Editor of Russian part **Gayane Harutyunyan**

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ **Արմինե Պետրոսյանի**
Компьютерный дизайн и пагинация – **Армине Петросян**
Computer design and pagination **Armine Petrosyan**

Հրատ. պատվեր N 1209
Ստորագրված է տպագրության 05.12.2022 թ.:
Տպագրական 25.5 մամուլ: Տպաքանակը՝ 200:
ՀՀ ԳԱԱ տպարան, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:
Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4:
Հեռ.՝ 581902:

Подписано к печати 05.12.2022 г.
25.5 л. Тираж – 200. Типография НАН РА,
Ереван, пр. Маршала Баграмяна 24.
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.
Тел. 581902

Signed for printing 05.12.2022
25.5 print. sheets. Printed copies – 200. NAS RA Press,
Yerevan, Marshal Baghramyan av. 24.
Editorial office address: 0019, Yerevan, Marshal Baghramyan av. 24/4.
Tel. 581902

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://Iraber.sci.am>
Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ Iraber@sci.am
Официальный сайт журнала: <http://Iraber.sci.am>
Электронная почта журнала: Iraber@sci.am
Official site of the Journal: <http://Iraber.sci.am>
E.mail of the Journal: Iraber@sci.am